



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**GRAD  
EREN  
857  
BUHR**

**A 993,331**



215

G. Y. Saha














Հ Յ Ա Հ Ա Վ

Ա Կ Օ

# Ս. ՄԵԽՐՈՊ



ՃՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԼԵՏԻՍ ՊՈՂՈՍԻՆԵՑԻ

ԹԻՖԼԻՍ  
Տպարան «ՀԵՐՄԵՆ», Մերժակեան փողոց № 81.  
1904 (25)

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

ОДАД  
ЕДЕА  
ФГТ  
Букварь

---

Дозволено Цензурою. Тифлисъ, 3 Мая 1904 г.

---

GRIP  
EREN  
852  
OCT. 10. 1911

## ԲՈՎԱՆԴԱԿԱՌԻՒԹԻՒՆ

Ներառյալը 1-ը:

Ըստկանի Սուրբք (Ի՞ն ճանապարհողական յուշանեցված) 8—23:

Ա. Ա. Ա. ՄԱՍ. — Ասիականքքեան զինուարներ:

Ա. — Արևելքի քաղաքակրթութիւնը: — Միջագետք:  
— Ուրարտեան երկիրներ: — Հայերի գոլուատը: — Նոր հայրենիքի քաղաքական կազմակերպութիւնը: — Երրջապատը. — ասիական բոնապետութիւն: — Ասոքեատանը՝ նախատիպ: — Գազանային պաշտամունք: — Արևելեան քաղաքակրթութեան յատկանիշները: — Բակլի կարծիքը: — Ասորեստանի անկումը և նաում մարգարէ:

Արևելքի հակադրութիւնը: — Արևելուատք: — Հելլէնականութիւն: — Անհատ, աղասութեան, հայրենիք: — Արևելեան հարցի սկիզբը — Ընդհարում Եւզօպայի և Ասիայի մէջ 25—44:

Բ. — Ասորեստանի յաջորդները: — Մարաստան և Պարսկաստան: — Պարսկական մեծ պետութիւնը: — Նուանձողը և նուանձվածները: — Հարկեր, արքունիքի շայլութիւններ: — Մատրապներ: — Պարսկա-յունական պատերազմները իրեն եւրոպականութեան և առկանութեան մրցում 44—52:

Գ. — Հայերը՝ ասիականութեան զինուարները — Պարսկական ազգեցութիւնը հայերի վրա: — Մարտաքնի մի բնորոշ մոլորութիւնը: — Կրօնական ազգակցութիւն: — Ալէքսանդր Մակեդոնացու արշաւանքը: — Հելլէնականութիւնը աշխատում է պատուաստվել Ասիայում: — Արիստոտէլի կարծիքը: — Ալէքսանդրի ջանքերը: — Հայերի վերաբերմունքը դէպի հելլէնականութիւն: — Արևելուատքը զիջողութիւն է անում Արևելքն, հայերին 52—62:

Գարթեները և հայերը: — Տիգրան Մեծը իրեն ասիական բոնապետութեան ներկայացուցիչ: — Բ. Մօղէնի նկարագրութիւնները: — Հայաստանը՝ կը-ուախնձոր Հոօմի և Պարսկաստանի մէջ: — Տակիտոսի վկայութիւնը հայերի մասին: — Ութ դարի կեսանք 62—73:

ՆԱԿՐՈՂԻ ՄԱՍ. — ՅԵՂԱՇՔՈՒՄ

**Ա.** — Քրիստոնէութիւնը իբրև եւրօպական կրօն: — Եկեղեցու առաջադիմական ջանքերը և յոյների կատարած գերը այդ գործերի մէջ: — Քրիստոնէութիւնը հազածվածից դառնում է տիրապետող: — Եկեղեցական շարժումներ 75—80:

**Բ.** — Քրիստոնէութիւնը Հայաստանում: — Դա ժողովրդական շարժում չէր: — Թագաւորի հրամանով և զօրքերով: — Հեթանոսութեան դիմադրութիւնը: — Նա չը ջնջվեց բոլորովին: — Հեթանոսասէր կուսակցութիւն: և Պարսկաստան: — Ժողովուրդը տպէտ է: — Դրիգոր Լուսաւորչի դիջողութիւնները և ձեռք առած միջոցները: — Հեթանոսական յիշատակարանների ոչնչացում, յոյն-ասորական դպրոցներ, օտար ուսմունք, օտար լեզու: — Քրիստոնէութիւնը չէ ժողովրդականանում: — Ամբողջ չորրորդ դարը հեթանոսութեան մրցումն է քրիստոնէութեան դէմ: — Փաւստոսի մի նկարագրութիւնը: — Եկեղեցական իշխանապետութիւն ժառանգական դինաստիայի ձեռվ 80—92:

**Գ.** — Գրիգոր Լուսաւորչի տոհմը իբրև խոշոր հողատէր ազնուականութիւն: — Դինաստիական շահեր և պարտաւորութիւններ: — Պատիւ և ազգեցութիւն: — Եկեղեցին ու պետութիւնը ըստ միացան իրար հետ: — Հայ սուլթանիզմը հնացած, ուժասպառ: — Կոխւ եկեղեցու դէմ: — Տիրանի անգթութիւնները: — Քաղաքական պատճառ: — Շապուհ երկրորդ, հալածանք յունական քրիստոնէութեան դէմ: — Ալբիանոսի կաթողիկոսական տոհմը իբրև հակադրութիւն լուսաւորչի յունասէր տոհմի դէմ: — Դա պահպանողական-ազգային կուսակցութիւն է, հաւատարիմ արքունիքին: — Պարսկական կուսակցութեան զոհերը: — Նախարարների բաժանումը 92—109:

**Դ.** — Վտանգաւոր ժամանակ՝ յունական քրիստոնէութեան համար: — ՆերսէմՄեծ: — Բարեկարգութիւնների շրջան, ապարդին ջանքեր: — Հայաստանը՝ վանական միաբանութիւն: — Բարեգործական դրախտ: — Ներսէսի հզօք ազգեցութիւնը: — Ի՞նչ էր Արշակ երկրորդը: — Բարեգործութիւնների միւս երեսը: — Խիստը էակցիա յունական ազգեցութեան դէմ. Մեհրուժան և պարսկական կուսակցութեան աջողութիւնները: —

Ներսէսի վերաբերմունքը դէպի Արշակ թագաւորը:—  
Պապ նրա զգոյշ քաղաքականութիւնը:—Գործողութիւններ ներսէսի դէմ:—Ներսէսի թունաւորման առավելը:—Եկեղեցական անկախութիւն:—Ներսէսի մահը ցոյց է տալիս որ քրիստոնէութիւնը արհետական էր:—Մեղաւանը էր ժողովուրդը 109—130:

**Ս.**—Պապը յունական կուսակցութեան գոհն է դառնում:—Երկու ազգեցութիւնների կոիւր սաստկանում է:—Հայաստանի բաժանումը յոյների և պարսիկների մէջ:—Բիւզանդականութիւն և քրիստոնէութիւն:—Հայաստանի երկու բաժինները:—Հրատեղ էր լաւ:—Պարսիկների միջոցները հայերի յունական քրիստոնէութեան դէմ:

Զորբարդ գարի յուսահատական վերջը:—Ի՞նչ էր սպանում ճնաժամը:—Զգացվում է մեծ անհրաժեշտութիւնը 130—143:

#### ԽՐՈՐԴԻ ՄԱՍ.՝ Ուսուցիչը

**Ա.**—Կորիւն վարդապետ:—Նրա գրած կենսագրութեան արժեքը:—Հարուստ տեղեկութիւններ չունենք:—Մեսրոպ թէ Մաշտոց 145—150:

**Բ.**—Արքունի դիւանադպիրը:—Սահակ կաթողիկոս:—Մեսրոպի ճղնաւորական կեանքը:—Միսիօնարական գործունէութիւն:—Գողթան գաւառում:—Հեթանոս հայերի դիմադրութիւնը:—Բնութիւնը հանճարեղ միտք է ձնեցնում 150—160:

**Գ.**—Գրերի և զրականութեան համար հոգսեր:—Նպաստաւոր ժամանակ. Վոամշապուհը Հայաստանում, Յազկերտ առաջինը Պարսկաստանում:—Որոնում են հայկական տառեր:—Դանիէլի տառերը, առաջին գպրցներ, անաջողութիւն:—Մեսրոպի ճանապարհորդութիւնը Միջագետք:—Հայկական տառերի գիւտը:—Ի՞նչ էր այդ գիւտը հների համար և ի՞նչ պիտի լինի մեզ համար:—Այբուբենի առաջին գիւտը:—Ազգերը միմեանցից փոխ առան տառերը:—Երկու կարծիք հայկական այբուբենի մասին:—Ի՞նչն էր դժուարը Մեսրոպի համար:—Լեզուի տարրալուծումը 160—178:

**Դ.**—Հանդէս Վաղարշապատում:—Ընդհանուրին էր պատկանում նոր գիւտը:—Գոյութեան կոիւր Մեսրո-

պի տառերի համար:—Դպրոցական մեծ շարժում:—  
Երկրի բոլոր տարրերը առաջ են քաշվում:—Լուսա-  
ւորութեան գործիք:—Անգիր ժողովրդի գրութիւնը:—  
Մեսրոպը իրբ գպրոցներ կառավարող:—Հոգսեր  
յունական հայաստանի համար:—Մեսրոպը Կ. Պօլսում:  
178—193:

**Թ.**—Գրականութեան պահանջը:—Ռում աշակերտել.  
Ասորիք և Արևմտեան աշխարհ:—Առաջին հայ ուսա-  
նողներ և արտասահմանեան կրթութիւն:—Անդրանիկ  
և կրտսեր աշակերտներ:—Ռում և լին էին նրանք  
սովորում:—Վերապարձ և դրական աշխատութիւններ:  
—Սահակի և Մեսրոպի մշակած լեզուն:—Խճնուրոյն  
գրականութիւն:—Դա զուտ կրօնական է:—Ենկեղեցու  
նշանակութիւնն ու ազդեցութիւնը 193—209:

**Զ.**—Սահակ-Մեսրոպեան դործունէութիւնը հելլէ-  
նականութեան յաղթանակն էր:—Ասիականութեան  
վերաբերմունքը. Պարսկաստանի առաջին փորձը հայ-  
ոց թագաւորութիւնը վերջացնելու մասին:—Յազ-  
կերտի որդին հայաստանում:—Վում թագաւորը և  
փոփոխութիւն պարսկական քաղաքականութեան մէջ:  
—Միհրներսէի:—Նրա ծրադիքը հայաստանի մասին:—  
Պարսկական կուսակցութիւն և Արտաշիր թագաւորը:  
—Ս. Սահակի ապարդիւն ջանքերը:—Ամբաստանու-  
թիւններ և դատաստանական կատակերդութիւն պար-  
սից արքունիքում:—Թագաւորութիւնը վերջացած, և  
Սահակը կաթողիկոսութիւնից զրկված:—Աղէտի գէմ  
դուրս է հրաւիրգում կրթական և դրական շարժումը:  
Սահակի և Մեսրոպի ջանքերը:—Երկու աննման գոր-  
ծակիցներ:—Ս. Սահակի մահը:—Ս. Մեսրոպը վախ-  
ճանվում է վեց ամսից յետոյ:

**Ս.** Մեսրոպի կեանքը ամբողջապէս չէ ներ-  
կայացրված:—Նա էլ մարդ էր:—Երկու փաստեր:—  
Բնութիւնը իրբ քրիստոնէական կրօնի պաշտպան:  
—Ժամանակի ոգին 209—232:

ՑՈՐԴՈՒԹ ՄԱՍ. — ՀԵՏԵՎԱԲԲՆԵՐ

**Ա.**—Սահակ-Մեսրոպեան գործունէութեան շարու-  
նակութիւնը:—Յազկերտ երկրորդ և Միհրներսէի կա-  
ռավարութիւնը:—Քրիստոնէութիւնը ջնջելու ծրագիր:  
—Հայերի պետական հաւատարմութիւնը 235—241:

**Ռ.** — **Միհրներսէնի** առաջարկութիւնը: — **Ստհակ** **Մերոպեան** դպրոցները Արտաշատի ժողովում: — **Մերժողական** պատասխան: — Հայերը ինքնաբերաբար հրաժարվում են ասիականութիւնից: — Խնդնազոհութեան պատրաստականութիւն: — Երկիրը մեծ արկածի մէջ: — Դրութեան գնահատութիւնը 241—247:

**Գ.** — **Մաղդեզականութիւնը** իրը պարսիկների միակ մտաւոր հարստութիւն: — Այդ կրօնի նախնական ձեր: — Բնապաշտութիւն: — Զրադաշտի վերանորոգութիւնը: — Աստուածութիւն, պաշտամունքներ: — Բարյական և առաջադիմական սկզբունքներ: — Բայց որքան էր կրօնը բարձրացնում մարդուն: — Պատիժներ: — Կրօնական անհամբերողութիւն: — Սկզբնական մաքրութիւնից շեղվելը: — Հին աստուածներ, նորամուտ պաշտամունքներ: — Սասանեանների վերանորոգած մաղդեզականութիւնը: — Հոգևորականների լուծը: — Կրօնը ծէսի փոխված: — Մանիի փորձը, քարացման յաղթանակը 247—260:

**Դ.** — Կարդդէին հայերը ընդունել մաղդեզականութիւնը: — Եզնիկ Եողբացու «Եղծ Աղանդոց» իրը ժամանակի լուսաւորութեան յուշարձան: — Քրիստութեան սկիզբը: — Հին աշխարհը կրօն է որոնում: Անու: — Փելիստիվայական սիստեմներ: — Քրիստոնէութիւնը պարյարմարգում է հին գիտութեան: — Ալեքսանդրիայի սծ, գպարոցը: — Եկեղեցու ընդունածը. աւանդութիւն և գիտեղինակութիւն: — Քրիստոնէութիւնը իրը նոր ազմը: Ճերի ուսուցիչ: — «Եղծ Աղանդոց» հանգամանքները: Գոր: — Քրիստոնեայ գրող և գիտութիւն: — Եզնիկի քննկավայական կարողակութիւնը: — Մաղդեզականութեան հերքումը: — Գիտնական փորձ: — Եզնիկը միակ երևոյներ թը չէ հինգերորդ դարում: — Ընդհարումը պարսիկերի հետ անխուսափելի էր 260—275:

**Ե.** — Հարկադրանքի միջոցներ: — **Միհրներսէնը** գործում է պարսկական կուսակցութեան միջոցով: — Ուրացում, քրիստոնէութիւնը պաշտօնապէս ջնջած: — **Մահակ** — **Մեսրոպեան** դպրոցները գրքի մարդիկ չէին որութիւն պատրաստում: — Գործի մարդիկ. Ղետնդ երէց: Ի կամ Դիմադրութիւն: — Աստուածպետական կառավարութիւն: — Ապստամբական կաղմակերպութիւնը: — Որդին հօր դէմ, եղբայրը եղբօր դէմ: — Ժամանակի հո-

գերանութիւնը:—Ուրացող նախարարների վերադարձը:—Ահաքեկում:—Ներքին պատերազմը:—Վասակի դերը:—Դա պարսկասէր կուսակցութեան բնորոշ ներկայացուցիչն էր:—Վասակին արդարացնող հանգամանքներ:—Հանգամանքներ, որոնց չէ կարելի ոչ մի կերպ արդարացնել:—Վասակի գործերը և ապստամբական անգիտութիւններ:—Ժամանակաւոր թուլութիւն պարսից քաղաքականութեան մէջ:—Եոյսեր Սրեմուտքի օգնութեան վրա:—Իրականութիւնը այդ յոյսերի դէմ:—Միհրներսէի և Վասակի ջանքերը և ուստապահների կորուստները:—Վարդան:—Նահատակութեան փափագ:—Պատերազմը անփուսափելի է:—Նրա քաղաքական նշանակութիւնը:—Նրա բարոյական-կուլտուրական նշանակութիւնը 275—310:

**Զ.**—Պատերազմող կողմերը Աւարայրի դաշտում:—Հայերի թուլութիւնը:—451 թ. յունիսի 2-ի օրվայ խորհուրդը:—Երկիրը պատերազմից յետոյ:—Աքսորներ, նահատակութիւններ:—Պարսկական կուսակցութեան կատարեալ յաղթանակը:—Մռայլ տարիներ:—Վատութիւնը և դաւաճանութիւնը խրախուսված:—Գերողի վկայութիւնը իրքե բարոյական անկման պացոյց:—Կայծեր աւերակների տակ:—Հայ կանանց կատարած դերը:—Մահակ-Մեսրոպեան զպրոցները չեն մեռել:—Լեռներում և անտառներում:—Պարսկաստանում:—Ջուփկ տիկին:—Նորից ապստամբական շարժում:—Վահան Մամիկոնեան:—Նրա կազմակերպած պատերազմական գործողութիւնները:—Նրա աջողութիւնը:—Այդ աջողութեան պատճանները:—Պարսկաստանը նեղ գրութեան մէջ:—Վաղարշ թագաւորը փոխում է պարսկական քաղաքականութիւնը:—Նուարսակի դաշնադրութիւնը:—Երեք պայմաններ: Հինգերորդ դարի շարժման ընդհանուր պատերը:—Յունականութեան նշանակութիւնը այդ շարժման մէջ:—Յետտագայ դէպքերը:—Անջատում յունականութիւնից, կղզիացում:—Հինգերորդ դարի հեղինակութիւնը յետագայ դարերի համար:—Ղեկավարող է նա, ներքին ոյժ է:—Մեսրոպեան գիւտը իրքե հայութեան միակ պաշտպան:—Նոր ժամանակների լուսաւորութիւնը և Մեսրոպի գործը 310—334:

## ՆԵՐԱԾՈՒԹՅԻՒՆ

Զորս հարիւր երեսուն ինն թւականից  
ձմեռն էր: Հայոց Մեհեկան ամիսը նոր էր  
մօտենում իր կէսին և Արարատեան մեծ դաշտի  
տի վրա դեռ տիրում էր սառնամանիքներից  
մեռելութիւնը: Բայց մարդիկ ցուրտ ու ան-  
զգայ չէին բնութեան պէս: Նրանց մէջ սաս-  
տիկ յուղմունք էր նկատվում: Պատահել էր  
մի տխուր դէպք:

Տերևազուրկ ու անկենդան փոված են  
այդիները դաշտի երեսին, և ծառաստաննե-  
րի այդ ընդարձակ տարածութեան միջից  
բարձրանում են մի քաղաքի կաւէ պարիսպ-  
ներն ու աշտարակները: Վաղարշապատն է,  
Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքներից  
մէկը:

Թագաւորներ շինեցին ու զարդարեցին  
նրան, թագաւորներ էին նստել նրա մէջ.  
Բայց այժմ թագաւորական մայրաքաղաք չէր  
Վաղարշապատը, և բազմաթիւ բարձր ապա-  
րանքները արժմ միայն վկայ էին թէ նա մի

Ժամանակ եղել է Արշակունի թագաւորների սիրած-փայփայած կալուածն ու բնակատեղին: Վաղուց էր նա զրկվել այդ փառքից: Մի ժամանակ նա նախանձով էր նայում իր հարաւարեւելեան դաշտեցի հարեան Դուինին, ուր փոխադրվել էր արքունիքը: Այժմ նախանձելու առիթ էլ չէր մնացել. այժմ նըռան չէր նախանձում և հին ու հոչակաւոր մայրաքաղաք Արտաշատը, որ նայում էր Դուինին միւս կողմից, Արաքսի ափից: Երեք մայրաքաղաք մի դաշտի վրա, երեքն էլ այրիացած: Այժմ այլ ևս թագաւոր չէր ապրում ոչ մի տեղ, այժմ սարդն էր ոստայններ գործում թաղաւորների դահլիճում \*): Հայաստանի թագը վերացել էր. հայերը իրանք չը կամեցան թագ ունենալ. ու գնացին, պարսիկներին տուին իրանց թագը:

Բայց հայոց աշխարհում գեռ մնացել էր մի համազգային հիմնարկութիւն: Վաղարշապատի ապարանքներից մէկը գտնվում էր կաթուղիկէ եկեղեցու մօտ: Քաղաքական կործանման միջոցին նա էլ բաւական խախտվել էր, բայց կարողացաւ պահվել և նրա շնորհիւ Վաղարշապատը այժմ էլ շարունակում էր մայր քաղաք լինել Հայաստանի համար: Այդ ապարանքը կաթողիկոսարանն էր: Այդտեղ ահա, Մեհեկանի 13-ին (Փե-

---

\*) Ֆրդուսիի խօսքերը:

տրվարի 17-ին) մի մարդ մեռաւ, և այդ դէպքն էր, որ յուզմունք տարածեց մայրաքաղաքի մէջ:

Վերջին տասը տարիների ընթացքում հայ ժողովուրդը մեծ-մեծ կորուստներ էր ունեցել: Կորցրեց թագաւորութիւնը, վերջացաւ Արշակունիների տոհմը. կաթողիկոսական իշխանութիւնը խլվեց Գրիգոր Լուսաւորչի տոհմից, յանձնվեց վատ ու արատաւոր օտարազգիների: Վեց ամիսը դեռ նոր էր անցել, ինչ խորին վշտի մէջ մեռել էր գահից հեռացրած հայոց կաթողիկոսը, որի հետ վերջանում էր Լուսաւորչի հոչակաւոր տոհմի հոդեոր տիրապետութիւնը: Իսկ այժմ այս կորուստը, վերջինը, որ տանում էր իր հետ գեղեցիկ յիշատակներ: Զգում էին որ հայ աշխարհից վերանում է մի սուրբ, մի նուիրական բան: Եւ մինչդեռ կաթողիկոսարանի սենեակում դրված էր այդ վերացողի անշունչ մարմինը, նրանից քիչ հեռու տաք վիճաբանութիւն տեղի ունէր: Հաւաքվել էին մարդիկ, մտածում էին թէ Հայաստանի մէջ ժկը պիտի որոնել այն մի ափ հողը, որ այդ մարմինը իր ծոցում ամփոփելու պատիւն ունենայ: Երեք տեսակ կարծիքներ կային, երեք վիճող կողմեր, ամեն մէկը մի տեղ էր առաջարկում, պատճառաբանութիւններ էր բերում, չէր ուզում զիջել միւսներին:

Եւ այդքան սիրված ու յարգված հանգուցեալը հոչակված իշխանաւոր չէր, մեծանուն մի տոհմից չէր վարում իր ծագումը, պատերազմի հերոս չէր կամ հարուստ մի կալուածատէր, աշխարհ կառավարող, հրամանատար չէր եղել, ոչ իսկ այս աշխարհի հզօրներից մէկն էր։ Մօտ ութսուն տարեկան մի ծերունի վարդապետ—վարդապետ և ոչ իսկ եպիսկոպոս,—հասարակ գիւղացու որդի.—ահա ով էր նա։

Բայց այդ ծերունին մի հատ անուն ունէր. նա առաջին հայ ուսուցիչն էր։ Գործել էր երեսուն ու հինգ տարի, և այժմ, երբ մահը խլել էր նրա ձեռքից թուղթն ու գրիչը, հայոց աշխարհը, առաջին անգամ իր պատմութեան սկզբից, գլուխ էր իջեցնում այդ նոր, մինչև այդ չեղած, գործիչի առջև։ Երեսոյթը որքան նոր էր, այնքան, և աւելի էլ, զարմանալի մեծ ու խորհրդաւոր էր։ Մի երկիր, որ դարերի ընթացքում իմացել էր միմիայն կոպիտ ոյժի առջև խոնարհվել, այժմ գտնում էր պաշտելու արժանի մի նոր սկրզբունք—մտաւոր ոյժը։ Գրքի հերոսը, առաջին անգամ հայ հողի վրա, ստանում էր այն պատիւներն ու մեծարանքները, որ մինչև այդ սովոր էին մատուցանելու սրի հերոսին...  
Բացվել էր փետրվարեան օրը, բաց էին և Վաղարշապատի դոները։ Մարդկային

գլուխների մի ամբողջ ծով դանդաղ, յոր ձանքներ տալով, դուրս է թափվում; Մայրաքաղաքը շատ էր տեսել փայլուն զօրահանդէսներ, արքայական յուղարկաւորութիւններ. այժմ նա ցոյց էր տալիս թէ գահից ու ինքնուրոյնութիւնից զրկված մի երկիր ինչ հզօր նեցուկ էր դտել: Շարժվում էր ծովացած, լուրջ ու մտախոհ ամբոխը: Պլազմում էին ճրագներն ու ջահերը, եկեղեցական երգեցողութիւնը տիրապէս ծաւալվում էր պաղ օդի մէջ: Ճանապարհին գիւղական խմբեր էին միանում հանդէսին:

Իսկ ճանապարհը երկար էր: Արարատեան դաշտի երեսին ահագին բազմութիւնը ամփոփվեց, համեմատաբար փոքր էր երեւում շրջապատող տափարակների անհուն տարածութեան վրա: Մասիսը, գետնից մինչև երկինք ձգված ձիւնեղէն սիւնը, հարաւից էր նայում հայոց աշխարհի այս նոր երեսութին, իսկ հիւսիսից Արագածի սուր գագաթները իրանց առաջապահ բարձրութիւնների ձիւնոտ գլուխների վրայով տեսան որ յուղարկաւորութիւնը թեքվեց դէպի իրանց կողմը:

Եւ իրաւ: Կաթողիկոսարանում վիճող կողմերից մէկը պիտի յաղթէր, ու յաղթողը չէր կարող մի ուրիշը լինել, երբ վիճողների թւում էր և հայոց հաղարապետը, Վահան

**Ամատունին:** Պարսից արքունիքը, ջնջելով  
հայոց թագաւորութիւնը, պարսիկ կառավա-  
րիչ (մարզպան) էր ուղարկում Հայաստան։  
**Ամատունին** նշանակված էր հազարապետ և  
երկրի կառավարութիւնը, մարզպանից յե-  
տոյ, նրա ձեռքումն էր։ Դա հայ լաւագոյն  
իշխաններից մէկն էր և կառավարում էր ժո-  
ղովուրդը «հայրաբար»։ Ինչպէս վկայում է  
պատմութիւնը։ Եւ պէտք է որ այդպէս լի-  
նէր, որովհետև նա մէկն էր կրթված հայե-  
րից։ Առաջին հայ ուսուցչի դագաղը շրջա-  
պատել էին նրա աշակերտները։ Դրանք էին  
ամենից շատ վշտացած, դրանք էին վէճ բա-  
ցել թաղման տեղի մասին։ Վահան Ամատու-  
նին էլ այդ աշակերտներից մէկն էր։ Բնա-  
կան էր որ նա կամենար իր սեփական կա-  
լուածում թաղել իր սիրելի ուսուցչին։ Իսկ  
նրա կալուածը այս դաշտից քիչ բարձր էր  
գտնվում—Օշական ամրոցը։ Հայոց հազարա-  
պետը թաղման հանդէսի դլուխն անցաւ։ Նը-  
րա հետ էր այն ժամանակվայ առաջնակարգ  
և աղղեցիկ ազնուական տան ներկայացու-  
ցիչը — Հմայեակ Մամիկոնեան, Վարդանի  
եղբայրը։

Դաշտը տեղի տուեց քարքարոտ բլուր-  
ներին։ Արագածի շղթայի առաջին ոտներն  
էին։ Բազմութիւնը հասաւ ամենամեծ բլու-  
րի գլուխը, իջաւ Քասաղ գետի մեծ ձորը,

Նորից դէպի բարձր գիմեց։ Օշականն էր։  
Այդտեղ իջեցրին դադաղը, այդտեղ եկեղեցին հրաժեշտ տուեց իր վարդապետին, իսկ ժողովուրդը վերջին անգամ երկրպագեց ուսուցչին։

Գերեզմանը փակվեց։ Եւ այն օրից Օշականի հողը պահում է իր ծոցի մէջ և.  
Մեսրոպին։

## ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲԸ

(Խմ ճանապարհորդական յուշատետրից)

Անողորմ է յուլիսեան արեգակը Արարատեան դաշտում։ Շուրջդ ամեն ինչ այրվում է։ Երկնակամարն անգամ—չես հաւատում թէ շիկացած երկաթից չէ։ Մի բանի դէմ միայն անզօր է յուլիսեան արեւը.—Մասիսի վեհափառ գագաթի դէմ, որ օրն ի բուն շողացնում է իր ձիւնեղէն գտակը և իր ոտների տակ տապակվող աշխարհին ասում է թէ արարատեան արեգակն էլ, այնուամենայնիւ, ամենակարող չէ։ Բայց դրանից ինչ միիթարութիւն խեղճ ուղեսորին...

Թրտնաթաթախ, մոծակներից և հազարու մի անտեսանելի մժեղներից խոցոտված ու այրված, մենք—ես և պրօֆէսօր պ. Գ. Խալաթեանը—1902 թւականին, վաղ առաւտեան, կառք ենք նստում Վաղարշապատ գիւղում։ Դաշտի ծանր, այրող փոշին մլում է

անիւների տակից, օդի մէջ շարժվող մասնիկ չը կայ: Մի օր էլ է բացվել, այրվելու մի երկար օր էլ: Գնում ենք միշտ երեսներս դէպի հիւսիս: Իսկ հիւսիսի ամենաբարձր կէտից, կապոյտ ու ժպտուն երկնքի միջից, մեզ նայում է գեղեցիկ Արագածը: Այնտեղ կը գտնենք զովութիւն, կանաչներ:

Դաշտը դանդաղ կերպով բաց է թողնում մեզ իր այրող գրկից: Երևացին աղքատ, չոր, վհատեցուցիչ բլուրներ: Ամեն ինչ կրակված վերջացած է. ուր չը կայ ջրի մի շիթ, այնտեղ մէկ է բոյսի, հողի, քարի վիճակը—այրվել:

Մեր ճանապարհը նոր է շինված, խճուղի է. և ձիաների ու մեր յարմարութեան համար նա ոլորզում է բլուրների լանջերով, երկար շրջաններ է տալիս: Նոր ժամանակի պահանջը—երկար լինի, հանգիստ լինի: Այսպէս չէր հին դարերում, այն ժամանակ յարմարութեան մասին չէին մտածում, այլ կարճութեան: Ահա և այդ հին ժամանակների ճանապարհը. նա նեղ է, ծուռ ու մուռ, կը բրում-անցնում է ուղիղ ու համարձակ, մեծ շրջաններ տալու, յարմար դիրքեր բռնելու բան չունի, կամ սողում է դէպի բարձր, կամ գլխիվայր ցած է վազում:

Կառքից նայում եմ այդ հին կածանին և ինձ թւում է թէ տեսնում եմ նոյն այն

ուղին, որով 1463 տարի առաջ Վահան Ամատունին տանում էր թաղման մեծ հանդէսը։ Սխալվում էի արդեօք. — ով կարող է ասել։ Դարերը անխնայ քանդել են մեր երկիրը, — այս ճիշտ է. բայց և ինչպէս լաւ գիտէին շատ բան անշարժ ու անխախտ պահել։ Միշտ շարժուն, անհանգիստ, որոնող մարդու վրա անգամ այնքան շատ բան է մընացել հին ու անփոփոխ, միթէ անհնար է որ մնար մի հատ ճանապարհ այս լերկ բլուրների լանջերին։

Ես չը գիտեմ, ես երևակայում եմ։ Ամեն մի մեծութիւն բնութեան և մարդկային կեանքի մէջ իրաւունք ունի անփոփոխ մնալու ոչ թէ երէկ ու այսօր, այլ յաւիտեանեղել է որ և է փոփոխութիւն այն հայեացքի մէջ, որ դարերի սկզբից Մասիսն ու Արագածը բնեռած ունեն այս ապառաժուտ լանջերի վրա։ Բնութիւնը չէ խօսում որ ասէ. մարդկային անցեալը խորհրդապահ ու լուռ է բնութեան պէս, բայց դու զգում ես նրան, շօշափում ես հոգով։ Եւ ահա ես տեսնում եմ — աչքով արդեօք — մեծ բաղմութիւնը, որ տանում էր դագաղը ձեռքից ձեռք, ուսից ուս տալով։ Այստեղ, այս ձորակում, երևի, հանգիստ առան յուղարկաւորողները, — առջեկի լանջը շատ է ցից ու դիք։ Այստեղ, երևի, մարդիկ իրար անցան, օգնու-

թեան հասան իրար, որպէս զի դագաղը զգոյշ տանեն, ցած չը գլորեն։ Այս սապատող լանջը ծածկված էր մարդկանցով, որոնք այստեղ ցրիւ ընկած էին գնում,—այսպէս է ասում, չը գիտեմ ինչու, տեղի դիրքը։ Այն բլուրների գլխից մարդիկ էին նայում հանդէսին և հարց ու փորձ էին անում թէ ով է այսպիսի պատւով թաղվում։ Իմանում էին և զարմանում։

Ու հարիւր ու մի այսպիսի մանրամունք տեսարաններ։ Թւում էր թէ տեսնում եմ խունկի ծուխը, լսում եմ սաղմուների ձայնը. ահա նա մարեց այն ձորում, ահա նորից հնչեց, դուրս գալով այն մի բարձրութեան գլուխը։

Ամբողջ ճանապարհը ես այդ հանդէսին ետ եմ։ Վերին աստիճանի ախորժելի մի զգացմունք է այն, երբ սկսում ես ազատ շունչ քաշել, երբ օդի մեղմութիւնը աշխոյժ է տարածում թուլացած մարմիղ մէջ։ Այս յանկարծակի, սիրուն փոփոխութիւնը, այս նոր աշխարհը, որ դժոնվում է Վաղարշապատի մոծակներից ու այրվող օդից բարձր, աւելի ուժեղացնում է մտքիդ թռիչքը դէպի հեռու, դէպի ալեոր դարերի խորքը։ Ինձ թւում էր թէ ամեն ինչ այնպէս է տեղի ունեցել, ինչպէս ես եմ ինձ ներկայացնում, թէ կարելի է այժմ, առանց դրքերի ու վկայ-

ութիւնների, կազնեցնել կառքը և այստեղ խակ, արևի տակ, գրել հազարամեայ այդ պատմական եղելութեան մանրամասն, ճիշտ պատկերը:

Ինչու է այսպէս: Ինչու թւում է թէ հիմա էլ գնում եմ այն հին, սգաւոր հանդէսի ետևից, ինչու երևակայութիւնը այնքան ուժեղ է, որ տասն և չորս դարերի ետևից ստուերներ է հանում նրանց մարմին և արիւն հաղորդելու համար: Ինչից է այս եռանդուն, տենգային ջանքը:

Մենք գնում ենք Մեսրոպի գերեզմանը տեսնելու—ահա ինչու: Անունը հեռուից է ազդել, մենք լցված ենք ուխտաւորի ջերմեռանդ ոգևորութեամբ: Օշականը դեռ չէ երեսում, ես երբէք նրան չեմ տեսել, բայց գիտեմ, հաւատում եմ որ այս բլուրների ետևում պիտի տեսնեմ մեր դժբախտ, արիւնոտ պատմութեան ամենամեծ հրաշքը, պիտի հաղորդակից դառնամ այն հիացմունքին, որ տասն և հինգ դարերի ընթացքում հայ աշխարհի բոլոր կողմերից հաւաքվել է այս համեստ, սովորական հայ գիւղում: Իբրև հայ գրագէտ, պիտի խոնարհվեմ իմ մեծ պապի առջև, որ ինձ, ինչպէս և ինձ նման հազարներին, գծեր է տուել սրտի և հոգու իղձերը, թախիծն ու զգացմունքները պատկերացնելու, իսկ իբրև որդի մի ազգի, որին դարե-

ըի սկ փոթորիկների մէջ պահողը եղել է գիրն ու լեզուն, պիտի իմ անհուն, կրակոտ երախտագիտութիւնը թափեմ այդ գերեզմանի վրա...

Ահա և հոչակաւոր, անմահացած գիւղը։ Մենք բարձրացել ենք մեծ բլուրի գլուխը։ Որքան մեծ ու խոր ձոր է իր համար փորել Քասաղ գետը։ Այգիների մի երկար տեսարան է բացվում.—գեղեցիկ է Օշականը։ Հինաւուրց կամուրջի տակով քարէքար ընկած վագում են Քասաղի պարզ ու վճիռ ջրերը և իրանց մեղմ վշշոցով ողջունում են նորեկին, աւելի խտացնելով այն յափշտակութիւնը, որ գրկում է նրան այս անուանի վայրերում։

Կամուրջի միա կողմը գիւղն է, որ վերևից գալիս է սեղմվում ձորի բաշին, կախ ընկնում նրա լանջերով։ Օշականը գեղեցիկ շրջականեր ունի, նա հարուստ է իր այգիներով, բայց և այդպէս, մեր այժմեան սովորական գիւղերից մէկն է իր փոքրիկ տներով, աղբոտ փողոցներով։

Սակայն ուխտաւոր այցելուի համար ժամանակակից գիւղական հարցերը երկրորդական են։ Ամենից առաջ նրան հիացնում է այս հասարակ գիւղի երկարակեցութիւնը։ Ո՞ր ժամանակներից է նա մաքուր ու հնչիւն պահել իր անունը։ Հոչակված, համաշխար-

հային մայրաքաղաքներ են եղել, որոնք այժմ մոխրի կոյտեր են ներկայացնում. իսկ այս խղճուկ գիւղը հաստատ ու անսասան է մնացել իր ձորի ծայրին, ապրել է և ապրում է:

**Մտնելով Օշական,** ուր կարելի է ուղղել քայլերը, եթէ ոչ դէպի եկեղեցին: **Մեր ժամանակների** մի շինութիւն է դա բարձր գանգակատնով, բաւական մաքուր ու վայելուչ տեսքով: Ներսից էլ լաւ տպաւորութիւն է թողնում. գիւղական եկեղեցուց քիչ—այժ, քիչ—աւել մի բանի է նման: Աջ կողմի խորանում մի դուռ է բացվում, մի քանի աստիճան ցած էք գնում և ձեր առջև, քարէ կամարների յաւիտենական ցուրտ լուստեան ու մթութեան մէջ, սպիտակին է տալիս մի ցածրիկ, տափակ ու անզարդ քար: Ահա ս. **Մեսրոպը...**

**Այստեղ թող լռեն ուխտաւորի զգացմունքները:** Միրտն էլ այս անձուկ ու մութխորշի նման է. շատ բան է պարունակվում նրա մէջ, բայց դրսի աշխարհը նրան չէ տեսնում և լսել չէ կարող: Այն միայն հնարաւոր է այստեղ ասել, որ գերեզմանը հարկադրում է խորին, անսահման շնորհակալութեամբ լըսվել դէպի այս խաւարն ու խոնաւութիւնը, այս քարերն ու կամարները, դարաւոր հաւատարիմ աւանդապահները: Այցելուն գիտէ

որ այս գերեզմանի մէջ ամփոփված է մի մեծագործութիւն, որ արժանի էր մեծ ու փառահեղ յուշարձանների: Ամեն ազգ իր երախտագիտութեան ամենասքանչելի ցոյցերն է թափում իր նույիրական գերեզմանների վրա, լոյս, օդ, լայնարձակ հրապարակներ է յատկացնում նրանց, որպէս զի տպաւորութիւնը ազդու լինի, վեհ: Ո՞ւր է Մեսրոպի յաւիտենական օթևանի փառահեղութիւնը, ուր է արուեստը, որ նշանակէր, շեշտէր այս նույիրական վայրը:

Ոչինչ չը կայ, և այցելուն առաջին վայրկեան մի տեսակ վիրաւորանք է զգում:

Բայց գա վայրկենական զգացմունք է, և անցնում է շուտով, երբ հասկանում ես հայրենի բազմադարեան իրականութիւնը: Կարող էր փառահեղութիւնը կանգուն մնալ, դիմանալ մեր երկրում: Մի երկիր է դա, որի սարերն անգամ մաշվել են յարձակվողների անխոնջ ձիաների սմբակների տակ. Ի՞նչ կը դառնային կոթողներն ու մահարձանները, եթէ նրանք դրված էլ լինէին Մեսրոպի դամբարանի վրա...

Արուեստը հիացնում է կրթված, լուսաւոր սրտերը, բայց կատաղութիւն է ներշնչում վայրենիներին, որոնց հասկանալի է միայն քանդելու, կողոպտելու պաշտամունքը: Երկաթն ու որձաքարը ոչնչանում են

վայրենիների մուլճի տակ և ոչնչացնում են  
այն դէպքերն ու անունները, որոնց յաւէ-  
ժացնելու համար էին դրված: Ֆիդիասի հան-  
ճարն անգամ չը կարողացաւ թուլացնել քան-  
դողների թևերը: Իսկ այստեղ, Արագածի  
փէշին կպած այս փոքրիկ գիւղի փոքրիկ ե-  
կեղեցին իր պատերի մի խոռոշում պահել-  
պահպանել է, աւերման դարերի անվերջ շար-  
քերով անց է կացրել ու մեզ հասցրել մի  
անշուք քար, որ այսօր մեր ամենանուիրա-  
կան պարծանքն է \*):

Ոչ թէ հրապարակներում պաշտել այդ  
պարծանքը, այլ լոիկ խաղաղութեան մէջ  
փոքրիկ, դողդոջուն ճրագը ձեռքին մտնել  
ստորերկրեայ փոսը, ուր խոնաւութիւնն ու  
մութը անյայտութիւն և մոռացութիւնն են  
ապահովում, և այդտեղ տեսնել ու զգալ,  
մտածել ու յուզվել—այս հնարաւորութիւնն  
է տուած եղել հային...

Ո՞վ էր, որ սկզբից և եթ հասկացաւ  
թէ այս կերպով կարելի է յաւէժացնել մեծ  
մարդուն, նրա աճիւնը յանձնել դարերին  
իբրև հաստատ աւանդ:

Եկեղեցին մտնելիս, դուք ուշադրութիւն

\*) Ս. Մեսրոպի գերեզմանաքարը շինված է Դէ-  
որգ 1V-ի հրամանով 1884 թւականին և ունի մի խըդ-  
ճուկ արձանագրութիւն, որ աւելի նորոգողին է հռչա-  
կում: Դա մի Անդրէաս արքեպիսկոպոս է, Կ. Պօլսեցի:

Էք դարձրել բակի ծայրում բարձրացած քարէ գեղեցիկ, քառակուսի մի արձանի վրա: Այժմ, ս. Մեսրոպի գերեզմանից հեռանալիս, այցելեցէք այդ արձանը: Նա հին չէ, շինված է մեր օրերում և գիր ու յիշատակ չունի: Բայց յայտնի է որ նրան կանգնեցրել են ի յիշատակ Վահան Ամատունու: Արդէն գիտէք որ նա Մեսրոպի աշակերտներից էր, հայոց աշխարհի հազարապետ էր կարգված և հօր պէս էր կառավարում երկիրը: Բայց Օշականի իշխանը դրանից էլ աւել աչքի ընկնող գործեր ունի: Հինգերորդ դարի ապստամբական շարժման գլխաւորներից մէկն էր նա, Վարդանի, Ղևոնդ երէցի կողմնակիցը և ղինակիցը: Աւարայրի պատերազմում Ամատունեաց գնդի հրամանատարն էր. պատերազմում անվնաս մնաց, բայց պատերազմից յետոյ միւս նախարարների հետ Պարսկաստան քշվեց, ուր տարիներով կրեց գերութեան կապանքները:

Այս նահատակութիւններն էլ բաւական են, որ մեր ոսկեդարի այգ հերոսն ունենայ այսպիսի մահարձան: Սակայն Վահան իշխանի գլխաւոր երախտիքը այդ չէ: Նա թաղեց Մեսրոպին իր Օշականում, բայց մեծ ուսուցչի համար այդքանը քիչ համարեց և նրա գերեզմանի վրա եկեղեցի էլ կանդնեցրեց, որի ցածրիկ, ստորերկրեսց խորշում

մօտ 1500 տարի է, ինչ պահվում է այդ գերեզմանը։ Եւ նրա մահարձանը Օշականի եկեղեցու բակում—դեղեցիկ միտք է։ Ուսուցիչն ու աշակերտը միասին։ և աշակերտը այժմ էլ, հազարաւոր տարիներից յետոյ, իր առանձնութեան անկիւնից կարծես նոյն հիացմունքով է նայում այն պատերին, որոնց ետևում ծածկված է ուսուցիչը...

---

Նստենք, ընթերցող, Օշականի եկեղեցու բակում։ Վաղարշապատի այրվող դաշտից յետոյ որքան հաճելի է հանգստանալ այս՝ մեղմ օրօրվող՝ ծառերի զով շուաքում։ Մարի շունչը հանգարտ շօյում է մեր ճակատը, եկեղեցու պատերը քաղցր խորհրդաւորութիւն են հաղորդում ամառնային առաւօտին։ Դարերն են շնչում, լսենք նրանց։ Ես դիտմամբ բերի ձեզ այստեղ։ Մեսրոպի պատմութիւնը մի այլ տեղ անել չուզեցի։ Լաւ է խօսել վկաների ներկայութեամբ. ահա Վահան Ամատունին, ահա և ինքը, մեծ մարդը։

Ո՞վ է նա, այդ մարդը։ Դուք լաւ գիտէք։ Գիտէք որ հինգերորդ դարում մի հայ վարդապետ, Մեսրոպ կամ Մաշտոց անունով, հայերէն տառեր գտաւ և դրա համար էլ մեր նշանաւոր մարդկանցից մէկն է համարվում։ Ես միան այդ չը պիտի կրկնեմ չեզ։ Զոր

ու ցամաք կենսագրութիւնը շատ բան չի տա՞ծ ձեզ. Նա աղքատ է, չափազանց համառույ նա այդպէս էլ հասել է մեր ձեռքը և այդ թերակատար դրութեան մէջ յայտնի է հինգերորդ դարից: Կենսագրական նիւթի այդ պակասութիւնը մենք, այսօրվայ մարդիկս, կարող ենք միայն մի բանով լրացնել, այն է՝ պարզելով Մեսրոպի նշանակութիւնը մեր ամբողջ անցեալի նկատմամբ: Այս մենք կարողութիւն ունենք անելու, որովհետեւ պատմութիւն կայ, փաստեր կան, որոնք չոր ու ցամաք, պատահական եղելութիւններ չեն ներկայացնում, այլ և մի ընդհանուր միտք, մի խորհուրդ, որի մեծութիւնը ապշեցնող է:

Հէնց այս պատճառով էլ բերել եմ ձեզ այստեղ: Նախ երկու խօսք այն աշխարհի մասին, ուր այս բօպէին գտնվում ենք մենք:

Այստեղ, ինչպէս գիտէք, Արագածի ոտներն են: Մեր նախնիքները այսպէս էլ անուանում էին այս կողմերը—Արագածոտն: Մեծ ու ընդարձակ մի գաւառ, որ բոլոր հայկական գաւառների մէջ ամենից շատ հոչակվածն է: Հոչակը նրան հաղորդել են ոչ թէ Արագածի գեղեցիկ գիրքերը, այլ այն, որ սա մեր պատմութեան որրանն է: Աչք ածեցէք ձեր շուրջը: Առաջներիս փոված է Արարատեան դաշտը կամ Արաքսի հովիտը: Նա ձգվում է, հարթ ու լայն, արևելքից դէպի

արեմուտք, իսկ հարաւից և հիւսիսից եզերված է լեռնային շղթաներով։ Հարաւային շղթայի առջև տիրաբար կանգնած է Մասիսը առանձնակի, իսկ հիւսիսային շղթայի վրա բազմած է Արագածը։ Այդ երկու խրոխտ հսկաները իրարից բաժանող տարածութեան վրա, մեր պատմութեան վաղ արշալոյսին, հանդէս եկան հայերը։ Մովսէս Խորենացին, պատմելով Արմենակի գաղթի աւանդութիւնը, ասում է. «Եւ արեելեան դաշտը կարծես երեսն ի վեր պառկած, տարածում է երկայնութիւնը գէպի արեգակի կողմը. սարերի ստորոտից էլ շատ ականակիտ աղբիւրներ բղիսելով և իրանց սահմանների մօտ հաւաքվելով՝ գետեր են դառնում և սարերի ստորոտներով ու դաշտի ծայրերով հեզարար բոլորում են ինչպէս մի քանի պատանիները օրիորդների շուրջը։ Բայց մինչև արեգակը բարձրացած հարաւային սարը (Մասիսը), սպիտակ գագաթով, երկրից ուղղաձիգ բուսած, փոքր առ փոքր սրածայր է դառնում և ճիշտ որ ծեր սար է երևում երիտասարդ սարերի մէջ. երեք օր դնալով, ինչպէս մերոնցից մէկն ասաց, արագագայլ մարդը կը շրջապատէ նրան։ Արմենակը, այս խոր դաշտի մէջ բնակվելով, շնորհեց դաշտի հիւսիսային կողմի մի մասը և սարի նոյն կողմի ստորոտը, սարը իր անունով Արագած կո-

չեց, իսկ կալուածները — Արագածոտն»:

Ահա ինչ գեղեցիկ և վեհ տպաւորութիւն էին թողել այս կողմերը առաջին հայերի վրա։ Այստեղ էլ դրվեց մեր հիմքը, այստեղ մենք զարգացանք, մտանք պատմական ազգերի շարքը։ Արագսի հովիտը մի լայն ու մեծ ճանապարհ էր Արևելքի և Արևմուտքի մէջ. այստեղ իրար հանդիպում էին, իրար հետ բաղիսկում էին ամեն տեսակ ազգեր. պարսիկ, սկիւթացի, ասօրեստանցի, հոօմայեցի, բիւզանդացի, արար, սելջուկ, մօնզօլ, թիւրք, դաղստանցի։ Այստեղ մենք գործում էինք, տանջվում էինք, ընկնում, նորից վերկենում։ Մեր պատմութիւնը այս հովտում կազմվեց։

Օշականի բարձունքների վրա մի դործ կատարենք, ընթերցող։ Կուտենք հին-հին դարերը Արարատեան գաշտում, թողնենք որ նրանք դնան այնպէս, ինչպէս գնացել են իրանց ժամանակին, Մասիսի ու Արագածի մէջ տեղով, իսկ մենք նայենք այն կոյտերին։ Մեծ գործը պէտք է լուսաբանել շատ կողմերից, դնել լայն հօրիզոնների մէջ։ Ա. Մեսրոպը միայն իր ժամանակը չը յեղափոխեց, այլ իր ժամանակի հայութեան ամբողջ անցեալը, ամբողջ ներկան ու ապագան։ Մեր պատմութիւնը ուրիշ նոյնանման մեծադործութիւն չունի, չէ ճանաչում։ Մխար

կը լինի այդ մեծագործութիւնը միայն իր քամանակի մէջ տեսնել։ Մենք պիտի տեսնենք երեք բան. ինչ կար, ինչ եղաւ և ինչ հետեւանքներ ծնվեցին։

Ս. Մեսրոպի ծառերի տակ հանգստութեան շատ ժամեր ունենք։ Արևը դեռ չէ բարձրացել, յուլիսեան առաւօտը մեղմ ու կազդուրիչ է։ Մեր ուղևորութիւնը դէպէ հին դարերը լաւ յարմարվում է այս առաւօտին...

**ԱՌԱՋԻՆ ՄԱՍ**

**ԱՍԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ**



Ա.

Արևելքի քաղաքակրթութիւնը:—Միջագետք:—  
Աւրաբուեան երկիրներ:—Հայերի գալուստը:—Նոր  
հայրենիքի քաղաքական կազմակերպութիւնը:—Շըր-  
ջապատը:—ասիական բռնապետութիւն:—Ասորես-  
տանը՝ նախատիպ:—Գազանային պաշտամունք:—Ա-  
րևելեան քաղաքակրթութեան յատկանիշները:—Բօկլի  
կարծիքը:—Ասորեստանի անկումը և նառում մարգարէ:  
Արևելքի հարկադրութիւնը:—Արեմուստք:—Հել-  
քնականութիւն:—Անհատ, ազատութիւն, հայրենիք:  
—Արևելեան հարցի սկիզբը—ընդհարում Եւրօպայի  
և Ասիայի մէջ:

---

Հին լատինական ասացուածք կայ թէ  
լոյսը արևելքից է գալիս: Եթէ բանը վերա-  
բերվէր արեգակի լոյսին, չարժէր էլ այդ  
մասին ասացուածք կազմել և կրկնել նրան  
իբրև ճշմարտութիւն, որովհետեւ ում չէ յայտ-  
նի որ արևը արևելքից է ծագում: Բայց մի-  
այն այս հանրածանօթ իրողութիւնը չէ ծածկ-  
ված այդ խօսքի մէջ: Կայ և աւելի խոր  
իմաստութիւն.—աշխարհը մտաւոր լոյսն էլ  
արևելքից ստացաւ:

Նախապատմական աղջամուղջի, քառական խաւարի մէջ Արևելքն էր այն տեղը, ուր առաջին անգամ վառվեցին մարդկային քաղաքակրթութեան ճրագները: Այդ լոյսերի հայրենիք հանդիսացան հարաւային մի քանի մեծ գետերի հովիտներ, ուր նախնական մարդը աւելի մեծ յարմարութիւններ գտաւ բնութեան դէմ կուելու և իր կացութիւնը բարւոքելու համար:

Թողնելով չինական, ննդկական, եգիպտական գետահովիտները, կասենք, որ ամենահին քաղաքակրթութեան որրաններից մէկը շատ մօտ էր այն երկրին, որ հայերի պատմական հայրենիքը դարձաւ: Հայաստանի լեռներից բզիսող երկու մեծ գետեր, Եփրատն ու Տիգրիսը, իրանց ստորին ընթացքում, Միջագետքից մինչև Պարսից Ծոցը, տասնեակ դարեր պահում էին իրանց ափերի վրա մարդկային խելքի և առաջադէմ ողու զարմանալի գործերը: Մինչդեռ այժմեան Եւրօպան դեռ բոլորովին վայրենի էր և նրա բնակիչները ապրում էին անտառների մէջ, գազանների նման, Տիգրիս-Եփրատեան հովտում ծաղկած էին ահաղին քաղաքներ, երկրագործութիւնը, արուեստները, գիտութիւնը այնքան առաջ էին դնացել, որ մարդը նոյն իսկ փարթամութեան վերին աստիճաններն էր բարձրացել: Նոյն այդ հովտում էլ կազ-

մակերպվեց առաջին ասիական մեծ պետութիւնը, Ասորեստան:

Միջագետքը—դա համաշխարհային քաղաքակրթական, խոշոր որրան էր: Բայց կային և մասնաւոր, տեղական շրջանակներ, ուր լոելեայն, առանց ամբողջ աշխարհի ուշադրութեան արժանանալու, զարգանում էին ազգութիւններ: Այսպիսի տեղերից մէկն էր մեր Արաքսի հովիտը: Անյայտ հին ժամանակներից այստեղ ապրում էին ուրարատեան կամ նախահայեր կոչված ցեղերը: Նրանք պետութիւն կազմեցին, ուժեղացան, կուլտուրա զարգացրին, տարածվեցին մինչև Վանի լճի ափերը և ուրիշ տեղեր: Քրիստոսից վեց դար առաջ այդ ցեղերի բնակութեան տեղերը, Արաքսի և Վանի լճի աւազանները, ենթարկվեցին արևելքից եկած բարբարոսների արշաւանքին: Երկիրը քարուքանդ եղաւ և նախահայերի թագաւորութիւնը ոչնչացաւ. բազմաթիւ ազգաբնակութեան մի մասը միայն ազատվեց կոտորածից, այն էլ հեռացաւ ուրիշ տեղեր, թողնելով երկրի մէջ փոքրիկ, թոյլ մնացորդներ:

Այդ սարսափելի փոթորիկից յետոյ բաւական ժամանակ անցած՝ Ուրարտեան երկիրներում երևան է գալիս մի նոր ազգ—հայերը: Սրանք, ինչպէս ենթադրում են այժմեան դիտնականները, արևմուտքից եկան,

**Փոխւգիայից:** Խօթներորդ դարի վերջերում դուրս գալով այդ երկրից, հայերը կամաց կամաց առաջացան, գրաւեցին հայկական լեռնաշխարհը, աւելի խաղաղ միջոցներով, քան զէնքի ոյժով ձուլեցին իրանց մէջ տեղացի բնիկ ազգերը:

Ի՞նչ ազգ էին այդ նորեկները: Հաստատ տեղեկութիւններ չը կան, ազգային աւանդութիւններն էլ կցկտուր են, վայրիվերոյ: Յայտնի է այն, որ այդ ազգը հնդկաներօպական ցեղին էր պատկանում, ուրարտացիների հետ ոչինչ ազգակցութիւն չունէր: Իբրև քաղաքական կազմակերպութիւն, նա աչքի ընկնող ոյժ չէր ներկայացնում, իսկ իբրև կուլտուրական մարմին՝ չունէր խիստ որոշվող, բարձր յատկութիւններ պարունակող ինքնուրոյնութիւն: Դա հովուականերկրագործ մի ժողովուրդ էր, որ բերում էր իր հետ արիական ցեղերին յատուկ պաշտամունքներ, հասարակական—իրաւական, ընտանեկան կազմակերպութիւն:

Պատմական յիշատակարանները առաջին անգամ Հայաստանի անունը տալիս են Քրիստոսից առաջ հինգելորդ դարում: Այդ ժամանակ Նրանց երկիրը Պարսկաստանի դէմ ապստամբված է և նորից նուաճվում է Դարեհի ձեռքով: Թւում է թէ այդ միջոցին հայերը դեռ Հայաստանի արևմտեան մասե-

բում էին կենտրօնացած։ Դրանից առաջ, աշ-  
բեմուտքից դէպի արևելք շարժվելիս, հայե-  
րը ընկել էին մարաց պետութեան լուծի-  
տակ։ Նախնական այդ շրջաններում էլ հայե-  
րին տեսաւ և նկարագրեց յոյն զօրավար և  
մատենադիր Քսենոփոնը։ Որքան կարելի է  
դատել այդ նկարագրութիւնից, հայերը բա-  
ւական ցած էին գտնվում քաղաքակրթու-  
թեան աստիճանների վրա և ունէին այդ  
գրութեան համապատասխանող հասարակա-  
կան կազմակերպութիւն։ Քսենոփոնը չէ ա-  
սում որ հայերը այդ ժամանակ ունէին թա-  
գաւորութիւն։ Հայոց երկիրը կառավարում  
էր պարսկական սատրապը, և բացի նրանից՝  
միակ իշխանութիւնը, որին հանդիպում ենք  
այդ նկարագրութեան մէջ, դիւղական տա-  
նուտէրն է։ Բայց այս չէ նշանակում որ  
Հայաստանը չունէր թագաւորութիւն։ սատ-  
րապը հայոց թագաւորն էր, ինչպէս ենթա-  
դրում են գիտնականները։ Նոյն Քսենոփոնը  
իր մի ուրիշ աշխատութեան մէջ մանրա-  
մասն նկարագրել է հայոց Տիգրան թագա-  
ւորին և նրա ընտանիքը։ Բայց սեփական  
թագաւոր ունենալը չէր խանգարում որ եր-  
կիրը հպատակ լինի մի այլ պետութեան-  
Այս երևոյթը շատ սովորական է հին ժամա-  
նակներում, մանաւանդ Արևմտեան Ասիայում։  
Եւ այսպէս, սկզբից և եթ հայ աղզը,

գատելով եղած տեղեկութիւններից, պատմութեան բեմի վրա երևան է գալիս իբրև ուրիշների հպատակ։ Անկասկած, նա ոչ իր ցեղական յատկութիւններով, ոչ իր թւով չէր էլ կարող անկախ դեր խաղալ այնպիսի մի ժամանակ, երբ Առաջաւոր Ասիայում կազմվում էին վիթխարի, աշխարհակալ միապետութիւններ։ Կարեւոր է, սակայն, ի նկատի առնել այն կազմակերպութիւնը, որ ստացաւ Հայաստանը, երբ վերջացել էր հայերի առաջաղացութիւնը և տեղի վրա գտնվող բնիկ ազգաբնակութիւնը վերջնականապէս խառնվեց նրանց հետ։ Ուրարտական կամ նախահայերի երկրում գոյութիւն ունէին բազմաթիւ մանր, անկախ իշխանութիւններ, որոնք սեպաձև արձանագրութիւնների մէջ կոչվում են թագաւորութիւններ և որոնք հարկաւոր դէպքերում գիտէին միանալ՝ արտաքին թշնամուն դիմաղրելու համար։ Հայերը, տիրելով նրանց երկիրներին, չը կարողացան վերացնել տեղական անկախութիւնների այդ սիստեմը, այլ հարկադրված եղան իրանց պետական կազմակերպութիւնը ենթարկել նրան։ Այնպէս որ Հայաստանը իր քաղաքական գոյութիւնը վերջնականապէս հաստատում է մանր անկախութիւնների մի խիտ ցանցի ձևով։ Դրանք մեր նախարարութիւններն են, որոնք, ինչպէս յայտ-

Նի է, երկրի մշտական թուլութեան ամենաագլխաւոր պատճառներն էին։ Այդպիսի կազմակերպութիւնը չէր թոյլ տալիս որ երկիրը կենտրօնացնէ իր ոյժերը, ընդհանուր, հաւաքական ջանքերով իր վիճակը տնօրինէ և հանգէս բերէ իր ընդունակութիւնների միահամուռ պատկերը։ Իբրև ներսից թոյլ մի մարմին, նա միշտ ենթարկված էր մեծ պետութիւնների խիստ ազդեցութեան։

Ազդեցութեան հարցը չափազանց կարեոր է իւրաքանչիւր փոքր, ուրիշներին հպատակված ազդութեան համար։ Դա նրա քաղաքական և հասարակական դաստիարակութեան հարցն է, դա այն միջավայրն է, ուր տիրող կարգերն ու օրէնքները մշակում են յայտնի դրութիւններ, աշխարհայեցողութիւններ, պաշտամունքներ։ Ուստի մենք պիտի ծանօթանանք այն միջավայրի հետ, որին ենթարկվեցին հայրերը իրանց նոր հայրենիքում, ուրիշ խօսքերով՝ պիտի տեսնենք թէ ինչ էր պարսից միապետութիւնը, որի մի մասն էր կազմում Հայաստանը։ Ի՞նչ էր առհասարակ ասիական միապետութիւնը։

Ինչպէս ասացինք, ասիական առաջին մեծ պետութիւնը կազմակերպվեց Միջագետքում։ Դա Ասորեստանն էր, որ ներկայացնում էր Տիգրիս-Եփրատեան հովտի քաղաքակրթութիւնը։

Մի պետութիւն էր դա, որի հազարամեայ տարեգրութիւնները խօսում են անվերջ նուաճումների, պատերազմների մասին։ Պատերազմը այն տարբն էր, առանց որի չէր կարող ապրել Ասորեստանը։ Դա զինուորական մի բանակ էր, որ չէր կարող հանգիստ նստել իր տեղը, որ տիրապետում էր անթիւ ազգերի վրա։ Ասորեստանի աստուածը արիւնի, գազանութիւնների աստուած էր։ Նա հրամայում էր լինել անխնայ և անդութ, քանդել, աւերել. և ասորեստանական թագաւորները պարծանքով յիշում են որ իրանք ամենայն ճշտութեամբ կատարում էին այդ ահաւոք պատուէրները։ «Ես կոտորեցի, ես չը խնայեցի, ես քարուքանդ արի այնպէս, որ մարդու և անասունի ձայն չէր լսվում, ես մարդկանց ցից հանեցի, ես ապստամբների կաշին քերթել տուի ողջ-ողջ և այդ կաշով ծածկեցի բերդի պատերը, ես բռնաբարեցի աղջիկներին և տղաներին»։ Այս և այսպիսի գործերի անվերջ կրկնութիւններ են պարունակում իրանց մէջ ասորեստանական արձանագրութիւնները, սարսափ ու զզուանք ազդելով ընթերցողին։

Զինուորական արիւնաբրու բռնապետութիւնը իր աջողութիւնների համար պիտի շարունակ զարդացնէր գազանական ոգին։ Այդ բռնապետութեան կենտրօնը կազ-

մում էր մի երկրաւոր աստուած, որի առջև  
սողում էր ամեն ինչ: Եւ դա թագաւորն էր: Ամբողջ պետութիւնը, մեծից սկսած մինչև  
փոքրը, թագաւորի ստրուկն էր: Բոնակալը  
ամեն մի կեանքի տէրն էր և նրա քմահա-  
ճոյքից, նրա կամայականութիւնից էր կախ-  
ված անհատների և ամբողջ հասարակութիւն-  
ների ապրելը կամ մեռնելը: Նրա իւրաքան-  
չիւր խօսքը, ակնարկը երկնային պատգամ  
էր այս աշխարհի վրա, ամեն ինչ նրան էր  
ծառայում, նրանով էր երկիրը կենդանու-  
թիւն ստանում կամ ընկնում: Ինչպէս յա-  
տուկ է զինուորական միապետութեան, Ա-  
սորեստանը բարգաւաճում էր միայն այն  
ժամանակ, երբ նրա թագաւորը եռանդոտ,  
ուժեղ մարդ էր լինում. արշաւանքները, պա-  
տերազմական աւարը, հարկերը առատ էին  
լինում: Իսկ երբ թագաւորը թոյլ ու անըն-  
դունակ էր լինում, նա միայն վայելում էր  
բռնապետի անսահման երջանկութիւնը, և  
պետութիւնը, չը նայած իր գրաւած դիր-  
քին, թուլանում էր, փառքից զրկվում:

Ասորեստանեան արիւնածարաւ պաշ-  
տամունքների մէջ զարգանում էր և կուլ-  
տուրան, որ ամբողջապէս փոխ առնված էր  
Բարիլօնից: Թագաւորները իրանց քմահա-  
ճութիւնների մէջ ունէին և այն, որ հովա-  
նաւորում էին երկրագործութիւնն ու ա-

րուեստները, հասարակական շինութիւններ  
էին կառուցանում, ջրանցքներ էին անցկաց-  
նում: Գիտութիւնը, գրականութիւնն էլ ա-  
ռաջդիմութեան քայլեր էին անում: Բայց  
այդ ամբողջ կուլտուրական գործունէութեան  
վրա էլ դրոշմված էր զինուորական-բռնա-  
պետական պաշտամունքը: Քանդակագործը  
թաղաւորի յաղթութիւններն էր պատկերա-  
ցնում քարերի վրա, ճարտարապետը թաղաւ-  
որական պալատներ էր կառուցանում, տա-  
լով նրանց բերդի կերպարանք և ամրութիւն:  
Աստղաբաշխութիւնը բաւական ծաղկած էր,  
բայց նրա հիմքը դիտական ճշմարտութիւն-  
ներ որոնելը չէր, այլ դործնական կեանքին  
ծառայելը. պէտք էր գուշակել թէ ինչ ա-  
ջողութիւն կունենայ թագաւորը այս կամ  
այն արշաւանքի մէջ, պէտք էր գտնել մար-  
դու ճակատագիրը, իմանալ թէ ինչ բախտ  
է որոշված նրա համար և այլն: Քուրմերը,  
ժամանակի գիտնականները, այս տեսակ հար-  
ցերով էին զբաղված:

Կար, այ՞, քաղաքակրթութիւն, և նրա  
փառաւոր մնացորդները այժմ էլ հիացմունք  
են պատճառում դիտնականներին և սիրող-  
ներին: Բայց ի՞նչ էր այդ քաղաքակրթու-  
թեան ողին, ի՞նչ էր նա տալիս ամբողջ ժո-  
ղովրդին, այն ահագին բազմութեան, որ աշ-  
խատում էր պետութեան փառքի համար:

Բօկլը իր «Քաղաքակրթութեան Պատմութիւն» նշանաւոր գրքի մէջ, քննութեան ենթարկելով Ասիայի և Աֆրիկայի, առհասարակ տաք երկիրների հնագոյն քաղաքակրթութիւնը, այսպէս է բնորոշում նրան. «Ժողովուրդը համարվում էր ոչինչ, նա ոչինչ ձայն չունէր պետական կառավարութեան մէջ, ոչ մի վերահսկողութիւն այն հարստութեան վրա, որ իր աշխատասիրութեան արդիւնքն էր: Նրա միակ գործն էր աշխատել, միակ պարտաւորութիւնը—հնազանդվել: Ահա ուր է սկիզբը այն տրամադրութեան դէպի հանդարտ, ստրկական հնազանդութիւնը, որ, ինչպէս մենք գիտենք պատմութիւնից, այդպիսի ազգերի յատկանիշն էր միշտ: Այդ հարուստ և պտղատու երկիրներում շատ են եղել փոփոխութիւններ, բայց ամենքը սկսվել են վերեկից և ոչ ներքեկից: Մամկավարական տարր բոլորովին չը կար գրանց մէջ: Եղել են բազմաթիւ պատերազմներ թագաւորների, դինաստիաների մէջ, եղել են յեղափոխութիւններ կառավարութեան մէջ, յեղափոխութիւններ արքունիքում, յեղափոխութիւններ գահի վրա, բայց բոլորովին չեն եղել ժողովրդի մէջ»:

Նոյն իսկ այն վիթխարի շինութիւնները, որոնք այսօր հին աշխարհի պարծանքն են կազմում, պէտք է համարել ժողո-

վրդի դժբախտութեան վկաներ։ Այսպէս, եզիպտական բուրգերը մի ստրուկ, հարստահարվողժողովրդի տառապանքներն են պատմում։ «Որպէս զի կարելի լինի շինել այդպիսի հրէշաւոր չափերով և մի և նոյն ժամանակ այդքան անօգուտ բաներ, պէտք է որ կառավարիչները բռնակալիներ լինէին, իսկ ժողովուրդը—ստրուկ,—ասում է Բօկլը։ Ժողովրդի ամբոխը քիչ էր զանազանվում բանող անասուններից, նրան ընդունակ չէին համարում մի որ և բանի, բացի միայն անընդհատ, անվարձ աշխատանքից։ Ամբողջ ժողովրդի բանուորական ոյժերը փոքրամասնութեան անպայման տրամադրութեան տակ էին գտնվում և այսպիսով ընդունակութիւննու արուեստը ծառաւմ էին ի վնաս նրանց, որոնց պիտի օգուտ բերէին»։

Ահա ասիական քաղաքակրթութեան էռութիւնը։ Նա ամբողջապէս մարդու արտաքին կեանքն էր շօշափում, և շնորհալի քանդակադործը, ընդունակ ճարտարապետը, ինչպէս և առհասարակ ամեն մի մարդ, ստրուկներ էին։ Զը կար հասարակական, անհատական զարգացման գաղափար, որևէ հասկացողութիւն ազատութեան մասին։ Ամեն տեղ ծանրացած էր լուծը։ Օրէնք, իրաւունք, կարգ կարող էր այն միայն լինել, ինչ կամենում էր թագաւորը։

Դարաւոր նուաճումներով ձեռք բերված  
երկիրներից կազմվել էր ասորեստանեան ա-  
հագին պետութիւնը, բայց այդ երկիրները  
միութիւն չէին ներկայացնում, ներքին կա-  
պերով չէին կապված իրար հետ։ «Իմ լուծը  
դրի նրանց վրա», ասում է Նինուէի թա-  
գաւորը, պատմելով թէ ինչպէս յաղթեց, ինչ-  
պէս կոտորեց ու քանդեց այս ինչ երկիրը։  
Այդ լուծը ծանր էր, և յաղթվածները ամեն  
յարմար դէպքում աշխատում էին ազատվել  
նրանից։ Ապստամբութիւնները ճնշվում էին  
առակալի գազանութիւններով։ Ասորեստանը  
միայն մի միջոց գիտէր իր հպատակներին  
հնազանդութեան մէջ պահելու համար—սար-  
սափ աղդել։ Բայց զարմանալի է որ սար-  
սափը դեռ այն հին ժամանակներում վատ-  
դաստիարակ էր ժողովրդների համար։ Զէ  
կարելի առանց յուզմունքի կարդալ այն ա-  
պստամբութիւնների պատմութիւնը, որոնք  
տեղի ունեցան Ուրարտեան երկիրներում ա-  
սորեստանցիների դէմ։ Յաղթական տիրա-  
պետողը արիւն ու աւերանք տարածեց երկ-  
րի մէջ, լեռների սուլք ծայրերն անգամ չը  
կարողացան ազատել յաղթվածներին այն  
գազանային պատիժներից, որ այնպիսի տա-  
ղանդով հնարում էին Նինուէի թագաւորնե-  
րը։ Բայց այդ բոլոր սարսափների մէջ ա-  
ռանձին ցեղեր շարունակում էին կռւել, չը

նայած որ փոքրաթիւ էին, թոյլ էին և յաղթելու ոչ մի յոյս ունենալ չէին կարող:

Այսպէս երկար ու երկար ապրեց Ասորեստանի բռնապետութիւնը, մինչև որ երկան եկաւ մի նոր ուժեղ ազգ, որ իր հարուածը ուղղեց նրա դէմ: Դա Մարաստանն էր: Եւ ասորեստանեան ահազին պետութիւնը վլվեց ու քայքայվեց այդ մի հարուածից: Պատմութիւնն էր պատրաստել այդ վիճակը. Ասորեստանը իր սեփական սիստեմի, իր բռնապետական պաշտամունքի զոհը դարձաւ: Վլ դարում մարաց թագաւորը, Բարիլօնի թագաւորի հետ, պաշարեց Նինուէն: Հրոշակաւոր մայրաքաղաքը, որին հպատակվել էին անթիւ ազգեր, որի մէջ ամբարված էին աղգերի հարստութիւնները՝ իբրև սեփականութիւն աշխարհակալ թագաւորների, ծածկվեց, անյայտացաւ իր աւերակների տակ. մի 50—60 տարի անցած՝ ասորեստանեան մեծ պետութիւնից յիշողութիւն անգամ չը մնաց, և Նինուէի տեղն անգամ յայտնի չէր:

Ի՞նչ տպաւորութիւն թողեց այդ կործանումը աշխարհի վրա: Հրեական ազգը իր վրա փորձել էր թէ ինչ է ասորական սուրը, ինչ է Նինուէից տարածվող լուծը. և նրա մարդարէններից մէկը, Նաումը, այսպէս էր խօսում Նինուէի վերջի վրա.

«Վայ արիւնահեղութիւնների քաղաքին,

որ ամբողջովին լիքն է ստութեամբ և յափշտակութեամբ։ Լսվում են խարազանի շըռինդը և պտտվող անիւների ձայները, ձիաների խրխնջոցը և սլացող կառքի աղմուկը։ Արշաւում է ձիաւոր զօրքը, փայլում է սուրը, պսպղում են նիզակները։ շատ վիրաւորներ, մեռածների բազմութիւն. դիակները վերջ չունեն։ Պոռնիկի պոռնկութիւնների շատութեան համար է այս, պոռնիկի, որ լաւ շնորհալի է իբրև կախարդութիւնների տիկին, որ ազգերը ծախում է իր պոռնկութեամբ և ազգատոհմները՝ իր կախարդութիւններով։ Բժշկութիւն չը կայ քո վէրքի համար, ցաւեցնող է քո խոցը։ Եւ ամեն մէկը, լսելով քո լուրը, պիտի ծափահարէ, որովհետեւ մւմ վրա չէ տարածվել քո չարութիւնը։

Մենք երկար խօսեցինք Ասորեսաւանի մասին, բայց նկարեցինք այն պետական սիստեմը, որ ծնվեց Ասիայի հողից։ Ասորեսաւանը նախատիպն էր, հայրն էր։ Նրանից յետոյ Առաջաւոր Ասիայի գանաղան կողմերում, զանազան ժամանակ, զանազան չափերով սովորական դարձաւ բռնապետութեան այս ձևը։ Այսօր էլ շատ բան անփոփոխ է մնացել Ասիայի երկնքի տակ։ Էռթիւնը, ոգին միշտ մնաց։

Բայց այն ժամանակ, երբ Ասորեստանի կործանումը, մարգարէի գեղեցիկ խօսքերով, բոլոր տեղերում ծափահարութիւն էր՝ արուցանում, հեռու այս տեղերից, արևմուտքում, Բալկանեան թերակղզու բոլորովին հարաւային ծայրին և նրան շրջապատող կղզիների վրա, նկատվում էր հիմնովին հակառակ տեսարան:

Այդտեղ զարգանում էր մի ազատ մարդկութիւն, որ իր մտաւոր սքանչելի գործունէութեամբ եւրօպական քաղաքակրթութեան հիմքը դրեց: Հելլէն ազգն էր դա: Փոքրիկ ազգ, փոքրիկ երկրի վրա: Բայց այդ մի բուռը ժողովուրդը մտքի հերոս հանդիսացաւ, հետզհետէ մշակեց հասարակական կարգեր, հանրապետական սկզբունքները գործադրեց, քաղաքացիական իրաւունքները ու պարտաւորութիւնները օրինականացրեց և անհատի ազատ զարգացումը առաջ տարաւ: Այդտեղ այլ ևս սուրն ու աշխարհակալութիւնը չէին մարդուն բարձրացնողը, այլ տաղանդը, խելքը, իմաստութիւնը: Այդտեղ պետական գաղափարը բոլորովին ուրիշ կերպարանք ստացաւ. բռնապետութիւնը չէր կլանում ամենինչ, նրա տեղ կար աւելի բարձր և վսեմ իդէալ—հայրենիքի հասկացողութիւնը: Հայրենիքին հպատակվում էին ամենքը, բայց ոչ թէ սարսափից ստիպված, այլ գիտակցա-

բար, այնպիսի ջերմ սիրով, որ հրաշալի անձնագոհութեան աստիճանին էր հասնում:

Նշանաւոր է որ Ելլադան աշակերտեց Արևելքին: Նա սովորեց Ասորեստանից, Բարիլօնից, Փիւնիկիայից և Եգիպտոսից շատ բան, մինչև իսկ աստուածներ փոխ առաւ այն տեղից: Բայց անկախ պահեց իր ոգին, իր վերցրածը վերամշակեց, հաղորդեց նրան իր քաղաքակրթութեան գոյնը: Ասիացին զարգացնում էր իր երևակայութիւնը միայն, նրա աստուածները ահաւոր էին, շրջապատված գերմարդկային հանգամանքներով, երկիւղ էին ազդում իրանց յատկութիւններով, իրանց կերպարանքով: Յոյնը, ընդհակառակըն, մօտեցրեց աստուածները մարդկային հասկացողութիւններին, մարմնացրեց նրանց մէջ մարդկային հոգին ու ձգտումները: Նա երևակայութեան գերի չէր, նրան առաջնորդողը բանականութիւնն էր, որ հրաւիրում էր նրան ուսումնասիրել բնութիւնը, մտնել նրա գաղտնիքների մէջ, գտնել նրան կառավարող օրէնքները: Այդ խուզարկող, որոնող, պատճառներ ու հետևանքներ տեսնող ուսումնասիրութիւնն էր, որ փարթամ ծաղիկների պէս բացեց քաղաքակրթութեան, լուսաւորութեան բոլոր դործօնները. գիտութիւնը, գրականութիւնը իր բազմաթիւ ճիւղերով, գեղարուեստը ոսկի դար բերին այդ զար-

մանալի ազգի համար։ Արևելքում ամենքը մի էին—ստրուկներ թագաւորի առաջ. այնտեղ շնորհքը, ընդունակութիւնը մեծագործութիւնների չէր կարող հասցնել, մինչդեռ Յունաստանի ազատ միջնոլորտում բազմանում էին խոշոր տաղանդները, որոնք թագաւորում էին մարդկանց մտքերի վրա, խաղաղ կեանքի մէջ հերոսներ էին հանդիսանում, աշխատելով հասարակաց բարիքի համար։ Փոքր էր այդ ազգը, բայց մեծ ու ուժեղ էր իր ազատ հիմնարկութիւններով։

Այստեղ, Յունաստանում, Եւրօպան էր. այնտեղ, Ասորեստանում, Ասիան։ Երկու անուններ, որոնք միայն աշխարհագրական միտք չունեն։ Դրանք երկու ողիներ են, երկու սկզբունքներ, վիմեանց հակառակ, միմեանց բացասող, միմեանց հետանհաշտ։ Եւնրանք իրարից հեռու չը մնացին, անտարբեր ու առանձնացած չէին։ Նրանք կանգնեցին իրար հանդէպ, զինվեցին իրար դէմ։ Սկսվեց պայքարը Ասիայի ու Եւրօպալի, Արևելքի ու Արևմուտքի մէջ, արիւնոտ պայքար, որ տանջանքների ու սոսկալի ցնցումների մի անվերջ շղթայ դառնալով, ձգվեց այն ժամանակներից մինչև մեր օրերը և դեռ լուծում չէ ստացել։ Սկսվեց Արևելեան Հարցը. դա երկու սկզբունքների տիրապետութեան հարցն էր. մի կողմից կուլտուրա, քա-

զաքակրթութիւն, ազատութիւն, միւս կողմից՝ բռնակալութիւն, անշարժութիւն, ստըրկութիւն։ Դարերի ընթացքում զէնքին է յանձնվում հարցի լուծումը—ով պիտի տիրապետէ . . .

Պայքարը սկսողը, առաջին անգամ արիւնով ներկողը Ասիան էր։

---

Բ.

Ասորեստանի յաջորդները: — Մարաստան և  
Պարսկաստան: — Պարսկական մեծ պետութիւնը: —  
Նուաճողը և նուաճվածները: — Հարկեր, արքունիքի  
շուայլութիւններ: — Մատրապներ: — Պարսկա-յունական  
պատերազմները իբրև եւրօպականութեան և ասիա-  
կանութեան մրցում:

Մարաստանը, կործանելով Ասորեստա-  
նը, տիրացաւ նրա ժառանգութեան: Դա մի  
պարզակեաց, խստաբարոյ ժողովուրդ էր.  
բայց ստացած ժառանգութիւնը շուտով փո-  
խեց նրան: Նիսուէի անհուն հարստութիւն-  
ների հետ ասորեստանական կարգերն էլ մը-  
տան Մարաստանի մէջ: Բայց նրան չէր վի-  
ճակված երկար վայելել ասիական մեծ պե-  
տութեան փառքը: Արդէն պատրաստ էր և  
նրա ժառանգը: Դա նրա ցեղակից Պարսկաս-  
տանն էր:

Պարսից ժողովուրդը պատմական աս-  
պարէզն էր դուրս գալիս նոյնպէս իբրև մի

պարզասէր, խաղաղ երկրագործ արիական ազգ, որ ունէր խաղաղութիւն, աշխարհաշինութիւն քարոզող մի կրօն։ Բայց Պարսկաստանը կուսական երկիր չը մնաց. նա սկսեց նուաճողական քաղաքականութիւնը, անչափ մեծացրեց իր սահմանները և ենթարկվեց ասիական մեծ պետութեան ճակատագրին։ Մարաստանից ստանալով ասորեստանական ժառանգութիւնը, նա կազմակերպվեց նոյն բռնապետական սկզբունքների վրա, փոփոխել իր բարքերը, սակաւապէտութիւնից անցնելով դէպի շքեղութիւն, փափկասիրութիւն։ Նոյն իսկ նրա կրօնն էլ օտար աղղեցութիւնների տակ սկսեց կերպարանափոխվել, կորցնել իր նախնական պարզութիւնը, իր վերին աստիճանի գեղեցիկ բարոյական հիմքերը։

Նոյն իսկ Ասորեստանը նսեմացաւ իրանի պետութեան փայլի և ոյժի առաջ։ Ասիան դեռ չէր տեսել մի այդպիսի ահագին տարածութիւն, ենթարկված մի իշխողի գայիսոնին։ Հնդկաստանից մինչև Միջերկրական ծովը և Նեղոսի հովտից մինչև Արաւեան ծովը ամեն ազգ և ամեն լեզու հպատակված էր պարսից զէնքին։ Այս վիթխարի մարմնի կենտրօնն էլ, ինչպէս Ասորեստանում, անսահման ինքնակալ թագաւորն էր, որի առջև ամեն ինչ սողում էր իբրև ստրուկ։

Պարսկական բռնապետութիւնը մի քանի քայլ առաջ գնաց իր ասորեստանեան նախատիպից։ Աւելի սաստկացաւ նուաճողական թափը, աւելի նպատակայարմար կարգեր մտցրվեցին՝ ահազին տարածութիւնների վրա փոված միլիօնաւոր ժողովուրդները կառավարելու համար։ Աքեմենեան Շահերի մէջ կան մի քանիսը, որոնք մեծ անուն են հանել պատմութեան մէջ։ Նրանք գնացին նուաճելու այն ամենը, ինչ կարելի էր նուաճել, յաճախ նոյն իսկ չիմանալով թէ ուր են գտնվում նուաճելի ազգերը, ինչ է նրանց երկիրը։ Մի քանի բարեկարգութիւններ, որոնք այդ աշխարհակալների գործերն են, ցոյց են տալիս որ բռնակալութիւնը կատարելագործվելու ձգտումներ ունէր։ Այսպէս, Աքեմենեանները մտցրին դրամական սիստեմ, պօստային հաղորդակցութիւն ստեղծեցին, որ, սակայն, միմիայն դինուրական նպատակներին էր ծառայում։ Բարելաւութիւնները, իհարկէ, չը փոխեցին ասիականութեան ոգին։ Բռնապետութիւնը նոյնն էր, ժողովուրդը խեղճ ու իրաւագուրք։ 80 միլիօն հպատակների տուած հարկերը դարսված էին Շահերի պալատների նկուղներում, ուր մնում էին առանց գործադրութեան, լոկիրանի տիրոջ հարստութիւնը առասպելական չափերի հասցնելու համար։

Պետական կազմակերպութիւնը անփոփոխ մնաց և այն մասում, որ վերաբերվում էր նուաճած ազգերին։ Պարսկական աշխարհակալութիւնը քանի տարբեր ազգեր ու կուլտուրաներ էր հաւաքել իր ձեռքի տակ։ Բայց դա ներքին կապերից, փոխադարձ համերաշխութիւնից զուրկ մի ժողովածու էր։ Թագաւորողը այդ բոլոր բաժան-բաժան մասնիկների վրա հպատակութեան լուծն էր, որ արտայայտվում էր համարեա միայն հարկեր տալով։ Պարսիկները չէին դիպչում իրանց նուաճած ազգերի տեղական ներքին կազմակերպութեան, այնպէս որ իւրաքանչիւր ազգ կառավարվում էր իր աւանդական սովորութիւններով։

Թէ ինչ բարբարոսական հասկացողութիւններ էին տիրում իրանի լայնատարած պետութեան մէջ, ցոյց են տալիս այն հարկերը, որ տալիս էր պարսից արքունիքին իւրաքանչիւր երկիր։ Հերօդոտը պատմում է որ Բարիլօնից և Ասորեստանից թագաւորը ստանում էր ամեն տարի 1000 տաղանդ արծաթ և 500 ներքինացրած երեխաներ։ իսկ կողքիսցիները, շարունակում է նոյն պատմահայրը, իւրաքանչիւր հինգ տարին մի անգամ տալիս էին 100 երեխաներ և 100 աղջիկներ։ Դժբախտ էին այսպիսի հարկեր առողջ երկիրները, բայց միթէ պակաս դըժ-

բախտ էր և ընդունողը:

Եւ միլիօնները այսպէս կեղեքվում էին՝  
իրանի վեհապետին առասպելական փարթա-  
մութեան մէջ պահելու համար։ Յատուկ նը-  
շանակված էին մարդկանց խմբեր, որոնք  
շրջում էին պետութեան մէջ և Շահի սեղա-  
նի համար ամեն տեսակ համադամներ և  
խմիչքներ էին որոնում։ Խւրաքանչիւր եր-  
կիր իր լաւագոյն, հոչակված բերքերն էր  
ուղարկում պարսից դուռը։ Յոյն մատենա-  
գիբներից մէկը հաղորդում է որ Շահի ճաշը  
օրեկան նստում էր 400 տաղանդ, այսինքն  
մօտ 700 հազար ըռւբլի։ Որքան էլ չափա-  
զանցութիւն լինի այդ թուանշանի մէջ,  
փաստ է մնում այն, որ պարսից արքունիքի  
շռայլութիւնը ընդունակ էր առասպելներ  
ստեղծել։ Եւ այս գումարը հաւանականու-  
թիւնից շատ հեռու չի լինի, եթէ նկատի  
առնենք բռնակալի կանանցը, արքունիքը,  
ուր տամնեակ հազար մարդիկ էին ապրում։  
Երբ Շահը ճանապարհորդում էր իր երկ-  
րում, նրա հետեւրդները, կանանցը այնպէս  
էին պլոկում ու թալանում շրջակայքը, որ  
կարծես մորեխ էր անցել այդ տեղերով։ Վեր-  
ջապէս, սեմական ազգերի բռնապետութեան  
աւելի նմանվելու համար, Պարսկաստանում,  
ինչպէս վկայում են յոյն պատմագիրները,  
գոյութիւն ունէր և մարդկանց զոհաբերու-

թիւնը, թէև դա հակառակ էր պարսից կրօշնի ոգուն:

Բռնապետական սիստեմը միայն արքայական պալատների համար չէր նուիրագործված: Մեծ բռնապետը օրինակ էր հանդիսանում բազմաթիւ մանր բռնապետների համար: Պետութիւնը բաժանված էր 20 մասերի, որոնց կառավարիչները սատրապ էին կոչվում: Սրանք էլ մի մի թագաւորներ էին իրանց տեղերում, այն տարբերութեամբ միայն, որ Շահինշանը իրանից բարձր Ահուրա-Մազդա աստուածն ունէր, որի ողորմութիւնը միշտ իր հետ էր, իսկ սատրապները դողում էին Շահինշանի առաջ, որովհետեւ բաւական էր նրա մի հատ խօսքը և այսօրվայ ամենակարող սատրապը վաղը կը լինէր մի մերկ ու թշուառ ստրուկ:

Սատրապների անմիտ շուայլութիւնն ու կամայականութիւնները առածի ձև են ստացել: Հերօդոտը պատմում է որ Բարիկոնի նահանգում չորս գաւառ պարտաւոր էին, իրեն հարկ, կերակրել ու պահել սատրապի հնդկական ահագին շները: Նոյն այդ սատրապն ունէր 16800 ձի: Աւելացրէք և սատրապական ուրիշ քմահաճոյքները, մանաւանդ կանանցները, որոնք Պարսկաստանի իսկական կառավարիչներն էին, և դուք մօտաւոր հասկացողութիւն կը կազմէք թէ ազգաբնաւ.

կութիւնը ի՞նչ դրութեան մէջ պիտի պահէր իրան՝ իր անթիւ խոշոր ու մանր բռնապետների կոկորդը իր հարստութիւններով լցնելու համար:

Հայաստանն էլ պարսկական մի սատրապութիւն էր: Ճիշտ է, պատմագէտներից ոմանք ենթադրում են, որ հայ թագաւորներն էին սատրապի պաշտօն կատարում, բայց եթէ տեղի ունեցած էլ լինի մի այդպիսի բացառութիւն մեր երկրի համար, դարձեալ փաստ է մնում որ Հայաստանը պարսկական միապետութեան մի կտորն էր հարիւրաւոր տարիների ընթացքում:

Եւ ահա ասիականութեան այս լայնատարած, վիթխարի ներկայացուցիչն էր, որ կամեցաւ իր սարսափելի զէնքով ոչնչացնել եւրօպականութիւնը, ազատ ողին: Պարսկաստանը պատերազմներ սկսեց Յունաստանի դէմ: Բայց ի՞նչ պարզվեց այդ ահաւոր ընդհարումներից: Այն, որ վայրենի ոյժը չէ կարող յաղթահարել լուսաւորութիւնը. մտաւոր ոյժը անհամեմատ գերազանց հանդիսացաւ Փիզիկական անհեթեթ ոյժի վրա:

Պարսկաստանը Ասիայից Եւրօպա անցկացրեց մի բանակ, որ առնուազն 8—9 հարիւր հազար հոգուց էր բաղկացած: Այդտեղ էին պարսից աշխարհի մէջ ապրող բոլոր ազգերը, որոնք գնացել էին կուելու յանուն

այն միակ հասկանալի սկզբունքի, որ պարսկական Շահի հրաման էր կոչվում։ Զը կար Ասիայում մի ազգ, որ չը մասնակցէր այս արշաւանքին, ասում է Հերօդոտը։ Ուրեմն, բառացի մտքով, ամբողջ Ասիան ոտքի էր կանգնել մի փոքրիկ ազգ նուաճելու համար։

Բայց նուաճել չը կարողացաւ։ Ազատ ոգին, ժողովրդական-ռամկավարական սկզբունքը դիմադրեց, յաղթեց և Քսերքուը կորագլուխ վերադարձաւ Ասիա։ Եւրօպական քաղաքակրթութիւնը փրկված էր։ Բայց սա վերջին պատերազմը չէր Ասիայի և Եւրօպայի մէջ . . .

Գ.

Հայերը՝ ասիականութեան զինուորներ:—Պարսկական ազդեցութիւնը հայերի վրա:—Մտրաբօնի միքնորոշ մոլորութիւնը:—Կրօնական ազգակցութիւն:—Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքը:—Հելլէնականութիւնը աշխատում է պատուաստվել Ասիայում:—Արիստոտէլի կարծիքը:—Ալեքսանդրի ջանքերը:—Հայերի վերաբերմունքը դէպի հելլէնականութիւն:—Արևմուտքը զիջողութիւն է անում Արևմելքին, հայերին:

Ի՞նչ էր հայ ազգը երկու աշխարհայեցողութիւնների, երկու սկզբունքների այսընդհարման մէջ:

Մենք ասիականութեան զինուոր էինք: Սա բնական էր, շատ հասկանալի: Մի համեմատաբար թոյլ ու փոքրիկ ազգ, մենք, բնակվելով Ասիայում, ենթարկվեցինք այդտեղի ոգուն, որ, ի դէպ ասած, բնական է զարգացման ստորին աստիճանների վրա կանգնած ազգերի մէջ: Հայերն էլ Քսէրքսի բանակում գնացել էին Յունաստան՝ քաղաքակրթութիւնը ջնջելու, և Հերօդոտը նկա-

քագրում է մեր հագուստն անգամ։ Կրթութեամբ, բնաւորութեամբ, ձգուումներով մենք այն էինք, ինչ մեզանից շատ մեծ, մեզ վրա տիրող ազգն էր։ Իրանը մեր մէջ էր ապրում։ Պահպանելով մեր լեզուն, ազգային անհատականութեան այս առաջնակարգ սյժը, պահպանելով մեր աւանդական առանձին, ցեղային յատկութիւնները, մենք մեր սեփական տեղն էինք գրաւում ազգերի այն խառնարանի մէջ, որ իրանի պետութիւն էր կոչվում։ Բայց մի և նոյն ժամանակ մենք ձըգտում էինք դէպի իրանականութիւնը, ներս էինք ծծում իրանական ազդեցութիւնը, կուլտուրական, հասարակական և պետական հասկացողութիւնները։

Քրիստոսից չորս հարիւր տարի առաջ Քսենոփոնը իր տասն հազար յոյների հետ անցնում էր Հայաստանով։ Մտնելով մի հայ գիւղ, նա հանդիպում է ջրի գնացած կանանց և խօսում է նրանց հետ պարսկերէն լեզուով։ Եթէ պարսկերէնը այդքան լաւ ծանօթ էր հայերին մի յետ ընկած գիւղում, հասկանալի է թէ ինչ կը լինէր նա աւելի խոշոր կենտրօններում, մանաւանդ երկրի այն մասի մէջ, որ Քսենոփոնի տեսած տեղերից աւելի մօտ էր Պարսկաստանին։ Եւ այս բանը չը պիտի զարմացնէ մեզ։ Հայերը առհասարակ հեշտ էին ենթարկվում իրանց

շրջապատող ազգերի ազգեցութեան։ Այնպէս որ Քսենոփոնից մի քանի դար յետոյ ապրած յոյն հռչակաւոր աշխարհագրագէտ Ստրաբօնը նոյն իսկ զարմանում է որ հայերը, ասորիները, արաբները առանձին ազգեր են համարվում, մինչդեռ դրանք բոլորը իրանց նիստ ու կացով, բնաւորութաամբ, լեզուով և կերպարանքով նման են իրար, այն տեղերում, ուր իրար մօտ են ապրում։ Նոյնպիսի նմանութիւն ունեն հայերը և պարսիկների ու մարերի հետ։

Յոյն հեղինակի այս կարծիքը, անկանկած, միակողմանի է և չափազանցութիւն։ Ազգերը արհեստական միջոցով, քմահաճոյ-քով չեն կազմակերպվում, այլ ցեղական յայտնի պայմանների ազգեցութեամբ։ անկարելի է բոլոր յիշված ազգութիւնները մի համարել մանաւանդ այն պատճառով, որ ասորիներն ու արաբները սեմական ցեղին են պատկանում։ Բայց չէ կարելի չը խոստովանել և այն, որ Ստրաբօնի դիտողութիւնը պտուղ է այն հանգամանքի, որ Արևմտեան Ասիայում մի տեսակ քաղաքակրթութիւն էր տիրում, և նրան ենթարկվում էին այդտեղ ապրող այն բոլոր ազգերը, որոնք սեփական, առանձնայատուկ, աչքի զարնող քաղաքակրթութիւն մշակել չէին կարողանում։

Այդ անկարողութիւնը շատ ակներև է

մանաւանդ հայերի վերաբերմամբ։ Նոյն իսկ սեփական անկախ ու ինքնուրոյն կրօն չը կարողացան նրանք ստեղծել և երկրպագում էին ասորական, մանաւանդ իրանական աստուածներին, որքան մեզ յայտնի է, ունենալով շատ չնչին քանակութեամբ և նշանակութեամբ ազգային պաշտամունքներ։ Մեր բարքերի պատկերը լրացնելու համար յիշենք և այն, որ մարդկային զոհաբերութիւնն էլ, այն զզուելի պաշտամունքը, որ Արևմտեան Ասիայի մեծ պետութիւնների մէջ տարածված էր, անծանօթ չէր և Հայաստանում։ Մովսէս Խորենացուն վերագրվող մի պատմութեան մէջ ասված է թէ Հայաստանի լեռներում վիշապներին զոհ էին բերվում կոյսաղջիկներ և անմեղ պատանիներ։

Այս մտաւոր եղբայրակցութիւնը հաստատված է և պատմական բազմաթիւ փաստերով։ Երբորդ դարում Ք. ա. 40 հազար հետևակ և 7 հազար ձիաւոր հայեր պարսից Դարեհ թագաւորի առաջնորդութեամբ կուռւմ էին Ալէքսանդր Մակեդոնացու դէմ։ Իսկ ի՞նչ էր Ալէքսանդրը։ Արևմտեան քաղաքակրթութեան ներկայացուցիչը, որ նուաճում էր Արևելքը՝ հելլէնական ոգին տարածելու համար։ Այս անգամ արդէն Արևմուտքն էր յարձակվողը, այս անգամ նա էր ձգտում զէնքի ոյժով ջնջել ասիականութիւնը և նրա տեղը

դնել եւրօպական սկզբունքները։ Եւ Ալէքս-  
սանդրի առջև ոչինչ չը դիմացաւ. վիթխարի  
Պարսկաստանը հին Ասորեստանի նման ցրիւ  
եկաւ մի ուժեղ հարուածից։ Մակեդոնական  
գորբերը հասան Հնդկաստան և Ալէքսանդրը  
արևելեան Պարսկաստանի ծայրերում էլ քա-  
ղաքներ հիմնեց; հելլէն ազգաբնակութիւն  
դրեց նրանց մէջ։ Ամեն եռանդ գործ էր  
դնում երիտասարդ աշխարհակալը, որ պատ-  
մութեան մէջ «Մեծ» տիտղոսին արժանա-  
ցած առաջին մարդն է։ Բայց ունեցաւ այդ  
մեծ խելքը աչքի ընկնող աջողութիւն։ Նու-  
աճել Արևելքը, ոչնչացնել պարսկական պե-  
տութիւնը դեռ կարելի էր։ Բայց Կարելի՞  
էր փոփոխել ասիական ոգին, կարելի՞ էր  
դարերով ստրկութեան մէջ ապրած և ստըր-  
կութիւն զարգացրած ժողովուրդներին հաս-  
կացնել տալ թէ ինչ է ազատութիւնը։ Ա-  
լէքսանդրի ուսուցիչը, յոյն մեծ փիլիսոփայ  
Արիստոտէլը, կարծում էր որ անկարելի է։  
Նա լաւ գիտէր թէ ինչ է Ասիան և ինչ է  
հելլէնականութիւնը։ Ուստի խորհուրդ էր  
տալիս իր աշակերտին վարվել հելլէնների  
հետ իրրե բարեկամների և ցեղակիցների  
հետ, իսկ ասիացիների հետ՝ իրրե անասուն-  
ների և բոյսերի հետ։ «Ասիայի ազգերը,—ա-  
սում էր Արիստոտէլը—օժտված են կենգա-  
նի մտքով և ճարպիկութեամբ արուեստների

մէջ, բայց զուրկ են քաջութիւնից, ուստի, նրանք ունեն հրամայողներ իսկ իրանք ատրուկներ են. յոյն ազգը նոյնքան քաջ է, որքան և մտածող. այդ պատճառով նա ունի ազատութիւն և պետական լաւագոյն կեանք»:

Ալէքսանդրը մտածում էր այլ կերպ: Նա կարծում էր թէ կարելի է փոխել ասիական ոգին, հիմնվելով, ի հարկէ, այն մտքի վրա, որ ազգերը բնութիւնից չեն այսպէս կամ այնպէս ծնվում, որ անշարժութիւնը ճակատագրական չէ: Այդ մտքի մէջ մեծ ճշմարտութիւն կայ, բայց և այդպէս, անսխալ հանդիսացաւ մեծ փիլիսոփայի կարծիքը և այսօր էլ նա ճիշտ է արևելեան շատ ազգերի վերաբերմամբ:

Ինչի՞ց էր այս հակասութիւնը, ինչի՞ց էր որ մարդկային առաջադիմութեան օրէնքը մնանկ էր հանդիսանում Ասիայի մէջ:

Առաջադիմութիւնը, քաղաքակրթութիւնը նուաճողի հրամաններով ու կարգադրութիւններով չէ մտնում մի երկրի մէջ, այլ ժողովրդի յօժարակամ, երկարատե աշակցութեամբ: Մեծ աշխարհակալի կամքը չէր կարող մի քանի տարիներում կերպարանափոխել Ասիան: Որքան էլ Ալէքսանդրը աշխատում էր ցոյց տալ թէ իր նոր պետութեան մէջ չը կան նուաճողներ ու նուաճողներ, այլ ամենքը հաւասար են, որքան

Էլ նա գործով ու խօսքով յարգում էր տեղական սովորութիւնները, իր հպատակներից եղական և ազգային առանձնայատկութիւնները, բայց նա, այնուամենայնիւ, մի հատմարդ էր անհամար ազգերի ու լեզուների մէջ։ Ասիական աշխարհի համար նա մի խորթ հրամայող էր, խորթ՝ իր հայեացքներով ու ձգտումներով։ Աշխարհակալի կամքին հակառակվող չը կար և հելլէնական լեզուն, կուլտուրան տարածվում էին Ասիայում մինչև Հնդկաստան։ Բայց դա արտաքին յաղթութիւն էր, մի խորթ եկուոր, որ երբէք չընտանեցաւ ասիական ազգերին, չը լուծվեց նրանց մէջ, չը մարսվեց։ Եւ բացի դրանից, հելլէնականութիւնն էլ աղճատվեց Ասիայում։ Նուաճողները կամենում էին յարմարվել տեղական սովորութիւններին, մտերմանալ տեղացիների հետ, ուստի և իւրացրին շատ ասիական կարգեր։ Այդպիսով Ալէքսանդրի պետութիւնը փոխանակ գուտ հելլէնական ոգու արտայայտութիւն լինելու, դարձաւ կիսա-եւրօպական և կիսա-ասիական մի միապետութիւն...

Ինքը Ալէքսանդրը երկար կեանք չունեցաւ որ անձամբ համոզվի թէ իր քաղաքակրթական դերը Ասիայում այնքան էլ մեծ չէ կարող լինել։ Բայց պատմութիւնը ունի իր առջե այդ իրողութիւնը։ Զը կար Ալէք-

սանդրը, բայց նրա պետութիւնը բաւական երկար ժամանակ պահվեց Արևելքում։ Որքան էլ Ալէքսանդրի յաջորդները խելքի և եռանդի կողմից հասարակ մարդիկ լինէին, բայց կար այն հանգամանքը, որ երկու հարիւր տարուց աւելի պարսկական հին պետութեան հողի վրա գոյութիւն պահպանեց եւրօպացիների ձեռքով հիմնված մի պետութիւն, որի մէջ տիրապետող տարրը յոյն ազգն էր։ Ի՞նչ կարողացաւ անել այդ պետութիւնը Ասիայի համար։

Նշանաւոր է այն դիրքը, որ գրաւել էր Հայաստանը Մակեդոնական տիրապետութեան ժամանակ։ Ալէքսանդրի մահից յետոյ Պարսկաստանը և Արևմտեան Փոքր Ասիան մտան Սելևկեան թագաւորութեան մէջ։ Հայաստանը մասամբ վասսալական դրութեան մէջ մնաց, վերջը անկախութիւն էլ ստացաւ։ Բայց մեզ աւելի պիտի հետաքրքրէ այն հարցը թէ ի՞նչ էր նա։ Իր աւանդութիւններով ու ձգտումներով նա ներկայացնում էր պարսկական աշխարհը և թէև շատ անգամ էր շփվում մակեդոնական աշխարհի հետ, բայց հելլէնականութիւնը համարեա ոչ ինչ ազգեցութիւն չարաւ նրա վրա։ Հայաստանը և նրա հետ կապագովկիան ու Պօնտ ուրանկախութիւն ստացան, վերանորոգեցին իրանց թագաւորութիւնները Սելևկեան ար-

քունիքի համաձայնութեամբ։ Դա չէր նշանակում թէ հելլէնականութիւնը մի քայլ առաջ դնաց Ասիայում։ Բոլորովին ոչ։ Ընդհակառակն, դա ցոյց էր տալիս որ իրանականութիւնը զարթնում է, որ ասիական պետութեան գաղափարը չէ մոռացվել։ «Դա առաջին քայլն էր դէպի փոփոխութիւնների մի նոր շարք», ասում է հելլէնականութեան յայտնի պատմագիր Դրօյդէնը. — «դա առաջին զիջումն էր, որ անում էր նուաճող օտար տարրը Արևելքին, առաջին զոհը, որ բերում էր մակեդոնական իշխանութիւնը, որպէս զի հաշտեցնէ իր հետ Ասիան և նրա վրէժինդրութեան առաջն առնէ»։

Ահա ի՞նչ էր Հայաստանը։ Նրա անկախութեամբ մի վտանգաւոր պատուար էր ստեղծվում մակեդոնական տիրապետութեան դէմ։ Հարցը այն չէր թէ որքան ուժեղ է այդ պատուարը, հարցը այն էր, որ այդ անկախութիւնը նշանակում էր թէ ասիական սկզբունքը պիտի նորից գլուխ բարձրացնէ և յետ խլէ այն տեղերը, որ Ալեքսանդրի սուրը նուաճել էր եւրօպական կուլտուրայի համար։

Եւ ճիշտ, պարթևների հարստութիւնը նորից իրանականութեան գիրկը գցեց Արևելքի հողերը։ Բայց եւրօպական արշաւանքն էլ կանդ չառաւ։ Մակեդոնական թուլ

պետութիւնը անցաւ հոօմայեցիներին, ու-  
րոնք նոյնպէս հելլէնական քաղաքակրթու-  
թեան ներկայացուցիչներ էին և շարունա-  
կեցին հին, արիւնոտ պայքարը Արևելքի հետ:  
Տեսնենք թէ Հայաստանը ինչ էր այդ  
պայքարի նոր կերպարանաւորութեան մէջ:

---

¶.

Պարթևները և հայերը:—Տիգրան Մեծը իրու  
ասիական բռնապետութեան ներկայացուցիչ: — Թ.  
Մօմէնի նկարագրութիւնները: — Հայաստանը՝ կը-  
ռուախնձոր Հոօմի և Պարսկաստանի մէջ:—Տակիտո-  
սի վկայութիւնը հայերի մասին:—Ութ դարի կեանք:

---

Պարթևների թագաւորութեան ժամա-  
նակ Հայաստանը աւելի ևս մօտեցաւ Պարս-  
կաստանին: Այժմ սերտ կապեր հաստատող-  
ները միայն ընդհանուր աշխարհայեցողու-  
թիւնները, կուլտուրական ու կրօնական շա-  
հերը չէին. աւելացաւ և ազգակցական մեր-  
ձաւորութիւնը: Հայաստանում էլ պարթև-  
ներ էին թագաւորում, հայ իշխանները ա-  
մուսնական կապերով ազգականութիւն էին  
հաստատում պարթևների հետ: Պարթև ա-  
նունը հայերին շատ սիրելի դարձաւ:

Հայկական թագաւորութեան մասին  
տեղեկութիւնները շատ խուն ի խուն են,  
բայց ընդհանրապէս կարելի է ասել որ նա

ոչնչով չէր զանազանվում ասիական միւս  
պետութիւններից։ Այստեղ էլ սերունդից սե-  
րունդ կենդանի էին նոյն օրէնքները, որոնք  
յատուկ են ասիական բռնապետութիւննե-  
րին։ Եւ դրա փայլուն ապացոյցն է մեր  
Տիգրան թագաւորը, որի օրով Հայաստանը  
մի նոր, զարմանալի երևոյթ դարձաւ։

Արևելքում ամեն ինչ կախված է թա-  
գաւորող անձի յատկութիւններից։ Տիգրանը  
քաջ էր ու եռանդուն. ուստի կարողացաւ  
մի նշանաւոր աշխարհակալ դառնալ։ Հայաս-  
տանը նա ժառանգեց մի խեղճ դրութեան  
մէջ։ Երկիրը բաժանված էր երկու մասի,  
պարթենները խլել էին շատ հողեր։ Տիգրանը  
միացնում է Հայաստանը, յետ է մղում պար-  
թեններին, արշաւանք է գործում դէպի Պարս-  
կաստանի խորքերը և խլում է նոր երկիր-  
ներ։ Պատմութեան ասպարէզն է իջնում մի  
նոր, թարմ ազգ, որ Արևելքի և Արևմուտքի  
ուշադրութիւնն է գրաւում։ Տիգրանը,—ա-  
սում է գերմանացի գիտնական Մօմզէնը իր  
հոչակաւոր «Հոօմէէական Պատմութեան» մէջ,  
—տալիս է Հայաստանին այն առաջնակարգ  
ազգեցութիւնը Ասիայում, որ Աքեմենեան-  
ներից անցել էր Սելևկեաններին և այս վեր-  
ջիններից՝ պարթե Արշակունիներին։

Եւ իրաւ, Տիգրանը դուրս է գալիս իր  
երկրի սահմաններից և սկսում է անխնայ

նուաճումներ տարածել աջ ու ձախ: Ատրպառ  
տականն ու Կորդուաց աշխարհը, իբրև հարա-  
կատու թագաւորութիւններ, ենթարկվում  
են Հայաստանին: Նինուէի թագաւորութիւ-  
նը, Միջաղետքի մի մեծ մասը հայերի ձեռ-  
քում են: Եղեսիան Տիգրանը տալիս է հա-  
րաւային Միջաղետքից իր ձեռքով գաղթե-  
ցրած մի արարական ցեղի, որպէս զի նրա  
միջոցով տիրապետէ Եփրատի անցքի և ա-  
ռևտրական այն մեծ ճանապարհի վրա, որ  
անցնում էր Փոքր Ասիայից դէպի Հայաս-  
տան: Այնուհետև Տիգրանը անց է կացնում  
իր զէնքը Եփրատի միւս կողմը, խոշոր գրա-  
ւումներ է անում Կապաղովկիայում, մեծ հեշտ-  
ութեամբ նուաճում է Արևելեան Կիլիկիան,  
Հիւսիսային Միրիան, Փիւնիկիայի մեծ մա-  
սը: Համում է հրէական թագաւորութեան  
սահմաններին և սպառնական դիրք է բըռ-  
նում այդտեղ:

Ահա մի մեծ պետութիւն ասիական ո-  
գով: Եւ ոչինչ չէ պակասում նրան: Տիգրա-  
նը մի քանի մայրաքաղաքներ ունի, որոն-  
ցից մէկն է Աստիոքը, նրա հրամանին հնա-  
զանդվում են տեսակ-տեսակ ազգեր և լե-  
զուներ: Պատկերը լիակատար դարձնելու  
համար բերենք այստեղ Մօմզէնի նկարա-  
գրութիւնը:

«Թում էր թէ վերածնվել է Նինուէի

Կրագաւորների՝ Սալմանասարի և Մանէէրի-  
րի ժամանակը, — առում է նա. — արևելքան  
թվապետութիւնը “նորիր”, ծանրանում էր ոի-  
րինական ափերի վաճ առականական ակնա-  
բնակութեան վրա, “ինչպէս” մի ժամանակ  
Տիրոսի և Սիրոն’ վրա. նորից ցամաքային  
մեծ պետութիւն ները յարձակվում էին Միջ-  
երկրականի ափերի երկարութեամբ գտըն-  
զող երկիրների վրա. նորից Կիլիկիայի և  
Սիրիայի ծագափերում կանգնած էին բա-  
նակներ, որոնք մօտաւորապէս կէս միլիոն  
զինուուներից էին կազմված: Ինչպէս մեծա-  
մանակ Սալմանասարն ու Նաբուգօդոնոսօրը  
տանում էին հրէաներին Բարիլօն, այսպէս  
էլ այժմ նոր թագաւորութեան սահմանա-  
կից երկիրներից՝ Կօրդուէնից, Աղիարենից,  
Ասորեստանից, Կիլիկիայից, Կապաղովկիայ-  
ից բնակիչները, մանաւանդ յոյն և կէս—  
յոյն քաղաքացիները, պարտաւոր էին, եր-  
կիւղ կրելով իրանց բոլոր կայքերի դրաւման  
սպանալիքից, բնակութիւն հաստատել ի-  
րանց ռանեցած-չունեցածով նոր մայրաքա-  
ղաքում: Դա մէկն էր այն վիթխարի քաղաք-  
ներից, որոնք աւելի շուտ աղգերի ոչնչու-  
թեան մասին են վկայում, քան տիրողների  
մեծութեան մասին և որոնք կարծես գետնից  
էին բունում Եփրատի երկրում իւրաքան-  
չիւր նոր մեծ սուլթանի հզօր մի խօսքով  
Ս. ՄԵՍՐՈՊ

ամեն անգամ; Երբ փոփոխութիւն էր տեղի ունենում թագաւորական գահի վրա:

«Տիգրանի նոր քաղաքը, Տիգրանակերտը, որ հիմնված էր Տիգրիսի աջ ափին, Միջազգետքի սահմաններում, և պիտի լինէր հայկական նոր նահանգների մայրաքաղաքը, դարձաւ Նինուէի և Բարիլօնի նման մի քաղաք, յիսուն կանգուն բարձրութիւն ունեցող պատերով և սուլթանիզմի հետ անբաժան կապված պալատով, այգով և ծառաստանով։ Միւս բաների մէջ էլ նոր տիրապետողը հաւատարիմ մնաց աւանգութեան. ինչպէս որ յաւիտեան մանուկ մնացող Արևելքում առհասարակ երբէք չէ վերացել երեխայական հասկացողութիւնը գլխի վրա իսկական թագ կրող թագաւորների մասին, այնպէս էլ Տիգրանը այն օրերում, երբ երևում էր հասարակութեան մէջ, ցոյց էր տալիս փարթամութիւն Դարեհի և Քսէրքսի ժառանգի հագուատում. կրում էր ծիրանի բաճկոն, կէսը սպիտակ, իսկ կէսը նոյնպէս ծիրանի շապիկ, երկաք և լայն վարդիք, բարձր ապարօշ և արքայական վարսակալ. ուր որ նա շրջում էր կամ կանգնում, ամեն տեղ նրան ուղեկցում էին չորս «թագաւորներ», որոնք ծառայում էին նրան իբրև ստրուկներ»։

Ամեն ինչ գուցէ լաւ դնար այդ մեծ սուլթանութեան մէջ, եթէ Տիգրանին վի-

ճակված չը լինէր Քսէրքսի. և Դարեհի բախութը, այն է՝ եւրօպացիների հետ ընդհարվելը։ Առժամանակ Հայաստանին էր բաժին ընկել վարելու Ասիայի դատը եւրօպականութեան դէմ, և ահա այստեղ էր հայ Քսէրքսի ճակատագրի ողբերդական կողմը։ Տիգրանի դէմ արշաւում են հոօմէական փոքրաթիւ բանակներ։ Բաւական է մի ընդհարում և ահա այն պետութիւնը, որ կարողանում էր կուտել Միջերկրականի ափերում կէս միլիոն զօրք, խորտակվում է խաղաթղթերից շինած տան նման։ Տիգրանակերտի մօտ Լուկուլլոսից յաղթված Տիգրանի մէջ խօսում էր պատմական այն օրէնքը, որից Ասորեստանը թաղվեց Նինուէի պատերի տակ, իսկ Պարսկաստանը ոչնչացաւ Ալէքսանդրի մի հարուածից։ Հայկական մեծ պետութիւնը չափազանց սակաւակեաց էր, նոյն իսկ իր հիմնադրի չափ էլ կեանք չունեցաւ։ Տիգրանը ստիպված եղաւ բաւականանալ Հայաստանի հին սահմաններով. Ասիայի նախապատիւ մեծ սուլթանը ընդունեց Հոօմի գերիշխանութիւնը ու այդպէս կարողացաւ շարունակել իր թագաւորութիւնը Արտաշատի մէջ։  
Այս կարճատե պատմութիւնը ցոյց է տալիս որ ասիական պետութիւնը կարող էր հեշտ բարձրանալ և նոյնպիսի հեշտութեամբ էլ ընկնել. Առաջաւոր Ասիան թէ հին և թէ

միջին դարերում անթիւ այսպիսի օրինակ-ներ ունի: Եւ հոօմայեցիները չը փորձեցին էլ իրանց ջարդած մեծ պետութիւնը ձուլե-լու հոօմէական նահանգների հետ: Նրանք գիտէին որ արևելեան բարբարութիւնը եր-բէք չեն միանայ մի եւրօպական ազգի հետ, ուստի և համարեա անկախութիւն տուին հայերին, միայն մի քանի չնչին պարտաւո-րութիւններ դնելով նրանց վրա: «Հայաս-տանը—ասում է Մօմղէն—մի այնպիսի պե-տութեան մէջ չէր մտցրված, որի հետ նրան կապէին ազգայնութեան կապերը: Հոօմայե-ցիները, ի հարկէ, գիտէին, որ Եփրատի ա-րևելեան ափին գտնվող երկիրները իրանց կայսրութեան միացնելը կը լինէր յափշտա-կութիւն մի երկրի, որ վազուց ի վեր պատ-կանում էր արևելեան ազգերին և այդ բանը Հոօմի համար իսկապէս ոյժի աւելացում չէր լինի»: Այս փորձը արել էր եւրօպականու-թիւնը Մակեդոնական պետութեան միջո-ցով և հոօմէացիները թոյլ տուին որ Հայաստանը պահպանէ իր անկախութիւնը, ճանաչելով, սակայն, Հոօմի գերիշխանու-թիւնը:

Մեզ չը պիտի շփոթեցնէ այն հանգա-մանքը, որ հելլէնականութիւնը, այնուամե-նայնիւ, մի քանի հետքեր թողեց Հայաստա-նում: Յայտնի է, օրինակ, որ յունաց առ-

առուածների արձանները փոխադրվեցին Հայուաստանի, իսկ մեր Տիգրանի որդի Արտաւազդ Թագաւորը պյանքան հելլէնական էր, որ յունական թատրօն էր պահում իր արքուն նիզի մէջ և խըն էլ յունարէն լեզուով ողբութիւններ էր գրում: Իւրաքանչիւր փաստ իր հետևանքներով պէտք է զնահատել: Յունական արձանները եկան մեզ մօտ պարզապէս մեր հայ-իրանական աստուածներին ներկայացներու համար, նրանք փոխութիւններ չը մտցըին մեր ազգապէն պաշտամունքի մէջ: Իսկ Արտաւազդի հելլէնականից մի մասնաւոր, անհատական երկութ էր: Պարսկաստանի պարթե թագաւորների մէջ կային այնպիսիները, որոնք իրանց անուան կապճնում էին «Հելլէնասէր» տիտղոսը: Դա գուցէ և շատ ճիշտ էր, բայց չէր էլ խանգարում որ Պարսկաստանը Պարսկաստան լինի, իսկ այդ հելլէնասէրը—մի պարսկական Շահ:

Պարթիւնների և հոգմալեցինների մէջ երկար ժամանակ պատերազմներ էին տեղի ունենում Հայաստանի վրա գերիշխանութիւն պահպանելու համար: Երկա պետութիւնները իրար ձեռքից կլում էին ալդ իրաւունքը: և եթէ Հայաստանը ալդ ընդհարումների ժամանակ երբեմն Հոօմի կողմի էր անցնում, այդ դարձեալ չէր զոյց տալիս թէ հայերը

եւրօպական կուլտուրային են ուղում հպաշտակվել։ Քաղաքական շահն էր այդտեղ խօսում։ Հոօմէական երևելի պատմագիր Տաւկիտոսը այսպէս է բնորոշում հայերին. «Հայց երը, որոնք իրանց երկդիմի հաւատարմութեամբ հրաւիրում էին մէկ և միւս կողմի (պարթևների և հոօմէացիների) զէնքը, իրանց երկրի դիրքով, բարքերի նմանութեամբ աւելի մօտ էին պարթևներին, նրանց հետ խառնված էին ամուսնութիւններով և, անծանօթ լինելով ազատութեան հետ, աւելի թեքվում էին դէպի այնտեղ, դէպի ստրկութիւնը»։ Մի ուրիշ տեղ Տակիտոսն ասում է թէ հայերը ատում էին հոօմայեցիներին։

Մօմզէնը հոօմէական տիրապետութեան ամբողջ ժամանակամիջոցը բնորոշում է այսպէս. «Հայաստանը հոօմէական երկարատև տիրապետութեան ժամանակ էլ մնաց ոչյունական մի երկիր, որ անխզելի կապերով կապված էր պարթևների պետութեան հետ թէ լեզուի ու կրօնի միութեամբ, թէ բազմաթիւ ազգականական կապերով նշանաւոր ընտանիքների մէջ, թէ հագուստի և զէնքերի նմանութեամբ»։

Բայց պէտք է այստեղ, միակողմանիութիւնից խուսափելու համար, ասել և այն որ արևմտեան աշխարհը, իբրև նուաճող և տէր, այնպէս չէր պահում իրան Հայաստանի մէջ,

որ կարողանար ազգաբնակութեան համա-  
կրանքները վայելել: Հուսաւորված եւրօպա-  
ցիները վարվում էին հայերի հետ, ինչպէս  
մի բարբարոս ազդի հետ: Դեռ Քսենոփոնի  
զինուորները իրաւունք էին համարում խլել  
հայերից այն ամենը, ինչ հաւանում էին:  
Հոօմայեցիները յաճախ նենգ և ստոր ա-  
րարքներով վրդովում էին հայերին: Բաւա-  
կան է միայն յիշել Անտօնիոսին, որ անա-  
ջողութեան հանդիպելով պարսկական ար-  
շաւանքի մէջ, իր բարկութիւնը թափեց Տիգ-  
րանի որդի Արտաւազդի վրա, որ հոօմայե-  
ցիների դաշնակիցն էր: Խարբէութեամբ բըռ-  
նելով Արտաւազդին, Անտօնիոսը տարաւ-  
նրան Եգիպտոս՝ իր սիրուհի Կլէօպատրային  
սիրաշահելու համար և սրա կամքով էլ սպա-  
նեց անմեղ թագաւորին:

Այդ ստորութիւնը կատաղեցրեց հայե-  
րին. Արտաւազդի որդին հրամայեց կոտորել  
Հայաստանում գտնվող հոօմայեցիներին, իսկ  
Հոօմը, ի հարկէ, իր միջոցները ձեռք առաւ  
Հայաստանը նորից խաղաղացնելու համար:  
Երկրում ծագեցին ներքին խռովութիւններ,  
որոնց ժամանակ սպանվեց Արտաւազդի որ-  
դին: Թէև խաղաղվեց երկիրը, թէև հոօմայ-  
եցիները տէր մնացին, բայց Հայաստանում  
ատելութիւնը և ընդդիմութիւնը հոօմայե-  
ցիների դէմ չը պակասեց:

Այս գեղարքության պատմական իրադրութեանը, պատճառեաներից, մեկն են բացառաշահման հովազ Տառկիտոսի, վկացութիւնը հայեցի մատին հոգ, մարդութիւնն. Է՛ անկախ այս գեղարքությունը, և միւսնեցը կը կորորդուկտն, Կօտունակութիւնն ունին: Պատմական, հասանալ իւրողութիւնն այն է, որ ցեղական գույքացուկրթական հանգամանքներն են, հայեցին մատեցնում պարթևնեցին և հեռացնում այս բնամտեան առջերից:

Այսպէս ապրեցինք մենք մուտ ութ դար աղքերի ու լեզուների այն պահպին, խաղնաշը բանում, որ կոչվում է Արևմտեան, Առվատ Լիներ ասիականութեան վենուորը — պայ պարտաւորեցնում էր մեզ մեք գոյութիւնը, մեք կրթութիւնը:

Բայց աղքերի կեանքի մեջ անզի ևն ունենում դէպքնը, որոնք արժանապես ցեղացրծում են նրանց ճակատադիրը, բուզու վին այլ ճանապարհի և գիրքի վրա են դրտնում նրանց:

Անզ համար էլ պատրաստվում էր մի ակուսի պիճակ:

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ**

---

**ՑԵՂԱՇՐՋՈՒՄ**



Ա.

Քրիստոնէութիւնը իբրև եւրօպական կրօն:—  
Եկեղեցու առաջադիմական ջանքերը և յոյների կա-  
տարած դերը այդ գործերի մէջ:—Քրիստոնէութիւնը  
հալածվածից դառնում է տիրապետող:—Եկեղեցական  
շարժումներ:

Չորրորդ դարի սկզբում համաշխար-  
հային պատմութեան մէջ նկատելի է դառ-  
նում նոր, մեծ ոյժի յաղթանակը: Քրիստո-  
նէական կրօնը զարգացած է, այլ ևս հալած-  
վող ու գաղտնի մի վարդապետութիւն չէ:  
Շուտով նա դարձաւ պաշտօնական կրօն հոօ-  
մէական ահազին պետութեան մէջ և սկսեց  
արագ կազմակերպվել, տիրապետութեան  
համար և նուաճումներ անել:

Ի՞նչ էր բերում այդ նոր կրօնը:

Ֆրանսիացի գիտնական Ռընանը իր մի  
ճառի մէջ ասում է. «Քրիստոնէութիւնը այն  
մտքով, ինչպէս հասկանում է հաւատացեալ-  
ների ահազին մեծամասնութիւնը, իսկապէս  
հնգկանեւրօպական ստեղծագործութեան ար-  
դիւնք է»: Եւ դա ճիշտ է:

Երևան գալով սեմական ցեղի մէջ, քրիստոնէութիւնը երկար ժամանակ չը մնաց Պալէստինի քարացած հրէութեան սեփականութիւն։ Նոր կրօնը իր սկզբունքներով չէր էլ կարող այդպէս սահմանափակված մնալ։ Քրիստոսի մահից յետոյ նրա աշակերտաները ծրուսաղէմում հիմնեցին առաջին եկեղեցին և հրէտաները շտափեցին հազորգոհել նրան իւրանց ազգային գոյնը։ Գարեւից ի վեր հրէտանութեան իդէալն է եղել կղզիանալ, բաքտանվել աշխարհից իբրև Աստուծու ընարած մի հատիկ ժողովուրդ, որ բարձր է ամենքից, ուրին և երեսքի խնամքները միայնակ պիտի վայելէ։ Նոր եկեղեցու մէջ հրէտան մնում էր հրէտայ, նոյնպէս առանգապահ, նոյնպէս հնապարտու նաև չէր ընդունում որ Մովսէսի ու բէնքները չնշված են Քրիստոսի ձեռքով և համոզված էր որ հին, նպատական նհավան ու Քրիստոսի հաշտեցնող ազատութիւն և հաւասարութիւն քարոզող վարդապետութիւնը մի և նոյն սկզբունքներն են։ Տամա և հինդ հրէտայ հապիսկապաններ, որոնք երտանդում եկեղեցու տապահնաբաններն էին, թիվառութեած մուրգիկ էին. քրիստոնէայ հրէտայի համար Երանեական տաճարը նուիրական էր։ Հետքանութիւնը չէին կարող միանալ եկեղեցուն։ Նոյն իսկ խորութիւն կար տեղացի և օտարք երկրացի, օտար լեզուակ խօսող հրէտանների

մէջ. վերջիններս աւելի համբերող հոգի առ նէրն և յարաքեզութիւն էրն պահպանութ հեթանոսների հետ, ուտարի և նրուսադէմացի ուղղանուատ հրէութեան համար ատելի էլլու

Երուտաղէմում յարուցած հայածանքնես ըս հանում են քրիստոնէութիւնը լճացած հրէականութեան գրկից. առաքեալները և նրանց աշակերտաները քարոզչական գործուա նէութիւն են սկսում Պալէստինի ստումանս ներից գուրս, հիմնում են եկեղեցիներ, ու րոնք բազմաթիւ հեթանոսներ են ընդունում իրանց մէջ: Միջերկրականի ափերում առա րող զանազան ազգերն ու ցեղերը մասնակից են գառնում նոր կրօնական շարժման և առ ուաջ են գալիս նոր հոսանքներ ու գազա փարներ: Հրէական քրիստոնէութիւնը հա մարգում է հերձուած, եկեղեցին այլ ևս եւ րուտաղէմից չէ ստանում ցուցմունքներ, հրա հանգներ: Ալէքսանդրիան, Անտիոքը, Եփեսսը, Հոօմը քրիստոնէութեան նշանաւոր կենտրոններ են. այդ տեղերի մեծ եկեղեցիւները մշակում են դաւանաբանական հիմունքներ: Ամենամեծ դերը այդ եռանդուն շարժ ման մէջ կատարում են յոյները և յունական գիտութիւնը: Առաջին դարից երևան են գա լիս փիլիսոփայական և աստուածաբանական վէճեր, որոնց նպատակն էր պարզել Քրիստոսի աստուածային առաքելութեան միտքը,

նրա անձնաւորութիւնը, նրան աշխարհ ուղարկող գերագոյն էակի յատկութիւնները: Իր նոր, վտանգաւոր ախոյեանի դէմ զինվում է և հեթանոսութիւնը: Բայց քրիստոնէական կրօնը այդ վէճերի ու իրարանցումների մէջ ոյժ և պատրաստականութիւն է ձեռք բերում: Նա եռանդով գործում է, ծիսական, դաւանական և վարչական սիստեմներ է ստեղծում, աշակերտում է յունական փիլիսոփայութեան, թէև դա հեթանոս մտքի արտադրութիւն էր, և վերցնում, իւրացնում է նրանից այն, ինչ հարկաւոր էր եկեղեցուն՝ նրա գոյութիւնը գիտական հիմքերի վրա ամրացնելու համար:

Չորրորդ դարում քրիստոնէանների մտաւոր պատրաստութիւնը այնքան նշանաւոր առաջադիմութիւն էր արել, որ վերացական, բարձր հարցերը քննելու և պատճառաբանելու համար հրապարակական մեծ ժողովներ են գումարվում: Սկսվում է տիեզերական ժողովների շրջանը, որ ահագին ոյժ է տալիս եկեղեցուն, կազմակերպում ու պատրաստում է նրան մի համաշխարհային տիրապետութեան համար:

Թէ որքան շիտակութիւն ու ճշմարտութիւն կար այդ շարժումների մէջ, թէ ինչպէս էին ձևակերպվում այն կրօնական ճշշմարտութիւնները, որոնք ազգերի և լեզու-

Ների համար պարտաւորական, անսխալ պիտի հրատարակվէին, թէ ինչ մարդիկ ինչ հանգամանքների մէջ էին այդ կանոնները խմբագրողներն ու հրատարակողները,—մեր այս աշխատութեան սահմաններից դուրս է։ Մի կողմ թողնենք այդ բոլոր նշանաւոր վիաստերը։ Թողնենք որ մնայ միայն իրողութիւնը։

---

Բ.

Քրիստոնէութիւնը Հայաստանում:—Դա ժողովրդական շարժում չէր:—Թագաւորի հրամանով և զօրքերով:—Հեթանոսութեան դիմագրութիւնը:—Նաև Հնջվեց բոլորովին:—Հեթանոսասէր կուսակցութիւն և Պարսկաստան:—Ժողովուրդը տպէտ է:—Դրիգոր Լուսաւորչի զիջողութիւնները և ձեռք առած միջոցները:—Հեթանոսական յիշատակարանների ոչնչացում, յոյն-տասրական դպրոցներ, օտար ուսմունք, օտար լեզու:—Քրիստոնէութիւնը չէ ժողովրդականանում:—Ամբողջ չորրորդ դարը հեթանոսութեան մըցումն է քրիստոնէութեան գէմ:—Փաւատոփ մի նկարագրութիւնը:—Եկեղեցական իշխանապետութիւն ժամանգական դինաստիայի ձևով:

---

Չորրորդ դարի սկզբում քրիստոնէութիւնը մուտք է դործում Հայաստան: Նա գալիս էր արևմուտքից, արևմտեան աշխարհայեցողութիւններն ու գաղափարներն էր բերում: Այն, ինչ դարերի ընթացքում չը կարողացան անել Ալէքսանդր Մակեդոնացին և նրա յաջորդները, հումէական լեզէօնները, կատարեց մի քրիստոնեայ համեստ քարոզիչ: Եւրօպականութիւնը գէնքի ոյժով, աշխար-

հակալութեան թևերի վրա մեր երկրում հիւր-  
ընկալութիւն չը գտաւ, իսկ երբ հեզ ու  
խաղաղ կրօնի կերպարանքով մօտեցաւ մեր  
աշխարհին, նրա բոլոր սահմանները բաց  
գտաւ և ներս մտաւ:

Բայց դա մի ժողովրդական շարժում  
չէր, այլ սկսվեց վերևից, արքունիքից և ազ-  
նուականութիւնից: Տարաբախտարար, մենք  
չունենք հայերի քրիստոնէութիւն ընդունե-  
լու ճիշտ պատմութիւնը. եղած տեղեկու-  
թիւնները մեծ մասամբ աւանդութիւններ  
են, որոնք գրի առնվեցան մի դար յետոյ,  
այն էլ հոգեսորականների ձեռքով: Բայց որ-  
քան էլ եկեղեցականների ջերմեռանդութիւ-  
նը հրաշքներով ու գերբնական երևոյթներով  
է շաղախել քրիստոնէութեան մուտքի պատ-  
մութիւնը, մենք հնարաւորութիւն ունենք  
նոյն իսկ այդ աղճատ պատմուածքներից հե-  
տեւեցնել, որ զործը Հայաստանում այնպէս  
չը գնաց, ինչպէս նկարագրված է: Քրիստո-  
նէութիւնը հրաշքով, հեշտութեամբ չը մտաւ  
Հայաստան: Հինը, հեթանոսականը, ծխի  
պէս չը ցնդեց խաչի նշանի առաջ, այլ եր-  
կար դիմացաւ, մաքառեց և տեղի տուեց մի  
դար և աւել տեսած մրցումներից յետոյ:

Կրօնը անհատական խղճի, համոզմուն-  
քի վրա է ազգում: Հայաստանի մէջ առաջ

Էլ քարոզական փորձեր արել էին քրիստոնէութիւն տարածողները, բայց միայն Գրիգոր Լուսաւորիչը առանձին աջողութիւն ունեցաւ, կարողանալով ազդել ուղղակի հայոց թագաւորի վրա: Իրաւունք ունի Մովսէս Խորենացին, երբ համեմատելով Տրդատ թագաւորին Գրիգոր Լուսաւորչի հետ, առաւելութիւնը թագաւորին է տալիս, որովհետեւ, ասում է նա, «համոզական կամ ստիպողական խօսքով նուաճելու կողմից թագաւորն աւելի շնորհ ունէր. որովհետեւ հաւատի համեմատ նա չէր պակասեցնում գործը»: Լոկ խօսքը առանձին մեծ արդիւնքներ չէր ցոյց տայ, եթէ նրա հետ միացած չը լինէր ուժեղ թագաւորի գործը—հրամանը, զօրքը,—այսպէս է եղել ամեն տեղ, ուր քրիստոնէութիւնը պետական կրօն էր հրատարակվում:

Կուապաշտութիւնը դիմադրում էր: Հայոց մեհեանները, շրջապատված բարձրաբերձ պարիսպներով, քրմական զօրքեր էին հանում նոր կրօնի առաքեալների դէմ: Հայոց դարձի այն առասպելախառն պատմութիւնը, որ հասել է մեզ Ագաթանգեղոսի անունով, ասում է թէ դրանք զօրքեր, մարդիկ չէին, այլ դեեր: Այսպէս, երէզ աւանում, ուր հայ թագաւորների մեծ և բուն մեհեաններն էին գտնվում, Գրիգորի առաջ,

ասում է Ազաթանգեղոսը, գուրս եկան  
«դեեր, որոնք վահանաւոր զօրքի նմանութիւն  
ունէին և մարտնչում էին, մեծագոչ աղա-  
ղակներով լեռներն էին թնդացնում»։ Քրիս-  
տոնեայ հոգեորականի համար ինչ հեթանո-  
սական է, նա դե է։ բայց մենք պիտի ջըն-  
ջենք այդ բառը, և այնուհետև պարզապէս  
դուրս կը գայ որ մեհեանների վահանաւոր  
զօրքերը կանոնաւոր պատերազմ էին մղում  
թագաւորի դէմ։ Այսպիսի կոփիւներ տեղի ու-  
նեցան մի քանի մեհեաններում։

Ուրեմն, առաջին կարևոր հանգամանքը  
այն է, որ երկրի գոնէ մի մասը բացարձակ  
ընդդիմութիւն ցոյց տուեց և նոյն իսկ զէնք  
էլ բարձրացրեց իր թագաւորի դէմ։ Ազա-  
թանգեղոսը պատմում է որ յաղթված դեե-  
րը փախչում էին դէպի Մարաստանի կող-  
մերը։ Այս էլ ճիշտ ցոյց տուած մի ուղղու-  
թիւն է։ Մարաստանը Պարսկաստանի մի  
մասն է։ և ուր կարող էին փախչել անբաւ-  
ական տարրերը, եթէ ոչ Պարսկաստան, ո-  
րի կրօնը այնքան մօտիկ ազգակցութիւն ու-  
նէր հայոց կրօնի հետ։ Նշանակում է որ Հայ-  
աստանի մէջ բաւականաչափ պարարտ հող  
մնաց՝ նոր կարգերի դէմ մի զօրեղ ընդդի-  
մադիր կուսակցութիւն կազմելու համար։ Եւ  
որ գլխաւորն է՝ այդ կուսակցութիւնը կա-  
րող էր հովանաւորութիւն և աշակցութիւն

գտնել պարսից կառավարութեան կողմից։  
Պարսկաստանը շարունակում էր նայել Հայ-  
աստանին իրբե մի երկրի, որ իր սեփա-  
կանութիւնն էր կազմում և որի համար կոիւ-  
ներ էր մղել Հոօմի գէմ։ Այն ժամանակ, երբ  
քրիստոնէութիւնը մուտք էր գործել Հայաս-  
տան, Պարսկաստանում գահի վրա հաստատ-  
վել էր Սասանեան տոհմը, որ նոր ոյժ տուեց  
պարթեների ժամանակ թուլացած զրադաշ-  
տական կրօնին, գարձրեց նրան պարսկա-  
կան պետութեան հիմք։ Պարսիկ հոգեորա-  
կանութիւնը, միացած ազնուականութեան  
հետ, մի շատ ուժեղ տարր էր կազմում երկ-  
րի կառավարութեան մէջ։ Սասանեան թա-  
գաւորները պիտի ենթարկվէին այդ տար-  
րին, եթէ կամենում էին հանգիստ մնալ ի-  
րանց գահի վրա, որովհետև գահ բարձրա-  
ցնողները մոգերն ու ազնուականներն էին,  
և նրանց համար էլ ոչինչ դժուարութիւն չէր  
գահից զրկել այն թագաւորներին, որոնք  
չին հնազանդվում նրանց։

Զրադաշտական քաղաքականութիւնը  
սկզբում բարեհաճ էր դէպի քրիստոնէու-  
թիւնը. հոօմէական պետութեան մէջ հալած-  
վող քրիստոնեաները ապաստան էին գտնում  
Պարսկաստանում։ Բայց երբ քրիստոնէու-  
թիւնը պաշտօնապէս ընդունվեց Հոօմի պե-  
տութեան մէջ, Պարսկաստանի վերաբերմուն-

քը արմատապէս փոխվեց։ Քրիստոնեաները, ի հարկէ, սրտով ու մտքով հոօմայեցիների կողմն էին և այս բնական հանգամանքը դարձաւ Սասանեան թագաւորների համար մըշտական կասկածների աղբիւր։ Նրանք, ի հարկէ, չէին կարող թոյլ տալ որ իրանց պետութեան մէջ գտնվեն այնպիսի տարրեր, որոնք կրօնակցութեան պատճառով շարունակ հակված էին դէպի Հոօմը, Պարսկաստանի այդ վաղեմի թշնամին։ Այս պատճառով էլ Հայաստանի քրիստոնեայ դառնալը Պարսկաստանին մեծ անհանգստութիւն էր պատճառում և նա աշխատում էր որ նոր կրօնը չը հաստատվի հայերի մէջ։

Գանք երկրորդ խոշոր հանգամանքին։

Մի ժողովրդի ընդունել են տալիս քրիստոնէութեան նման մի բարդ—վերացական կրօն, որի շօշափած գաղափարները հասունացած մտքին են կարող մատչելի լինել։ Իսկ այդ ժողովուրդը անկիրթ ու խաւար էր։ Ազաթանգեղոսը, առանց այլնայլութեան, անուանում է հայ տմբոխը «գաղանամիտ, վայրենագոյն, ճիւազաբարոյ»։ Գրիգոր Լուսաւորիչը, ի հարկէ, շատ լաւ էր հասկանում մի այդպիսի ժողովրդի մէջ արմատական փոփոխութիւն մտցնելու դժուարութիւնները։ Եւ մի շարք միջոցներ է ձեռք առնում, որը հաշտեցնող, զիջող, որը բռնի։ Ոչ մի տեղ

դեռ օրինակ չէր եղել որ մի օտար, եկուոր տիրապետութիւն հաստատվելու աջողութիւն գտնէր առանց տեղական, բնիկ կարգերին զիջողութիւններ անելու։ Այսպէս արաւ և քրիստոնէութիւնը։ Նա նուիրագործեց Նաւասարդ ամսում կատարվող ազգային մեծ տօնը և քրիստոնեայ հայը ստացաւ մի քանի քրիստոնէացրած պատառիկներ իր հին, հեթանոսական կրօնից. այսպէս են մեռելների պաշտամունքը, զոհաբերութիւնը։

Մնացած միջոցները անհամբերողութեան և չափազանցութիւնների կնիքն էին կրում, թէև պէտք է ասել որ աւելի խիստ ու անողոք էին արևմտեան հոգեորականները, երբ պէտք էր հալածել հեթանոսութիւնը։ Նոր կրօնի ամենահզօր հակառակորդը դարաւոր անցեալն էր, և Գրիգոր Լուսաւորիչը, ինչպէս և նրա յաջորդները, ամեն խստութեամբ զինվեցին այդ անցեալի դէմ։ Նրանք քանդեցին և ոչնչացրին հեթանոսութեան բոլոր յիշատակարանները, ոչինչ չը խնայեցին, որպէս զի ժողովրդի աչքի առաջ չը մնայ անցեալը յիշեցնող մի շիւղ անգամ։ Երկիրը զրկվեց դարաւոր կեանքի և կուլտուրայի բոլոր նշաններից ու վկաներից, որոնք պիտի լուսաւորէին անցեալի կարեոր կենսական հարցերը, աղգի քաղաքական ու մտաւոր կացութեան հանգամանք-

ները։ Հայի անցեալը կորչում էր անդառնալի  
կերպով։

Այրել ու անհետացնել նիւթական մնա-  
ցորդները հեշտ էր, բայց ժողովուրդը միայն  
դրանց միջոցով չէր կապված իր հին սրբու-  
թիւնների հետ։ Նա ունէր սիրտ։ Պէտք էր  
նրան փոփոխել, կրթել ուրիշ կերպ։ Գրիգոր  
Լուսաւորիչը այս էլ լաւ հասկացաւ, բայց  
ի՞նչ արաւ։ Բերել տուեց բազմաթիւ յոյն և  
ասորի հոգեորականներ, նրանց յանձնեց ժո-  
ղովրդի կրթութեան, վերածնութեան գործը։  
Բացվեցին շատ դպրոցներ, ուր հայերը, իր-  
ւե սեփական դպրութիւն չունեցող ժողո-  
վուրդ, պիտի սովորէին ասորական և յու-  
նական լեզուները և դրանց միջոցով ծանօ-  
թանային քրիստոնէական գրքերի հետ։ Դա  
մի շատ անքնական գրութիւն էր։ Օտար ու-  
սուցիչներ, օտար վարք ու բարք, խորթ ուս-  
մունք, խորթ ու անհասկանալի լեզուներ։ Ան-  
հատներ կարող էին պատրաստվել այդտեղ,  
բայց մի ժողովուրդ չէր կարող հրաժարվել  
իր ազգային բոլոր նուիրական ստացուածք-  
ներից և յանկարծ հանդիսանալ մի նոր ազգ՝  
օտար լեզուով և օտար պաշտամունքով։

Քրիստոնէութեան մուտքի պատմու-  
թեան մէջ առանձնապէս շեշտվում է մի այս-  
պիսի փաստ։ Գրիգոր Լուսաւորիչը քուրմե-  
րի որդիներին տուեց իր բացած դպրոցները,

որպէս զի՞ նրանցից քրիստոնեայ հոգևորականներ պատրաստվեն։ Դա մի իմաստուն միջոց էր, բայց մի և նոյն ժամանակ և ապացոյց՝ որ համբերողութեան ոգի չը կար։ Հայաստանի մեծ վերանորոգիչը շրջում էր զինուորական գնդերի հետ և նրանց աջակցութեամբ էր քանդում հինը, հաստատում նորը։ Դարձը միանգամայն բռնի էր, նոր կրօնի ժողովրդականացման միջոցները, մասնաւանդ կրթութեան գործը, արհեստական էին, մակերևոյթային։ Կային դպրոցներ, կային ուսուցիչներ և աշակերտներ, բայց մի ամբողջ դարի ընթացքում Հայաստանի մէջ մատենագրութիւն չառաջացաւ. իսկ ի՞նչ կարող էր անել քրիստոնէութիւնը առանց մատենագրութեան։ Նշանակում է որ ժողովուրդը, իբրև ստեղծագործող ոյժ, իր սրտի և մտքի կարողութեամբ չէր փարած իր ընդունած կրօնին։

Այս է պատճառը որ մեր չորրորդ դարը ամբողջովին ներկայացնում է հեթանոսութեան դանդաղ հոգեվարք և քրիստոնէութեան վերին աստիճանի վտանգաւոր ճգնաժամ։ Մենք տեսնում ենք մի պաշտօնական քրիստոնէութիւն, որ պահվում է արտաքուստ և չէ կարողանում խոր արմատներ տարածել ժողովրդի սրտի մէջ։ Այս դրութիւնը շատ պարզ և գեղեցիկ կերպով նկա-

բագրում է ականատես պատմագիր Փաւստոս  
Բիւղանդացին։ Հայերը, ասում է նա, սկըզ-  
բից և եթ քրիստոնէութեան անուն ընդու-  
նեցին ոչ թէ ջերմեռանդ հաւատով, այլ հար-  
կից ստիպված, իբրև մարդկային մի մոլո-  
րութիւն։ Զը կար գիտակցութիւն, յոյս հա-  
ւատ. մի քիչ բան գիտէին միայն նրանք,  
որոնք փոքր ի շատէ տեղեալ էին յոյն կամ  
ասորի լեզուներին։ Իսկ որոնք զուրկ էին  
այդ գիտութիւնից—ժողովրդի, նախարար-  
ների, գիւղացիների բազմութիւնը—դրանք,  
եթէ վարդապետները օր ու դիշեր նստէին  
և ամպերի պէս վարդապետութիւնների մի  
հեղեղ թափէին նրանց վրա, դարձեալ ոչինչ,  
«ոչ մի բան, ոչ կէս բան, ոչ մի չնչին յի-  
շատակ ու նշոյլ անգամ» իրանց լսածից չէին  
կարող մտքի մէջ պահել։

Այսպիսի դրութիւնը շատ նպաստաւոր  
էր պարսկական կուսակցութեան համար։ Ա-  
նունով միայն քրիստոնեայ ժողովուրդը շա-  
րունակ դէպի յետ էր նայում, դէպի իր հայ-  
րենի աստուածներն ու հերոսները և ամեն  
յարմար դէպքում հրապարակ էր հանում իր  
հեթանոսական ձգտումները։

Կար, վերջապէս, և մի երրորդ խոշոր  
հանգամանք, որ մեծ նշանակութիւն ստա-  
ցաւ մանաւանդ երկրի ներքին գործերի մէջ։  
Գրիգոր Լուսաւորիչը, հաստատելով կաթո-

ղիկոսական աթոռ, իր ժառանգներին վերապահեց այդ հոգեոր բարձրագոյն իշխանութիւնը։ Հիմնվեց մի կրօնական ժառանգական միապետութիւն, որի նմանը չէք գտնի ոչ մի քրիստոնեայ եկեղեցու պատմութեան մէջ։ Դա մի ամբողջ դինաստիա էր իր յատուկ շահերով և աւանդութիւններով, որոնք սկսեցին ընդհարվել գոյութիւն ունեցող դինաստիայի, թագաւորական տան շահերի հետ։ Մի խօսքով, առաջացաւ այն դրութիւնը, որ ձևակերպվում է «պետութիւն պետութեան մէջ» խօսքերով։

Պէտք է միշտ յիշել Գրիգոր Լուսաւորչի և նրա տոհմի մեծ երախտիքները, կատարած ահազին դերը։ Հայութեան լուսաւորիչը ոչ միայն մի նոր կեանքի հիմք դրեց այս ասիական երկրում, այլ և նախահայր եղաւ մի տաղանդաւոր, եռանդուն ու անխոնջ սերունդի, որ շարունակեց սկսածը, հսկայական ջանքեր գործ դրեց եկեղեցու գոյութիւնը պահպանելու այնպիսի ծանր հանգամանքների մէջ, երբ համարեա ամեն ինչ պատրաստ էր քրիստոնէութիւնը տապալելու։

Այս բոլորը չը պէտք է մոռանալ։ Բայց չը պէտք է մոռանալ և այն ճշմարտութիւնները, որոնք բղխում են պատմական փաստերից։ Լուսաւորչի դինաստիան խոշոր հետ-

քեր թողեց չորրորդ դարում թէ իր դրական կողմերով, որոնք բազմաթիւ էին և թէ իր մոլորութիւններով ու միակողմանի հայեացքներով, որոնք նոյնպէս կային։ Նա եղել է մի ամուր ժայռ, որ շատ գեղեցիկ գործեր է պաշտպանել, բայց և մի այնպիսի ժայռ, որին ընդհարվում էր աշխարհական միապետութիւնը։ Այդ ընդհարումները, կնքված նոյն իսկ երկու կողմերի արիւնով, Հայաստանի ներքին կեանքի ամենազօրեղ փաստերն էին և, տարաբախտաբար, թուլացում ու անկում արագացնող փաստեր։

Ահա ինչ դրութիւն էր ստեղծվել քրիստոնէութեան մուտքի հետ։ Մեր յիշատակած երեք խոշոր հանգամանքները, խառնվելով իրար հետ, մրցումներ ու յուզմունքներ առաջացրին մեր ասիական ճահճացած կեանքի մէջ։ Հայաստանի ներքին կեանքը, որ մինչև այդ պատմական մի հանելուկ, մի անյատութիւն էր, սկսում է եռալ, խոշոր երեոյթներ արտադրել ու այսպիսով մի առանձին հետաքրքրական կերպարանք է տալիս չորրորդ դարին, այն զարմանալի նշանաւոր դարին, երբ մեր ազգը մի կողմից մտաւոր վերածնութեան էր կոչվում, իսկ միւս կողմից՝ մեռնում էր քաղաքականապէս։

Գ.

Գրիգոր Լուսաւորչի տոհմը իբրև խոշոր հողատէր ազնուականութիւն:—Դինաստիական շահեր և պարտաւորութիւններ:—Պատիւ և ազդեցութիւն:—Եկեղեցին ու պետութիւնը չը միացան իրար հետ:—Հայ սուլթանիզմը հնացած, ուժասպառ:—Կոկւ եկեղեցու դէմ:—Տիրանի անզթութիւնները:—Քաղաքական պատճառ:—Շապուհ երկրորդ, հալածանք յունական քրիստոնէութեան դէմ:—Ալբիանոսի կաթողիկոսական տոհմը իբրև հակադրութիւն Լուսաւորչի յունասէր տոհմի դէմ:—Դա պահպանողական-ազգային կուսակցութիւն է, հաւատարիմ արքունիքին:—Պարսկական կուսակցութեան զոհերը:—Նախարարների բաժանումը:

---

Տրդատ թագաւորը նուիրեց Գրիգոր Լուսաւորչին մեծ մեծ կալուածներ, նրա յաջորդները աւելացրին այդ հողային հարստութիւնները: Փաւստոսի ասելով, ամբողջ տասն և հինգ գաւառներ էին պատկանում Լուսաւորչի տոհմին, և դրանք երկրի ամենագեղեցիկ տեղերն էին: Ահա այն հիմքը, որի վրա հաստատվեց կրօնական դինաստիայի ոյժը: Կաթողիկոսական գահի վրա նստողը

մի նշանաւոր աշխարհական իշխան էր, մի խոշոր կալուածատէր, որ ազդում էր ոչ միայն իր սրբազն պաշտօնով, այլ և հարստութեամբ։

Պահպանել ժառանգական իշխանութունը՝ յայտնի պարտաւորութիւն էր ժառանգների համար։ Լուսաւորչի ժառանգները, դիմաւորապէս դիմաստիական նկատումներով, ամուսնացող հոգևորականներ էին (սակաւ բացառութեամբ) և նրանց համար տոհմային առաջնակարդ հարց էր արու զաւակ ունենալը։ Լուսաւորչի յաջորդ Վրթանէսը մեծ մտատանջութեան մէջ էր, ինչպէս վկայում է Փաւատոսը. նա հասել էր ծերութեան հասակին, բայց դեռ ժառանգ չունէր։ Երկինքը լսում է ծերունու աղաչանքները և երկու արու զաւակ է շնորհում նրան։ Դրանցից մէկին, Յուսիկին, հայրը շտապում է, նոյն իսկ դեռ տղայ հասակում, ամուսնացնել Խոսրով թագաւորի թոռան հետ, և այդպիսով ստեղծվում է ազգելու մի նոր միջոց— ինամիութիւն արքունիքի հետ. այնուհետեւ հայոց կաթողիկոսը ոչ միայն Լուսաւորչի սերունդ պիտի լինէր, այլ և թագաւորական տոհմի ներկայացուցիչներից մէկը։ Աւելի բարձր և ազդեցիկ դիրք հազիւ կարելի լինէր գտնել հայոց իշխանական դասի մէջ։ Դիմաստիական պարտաւորութիւնները այն-

քան զօրեղ էին, որ Յուսիկը, չը նայած որ  
զզուանք էր զգում դէպի ամուսնութիւնն ու  
իր կինը, հարկադրված եղաւ, ինչպէս պարտք  
է համարել արձանագրել Փաւստոսը, գոնէ  
մի անգամ ամուսնական պարտք կատարել.  
և երբ ծնվում են երկու որդիներ, նա մի-  
անգամւյն հեռանում է կնոջից:

Նոյն իսկ անձնական յատկութիւննե-  
րը նշանակութիւն չունէին ժառանգների հա-  
մար: Յուսիկի երկու որդիները փչացած և  
անբարոյական մարդիկ էին: Նրանք հոգեոր  
կոչում չընտրեցին, այլ դարձան ցինուորա-  
կան, հարուստ կալուածատէրերին յատուկ  
կեանք էին վարում, հարձեր էին պահում,  
անառակ կանանց հետ գինեխմութեան էին  
տալիս իրանց: Բայց և այդպէս, կային մար-  
դիկ, որոնք հարկադրում էին դրանց ընդու-  
նել հոգեոր կոչումը, շարունակել կաթողի-  
կոսութիւնը... Կարեւոր այդ էր, կրօնական  
իշխանապետութեան անընդհատ շարունա-  
կութիւնը:

Հասկանալի է թէ որքան ծանր մտա-  
տանջութիւններով պիտի պաշարվէր այն  
մարդը, որին վիճակված էր Լուսաւորչի  
տոհմի վերջին ուղիղ ժառանգը լինել: Դա  
ս. Սահակն էր: Ղազար Փարպեցին պատմում  
է նոյն իսկ Սահակի խօսքերով թէ որքան  
անմիջիթար ու տիսուր էր մեծագործ ծերու-

Նին, որովհետեւ մի հատ աղջիկ էր նրա ա-  
մուսնութիւնից ծնվել։ Աստուծուն աղաչում էի  
— ասում է նա, — «Հնորհել ինձ արու որդի  
ինչպէս իմ նախնիքներին, որոնք ինձանից  
առաջ ամուսնացած էին՝ որդեծնութեան հա-  
մար»։ Աղաչանքները անկատար են մնում,  
և ծերունի հայրապետը իր կեանքի վերջին  
օրերում իր տոհմային բոլոր կալուածները  
կտակում է ոչ թէ եկեղեցուն կամ ազգին,  
այլ իր աղջկան, որ Մամիկոնեան հարուստ  
տոհմի հարսն էր։

Հարուստ ու շքեղ իշխանապետութեան  
չէր պակասում, իհարկէ, և մեծ հեղինակու-  
թիւնը եթէ չը հաշւենք Յուսիկի որդինե-  
րին, որոնք, բարեբախտաբար, չարատաւո-  
րեցին կաթողիկոսական աթոռը, Լուսաւորչի  
միւս բոլոր ժառանգները ահազին ազդեցու-  
թիւն և իշխանութիւն ունէին նոյն իսկ աշ-  
խարհական գործերի վրա։ Դրանք պարզ  
կրօնաւորներ չէին, այլ իշխող ազնուական-  
ներ, քաղաքական գործիչներ։ Վրթանէսը  
Խոսրով թագաւորի խորհրդակիցն ու բար-  
ձակիցն էր, Յուսիկը այնքան ոյժ ունէր իր  
մէջ, որ Տիրան թտգաւորին մերժեց եկեղե-  
ցուց, իսկ Ներսէս Մեծը տնօրինում էր պե-  
տութեան ճակատագիրը. նա համարվում էր  
«աշխարհի զլուխ», Բիւզանդիայում անգամ  
գիտէին որ հայոց թագաւորը և Ներսէսը մի

և նոյն են: Կարճ ասելով, կրօնական իշխանապետութիւնը կուսաւորչի տոհմի ներկայացուցիչների միջոցով արտայայտեց մի թարմ և ուժեղ կազմակերպութեան ամբողջ կենսունակութիւնը և համարեա նսեմացրեց աշխարհական միապետութիւնը. բնական էր որ մի այդպիսի մարմին աւելի ժողովրդականութիւն վայելէր, աւելի հաւատ ու վրատահութիւն ներշնչէր, քան Արշակունիների տոհմը:

Զը մոռանանք որ մեր հին սուլթանիզմը անփոփոխ մնաց, որ դա արևելեան սկզբբունքերով ապրող մի անկարգ բռնապետութիւն էր: Քրիստոնէութիւնը նրա համար օրհասական մի նորութիւն չէր լինի, եթէ նա տոգորվէր այդ մարդասէր, ոամկավարական կրօնի ողով, յարմարվէր նրա պահանջներին, վերանորոգէր իրան: Բայց մեր սուլթանիզմը անշարժ մնաց իր հին աւանդութիւնների մէջ, ուստի երկու իշխանապետութիւնները, փոխանակ իրար ձեռք տալու, միասին և համերաշխ գործելու երկրի նարեկարգութեան և առաջադիմութեան համար, հակառակորդի դիրք են բռնում իրար դիմաց: Եկեղեցին մեզանում չը բռնեց այն դիրքը, ինչ ունէր, օրինակ, Բիւզանդիայում, ուր թագաւորը համարվում էր եկեղեցու գլուխ և նրա իշխանութիւնը եկեղեցակա-

Նութեան համար մի այնպիսի սրբազան աւանդ էր, որ պէտք էր պաշտպանել նրան, ինչպէս պաշտպանվում էր ինքը, քրիստոնէութիւնը։ Մեզանում այդպէս չէր։ Երկարատե եղելութիւնները տրամադրում են մեզ կարծելու, որ ընդհակառակն, Հայաստանում եկեղեցին և պետութիւնը մրցում էին գերիշխանութեան համար, մէկն ուզում էր միւսին տապալել։ Ինչու էր այսպէս։

Հազար Փարպեցին Արշակունիների թագաւորութիւնը նմանեցնում է հնացած շորի։ Դա մի աջող համեմատութիւն է։ Հին ժամանակներում էր կարված այդ հագուստը և երբէք չէր վերանորոգված։ Եւ սակայն նրա հին հիմքը—սարկութիւնը այժմ տապալված էր, և տապալողը այն կրօնն էր, որ մուտք էր գործել երկը մէջ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով։ Ալեոր ասիականութիւններով, իր բըռնակալ պաշտամունքներով կանգնած էր մի կրօնի դիմաց, որ կոչված էր ազգերն ու թագաւորութիւնները ուղղելու դէպի լոյս, գաղափարականութիւն։ Նա համարձակ էր, չէր քաշվում արգելքներից և իր ճանապարհի վրա նահատակներ էր փոռում։ Իսկ հին շորը, իրեւ հսութիւն, թոյլ ու անկարող էր, թէև գեռ կարող էր իր իրաւունքները պաշտպանել՝ իր իմացած միջոցներով։

Ս. ՄԵՍՐՈՊ

Առաջին խիստ ընդհարումը տեղի ունեցաւ Յուսիկի կաթողիկոսութեան ժամանակ: Տրդատն ու նրա որդի Խոսրովը հպատակված էին քրիստոնեայ առաջնորդներին և հանգիստ թագաւորեցին: Այդպէս չէր Խոսրովի յաջորդ Տիրանը: Նա կամեցաւ անկախ ու ազատակամ լինել իրրև արևելեան թագաւոր և վերանորոգեց մի անկարգ, օրէնքներից ու իրաւասութիւնից զուրկ բռնապետութեան կարգերը: Յուսիկը դուրս եկաւ նրա դէմ: Երիտասարդ, դեռ համարեա երեխայ կաթողիկոսը քննադատում էր Տիրանի և նրա արքունիքի գործերը, պահանջում էր կարգ և արդարութիւն: Բայց Արևելքում քննադատութիւն չէ թոյլատրվում. սուլթանիզմը միայն ստրկական շողոքորթութիւններ կարող է ընդունել: Իւրաքանչիւր բողոք, որ բարձրանում է բռնապետի դէմ, ոճիր է: Տիրանի հրամանով Յուսիկը բարբարոսաբար սպանվեց եկեղեցու մէջ. յետոյ սպանվեց և ծերունի Դանիէլ եպիսկոպոսը, որ Յուսիկի նման բողոքող հանդիսացաւ: Այդ արիւնը առաջին խրամատը բացեց եկեղեցու և պետութեան մէջ...

Պատմութիւնը մեզ այսպէս է աւանդում այդ առաջին ընդհարման պատճառները: Բայց մեր պատմութիւնը տենտենցիող է, միակողմանի, քանի որ շարունակ հոգևո-

բականների ձեռքով է գրվել։ Մենք կարող զութիւն ունենք պատմութեան հաղորդածից մի քանի քայլ առաջ գնալ։ Այդ պատմութիւնը, նկարագրելով Տիրանի մարդասպանութիւնները, չէ ասում թէ նա քրիստոնէութեան թշնամի էր և աշխատում էր ջնջել այդ կրօնը։ Ընդհակառակն, նա ինքը պատմում է թէ ինչ շքեզ հանդէսներով Տիրանը ուղարկեց Յուսիկին Կեսարիա կաթողիկոս ձեռնադրվելու և ինչ ընդունելութիւն ցոյց տուեց նրան վերադարձին։ Մենք տեսնում ենք և այն, որ Յուսիկին սպանել տալուց յետոյ Տիրանը աշխատում էր արժանաւոր յաջորդի ձեռքը յանձնել կաթողիկոսութիւնը և իր մօտ կանչեց ծերունի Դանիէլ եպիսկոպոսին։ Սրան էլ սպանել տալուց յետոյ կաթողիկոսութիւնը չը վերացաւ։ Նշանակում է որ չը կար հալածանք քրիստոնէութեան դէմ։ հայոց թագաւորը ամեն յարմարութիւն ունէր նոր կրօնը վերացնելու, բայց չը վերացրեց։ Ինչո՞ւ։

Հայաստանի քաղաքական դրութիւնը չէր փոխվել։ Նա շարունակում էր մնալ կռուախնձոր երկու հզօր հարևանների — Պարսկաստանի և Յունաստանի մէջ։ Հայոց արքունիքը պիտի այդ իրողութիւնը միշտ աշքի առջև ունենար։ Միշտ մի ծանը հարց էր ճնշում նրան։ — մւմ պէտք է նախապատ-

ւութիւն տալ, որ ազդեցութիւնը պիտի գերակշռող հանդիսանայ: Երկրի շահերը պահանջում էին որ երկու ազդեցութիւններն էլ այնքան հաւասարակշռված լինեն, որ հզօր հարևաններից ոչ մէկը առիթ չունենայ կաւկածելու: Պարսկաստանն ու Բիւզանդիան շարունակ ընդհարվում էին իրար հետ և նրանց պատերազմների ամենագլխաւոր առիթներից մէկն էր Հայաստանի վրա տիրապետելը: Երկու թշնամի պետութիւնների մէջ կոռախնձոր դարձած երկրի դրութիւնը, իհարկէ, շատ դժուար պիտի լինէր, մանաւանդ որ աջողութիւնը կամ մէկի կողմն էր թեքվում, կամ միւսի:

Դեռ նոր էր քրիստոնէութիւնը մտել Հայաստան, դեռ Գրիգոր Լուսաւորիչը կենդանի էր, երբ Պարսկաստանի գահը բարձրացաւ Շապուհ երկրորդը, այն սարսափելի մարդը, որ քրիստոնեանների պատուհասը դարձաւ: Շապուհը դեռ շատ երիտասարդ էր, բայց գտնվում էր պարսիկ հոգևորականութեան ձեռքին, որ սկսեց գործ ածել նըրան՝ իր ֆանատիկոսական ձգտումները իրագործելու համար: Զրադաշտականութիւնը ահաւոր պատերազմ յայտարարեց քրիստոնէութեան դէմ: Պարսկաստանի մէջ գտնվող քրիստոնեանները կոտորածի ենթարկվեցին, Շապուհը յարձակվեց իր արևմտեան հարևա-

Նի վրա և սկսեց մի պատերազմ, որ ընդհատումներով շարունակվեց քսան և հինգ տարի (338—363):

Բայց պէտք է նկատի ունենալ, որ Շապուհը լոկ մոլեռանդութիւնից և անհամբերողութիւնից զրդված չէր հալածում քրիստոնեաներին: Աւելի ծանրակշիռ էին քաղաքական նկատումները: Նա տեսնում էր որ իր հպատակ քրիստոնեաները բացարձակ համակրում են Բիւզանդիային, նա ձեռքի տակ փաստեր ունէր: Նոյն իսկ իր մայրաքաղաքում Սիմէօն անունով քրիստոնեայ եպիսկոպոսը այնպիսի մի ժամանակ, երբ Պարսկաստանը պատերազմ էր յայտնել Բիւզանդիային, չափազանց խիստ լեզուով խօսեց Շապուհի պէս մի արևելեան միապետի դէմ: Այդ էր պատճառը, որ Շապուհը, պատերազմ սկսելուն հետ միասին, ոսկալի հալածանքներ յարուցեց քրիստոնեաների դէմ: Յունասէր քրիստոնէութիւնը նրան ատելի էր նրա ամբողջ կեանքի ընթացքում: Իսկ այդ կեանքը շատ երկարատե էր. Շապուհը թագաւորեց 69 տարի (310—379):

Եւ ահա այսպիսի մի թագաւորի ժամանակ Հայաստանում գերակշռող է հանդիսանում յունական ազդեցութիւնը: Պէտք է իմանանք որ Գրիգոր Լուսաւորչի տոհմը բացարձակ, չափազանց յունասիրութեան

ներկայացուցիչն էր: Ճիշտ է, Հայաստանը այդ ժամանակ դեռ բաւական անկախութիւն ունէր, բայց և այդպէս, արհամարհել Պարսկաստանը, որ Բիւզանդիայի համար անգամ մի ահարկութշնամի էր, կը լինէր մի թոյլու անպաշտպան երկրի իսկական շահերը չը հասկանալ: Տիրանը աշխատում էր հզօր Սասանեանի աչքի առաջ ազատել Հայաստանը կասկածներից: Դրա համար հարկաւոր չէր վերացնել քրիստոնէութիւնը. բաւական կը լինէր և յունական ազդեցութեան թուլացումը: Եւ մենք տեսնում ենք մի շատ հետաքրքրական հանգամանք:

Գրիգոր Լուսաւորչի տոհմը ներկայացուցիչ չունէր կաթողիկոսութեան համար, ուստի առաջ եկաւ մի նոր կաթողիկոսական տոհմ—Ալբիանոսի տոհմը: Ալբիանոսը մէկն էր այն քրմերից, որոնք Գրիգոր Լուսաւորչի ձեռքով մտցրվեցին քրիստոնեայ հոգեորականութեան կարգը: Կարելի է ենթադրել որ դա հեթանոսական Հայաստանում նշանաւոր տոհմի ներկայացուցիչ էր, որովհետև Լուսաւորչի տոհմից դուրս Ալբիանոսի սերունդն էր միայն, որ ժառանգական կաթողիկոսութիւն ստեղծեց: Իրեւ քրիստոնեայ հոգեորականներ, Ալբիանոսի ժառանգները միանգամայն արժանի էին իրանց կոչման: Փաւատում, խօսելով նրանցից մի քանիսի մասին,

գովում է նրանց վարքն ու բարքը և միայն  
մի պակասութիւն է գտնում նրանց մէջ—  
այն, որ նրանք չէին բողոքում արքունիքի  
դէմ: Եւ իրաւ, սա նշանաւու՞՞ հանգամանք  
է: Թէ Ալբիանոսի ժառանգներից և թէ ու-  
րիշ հոգևորականներից նրանք, որոնք հաս-  
նում էին կաթողիկոսութեան, հաշտ էին ապ-  
րում արքունիքի հետ, ոչինչ դժուարութիւն-  
ներ չէին յարուցանում: Հետաքրքրական է  
մանաւանդ այն, որ այդ կաթողիկոսներից  
մէկը նոյն իսկ հոգևորականների զգեստը փո-  
խեց, տալով նրան ազգային, գուցէ նոյն իսկ  
հին քրմական տարագ:

Այս հանգամանքները թոյլ են տալիս  
ենթադրելու, որ Ալբիանոսի տոհմը ներկայ-  
ացուցիչ էր աւելի մեղմ, տեղական հայեացք-  
ների, մինչդեռ Լուսաւորչի տոհմը, իրեւ  
ջերմ յունասէր, աշխատում էր աւելի մեծ  
փոփոխութիւններ մտցնել կեանքի մէջ: Կող-  
մնակից ունենալով Հայաստանում գործող  
յոյն հոգևորականութիւնը, նա արևմտեան  
քրիստոնէութեան կուսակցութիւնն էր, որ  
աւելի լայն քաղաքակրթական հայեացքներ  
ունէր, ուստի և աւելի շատ պակասութիւն-  
ներ էր տեսնում հայկական կեանքի մէջ և  
աւելի եռանդով էր գործում՝ այդ կեանքը  
արևմտեան գաղափարներով բարեկարգելու  
համար: Ալբիանոսի տոհմը և առհասարակ

այն կաթողիկոսները, որոնք կուսաւորչի  
տանից չէին, կազմում էին տեղական, պահ-  
պանողական կուսակցութիւն, որ ոչ միայն  
չէր ուզում վերանորոգչական ցնցումներ ա-  
ռաջացնել երկրի մէջ, այլ և ձգտում էր հա-  
կակշիռ կազմել չափազանց յունասիրութեան  
դէմ, ազգային բնաւորութիւն տալով քրիս-  
տոնէութեան և հաշտ մնալով աշխարհական  
իշխանութեան հետ։ Այսպիսով այդ կուսակ-  
ցութիւնը աւելի մօտիկ էր պետական շահե-  
րին, և ուժեղ ու ստուար պարսկական կու-  
սակցութիւնը կարող էր դո՞ւ լինել նրանով։

Եկեղեցական այդ քաղաքականութիւնը  
հաճելի պիտի լինէր և Շապուհի համար, որ  
հալածում էր ոչ այնքան քրիստոնէութիւնը,  
որքան նրա տարածած յունասիրութիւնը։ Եւ  
իրաւ, մննք տեսնում ենք որ ամեն անգամ,  
երբ Հայաստանը ենթարկվում էր յունական  
կուսակցութեան, պարսիկները սկսում էին  
շարժվել, վնասներ հասցնել հայերին։ Խոս-  
րովը, Վրթանէսին իր բարձակից դարձնողը,  
մի քանի անգամ Հայաստանի վրա պարս-  
կական արշաւանքներ բերել տուեց, թէև  
խաղաղասէր էր և չար միտք չունէր պար-  
սիկների դէմ, մինչդեռ Տիրանը, Յուսիկին  
սպանողը, Պարսկաստանից աջակցութիւն  
ստացաւ հիւսիսային ցեղերի արշաւանքը  
յետ մղելու համար։ Յունական ազդեցութիւ-

Նը գագաթնակէտին հասաւ Արշակ երկրորդի ժամանակ. Պարսկաստանը այդ ժամանակ էլ ամենախիստ հարուածները հասցրեց Հայաստանին:

Եւ այսպէս, ամբողջ հարցն այն էր, թէ կաջողվի՞ տապալել, ընդ միշտ լռեցնել Լուսաւորչի խիզախ ու խիստ ազդեցիկ տոհմը: Հայ-պահպանողական կուսակցութիւնը, որ բաղկացած էր, ինչպէս ասացինք, Ալբիանոսի ժառանգներից և այլ կաթողիկոսներից, անմիջական կոիւ չը սկսեց Լուսաւորչի տոհմի դէմ: Եւ աւելորդ էլ էր նրա կոիւը, քանի որ պարսկական կուսակցութիւնը, արքունիքը անում էին ամեն ինչ: Բացի դրանից, մենք չենք տեսնում որ այդ կաթողիկոսների մէջ եղած լինի առանձնապէս աչքի ընկնող եռանդ, մեծ. ընդունակութիւն: Դըրանք բարեխիղճ մարդիկ էին: և ուրիշ ոչինչ: Գոնէ այս կարելի է եզրակացնել այն տեղեկութիւններից, որ տալիս է Փաւստոսը, իսկ այս պատմագիրը, չը մոռանանք ասել, յունական կուսակցութեան ջերմեռանդ երկրպագու է: Յունասէրները մի առանձին վտանգ չէին տեսնում այդ կարգի կաթողիկոսներից, արհամարհում էին նրանց՝ «ստըրուկ ի ստրկաց արքունի» կոչումով, մի շատ բնորոշ և պերճախօս անուն, որ տալիս է Փաւստոսը պահպանողական կուսակցութեան

Ներկայացուցիչներից մէկին:

Ո՞չ, կուսաւորչի տոհմը գիտէր թէ ում  
դէմ պէտք է կռւել, ով է իր վտանգաւոր  
թշնամին: Նա ունէր բաւական փորձ, ճա-  
նաչում էր այն կուսակցութիւնը, որ գոր-  
ծում էր Շապուհի աջակցութեամբ քրիստո-  
նէութիւնը մտցնելու օրից: Դա այն կուսակ-  
ցութիւնն էր, որը մենք անուանեցինք պարս-  
կական, կամ հեթանոսութեան կողմանակից:  
Նա երբէք հանդարտ չէր նստում, անտար-  
բեր ականատես չէր, այլ գործում էր և մի-  
ջոցների խտրութիւն չը գիտէր:

Նրա առաջին գործը կազմակերպվեց  
այն օրից, երբ Տրդատը մի քաջ թագաւո-  
րից դարձաւ ճգնաւոր, եկեղեցու ստրուկ:  
Տրդատին, ինչպէս ասում է Խորենացին,  
սպանեցին հայերը, թոյն խմեցնելով: Մի ու-  
րիշ, թէև անյայտ, բայց հին գրուածք պար-  
զապէս ասում է թէ սպանողները մի խումբ  
մարդիկ էին, որոնք Շապուհի հովանաւորու-  
թիւնն էին վայելում և որոնց միտքն էր նո-  
րից հեթանոսութիւն հաստատել Հայաստա-  
նում: Տրդատը պարսկական կուսակցութեան  
առաջին զոհն էր:

Երկրորդ փորձը ուղղված էր Գրիգոր  
կուսաւորչի որդու դէմ: Աշտիշատում բաց-  
վեց մի մեծ դաւադրութիւն, որին, Փաւստո-  
սի ասելով, մասնակցում էին երկու հազար

մարդիկ: Դաւադրութեան գլուխ էր կանգնած հայոց թագուհին, Խոսրովի կինը: Սպանութեան փորձը աջողութիւն չունեցաւ, բայց կուսակցութիւնը իր զէնքը ցած չը դրեց: Վրթանէսը ազատվեց սպանողի սրից, բայց նրա որդի Յուսիկը արդէն դարանամուտ դաւադրութեան զոհ չը գնաց, այլ ուղղակի եկեղեցում սպանվեց:

Արշակ երկրորդի ժամանակ պարսկական կուսակցութիւնը աւելի ևս ուժեղացաւ Նշանաւոր նախարարները բացարձակապէս անցան Շապուհի կողմը: Ինչպէս տեսանք Փաւստոսի վկայութիւնից, հայ իշխաններն էլ քրիստոնէութեան վերաբերմամբ ոչնչով չէին զանազանվում հասարակ ժողովրդից: Բնական էր, ուրեմն, որ նրանք պարսկական կուսակցութեան շարքերում գտնվէին: Բայց սա չէ նշանակում թէ յունական կուսակցութիւնը բոլորովին մենակ էր և անզօր: Նա էլ ունէր կողմնակից նախարարներ, որոնց մէջ հռչակված են մանաւանդ Մամիկոնեանները, որոնք քրիստոնէութեան գլխաւոր նեցուկը հանդիսացան, իրանց արիւնն ու հարստութիւնը զոհեցին: Եւ չէ կարելի ասել թէ այս կուսակցութիւնը միշտ մաքուր միջոցներով էր դիմադրում իր հակառակորդներին: Փաւստոսը պատմում է մի այսպիսի դէպք: Հայր մարդպետը գնում է Ներսէս

**Մեծի տոհմային կալուածները, տեսնում հիանում է և ասում է թէ Տրդատն ու նրա որդին մեծ սխալ են գործել, երկրի ամենագեղեցիկ տեղերը նուիրելով կանանցազգեստ մարդկանց (հոգևորականներին): Նա սպառնում է այդ մասին հարց բարձրացնել, բայց վերադարձին սպանվում է անտառում մի հայ ազնուականի ձեռքով։ Միամիտ պատմիչը ասում է թէ այդպէս պատահեց այն պատճառով, որ Ներսէսը անիծել էր Հայր մարդպետին։**

Ահա ի՞նչ իրարանցումներ մտցրեց քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ, այն էլ այն քրիստոնէութիւնը, որ հաստատվել էր Լուսաւորչի ձեռքով և նեցուկ ունէր նրա յունասէր, վերանորոգչական եռամնդով լցված տոհմը։

Դ.

Վատանգաւոր ժամանակ յունական քրիստոնէութեան համար:—Ներսէս Մեծ:—Բարեկարգութիւնների շրջան, ապարդիւն ջանքեր:—Հայաստանը՝ վանական միաբանութիւն:—Բարեգործական դրախտ:—Ներսէսի հզօր ազգեցութիւնը:—Ի՞նչ էր Արշակ երկրորդը:—Բարեգործութիւնների միւս երեսը:—Խիստրէակցիա յունական ազգեցութեան դէմ. Մեհրուժան և պարսկական կուսակցութեան աջողութիւնները:—Ներսէսի վերաբերմունքը դէպի Արշակ թագաւորը:—Պապ. նրա զգոյշ քաղաքականութիւնը:—Գործողութիւններ ներսէսի դէմ:—Ներսէսի թունաւորման առասպելը:—Եկեղեցական անկախութիւն:—Ներսէսի մահը ցոյց է տալիս որ քրիստոնէութիւնը արհեստական էր:—Մեղաւոր էր ժողովուրդը:

---

Ի՞նչ պիտի գուրս գար այս իրարանցումից, հակառակ հոսանքների, կուսակցութիւնների, շահերի այս կուից:

Ըստ երևոյթին, յաղթող պիտի հանդիսանար ասիականութիւնը, որովհետև նա աւելի մօտ էր ազգաբնակութեան սրտին ու մտքին, աւելի շատ կողմնակիցներ ունէր: Պարսկաստանը իր գործողութիւններով, հայ-

ոց արքունիքը, պահպանողական կուսակցութիւնը հայ հոգևորականութեան մէջ, վերջապէս անունով քրիստոնեայ, բայց հոգով հեթանոս ժողովուրդը—այսքան ուժեղ գործօններ կային՝ նոր մտցրած քրիստոնէութիւնը եթէ ոչ իսպառ արմատախիլ անելու, գոնէ այլակերպելու, անպտուղ դարձնելու, ասիականացնելու համար։

Չորրորդ դաշի կէսին բոլոր հանգամանքները այս էին ցոյց տալիս։ Բայց ահա Լուսաւորչի տոհմը մի անգամ էլ հանդէս է բերում իր կարողութիւնը. կաթողիկոս է դառնում Ներսէսը, որին երախտապարտ եկեղեցին յատկացրել է «Մեծ» տիտղոսը։

Դա ահագին եռանդի տէր մի մարդ էր, թողեց զինուորական ծառայութիւնը և իր երկաթի կամքը, իր անսպառ ոյժը նուիրեց իր պապերի հիմնած գործին։ Ներսէսը ստացաւ անունով գոյութիւն ունեցող մի եկեղեցի, մի քրիստոնէութիւն, որ աւելի հեթանոսութիւն էր։ Եւ նրա ամբողջ կեանքի նպատակը դարձաւ կենդանացնել քրիստոնէութիւնը, հասկանալի դարձնել ամենքին, մտցնել ընդհանրութեան արիւնի մէջ։

Բարեկարգութիւնների մի հարուստ դարագլուխ բացվեց եկեղեցու համար։ Ներսէսը հասկացել էր վտանգաւոր դրութեան բուն պատճառը, ոչինչ չէր խնայում իր

Նկատածը վերացնելու համար։ Բայց ո՞րքան նպատակայարմար էին նրա գործադրած միջոցները, ո՞րքան խոր էր նրա ըմբռնողութիւնը։

Տեսնում ենք գործադրված մեծամեծ ջանքերը, տեսնում ենք թէ ինչ ահագին նիւթական զոհաբերութիւններ արաւ երկիրը, տեսնում ենք և այն, թէ ինչ հետևանքներ տուեց այդ բոլորը։ Սխալը առաջին իսկ քայլերից երևան եկաւ, բայց տաղանդաւոր վերանորոգիչը չը նկատեց նրան։ Գրիգոր Լուսաւորչի պէս Ներսէսն էլ զգաց որ ժողովրդին հարկաւոր է դաստիարակութիւն, որ քրիստոնէութիւնը դպրոցներից պիտի դուրս գայ։ Բայց նա մնաց լոկ նմանվող իր մեծ պապին։ Նա էլ յունական և ասորական դպրոցներ բաց արաւ։ Ուրեմն, դարձեալ նոյն ապարդիւն ջանքերը։

Ներսէսի միտքը ուրիշ, աւելի բարդ ծրագրով էր զրաղված։ Անկիրթ ժողովրդին նա ուրիշ հիմնարկութիւններ տուեց։ Ոչ մի ջանք ու միջոց չը խնայելով, նա զարգացրեց վանականութիւնը Հայաստանի մէջ։ Արևմուտքում այդ հիմնարկութիւնը արդէն մեծ օգուտներ էր տալիս եկեղեցուն։ Վանքերը բազմանում էին, պատրաստելով իրանց մէջ մի ստուար բանակ եկեղեցու համար։ Այդտեղ երկու սեռի ապաշխարողները

ենթարկվում էին խիստ կանոնների, որոնց  
հիմքը եկեղեցու հեղինակութիւնն ու կրօնի  
պայծառութիւնը պահպանելն էր։ Վանքը  
տիրում էր իրեւ աշխարհի ուսուցիչ և իրեւ  
տնտեսական ոյժ։ Հոգու փրկութեան գործը  
նա կապել էր նիւթական զոհարերութիւն-  
ների հետ և ամեն ունեոր, թագաւորներից  
ու իշխաններից սկսած, նուիրում էր նրան  
ինչ ունէր — կալուածներ, ոսկի, արծաթ,  
թանգագին քարեր։ Զարգանում էր կուսա-  
կրօնութիւնը, զարգանում էին ժողովրդի  
վրա ազգելու միջոցները — ճգնաւորութիւնը  
ամենախիստ ձևերով, մասունքների պաշտա-  
մունքը, հրաշքները, նախապաշարմունքները,  
ֆանատիկութիւնը։

«Ամբողջ ժողովուրդը վանական միա-  
բանութեան նման մի բան դարձրին», ասում  
է Փաւստոսը, նկարագրելով Ներսէսի և նրա  
օգնականների գործունէութիւնը։ Աշխարհա-  
կան կարգերից միայն ամուսնութիւնն էր  
մնում։ Վանքեր և կուսանոցներ հիմնվեցին։  
Դրա հետ միասին ամենալայն չափերով հրա-  
պարակ հանվեց քրիստոնէութեան վեհագոյն  
գաղափարներից մէկը — գթասրտութիւնը։  
Սյստեղ էլ Ներսէսը օրինակ էր վերցնում  
Բիւզանդիայից, ուր աղքատանոցները, ան-  
կելանոցները և այլ այս տեսակ հիմնարկու-  
թիւնները փոխարինել էին հին աշխարհի

փիլիսոփայական դպրոցները և, գտնվելով  
եկեղեցու խնամքի տակ, բարձրացնում էին  
նրա հեղինակութիւնը։ Հայոց երկիրն էլ  
ծածկվեց հիւանդանոցներով, աղքատանոց-  
ներով, որբանոցներով, անկելանոցներով,  
ճանապարհորդներին և օտարներին պատա-  
պարող օթևաններով։ Վճռված էր որ մու-  
րացկանութիւն չը լինի երկրում, և Փաւա-  
տոսը հաւատացնում է թէ մուրացկաններ  
այլ ևս չէին երևում։

Երևակայելու արժանի տեսարան։ Հիւ-  
անդները, ընկնաւորները, անգամալոյծնե-  
րը, ծերութիւնից ուժասպառ դարձածները,  
որբերն ու այրիները կանոնաւոր խնամք են  
գտնում, հասարակական հիմնարկութիւնների  
հոգածութեան առարկայ են դառնում։ Եկե-  
ղեցին լուծել է մարդկութեան չափ հին սօ-  
ցիալական հարցերից մէկը—աղքատութիւ-  
նը, որ արմատախիլ չէ դառնում, այլ ծածկ-  
վում է քրիստոնէական բարեգործութեան  
յարկի տակ։ Եւ այս բոլոր զարմանալի գոր-  
ծերը տեղի են ունենում ուր։—Մի երկրի  
մէջ, որ դեռ մի քանի տարի առաջ «գազա-  
նամիտ, վայրենի, ճիւաղաբարոյ» էր,—Ասիայի  
խորքում, ուր անսահման բռնապետութիւնը,  
կոպիտ ոյժի իրաւունքը ամուր հիմնված էր  
ամբոխը ճնշելու, հարստահարելու սկզբուն-  
քի վրա։

Ս. ՄԵՍՐՈՊ

Դիւթական մի գաւազան էր շարժվել  
հայոց աշխարհի վրայով և այսպէս գեղեցիկ  
կերպով փոխվել էր ամեն ինչ։ Այդ գաւա-  
զանը մի հատ մարդու կամքն էր։ Հայկական  
լեռնաստանում հաստատված այդ բարեգոր-  
ծական դրախտը անշուշտ մի մեծ վկայու-  
թիւն էր երկրի մասին։ Բայց ի՞նչ վկայու-  
թիւն։ Արդեօք երկիրը այնքան առաջադիմու-  
էր, որ հասկանար մարդկայնութեան ամե-  
նաբարձր խորհուրդը և անհրաժեշտութիւն  
համարէր նրան մարմնացնել հասարակական  
հիմնարկութիւնների մէջ։ Արդեօք ժողովուր-  
դը ձեռք էր բերել այնքան գիտակցութիւն,  
որ պահպանէր այդ բոլորը, տար ստեղծված  
հիմնարկութիւններին յարատեսութիւն կամ  
ըմբռնէր նրանց իսկական նպատակը։ Ո՞չ։  
Շուրջը ոչինչ չէր փոխվել. նոյն երկիրն էր,  
նոյն խաւարն ու վայրենութիւնը։ Եւ եթէ  
այդ ասիական քառսի մէջ իրանց գլուխները  
բարձրացրել էին մի լուսաւոր մարդկութեան  
պատիւ բերող այդքան գործեր, դա միայն  
այն էր ցոյց տալիս որ մի հատ մարդու ան-  
շէջ, հսկայական եռանդը կարող է հրաշքներ  
գործել։

Հրաշագործութեան համար Ներսէսը  
շատ աջող հանգամանքներից էր օդտվում։  
Նա ուժեղ էր, հասկացող, իր ձեռքը հաւա-  
քեց երկրի կառավարութիւնը, քաղաքական

բանակցութիւններ էր վարում Բիւզանդիայի հետ, նրա կամքից էր կախված Արշակունի թագաւորութեան լինելու կամ չը լինելու հարցը։ Արշակ թագաւորը չափազանց փոքր ու թոյլ էր այդ կրօնաւորի խելքի և կարողութեան առաջ։ Արևելեան փոքրիկ բռնակալի հաճոյքները նա որոնում էր ոչ թէ պետական նշանակութիւն ունեցող գործերի մէջ, այլ զանազան մանր~մունը հարեմական զուարձութիւնների մէջ։ Ներսէսին ոչ հակադրել էր կարող, ոչ նմանվել։ Իր եղբօրորդուց մի գեղեցիկ Փառանձեմ խելու համար նա մի շարք զզուելի սպանութիւններ կատարեց, իսկ նրա աշխարհաշինութեան նմուշն էր այլանդակ Արշակաւանը, գողերի, մարդասպանների և ամեն տեսակ չարագործների համար շինված այդ քաղաքը, որ հասարակական կարգի, իրաւունքի և ամեն մի օրինական հասկացողութեան քայլայում էր։

Փաւատոսը Արշակին դուրս է բերում մի հզօր թագաւոր և նկարագրում է թէ ինչ~պէս նա երեսուն տարի շարունակ կուռմ էր Պարսկաստանի գէմ և ամեն անդամ ջարդում, բնաջինջ էր անում պարսից բանակները։ Ապացուցանելու կարիք չը կայ որ այդ երեսնամեայ պատերազմը, այն էլ Շապուհի նման մի թագաւորի դէմ, կարող է միայն առասպել լինել. նոյն իսկ բիւզանդական ա-

հազին պետութիւնը այդպիսի բախտ չէ ու նեցել պարսկական պատերազմների մէջ։ Ընդհակառակն, յայտնի է, որ Շապուհը այնքան նեղը գցեց բիւզանդական գօրքը, որ Յորիանոս կայսրը հարկադրված եղաւ հաշտութիւն խնդրել նրանից ու ստորագրել մի ստորացուցիչ դաշնագիր, որի ամենախայտառակ պայմաններից մէկը Արշակին էր վերաբերվում։ Արշակը բիւզանդացիների կողմըն էր բռնել. ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Ներսէսը յունական կուսակցութեան կատարեալ յաղթանակն էր։ Եւ ահա բիւզանդացիները իրանց այդ պայմանագրով պարտաւորվում էին այլ ևս չը պաշտպանել իրանց դաշնակից Արշակին, այլ պիտի յանձնէին նրան Շապուհին։

Փաւստոսի հաղորդածները Արշակի քաջութեան և ահեղ զօրութեան մասին առաջին անգամ գնահատել է մեզանում Մովսէս Խորենացին։ Կարդալով Փաւստոսի նկարագրութիւնը, նա իրան յատուկ քննադատական նրբութեամբ հասկացել է որ գործ ունի առասպելի հետ և իր կողմից այսպէս է բնորոշել Արշակին. «Խնքնահաւանութեամբ միշտ պարծենում էր խնջոյքների մէջ և երգիչ կանանց մօտ Աքիլէսից աւելի քաջ և արի ցոյց տալով իրան, նա իսկապէս նման էր կաղ և սրագլուխ Թերսիդէսին»։

Իսկ թէ որքան լաւ էր հասկանում Արշակը պետութեան շահերը, երևում է այն անսահման ազատութիւնից, որ վայելում էր Ներսէսը իր գործերի մէջ։ Նրա ստեղծած բարեսիրական բազմաթիւ հաստատութիւնները ահազին նիւթական զոհողութիւններով կարող էին պահվել։ Եւ այդ միջոցները ծանրացան պետական տնտեսութեան վրա։ Ներսէսը հողեր յատկացրեց իր հիմնարկութիւններին. դա մի ծանր բեռ էր, որ բարձվում էր մի փոքրիկ ու աղքատ երկրի վզին. հարկատու ժողովուրդը մի կողմից էլ այդ լուծը պիտի կրէր։ Քաղաքական այն հանգամանքների մէջ, որոնցով շրջապատված էր Հայաստանը, միայն ամենակարող իշխանաւորը իր անսահման ոգևորութեան մէջ կարող էր մոռանալ որ չէ կարելի այդ աստիճան զարգացնել պետական բարեգործութիւնը՝ առանց ժողովրդի էական շահերը վտանգելու։ Մէջ տեղ մնասվողը պետական գաղափարն էր, որի պաշտպանը պիտի լինէր Արշակը։ Անպատիծ չէ կարող մնալ մի թոյլ, կազմալուծվող պետութիւն, երբ իր միջոցների մեծ մասը, իր նիւթական ապահովութիւնը դոհքերէ բարեգործութեան։

Ներսէսը, անշուշտ, ոգևորված էր աշխարհի վրա. աւետարանական մի դրախտ տնկելու մտքով։ Բուն քրիստոնեայ գործիչին

համար այդ ոգևորութիւնը այնքան օրինական և հասկանալի է, որ Ներսէսի ձեռնարկութիւնները միայն հիացմունք կը պատճառէին, եթէ այդ փայլուն գործունէութեան հետ զուգընթացաբար պետութիւնն էլ առաջադիմէր, ուժեղանար գեղեցիկ կարգ ու կանոնով, կենսունակ հիմնարկութիւններով։ Տարաբախտաբար այդպէս չէր. Ներսէսը հընացած շորի վրա կարկատաններ էր միայն դրել, բարեգործութիւնը աճում և զարգանում էր ի հաշիւ և ի ֆսաս պետութեան երկիրը, տալով խոշոր միջոցներ վանքերին, անկելանոցներին, փոխարէնը ոչինչ չէր ստանում. ասիականնութեան մէջ կոշտացած մի ժողովրդի համար չէր կարող փրկարար լինել այն հանգամանքը, որ մարդ դժբախտութեան գէպքում պատրաստ կը գտնէ մի կտոր հասարակական հաց. ընդհակառակն, այդ հանգամանքը աւելի ծուլութիւն և ձրիակերութիւն պիտի սովորեցնէր ժողովրդին։

Ներսէսը, այն, նշանաւոր գործիչ էր, բայց և միակողմանի։ Լինելով հայոց աշխարհի միակ հեղինակաւոր, բարենորոգիչ ոյժը, նա կարծեց թէ պարսկական և բիւզանդական ազդեցութիւնների մրցման այդ դաշտում կարելի է և նպատակայարմար է ամբողջ երկիրը մի վանք դարձնել. նա չիմացաւ, որ

ալդ երկրին պարտաճանանձ քազաքացիսեր  
աւելի հարկաւոր են, քան անկելանոցներ։  
Այդպէս պահանջում էր նոյն իսկ քրիստո-  
նէութեան շահը։ Տգիտութիւնն էր, որ շա-  
րունակում էր մնալ իբրև անհաշտ թշնամի  
ամեն մի նորութեան, ամեն մի բարենորոգ-  
ված կարգի։ Դառն փորձեր էին կանգնում  
Ներսէսի առջև, փորձեր, որոնք ակներև ցոյց  
էին տալիս թէ բարեգործական օթևանները  
չեն փրկութիւնը, բայց Ներսէսը անզօր էր  
իր արածից աւելին անել և հարկադրված  
էր տգիտութեան աղէտների դիմաց զոհել  
նոյն իսկ քրիստոնէութեան սկզբունքները։

Աղէտներից ամենամեծը պարսկական  
կուսակցութիւնն էր բերում։ Քրիստոնէու-  
թեան արտաքին, ձևական բարգաւաճումը,  
բնականաբար, մեծ անհանգստութիւն պիտի  
պատճառէր նրան։ Յունական աղդեցութիւ-  
նը չափազանց զօրեղացել էր, նրա դէմ սլա-  
հանջվում էր կորիւ՝ արդէն ահագին չափե-  
րով։ Եւ ահա մեր պատմութեան մէջ դուրս  
է գալիս առաջին հայը, որ սեփական հայ-  
րենիքի աւերիչ է հանդիսանում։ Դա Մեհ-  
րուժանն է, մի անձնաւորութիւն, որի մէջ  
խտացած են պարսկասէր կուսակցութեան  
բոլոր բնորոշ հայեացքները։ Մեհրուժանը  
դէն է զցել քրիստոնէութիւնը և ուզում է  
ոյժով հարկադրել որ ամենքն այդպէս անեն։

Պարսից բանակը՝ պատրաստ է նրան օգնելու։ Պատերազմ և կոտորած է մտցնվում հայոց աշխարհի մէջ։ Բարբարոսական արշաւանքը բերում է իր հետ պարսկական ատրուշաններ՝ եկեղեցիների և վանքերի տեղ հաստատելու համար։ Պարսկական կուսակցութիւնը շատ լաւ գիտէր թէ ուր է թագնված իր իսկական թշնամին։ Մեհրուժանը քանդում էր յունաց զպրոցները, այրում էր յունարէն գրքերը և հրամայում էր որ ամենքը պարսկերէն սովորեն։ Ահա որքան ատելի էին դարձել արևմտեան ազդեցութիւնն ու արևմտեան գիտութիւնը։ Ամբողջ երկրի ճակատագիրը երկու լեզուների մրցութեան յաղթանակից էր կախված։ Աղէտը ծանր կերպարանք էր ստանում մանաւանդ այն պատճառով, որ հայ ժողովրդի համար երկու հզօր մրցակիցներն էլ խորթ էին...

Եւ Մեհրուժանը մենակ չէր. պարսկական կուսակցութիւնը սաստիկ ուժեղանում էր այդ ճգնաժամին, երբ Արևելքի այդ խուլ անկիւնում վճռվում էր լոյսի և խաւարի հարցը։ Փաւստոսի նկարագրութեան նայելով, մենք տեսնում ենք մի ընդհանուր դասալքութիւն, բարոյական անկում։ Հայոց զօրքը ամենից առաջ է վարակվում. զինուորները խմբերով անցնում են պարսից կողմը, Հայաստանի ծայրերը կառավարող կու-

սակալները նոյնպէս անձնատուր են լինում պարսից թագաւորին։ «Հայերի թիւը պակասեց», ասում է պատմիչը և այս կարծիքութերը վկայում են որ դրութիւնը յուսահատական կերպարանք էր ընդունել։ Կարծես ամենքն էին ձանձրացել այն նոր կեանքից, որ հազիւ կէս դար էր, ինչ եկել էր նրանց խլելու ասիականութեան գրկից։

Հայաստանում մնացած հայ իշխանները հաւաքվում են Ներսէսի մօտ։ Նրանք քրիստոնեայ են, բայց տգիտութիւնն են մարմնացնում իրանց մէջ։ Արշակի արատներն ու ոճրագործութիւնները ղղուեցրել էին նրանց։ Այս դեռ հասկանալի է, բնական։ Բայց տգիտութիւնը կարծել էր տալիս նըրանց թէ երբ մի թագաւոր վատ է, չը պէտք է նրան հեռացնել և ազգային անկախութիւնը ապահովել աւելի լաւ միջոցներով, այլ պէտք է գնալ, պարսիկներին տէր կանչել, հայրենի ազատութեան փոխարէն՝ օտարի շղթաների մէջ փաթաթվել։ Այս ցանկութիւնն են յայտնում իշխանները Ներսէսին։ Աքևելեան բռնապետութիւնը երբէ՛ չէ զարգացրել հայրենիքի, ընդհանուրի այդ սըրբագան սեփականութեան, հասկացողութիւնը, այլ միշտ ամփոփված է եղել այն դաւանանքի մէջ, թէ պետութիւնը թագաւորն է, թէ այդ թագաւորի անձը միայն պէտք է

տեսնել և նրան միայն երկրպագել։ Հայ իշխանների հասկացողութիւնը այդքանն էր։ Եւ Ներսէսը զէնք չունէր այդ տգիտութեան դէմ. ոչ նրա աղքատանոցները, ոչ երկիրը մի մեծ վանական հիմնարկութիւն դարձնելու միտքը չէին ուսուցել այդ մարդկանց թէ ինչն է լաւ հայրենիքի շահերի համար և ինչն է վատ...

Ներսէսը միայն խրատում է այդ բողոքաւոր իշխաններին, որ նրանք հաւատարիմ մնան իրանց սեփական բարձր իշխանութեան։ Բայց ի՞նչպէս է ապացուցանում այդ անհրաժեշտութիւնը։ «Թէպէտ և Արշակ թագաւորը մեղաւոր է Աստուծու առաջ—ասում է նա ի միջի այլոց,—սակայն Աստուած իր անչափ մարդասիրութեամբ խնայում է նրան։ Եթէ Արշակը բիւրապատիկ էլ չար լինի, բայց աստուածապաշտ է. և եթէ մեղաւոր էլ լինի, ուակայն ձեր թագաւորն է»։ Արդարացնել արատները, յանցանքները աստուածային հովանու տակ առնել—ահա ինչ կարողացաւ անել հայոց մեծագործ կաթողիկոսը ճգնաժամի րօպէին։ Քրիստոնէութեան ոգին այդ չէր թելաղրում. աւետար անական այն սկզբունքը, որ պատուիրում է հանել աչքն անգամ, երբ նա գայթակղութիւն է պատճառում, պիտի հարկադրէր Ներսէսին աւելի իրական միջոցներ գտնել

մի քրիստոնեայ թագաւորութեան կենսական շահերը պաշտպանելու համար։ Արշակը նրա խօսքերից աւելի պիտի խրախուսվէր, աւելի ոյժ պիտի ստանար իր ընթացքը շարունակելու համար։ Վնասվողը դարձեալ պետական գաղափարն էր. ի՞նչ հեղինակութիւն կարող է ունենալ մի բարձր իշխանութիւն, որի ներկայացուցիչը ազատ պիտի լինի իր կամայականութիւնների մէջ լոկ այն պատճառով, որ քրիստոնեայ է մկրտված...

Արշակունեաց թագաւորութիւնը միայն հին զգեստ չէր. նա սկսեց ցնցոտիներ դառնալ, պատառ-պատառ լինել այն ժամանակից, երբ քրիստոնէութիւնը մտաւ Հայաստան և սկսեց քայլ առ քայլ, բայց շատ դանդաղ կերպով կրթել մտքերը։ Գուցէ և ներսէսը զգում էր թէ Արշակի պէս մարդուն չէ կարելի Աստուծու հովանաւորութեան տակ գնել, բայց ուրիշ կերպ վարվել չէր կարողանում, քանի որ Արշակը հոգնոր գործերի մէջ չէր խառնվում և ազատութիւն էր տուել ներսէսին գործել այնպէս, ինչպէս ինքն էր կամնում։ Արդեօք մի ուրիշն էլ այդպէս կը լինէր։

Այս հարցը իր լուծումն ստացաւ Արշակի մահից յետոյ, երբ նրա տեղ թագաւորեց նրա որդի Պապը։ Դեռ երիտասարդ էր այս թագաւորը, երբ յանձն առաւ երկրի

կառավարութիւնը, բայց հասակը չը խանգարեց որ նա ցոյց տայ թէ ինչպէս լաւ է հասկանում իր գահի շահերը:

Պապը Բիւզանդիայից եկաւ Հայաստան. նա բաւական ժամանակ ապրել էր յունաց արքունիքում, որի օգնութեամբ էլ ստացել. էր իր հայրենի գահը: Բայց այս բոլոր հանգամանքները նրան միակողմանի յունասէր չը դարձրին: Գալով իր երկիրը, նա կարճ միջոցում հասկացաւ որ Հայաստանը չէ կարող, առանց իր ամենակենսաւ կան շահերը վտանգելու, բացառապէս բիւզանդական ազդեցութեան ենթարկվել: Նա ի նկատի առաւ և պարսկական կուսակցութեան ոյժն ու նշանակութիւնը և երկու հզօր հարևանների ազդեցութիւնը հաւասարակշռելու համար՝ դաշնակցութիւն կապեց պարսից թագաւորի հետ: Մի և նոյն ժամանակ նա, պետութեան շահերը աչքի առաջ ունենալով, ձեռք բարձրացրեց Ներսէսի բարեսիրական հիմնարկութիւնների դէմ. յետ խլեց վանքերին, անկելանոցներին յատկացրած հողերը, փակեց կուսանոցները, որոնց մէջ պատսպարված կանանց հրամայեց մարդու գնալ: Մի խօսքով, Պապը աշխատում էր նորից վերականգնել աշխարհական իշխանութեան վարկը, միջոցներ ձեռք առնելով հո-

գեոր միապետութեան չափազանց ազդեցութեան դէմ:

Նորից լարվեցին կաթողիկոսարանի և արքունիքի յարաբերութիւնները: Նորից Լուսաւորչի տոհմը բողոքողի, դիմադրողի դերի մէջ մտաւ: Բայց Ներսէսը չը կարողացաւ աշողութեան հասնել իր վէճերի մէջ. մահը վերջ դրեց այդ եռանդութիւնը իշխանաւորի կեանքին: Մեր պատմութիւնը աւանդում է թէ Պապը թունաւորեց Ներսէսին, բայց քննադատութիւնը այժմ համարեա ապացուցել է թէ դա առասպել է, որի մէջ ճշմարտութիւն չը կայ: Ներսէսի մահվան հանգամանքները ցոյց են տալիս որ թոյն չէ եղել այդ տիսուր դէպքի մէջ:

Սարսափելի մեղադրանքը, որի տակ ձևշված է եղել Պապի յիշատակը այսքան դարեր, յունական կուսակցութեան կողմից է հնարվել: Այդ կուսակցութիւնը շատ ծանր հարուած կրեց Պապի քաղաքականութիւնից և նրան մնում էր իր այդ թշնամուն հրէշաւոր կերպարանքի մէջ ներկայացնել: Ժամանակակից քննադատութիւնը չէր կարող կրկնել այն ամենը, ինչ սարքել է բարեպաշտ կղերականների երևակայութիւնը Պապի վերաբերմամբ: Փաւստոսը, յունական կուսակցութեան այդ ամենաջերմեռանդ ներկայացուցիչը, ոչինչ չէ խնայել մեր լաւագոյն:

թագաւորներից մէկին սևացնելու համար։  
Նա ասում է թէ Պապը մանկութիւնից դեերին էր նուիրված։ այդ դեերը բնակվում էին նրա ծոցում օձերի կերպարանքով։ Օձերը համարձակ դուրս էին սողում Պապի ծոցից և ամենքը տեսնում էին նրանց։ միմիայն այն ժամանակն էին նրանք թագնվում իրանց տեղը, երբ ներս էր մտնում ներսէսը։

Յունական կուսակցութիւնը վատարանում էր իր չը սիրած թագաւորին և այն պատճառով, որ նա մի շատ նշանաւոր և գեղեցիկ գործ կատարեց։ Հայաստանը Դրիգոր Լուսաւորչի ժամանակից Կեսարիայի մի թեմըն էր, հայոց կաթողիկոսները պիտի Կեսարիայի յոյն հոգևորականութիւնից ընդունէին իրանց ձեռնադրութիւնը և այդ պատճառով հարկադրված էին գնալ Կեսարիա։ Ներսէսի մահից յետոյ Պապը վերացրեց այդ կարգը։ հայոց կաթողիկոսը իր երկրում, իր հոգևորականների ձեռքով օծվեց։ Հասկանալի է թէ ինչ վրդովմունք պիտի գցէր այդ քայլը Կեսարիայի յոյն կղերականութեան մէջ։ Այնտեղից յանդիմանութեան թուղթ են գրում Պապին, բանադրում են նրան և նոր կաթողիկոսին, և Փաւստոսը, պատմելով յունական կղերի այդ արարքը մեծ երկիւղածութեամբ, իր կողմից էլ ազգային դժբախտութիւն է համարում Պապի այդ գործը։

Բայց հէնց այդ տեսակ վերաբերմունքը ցոյց  
է տալիս թէ որքան անարդար էր յունական  
կուսակցութիւնը։ Պապը կատարեալ անկա-  
խութիւն տուեց հայոց եկեղեցուն, առաջին  
քայլն արաւ որ այդ եկեղեցին դուտ ազ-  
դային հիմնարկութիւն դառնայ։ Սրանով  
Պապը կամմնում էր փոքր ինչ ինքնուրոյնու-  
թիւն տալ իր երկրին, որ մինչև այդ օտար  
ազգեցութիւնների խաղալիք էր միայն։ Իսկ  
այսպիսի մի միտք նրան կարող էր միայն  
պատիւ բերել։

Կարելի՞ է ափսոսալ որ Պապի ձեռքով  
տապալվեցին Հայաստանի բարեսիրական  
հիմնարկութիւնները։ Ներսէսի մահը ցոյց  
տուեց թէ որքան ապարդիւն են եղել նրա  
հսկայական ջանքերը։ Բոլոր այդ հիւանդա-  
նոցներն ու աղքատանոցները, կլանելով պե-  
տութեան միջոցների խոշոր մասը, ոչինչ  
չէին կարողացել անել հայոց երկրում իբրև  
քրիստոնէութեան արտաքիննշաններ, և ներ-  
սէսի նպատակը մնացել էր անիրագործելի։  
Քրիստոնէութիւնը ձրի հացի միջոցով էլ չէր  
ժողովրդականացել, հաստատ արմատներ չէր  
դրել ազգաբնակութեան մէջ։ Ճիշտ կրկնվել  
էին միսիօնարական այն ջանքերը, որոնք  
նիւթական շահերի ոյժի վրա են հիմնում  
քրիստոնէութեան տարածումը։ Բաւական էր  
որ հող իջնէր ձրի հացի հեղինակը, և հայ-

ոց աշխարհը շտապեց իր նախնիքների մօտ։  
Փաւստոսը գառնագին գանգատներ է անում։  
Հեթանոսութիւնը վերանորոգվեց, ասում է  
նա. մարդիկ ոչ միայն հեթանոսական ար-  
գելված արարողութիւններ էին կատարում,  
այլ և իրանց հին աստուածներին էին եր-  
կրպագում։ Ներսէսի գործունէութիւնը ան-  
հետ կորաւ...

Կղերական պատմիչը ուզում է մեզ բա-  
ցատրել այդ երեսյթի պատճառները և ամե-  
նից առաջ, ի հարկէ, մեղադրում է Պապ թա-  
գաւորին, որ, նրա ասելով, թոյլ տուեց վե-  
րանորոգել հեթանոսութիւնը։ Այս մեղա-  
դրանքի մէջ նախ և առաջ դուրս է գալիս  
այն իրողութիւնը, որ քրիստոնէութիւնը  
Հայաստանի մէջ արհեստական միջոցներով  
էր պահպում, աւելի իշխանաւորների հրա-  
մանով, քան ժողովրդի համոզմունքով։ Երկ-  
րորդ՝ Պապի համբերողութիւնը նրա ամենա-  
լաւ յատկութիւններից մէկը պիտի համա-  
րել։ Զէ կարելի ասել թէ նա մի Յուլիան  
Ուրացողի պէս ատում էր քրիստոնէութիւնը  
և ամեն կերպ աշխատում էր որ հեթանոսու-  
թիւնը յաղթանակէ։ Այն հանգամանքը, որ  
Պապը անկախութիւն հաստատեց հայոց եկե-  
ղեցու համար, մի շատ ուժեղ ապացոյց է որ  
նրա մտքում չը կար քրիստոնէութիւնը վե-

բացնելը։ Նա միայն համբերող էր, և ուրիշ ոչինչ։

Պակաս անմեղադրելի է և ժողովուրդը, որի վրա կշտամբանքներ է թափում Փաւստուր, ասելով թէ ժողովուրդը վատ էր և այդ պատճառով մոռացաւ քրիստոնեաների Աստուծուն։ Մեղաւորը նա չէր, որ այդ Աստուծուց աւելի լաւ ճանաչում էր իր հին ազգային աստուածներին։ Յոյն և ասորի հոգեսորականների բազմութիւնը, որ դաստիարակ և առաջնորդ պիտի հանդիսանար մի այդպիսի ժողովրդի մէջ, աչքի ընկնող հեղինակութիւն չը կարողացաւ ձեռք բերել, մը նաց մեծ մասամբ խորթ ու օտար։ Գեղեցիկ բացառութիւններ բոլոր երեսյթների մէջ են լինում, բայց մենք ունենք այդ օտար կրօնաւոքներից երկուսի—Բրքիշոյի և Շմուէլի պատկերները, որոնք ցոյց են տալիս թէ Հայաստանը եկուոր հոգեսորականների համար անշահասէր գործունէութեան ասպարէզ չէր միշտ, այլ և պիտի յագեցնէր շատերի փառասիրական և ընչասիրական հակումները։

Պապը յունական կուսակցութեան զոհն է դառնում:—Երկու ազդեցութիւնների կոիւը սաստկանում է:—Հայաստանի բաժանումը յոյների և պարսիկների մէջ:—Բիւզանդականութիւն և քրիստոնէութիւն:—Հայաստանի երկու բաժինները:—Ռոտեղ էր լաւ:—Պարսիկների միջոցները հայերի յունական քրիստոնէութեան դէմ:

Չորրորդ դարի յուսահատական վերջը:—Ի՞նչ էր սպառնում ճգնաժամը:—Զգացվում է մեծ անհրաժեշտութիւնը:

Պապ թագաւորի համարձակ և անվախ քաղաքականութիւնը չէր կարող անմնաս լինել և նրա անձի համար: Հայաստանը այնպիսի երկիր չէր, որին թոյլ տային լինել ինքնուրոյն, տնօրինել իր վիճակը ինչպէս ինքն էր կամննում: Տեսանք որ այդպէս վարվել հայերի հետ չէր ուզում պարսից արքունիքը: Այժմ երբ պարսկական կուսակցութիւնը մի յայտնի չափով բաւարարու-

թիւն էր ստացել, զլուխ բարձրացրեց նրա հակառակորդը—յունական կուսակցութիւնը։ Իր ստացած հարուածները նա մոռանալ չէր կարող, ինչպէս և չէր կարող տեսնել իր այնքան մեծ ազդեցութեան խորտակումը։

Եւ նա սկսեց եռանդով դործել։ Թշնամին աչքի առջև էր—Պապը։ Նա էր կրօնական համբերողութիւն ցոյց տուել, նա էր զրկել վանականութիւնը կալուածներից և հեղինակութիւնից և ի վերջոյ՝ հանել էր հայոց եկեղեցին Կեսարիայի հպատակութիւնից։ Տասնեակ տարիների ջանքերը կորչում էին. յունական ազդեցութիւնը սաստիկ վտանգված էր։ Բիւզանդիան, ականջ դնելով Հայաստանից գնացած լուրերին, շտապեց վերացնել քաղաքական և կրօնական տիրապետութեան առջև կանգնած խոյնդութը։ Պապը զոհ գնաց մի մեծ դաւադրութեան։ Բիւզանդիայից արձակված հրամանով Հայաստանում գտնվող յոյն զօրապետները ամենաստոր և զզուելի կերպով սպանեցին հայոց թագաւորին, հրաւիրելով նրան ճաշի և սեղանի վրա խառնելով նրա արիւնը հիւրասիրութեան գինու հետ։

Միայն Լուսաւորչի տոհմը չէր զոհեր տուողը։ Արշակունիներն էլ իրանց արիւնով ոռոգեցին այն դաշտը, ուր Արևելքն ու Արեմուտքը մրցում էին իրար հետ։ Քրիստոնեայ

Բիւզանդիան հեթանոս Պարսկաստանից պակաս կատաղի ու անգութ չէր այդ դաշտում, երբ պէտք էր պաշտպանել սեփական օգուտ-ները։ Կամաց-կամաց յայտնի էր դառնում որ քրիստոնէութիւնը չէ բիւզանդական արքունիքի հոգսերի առարկան...

Պապի սպանութիւնը բիւզանդական գործ էր։ Բայց արդեօք հայերը մասնակցութիւն չունէին այդ եղեռնագործութեան մէջ։ Մենք վերևում ասացինք որ նախարարական տներից Գրիգոր Լուսաւորչի տոհմին նուիրված էին մանաւանդ Մամիկոնեանները։ Պապի և Ներսէսի ժամանակ այդ տան ամենանշանաւոր ներկայացուցիչն էր քաջ Մուշեղ Մամիկոնեանը, հայոց զօրքերի հրամանատարը։ Երբ Պապին յաջորդում է Վարագդատ թագաւորը, այն Մուշեղի դէմ մի քանի ամբաստանութիւններ են կազմվում, որոնցից մէկն էլ այն էր, որ ոյունաց զօրավարները դրա հրամանով և խորհրդով սպանեցին Պապ թագաւորին. դա էր որ թշնամացրեց և գրգռեց յունաց թագաւորին Պապի դէմ, մինչև որ սպանել տուեց նրան։ Փաւստոսի պատմութեան մէջ մնացած այս վկայութիւնը բաւական հաստատ հիմք է ենթադրելու, որ Պապը Հայաստանում գործող յունական կուսակցութեան զոհն էր։ Ներսէսի վրէժը յոյն զօրավարների ձեռքով հանվում

Էր Պապից: Մուշեղի վրա բարդած միղադը-  
րանքները այնքան համոզիչ են երևում Վա-  
րագդատին, որ նա սպանել է տալիս քաջ  
սպարապետին և այդպիսով հայոց աշխարհը  
զրկվում է մի քաջ զօրավարից, որ այնքան  
յաղթութիւններ էր տարել թշնամիների դէմ  
մղած պատերազմներում:

Որ յունական կուսակցութիւնը առան-  
ձին պատճառներ չունէր տիրելու Պապի  
սպանութեան առիթով, երևում է այն խոր-  
հըրդակցութիւնից, որ տեղի ունեցաւ հայ  
իշխանների մէջ, Մուշեղ սպարապետի գըլ-  
խաւորութեամբ: Հարց եղաւ՝ թէ պէտք է  
յոյներից վրէժինդիր լինել թագաւորի սպա-  
նութեան համար: Եւ պատասխան տրվեց թէ  
պէտք չէ: Յունական կուսակցութիւնը չէր  
կարող պարսից հեթանոս թագաւորի աջակ-  
ցութիւնը խնդրել, իսկ իր սեփական միջոց-  
ներով անկարող էր յոյների դէմ պայքար  
մզել: Ուստի վճռվեց. «Ի՞նչ եղաւ, եղաւ. ծա-  
ռայենք յունաց թագաւորին, յունաց իշխա-  
նութեան հնազանդվենք, ինչպէս յունական  
թագաւորութեան կամքն է, թող այսպէս էլ  
վարվեն մեզ հետ»:

Բայց այդպէս անելն էլ հեշտ չէր: Հրա-  
պարակ իջաւ պարսկական կուսակցութիւնը  
և երկիրը դարձեալ քարուքանդ եղաւ պարս-  
կական պատերազմներից: Դարձեալ պարս-

կական ազդեցութիւնը գերակշռող հանդիսացաւ: Յոյները, չը կարողանալով հաշտվել այդ իրողութեան հետ, համաձայնութիւն կայացրին պարսիկների հետ և Հայաստանը, այդ փոքրիկ, անհանգիստ, ուժասպառ երկիրը, բաժանվեց երկու հզօր հարևանների մէջ: Արշակունի թագաւորութեան խղճուկ մնացորդը Հայաստանի պարսկական մասում կարող էր շարունակել իր գոյութիւնը: Հաւատարիմ մնալով հին արևելեան բռնապետների սովորութեան, Սասանեանները թոյլ տուին որ հայերը պահպանեն իրանց ինքնավարութեան ձևը, հպատակվելով պարսից իշխանութեան: Այդպէս չարին յոյները: Յունական Հայաստանը դարձաւ բիւզանդական մի գաւառ և այդտեղ սկսեցին հայերին յունացնել: Քրիստոնէութիւնը յունական կառավարութեան համար քաղաքական գործիք էր. նա չը կարողացաւ իր իսկական շահերը բարձրացնել քաղաքական հաշիւներից: Եւրօպական կուլտուրայի տեսակէտից հարկաւոր էր որ քրիստոնեայ Հայաստանը ուժեղացվի, դառնայ մի տոկուն պատուար ասիականութեան դէմ: Բայց դրա փոխարէն նա բաժան-բաժան դարձաւ, աւելի ևս թուլացաւ և իր մեծ ու կարևոր մասով պարսկականութեան սեփականութիւն եղաւ:

**Յունական ծրագիրը մեծ աղէտ էր Հայ-**

աստանի համար։ Ունենալով յայտնի չափով  
միաձոյլ մի ամբողջութիւն, նա հազիւ էր  
կարողանում պահպանել քաղաքական ինքն-  
ուրոյնութիւն, օգուտ քաղելով մանաւանդ  
այն հանգամանքից, որ երկու հակասական,  
իրար անհաշտ ազդեցութիւններ, մէկը Ա-  
րևմուտքից, իսկ միւսը՝ Արևելքից, միշտ  
ընդհարվում էին նրա հողի վրա և մշտական  
մրցութիւնը չէր թոյլ տալիս որ դրանցից  
մէկն ու մէկը հաստատվի վերջնականապէս  
և ջնջէ տեղական անկախութիւնը։ Այժմ այդ  
թշուառ, բայց միակ փրկարար հանգամանքն  
էլ վերացաւ։ Բաժանված երկու մասի, ո-  
րոնցից իւրաքանչիւրի մէջ հաստատվում էր  
մի մշտական ազդեցութիւն, երկիրը հեշտու-  
թեամբ պիտի կորցնէր իր ինքնուրոյն դէմ-  
քը իբրև պատմական մարմին։ Իւրաքանչիւր  
բաժին պիտի ձուլվէր այն պետութեան հետ,  
որի սեփականութիւնն էր դարձել։

Կարևորը պարսկական բաժինն էր,  
այնպէս որ կարելի է ասել թէ այդ բաժա-  
նումով ասիականութիւնն էր յաղթանակ  
տանում արևմտեան քրիստոնէութեան աջակ-  
ցութեամբ։ Պարսկական բաժնումն էր Արաբ-  
սի հովիտը, հայութեան սիրտը և ոյժի գըլ-  
խաւոր աղբիւրը։ Իր այդ սրտի մէջ Հայաս-  
տանը զօրաւոր հարուածի ենթարկվեց։ Հայ-  
ոց Արշակ թագաւորը, որի ժամանակ տեղի

ունեցաւ աղետաբեր բաժանումը, մեծ մտա-  
տանջութեամբ էր նայում, ինչպէս պատմում  
է Ղաղար Փարակեցին, Հայաստանի վրա ծան-  
րացած երկու օտար լուժերին և երկար  
կշուռաւմ էր թէ դրանցից ո՞րը պիտի ընդու-  
նել: Յունաց ամբողջ բաժինը, չը նայած որ  
բազմաթիւ գաւառներից էր բաղկացած, հա-  
զիւ թէ մի հատ Այրարատ արժէնար, որ  
պատկանում էր պարսիկներին: Հեռանալ ա-  
Արաքսի գեղեցիկ, առատ հովտից շատ ծանր  
էր թագաւորի համար, բայց ի՞նչ անել, երբ  
այդտեղ կախվել էր պարսկական խեղդուկ  
մթնոլորդը: Պարսիկը այժմ առաջվանը չէր:  
Նա խրոխտ արհամարհանքով էր նայում հայ-  
ին, որ առաջ իր քրիստոնէութեամբ դեռ  
փոքր ի շատէ վտանգաւոր կարող էր լինել,  
միանալով Բիւզանդիայի հետ: Այժմ չը կար  
այդ երկիւղը, գոնէ պարսիկները կատարեալ  
տէր էին իրանց բաժնում և կարող էին ա-  
պագայ վտանգները հեռացնել, իրանց ուզա-  
ծի պէս դաստիարակելով հայերին:

Արշակը չը կարողացաւ հաշտվել ար-  
համարհվող թագաւորի դրութեան հետ և ա-  
ւելի լաւ համարեց կամովին աղքատութեան  
մէջ ապրել, քան մնալ թշնամի տարրի ստըր-  
կութեան մէջ, ուստի տեղափոխվեց յունաց  
բաժինը: Անհատների համար երբէք դժուար  
չէ այսպիսի ծանր հարցեր լուծել: Այն, ինչ

արաւ Արշակը, չէր կարող անել Արարատ-  
եան ամբողջ աշխարհը: Եւ մեծ հարց է՝  
արդեօք յունական բաժինը կարող էր աւե-  
տեաց երկիր դառնալ հայութեան համար: Արշակից հարիւրաւոր տարիներ յետոյ Վաս-  
պուրականի, Կարսի թագաւորները և իշ-  
խանները թողին իրանց կալուածները յոյ-  
ներին և անցան բիւզանդական հողը, որպէս  
զի կարողանան ապրել Արևելքից արշաւող  
մօնզօլական ցեղերի ձեռքից: Բայց չապրե-  
ցին նրանք, իսկ նրանց թողած երկիրները  
շարունակեցին անտէր ապրել օտար լուծի  
տակ: Կան հարցեր, որոնց լուծողը միայն  
հայրենիքը կարող է լինել:

Պարսիկները իսկոյն չը յարձակվեցին  
հայկական քրիստոնէութեան վրա, այլ նախ  
միջոցներ ձեռք առան որ անվնաս դարձնեն  
նրան, հեռացնելով արևմտեան ազդեցութիւ-  
նից: Յունական լեզուն, որ Սասանեանների  
համար քաղաքական մեծ վտանգ էր, արգել-  
վեց պարսկական բաժնում և կրօնական պէտ-  
քերի համար թոյլատրվում էր միայն ասո-  
րական լեզուն, իսկ ուրիշ գէպքերում պար-  
տաւորականը, իհարկէ, պարսկերէն լեզուն  
պիտի լինէր: Ասորիները պարսիկների հա-  
մար վտանգաւոր չէին կարող լինել, քանի  
որ մեծ մասամբ պարսկահպատակներ էին:

Մենք շատ անգամ տեսանք որ ասորի-

ները յոյների հետ գործում էին Հայաստանում իբրև հոգևորականներ և ուսուցիչներ։ Քրիստոնէութեան տարածման գործում ասորիները հանդիսացան շատ եռանդու ու տոկուն քարոզիչներ և հասան մինչև Միջին Ասիա և Հնդկաստան, ուր անկեցին աւետարանական վարդապետութեան առաջին սերմերը։ Բայց ասորական ազգը առանձին ընդունակութիւն ցոյց չը տուեց մտաւոր գործունէութեան մէջ։ Անկասկած, ասորի հոգևորականութեան տղղեցութիւնը մեծ էր Հայաստանում, որովհետեւ նա, այնուամենայնիւ, անհամեմատ բարձր էր հայ հոգևորականութիւնից իր զարգացմամբ։ Եւ այդ ազգեցութիւնը նշանաւոր հետքեր է թողել հայերի քրիստոնէական կրթութեան վրա, մանաւանդ այն շրջանում, երբ հայերը սեփական ոչինչ չունէին և պիտի ուրիշներից սովորէին ամեն ինչ։ Որքան էլ չորրորդ դարում քրիստոնեայ եկեղեցին մի էր ամենքի համար և յոյն ու ասորի հոգևորականների մէջ տարրերութիւն չէր կարող լինել դաւանաբանական կողմից, բայց բոլորովին հաւանական է, որ այդ երկուսի մէջ մըցութիւն կար Հայաստանում բացարձակ ազդեցութիւն ձեռք բերելու համար։ Ասորիները լաւ օգտվում էին իրանց քաղաքական դրութիւնից, այն հանգամանքից, որ իրանք յոյների պէս

վտանգաւոր մի տարր չէին պարսկց կառավարութեան աշքում։ Բացի բարոյական նըշանակութիւնից, Հայաստանում տիրապետելը ասորիների համար ունէր և նիւթական մեծ շահ։

Եւ ահա, երբ Հայաստանի պարսկական բաժնում վերացաւ յունարէնը, ասորական լեզուի և հոգեորականութեան կատարեալ տիրապետութիւնը եկաւ։ Այնպէս որ հայերը արևմտեան քրիստոնեայ աշխարհի հետ հաղորդակցութիւն կարող էին ունենալ ասորիների նման մի ասիացի խեղճ, ընդհանրապէս յետամնաց ազգի միջոցով։ Պարսկական համբերողութեան արժանացած ասորի քրիստոնէութիւնը, զրկված լինելով յունական կենդանացնող աղքիւրներից, չէր կարող հայերի մէջ պահպանել նոյն իսկ այն արտաքին պաշտօնական կերպարանքը, որ ունէր մինչեւ այդ. հետզհետէ նա պիտի աւելի էլ տկարանար, չոր ու անպատուղ դառնար։

---

Այսքան յուսահատական էր դրութիւնը չորրորդ դարի վերջերում։ Հայ ժողովուրդը զրկվում էր իր հին ազգային ստացուածքներից։ Նա ունէր մի հին, ծակծակած, մաշված քաղաքական իշխանութիւն, որի գոյութիւնը

ամբողջապէս պարսից Շահերի կամքից էր  
կախված։ Ներքին մըցութիւններից թուլա-  
ցած, հեղինակութիւն և ոյժ կորցրած թա-  
գաւորութիւնը հետզհետէ ստուերային էր  
դառնում մաս-մաս ծուատված, կուսակցու-  
թիւնների բաժանված երկրի մէջ։ Քրիստո-  
նէութիւնը ճնշել էր հին ազգային կրօնը և  
դեռ շարունակում էր կուել նրա մնացորդ-  
ների հետ, բայց ինքն էլ միշտ մնում էր  
ինչ-որ պաշտօնական կեղե, խորթ ու ան-  
հասկանալի մի ուսմունք։ Համարեա մի ամ-  
բողջ դար տեսած մըցութիւններն ու զոհերը  
չեին կարողացել նրա համար գոնէ մի ան-  
ձուկ ճանապարհ հարթել դէպի ժողովրդի  
գիտակցութիւնը։ Հայաստանը կոխկոտվել,  
ոտի տակ էր ընկել ասիականութեան և եւ-  
րօպականութեան պայքարի մէջ և այժմ, երբ  
թուլացած, ուժասպառ տարածված էր, պատ-  
մութիւնը կարծես պատրաստվում էր իր ա-  
նեղ դատավճիռը կարդալ այդ դիակի վրա։

Դա ութ դարերի մի պատմութիւն էր։  
Ութ երկար ու միանման դարեր անցել էին  
Հայաստանի գլխով, ամփոփել էին նրան ա-  
սիականութեան ծոցում։ Բայց նրանց ծանր  
ու անհեթեթ ծալքերը յանկարծ տակն ու  
վրա դարձան, հանդիպելով մի նոր հոսանքի,  
որ ուղում էր կանգնեցնել, յետ մղել նրանց,

դուրս նետել սովորական ընթացքի ճանապարհոց:

Անպատիժ չէր կարող անցնել այդ հսկայական յեղաշրջումը: Ասիան ահաւոր ձիգեր էր թափում իր ստացուածքը ձեռքից չը տալու համար: Եւ ահա հայ աշխարհի վրա բարձրագլուխ արշաւում էր իրանականութիւնը իր խաւար ոյժի ամբողջ թափով: Ի՞նչը պիտի դիմադրէր նրան:—Հայաստանի քրիստոնէութիւնը, օտար լեզուով խօսող, ներսէսի բարեգործութիւններով միայն այստանագործված քրիստոնէութիւնը: Հնարաւո՞ր բան էր:

Ճգնաժամը մեծ էր, բայց—աւելացնենք—ոչ օրհասական: Նրան զգալ սկսեցին Հայաստանում—ահա ինչու չէր նա օրհասական: Զգալը կենդանութիւն է: Կային մարդիկ—անհատներ միայն,—որոնց մտքի մէջ ձեւակերպվում էր փրկութեան զէնքը: Օդի մէջ տարածվել էր և ըմբռնելի էր դառնում մի մեծ անհրաժեշտութիւն—կենդանացնել ժողովրդի ներքին ոյժերը, տալ նրանց ստեղծագործելու, դուրս թափվելու միջոցներ: Փորձերը և փորձանքները անօգուտ չէին անցել: Լուսաւորչի տոհմի մեծ ջանքերը, վերջապէս, մերկացրին թէ ինչն է պակասում:

Երկրի չարչարանքների, ճգնաժամի մէջ

Ճնվեց համեստ միտքը, որ գնաց ասիականութեան սպառնանքների դէմ և յայտարարեց թէ այդ երկիրը պիտի ապրէ:

Այդ միտքը մի քանի առաջաւոր մարդկանց մէջ էր ապրում: Բայց նրան իրականացնողը, կեանքի հրաւիրողը մի մարդ էր միայն, և այդ մարդը ո. Մեսրոպն էր...

**ԵՐՐՈՐԴ ՄԱՍ**

---

**ՈՒՍՈՒՑԻՉ ԶԻՉԸ**



## Ա.

Կորիւն վարդապետ:—Նրա գրած կենսագրութեան արժէքը:—Հարուստ տեղեկութիւններ չունենք:  
—Մեսրոպ թէ Մաշտոց:

---

Մեծ անձնաւորութիւնները այնքան աւելի հասկանալի են լինում հեռաւոր սերունդներին, որքան շատ յիշատակութիւններ են մնում նրանց մասին: Մեսրոպը իր կատարած գործով ամենամեծն է մեր պատմական հերոսների մէջ: Իր այդ անուան համապատասխան էլ մի բացառիկ, գոնէ մեզանում չեղած, բախտի է նա արժանացել. —առաջին հայ գործիչն է նա, որ ականատեսի ձեռքով գրված առանձին կենսագրութիւն ունի:

Այդ ականատեսը Կորիւն վարդապետն է, Մեսրոպի աշակերտներից մէկը: Ուրեմն, մի շատ մօտիկ, բարերարված մարդու վկայութիւն: Ուրիշ անկախ և ինքնուրոյն աղ-

Ա. ՄԵՍՐՈՊ

10

բիւրներ չը կան. թէև Մեսրոպի մասին խօսսում են մեր ուրիշ մատենագիրներն էլ, բայց Կորիւնի տուածից աւելի բան ոչ ոք համարեա չը գիտէ. ամենքի համար աղրիւրը Կորիւնն է։ Այստեղից պարզ է այն կարևոր նշանակութիւնը, որ ունի Կորիւնի գործը՝ հայոց պատմութեան ամենանշանաւոր, նմանը չունեցող մի շրջանի լուսաբանութեան համար։ Մենք նրան պիտի լսենք, նրանից պիտի սպասենք մեղ յուզող բազմաթիւ հարցերի լուծումը։

Կարդում ենք այդ պատմութիւնը, տեղեկութիւններ իմանում ենք, բայց, տարաբախտաբար, իմանում ենք և այն, որ Կորիւնը մեզ բոլորովին չէ գոհացնում, որ նա շատ քիչ բան է տալիս մեզ։ Իբրև պատմական երկասիրութիւն, շատ խեղճ գործ է դա։ Շատ համառօտ, փաստերի կողմից վերին աստիճանի սակաւախօս, իսկ դատողութիւնների կողմից չափից դուրս շատախօս մի կենսագրութիւն, որի մէջ ամեն քայլում երեսում է հիացած աշակերտը, բայց չը կայ պատմաբանը, որ ներկայացնէր իր տեսած մարդու և նրա կատարած գործի ամբողջ պատկերը։

Իզուր չէ Կորիւնի գործը առաջին ինքնուրոյն պատմագրութիւնը հայերէն լեզուով։ Երբ հայի լեզուն բացվեց, երբ նա մի խա-

ւար ժողովրդից դարձաւ գիր ու մտածութիւն ունեցող ժողովուրդ, նրա առաջին գործը եղաւ պատմել թէ ով էր, որ այդպիսի մի հրաշք ստեղծեց: Իրբև մեր ինքնուրոյն պատմագրութեան երախայրիք, այդ առաջին պատուղը, բնականաբար, այնքան խակ պիտի լինէր, որ չը համապատասխանէր իր ահագին նշանակութեան: Աշակերտը շատ աղքատիկ փաստեր է հաղորդում իր մեծ ուսուցչի կեանքից, բայց որպիսի հաճութեամբ անձնատուր է լինում կրօնական—բարեպաշտական խոհերին:

Մեսրոպի առաջնորդութեամբ հայը նոր նոր է սկսում ըմբռնել թէ ինչ է եղել այն կրօնը, որ հարիւր տարի առաջ մտցրել էր Գրիգոր Լուսաւորիչը: Նոր բացվում են նրա առաջ ըրիստոնէութեան պարզ ու լայն հօրիզոնները և նա, իրբև արդէն գիտակցող հաւատացեալ, ջերմեռանդութեամբ փարում է այդ կրօնին, մոռանալով ամեն ինչ: Մեսրոպը անապատական էր և նրա աշակերտներն էլ նոյն ոգով կրթվեցին: Ամեն ինչ ըրիստոնէութեան համար—այս էր նշանաբանը: Եւ Կորիւնը անկարող էր, իհարկէ, լայն հայեացքների տէր մի պատմիչ լինել: Եկեղեցին մեծ եռանդով տարածում էր սրբերի վկայաբանութիւնները, որոնք պատմում էին քրիստոնէութեան համար նահատակվածների

կեանքը, հրաշագործութիւնները, առաքինութիւնները։ Այդպիսի գրականութեան վրա կրթված Կորիւնը իր ուսուցչի մասին էլ գրել է վկայաբանութեան նման մի բան, որի մէջ Մեսրոպը ամենից առաջ մի սուրբ է, որի կեանքը այս և այն նմանութիւնն ունի հին մեծ սուրբերի հետ, որի գործերը համապատասխանում են ս. Գրքի այս կամ այն տեղին։ Այս նմանութիւնները, այս համեմատութիւններն են գրաւում նրան, մոռացութեան տալով կեանքի շատ փաստեր, բաւականանալով ընդհանուր խօսքերով, սեղմ և շատ տեղերում անհասկանալի բացատրութիւններով։

Աւելացրէք և այն, որ Կորիւնի փոքրիկ աշխատութիւնը թէ հեղինակի տարօրինակ ոճի և թէ արտագրողների տգիտութեան պատճառով դարերի ընթացքում մութու անհասկանալի է դարձել շատ կէտերում։ Իսկ այս բոլոր ցաւալի պակասութիւնների շնորհիւ մեր մեծ հերոսի կեանքը լիակատար չէ ներկայանում մեզ, շատ բան անգառնալի կերպով կորել է դարերի խաւարի մէջ։ Հատերևոյթին, Կորիւնը գլխաւորապէս ուշադրութիւն դարձրած պիտի լինէր Մեսրոպի այն գործի վրա, որ հիացմունք է պատճառել նրան և նրա ժամանակակիցներին, այսինքն տառերի գիւտի վրա։ Բայց այդտեղ էլ Կոր-

իւնը մի աններելի սակաւախօսութիւն է պահպանել, երկու-երեք մութ րացատրութիւններով է բաւականացել, այնպէս որ ստացվում է մի այնպիսի տպաւորութիւն՝ կարծես թէ նա ականատես չէ եղել, լսել է տառերի գիւտը հեռու մի տեղ, հեռաւոր մի ժամանակում, և ինքն էլ չը գիտէ թէ ինչպէս է տեղի ունեցել և ինչ րան է այդ գիւտը: Մենք նոյն իսկ չը գիտենք հաստատապէս՝ ինչ է արել Մեսրոպը. արդեօք հնարել է նոր տառեր թէ կարգի է բերել եղածները:

Կայ նոյն իսկ աւելի ցաւալի մի պակասութիւն: Իր ուսուցչին Կորիւնը ամեն տեղ անուանում է Մաշտոց, մինչդեռ Մովսէս Խորենացու պատմութեան մէջ նա անուանված է և Մեսրոպ: Հայ ազգը դարերի ընթացքում ընդունել և նուիրագործել է այս վերջին անունը \*), որ, իհարկէ, չէ կարող Խորենացու հնարածը լինել: Այս անուններից ո՞րն է իսկականը,—չը գիտենք: Եւսապ էլ մի փաստ է, որ ցոյց է տալիս թէ մեր մեծ հերոսի կեանքը լաւ յայտնի չէ մեզ:

\*) Այդ իսկ պատճառով մենք էլ մեր այս աշխատութեան մէջ գործ ենք ածում Մեսրոպ անունը, իբրև ընդհանրութեան ծանօթ և սիրելի մի անուն:

Բ.

Սըքունի գիւանադպիրը:—Սահակ կաթողիկոս:—Մեսրոպի ճգնաւորական կեանքը:—Միսիօնարական գործունէութիւն:—Գողթան գաւառում:—Հեթանոս հայերի գիմաղութիւնը:—Բռնութիւնը հանճարեղ միտք է ծնեցնում:

---

Հայոց Խոսրով երրորդ թագաւորի օրով (396—399) արքունիքում ծառայում էր մի գիւղացի հայ: Նա ծնվել էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղում (թւականը յայտնի չէ) և Վարդան անունով բարեպաշտ մարդու որդին էր: Մանկութեան հասակում նա լաւ կրթութիւն ստացաւ. սովորեց պարսկերէն և ասորական լեզուները, ծանօթացաւ և յունարէնի հետ: Հաւանական է, որ նա Ներսէս Մեծի բացած դպրոցներից մէկի սանն էր:

Վերջացնելով ուսումը, նա թողեց իր ծննդավայրը, գնաց Արարատեան նահանգը, ուր հայոց արքունիքում զինուորական ծառայութեան մէջ մտաւ: Լեզուագէտ, ընթեր-

ցասէր տարօնացին չը կորաւ զինուորական գնդերի մէջ. զօրքը և պատերազմական արուեստը չը խեղեցին նրա մէջ գրասիրութիւնը, և նա դարձաւ թագաւորական դիւանի գրագիր։ Արքունիքը ծանօթացը նըրան աշխարհական կարգերի հետ, իսկ դիւանական գրագրի պաշտօնը բաց արեց նըրա առջև վարչական աշխարհը։ Մեսրոպը—սաէր տարօնացի գեղջուկ հայը — մեծ փորձ ձեռք բերելու, երկրի քաղաքական և ներքին հանգամանքները լաւ ուսումնասիրելու գեղեցիկ յարմարութիւններ ունէր։

Բայց փայլուն արքունիքը, հրամայող, կարգադրող իշխանութիւնը մինչև վերջը չը գրաւեցին նրան։ Նոյն Խոսրով թագաւորի ժամանակ Լուսաւորչի տոհմը նորից իր գերի մէջ մտաւ, կաթողիկոսական աթոռի վրա նստեց Ներսէս Մեծի որդին, Սահակը։

Հանգամանքները այնքան փոխված էին, որ նա չէր կարող հետևել իր հոչակաւոր հօր քաղաքականութեան։ Ստացած լինելով յունական գեղեցիկ կրթութիւն, Սահակը մնաց յունասէր, բայց այդ յունասիրութիւնը լայն ու կտրուկ միջոցներով արտայայտելու կարողութիւնից զրկված էր։ Հօր ե որդու մէջ կար արդէն այն մեծ տարբերութիւնը, որ որդին պարսկահպատակ էր և կաթողիկոսութիւն էր անում Հայաստանի այն մասում,

ուր պարսիկները բացարձակ տէրեր էին։ Եւ Սահակը ստիպված էր հաշտ ապրել պարսից կառավարութեան հետ։ Ներսէսը անվախ գործում էր պարսկական կուսակցութեան դէմ, մինչդեռ նրա որդին պարտաւոր եղաւ գնալ Պարսկաստան, ներկայանալ թագաւորին, խնդրել նրա բարեհաճութիւնը զանազան հարցերի վերաբերմամբ։ Հայաստանի բաժանումը տկարացրել էր ոչ միայն թագաւորական իշխանութիւնը, այլ և հայոց կաթողիկոսի քաղաքական նշանակութիւնը։ Բանը այն տեղ հասաւ, որ պարսից արքունիքը նոյն իսկ խառնվում էր կաթողիկոսական գործերի մէջ։

Այլ ևս անհնարին էր ներսէս Մեծի և նրա նախորդների խրոխտ ու բարձրագլուխ քաղաքականութիւնը։ Եւ Սահակը չունէր էլ իր հօր ահագին եռանդը։ Նա մըցող, պահանջող չէր, այլ մի խաղաղասէր քրիստոնեայ հովուապետ, որ աշխատում էր այնքան, որքան թոյլ էին տալիս հանգամանքները։ Կուռ ու հանդարտ ջանքեր էր գործ գնում եկեղեցին բարեկարգելու համար, այդ ջանքերի մէջ էլ նրա համար պահված էր իսկական մեծութիւնը։

Եկեղեցական բարեկարգութիւնը և քրիստոնէութեան տարածումը ապահովելու համար Սահակն էլ ոյժ տուեց վանականու-

Թեան: Նա ինքն էլ անձամբ սիրում էր ճշգնաւորական կեանքը և հիմնեց անապատականների մի առանձին կարգ, որի հետ ինքն էլ ենթարկում էր իր անձը խիստ պահեցողութիւնների և զրկանքների: Եւ նրա օրինակը, դուցէ և առաջարկութիւնը, երեխ, մեծ ազդեցութիւն արաւ արքունի դիւանադպրի վրա: Մեսրոպը թողեց իր պաշտօնը, հոգևորական կոչում ստացաւ, ապա անցաւ անապատական կրօնաւորների կարգը, դարձաւ մշտական աղօթքների և զրկանքների մէջ ապրող մի ճգնաւոր:

Բայց մենք չը պէտք է երեակայենք Մեսրոպին մի այնպիսի ճգնաւոր, որ ընդ միշտ հեռանում է աշխարհից, կտրվում է մարդկութիւնից և անապատի ու անյայտութեան մէջ կատարեալ ինքնամոռացութեան համնելով՝ իր հոգու փրկութեան համար է տանջվում: Մեսրոպը մարդկանցից չը հեռացաւ. հաւաքելով աշակերտներ, նա սկսեց ման գալ մարդկանց միտքը լուսաւորելու, քրիստոնէութիւն քարոզելու համար: Չը գիտենք, նրանից առաջ եղել են հայ հոգևորականներ, որոնք կատարում էին այսպիսի առաքելութիւններ, թէ ոչ: Կարելի է յամենայն դէպս ասել որ Մեսրոպի պէս տաղանդաւոր միսիօնար գեռ չէր եղել հայերի մէջ: Նա զինված էր թէ անշէջ եռանդով և թէ հազուա-

դիւտ գիտութեամբ։ Ամենազլիսաւորն այն էր, որ նա կարողանում էր խօսքը հասկա- կանալի դարձնել։ Խորենացին պատմում է որ Մեսրոպը եկեղեցում նախ կարդում էր գրքերը ասորերէն լեզուով, ապա թարգմա- նում էր հայերէն, ուստի ամեն տեղ նրան- հասկանում էր ժողովուրդը. մինչդեռ երբ Մեսրոպը չէր լինում, երբ կարդացածի թարգմանութիւնը չէր տրվում, ոչ ոք ոչինչ չէր հասկանում։

Աւելորդ է ասել որ այս գրութիւնը հանճարեղ տարօնացու սրտի մէջ խոր ար- ձագանք էր տալիս։ Եւ նրա առջև հետզհետէ բացվում էր մեծ անհրաժեշտութիւնը։ Հաս- կանալի խօսքի հզօր ազգեցութիւնը աւելի- շեշտվում, աւելի շօշափելի, տանջող էր դառ- նում մանաւանդ այն պատճառով, որ Մես- րոպը գործում էր Հայաստանի արևելեան ծայրերում։

Արարատեան դաշտից գէպի արևելք և հիւսիս-արևելք դանվող երկիրները Մեսրոպի ժամանակ սարսափելի համբաւ ունէին. Կոր- իւնը անուանում է այդ տեղերը «անկարգ, անզարման, գաղանամիտ, վայրենագոյն, ճի- ւաղաբարոյ»։ Այդ համբաւը, ի հարկէ, իր հիմքն ունէր։ Սիւնիքը և Արցախը վայրենի լեռնաշխարհներ են. անմատչելի բարձրու- թիւններն ու խորխորատները, կլիմայական

դաժան պայմանները, հազորդակցութեան ճանապարհների բացակայութիւնը ստեղծում են ազգաբնակութեան համար մի առանձնաւցած կացութիւն, խիստ հնապաշտ աւանդապահութիւն, բարքերի կոպտութիւն։ Կտըրված լինելով դրսի աշխարհից, լեռները միշտ յետամնաց են, անհիւրընկալ այնտեղ ապրող մարդը շարունակ զբաղված է վայրենի, ահեղ բնութեան հետ կրւելով, որպէս զի կարողանայ իր ապրուստը հայթայթել. մտաւոր-իմացական կեանքի համար ոչ տրամագրութիւն կայ, ոչ պահանջ, ոչ նոյն իսկ յարմարութիւն։ Այդ պատճառով էլ Հայաստանի այդ լեռնաշխարհում հեթանոսութիւնը պահվում էր մի յամառութեամբ, որ, ըստ երևոյթին, անընկճելի էր։

Ահա այդ գժուար մատչելի տեղերն էր Մեսրոպը ընտրել քարոզչութեան ասպարէզ։ Նա սկսեց Գողթան գաւառից։

Բայց այս գաւառը Սիւնիքի և Արցախի լեռնաստանների պէս մի անլոյս աշխարհ չէր։ Այստեղ մարդկային միտքը գործում էր։ Եւ եթէ Գողթանը մինչև Մեսրոպի ժամանակը մնացել էր հեթանոսութեան մէջ, պատճառն այն էր, որ նա մի առանձին նշանաւոր գեր էր կատարում հայկական հին աշխարհի մէջ։ Ազգային հին աստուածների, հին հերոսների աւանդապահն էր նա և հե-

թանոս հայութիւնը ոգևորողը։ Յայտնի են Գողթանի երգերը։ Յայտնի է որ զինով առատ այդ գաւառում ժողովրդական հանճարը բանաստեղծութեան մէջ պատկերացնում էր հին հայերի աշխարհայեցողութիւնները, գաղափարները, նախնիքների պաշտամունքը։ Այնտեղ, ուր կեանքը ժամանակի ընթացքում հզօր աւանդութիւն է դառնում և այդ աւանդութիւնը ժողովրդի սրտի մէջ գեղեցիկ բանահիւսութեան, առօրեայ հնչուն երգի է փոխվում, — այնտեղ չէ կարող հեշտութեամբ և շուտով մոռացվել պաշտամունքը։ Երգը չէր թողնում որ մեռնէ, անհետանայ անցեալը, նա այդ անցեալի ձայնն էր և անուշիկ ելևէջներով, սրտին հարազատ հնչիւններով միշտ կենդանի էր մնում։ Կար Հայաստանի մէջ մի ուրիշ Գողթան, — չը գիտենք։ Եւ եթէ միայն Գողթանն է կարողացել երկար ժամանակ պահել իր երգերի պատառիկները ու անմահացնել նրանց մեր գրականութեան մէջ, դա ապացոյց է այն բանի, որ նա ամենքից շատ պինդ էր կպած իր հնութեան։

Մեսրոպը այստեղ առանձին դժուարութեան հանդիպեց։ Քարոզչութիւնն անզօր էր, և նա դիմեց տեղական իշխանի աջակցութեան։ Նորից քրիստոնէութիւնը յենվում էր հրամանի, իշխող գաւազանի վրա։ Կրկնվում են Տրդատի ժամանակները։ Կորիւնը պարզ

չէ խօսում, բայց Ազաթանգեղոսի նման ասում է. «Մեծամեծ նշաններ էին երկում, դևերը զանազան նմանութեամբ փախստական լինելով, ընկնում էին Մարաց կողմերը»: Այդ դևերը, ինչպէս և Գրիգոր Լուսաւորչի ժամանակ, հեթանոսութեան պաշտօնեաներն ու կողմնակիցներն էին, որոնք տեղի տուին բռնութեան ոյժին և փախան:

Բռնութիւն, դիմադրութիւն, տանջանք: Նրանք յաղթանակով վերջացան, բայց ի՞նչպէս պիտի լինէր այն ճգնաւորի դրութիւնը, որ շարունակ մաշում էր իր մարմինը երկնքի սիրոյ համար: Գուցէ մի ուրիշը հանգիստ խղճով շարունակէր իր գործը, ուրախ լինելով որ Աստուծու գործը հաստատվեց հեթանոսութեան բոյնի մէջ: Բայց Մեսրոպը մեծ, զգայուն սրտի տէր մարդ էր: Նա չուրախացաւ, ընդհակառակն, յաղթութիւնը դառն տրտմութիւն էր նրա համար. յաղթողը նոյն իսկ լաց էր լինում և ասում. «Տրտմութիւն է ինձ և իմ սրտի ցաւերը անպակաս են իմ եղբայրների և ազգականների համար»: Ո՞վ գիտէ, գուցէ մի քանդված մեհեան կամ մի արիւնաթաթախ դիակ փորփորում էին նրա լուսաւոր միտքը և տանջում նրան իրկև լուռ, արիւնոտ հարցեր. ինչո՞ւ այս անգթութիւնը, ինչո՞ւ այս հարկադրանքը: Միթէ մարդը մեղաւոր է որ պաշտում է իր լաւ հասկացածը,

այն, ինչ հարազատ է իր համար:

Մտածութիւնները ծովանում են և իր սրտի ու զգացմունքների հետ առանձնացած մարդը գտնում է նրանց մէջ յաւիտենական ճշմարտութեան գաղանիքը: Նա զգում է որ մարդը գաւազանից չէ կրթութիւն ստանում, համոզմունք կազմում, որ նրան պէտք է սովորեցնել, նրա սրտում պէտք է մշակութիւն անել, սերմեր տնկել: Քարոզչութիւնը չէ օգնում, նըշանակում է որ պատահարար լսած խօսքը անզօր է խախտելու այն, ինչ հաստատվել է սրտի մէջ մանկութիւնից: Պէտք է, ուրեմն, այդ սրտի մէջ մանկութիւնից էլ պատուաստել նոր հասկացողութիւններ, պէտք է տալ նրան հեշտը, հարազատը և ոչ թէ օտարինը փաթաթել նրա վզին:

Տրտում ու տխուր, մտքերի մէջ խորասուզված, Մեսրոպը շատ օրեր որոնում էր մի ելք: Հրաշալի՛ երկունք: Գողթան գաւառը մեր պատմութեան մէջ պէտք է հոչակվի ոչ միայն իբրև հին երգերի հայրենիք, այլ և իբրև մի տեղ, ուր առաջին անգամ ծնվեց հայ գրականութեան միտքը: Այնտեղ, ուր գարերի ընթացքում ժողովուրդը բերանացի գրականութիւն էր պահպանում բամբիոնների ձայնակցութեամբ, նոյն այդ հողի վրա, նոյն այդ ձայնների մէջ պարզվեց, ան-

հրաժեշտութիւն դարձաւ տառեր գտնելու,  
գրով գրականութիւն ստեղծելու միտքը:

Մերոպը գտել էր ելքը: Եւ նա այլ ևս  
չը մնաց Գողթանում. թողեց ամեն ինչ, թո-  
ղեց իր սկսած գործը կիսատ և շտապով ճա-  
նապարհ ընկաւ դէպի Արարատեան երկիրը:  
Առաջ գիրք, յետոյ միայն գիտակցական  
քրիստոնէութիւն:

Ահա ինչն էր նրան Վաղարշապատ  
տանում:

Գ.

Գրերի և գրականութեան համար հոգսեր:—  
Նպաստաւոր ժամանակ. Վոամշապուհը Հայաստա-  
նում, Յազկերտ առաջինը Պարսկաստանում:—Որո-  
նում են հայկական տառեր:—Դանիէլի տառերը, ա-  
ռաջին դպրոցներ, անաջողութիւն:—Մեսրոպի ճանա-  
պարհորդութիւնը Միջագետք:—Հայկական տառերի  
գիւտը:—Ի՞նչ էր այդ գիւտը հների համար և ի՞նչ  
պիտի լինի մեզ համար:—Այբուբենի առաջին գիւտը:  
—Ազգերը միմեանցից փոխ առան տառերը:—Երկու  
կարծիք հայկական այրուբենի մասին:—Ի՞նչն էր  
դժուարը Մեսրոպի համար:—Լեզուի տարրալուծումը:

---

Ում պիտի դիմէը Մեսրոպը իր սրտի  
խոհերն ու ցանկութիւնները յայտնելու հա-  
մար, եթէ ոչ հայոց կաթողիկոսին: Բացի իր  
բարձր պաշտօնից, ո. Սահակը ունէր այն  
մեծ առաւելութիւնն էլ, որ ամենաղարգա-  
ցած մարդն էր այն ժամանակվայ Հայաս-  
տանում: Եւ նա գրկաբաց ընդունեց Մեսրո-  
պին, որովհետեւ ինքն էլ մի և նոյն մտա-  
ծութեան մէջ էր, ինքն էլ մի և նոյն եղբա-  
կացութեան էր հասել: Մեսրոպը իր առա-

Ջին իսկ քայլերից մի հզօր և հեղինակաւոր աջակից ու հովանաւոր ունէր։ Այդ բաւական չէ, հայոց թագաւորն էլ միացաւ նոյն մտքին, նա էլ նոյնպէս զգացել էր ժամանակի մեծ պահանջը։ Դա Վռամշապուհ թագաւորն էր։

Զորբոդ դարի վերջերում և հինգերորդի սկզբում կայ մի փոքրիկ շրջան, երբ Հայաստանը մի անսովոր տեսարան էր ներկայացնում։ Դա Վռամշապուհի թագաւորութեան շրջանն է։ Երկիրը խաղաղվեց, այլ ևս ներքին խռովութիւնների և պատերազմների դաշտ չէր ներկայացնում։ Ի՞նչ հրաշք էր դա։—Անշուշտ, շատ բան կախված էր թագաւորի անձնաւորութիւնից, նրա կառավարչական կարողութիւնից։ Բայց այդպիսի հանդամանքները վճռական կարող են լինել միայն մի բոլորովին անկախ, ինքնուրոյն երկրում։ Հայաստանում թագաւորը ամեն ինչ չէր, և հրաշքը հասկանալու համար մենք պիտի աշքներս դարձնենք դէպի Հայաստանի տէրը, դէպի Պարսկաստան։

Շապուհ երկրորդի մահից յետոյ Սասանեանների քաղաքականութիւնը ուրիշ կերպարանք ստացաւ։ Դահ բարձրացան այնպիսի թագաւորներ, որոնք չէին ուզում հպատակվել մոգերի և ազնուականների ազդեցութեան։ Դա նշանակում էր թէ մէջ տե-

ղից պիտի վերանայ անհաջոտ, կրօնամոլ հայեացքը պետական հարցերի, մանաւանդ քրիստոնեաների վերաբերմամբ։ Արքունիքը մըրցութեան դաշտ էր ներկայացնում։ մի կողմից թագաւորը, որ չէր ուզում կամ քիչ էր ուզում իր շրջապատողների ցուցմունքներով շարժվել, միւս կողմից՝ մոգերը, որոնք ուզում էին իրանց դիրքի մէջ մնալ։ Այդ մըրցութիւնները պալատական դրամաներ էին առաջացնում։ Շապուհի մի քանի յաջորդները սպանվեցին, բայց դրսի աշխարհը՝ դրա փոխարէն՝ հանգստութիւն էր վայելում։ Պարսկաստանի գլուխը խառնված էր և կրօնաներն ու յունականութիւնը հալածողներ չունէին։

Վուամշապուհի ժամանակ թագաւորում էր Յազկերտ առաջինը, որ Մեղաւոր անունն էր ստացել։ Մեղաւոր էր նա զուտ պարսկական տեսակէտից, այն պատճառով, որ զրադաշտականութեան և մողութեան փառքի համար չէր հալածում քրիստոնեաներին, չէր պատերազմում Բիւզանդիայի դէմ։ Ընդհակառակն, հալածում էր մոգերին և ազնուականներին, երբ նրանք ուզում էին կառավարողի, կարգադրողի դերի մէջ մտնել։ Ահա այդ Մեղաւորի թագաւորութեան միջոցին էլ խաղաղ էր հայոց աշխարհը, պարսկական կուսակցութիւնը չէր կարող աղէ-

տալի շարժումներ սկսել թագաւորի դէմ։ Խաղաղ մեծագործութիւնների համար ամենայարմար ժամանակը երկրի այսպիսի դրութիւնն էր։ Մեսրոպին հովանաւորում էին և քաղաքական հանգամանքները։

Մեծ վերանորոգումը ոչինչ արգելքներ չունէր իր առջև։ Վռամշապուհը նախավերջինն էր Արշակունի թագաւորների մէջ։ Կարծես բնազդով նա գիտէր որ մօտենում է վերջը, ուստի պէտք է տալ ժողովրդին ապրելու, գոյութիւն պահպանելու մի այնպիսի միջոց, որ խախուտ չէ գահերի պէս, քանի որ ապրում է սրտերի և մտքերի մէջ։ Եւ նա իր իշխանութիւնն ու ամբողջ բարի կամեցողութիւնը դնում է Մեսրոպի և Սահակի տրամադրութեան տակ՝ բարի գործը աջողեցնելու համար։

Կաթողիկոսարանում սկսվում են մի շարք խորհրդածութիւններ և այդտեղ յայտնի է գառնում թէ որքան դժուար է պահանջվող գործը։ Խորհրդակցութիւններին մասնակցում էին ձեռնհաս հոգևորականներ էլ, բայց ոչ ոք չը կարողացաւ մի գործնական միջոց առաջարկել։ Օգնութեան է հասնում Վռամշապուհը։ Նա լսել էր որ Միջագետքում կայ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոս, որ ունի հայերէն տառեր։ Մեր պատմագիրները շատ մութեկերպով են պատ-

մում այս բանը, այնպէս որ բոլորովին պարզ չէ թէ կար մինչև Մեսրոպը հայերէն կանոնաւոր այրութեն։ Շատ են խօսել այս հարցի առիթով։ Մեր բանասիրութիւնը, հիմնվելով պատմագիրների տառացի իմաստի վրա, ընդունում է որ հին ժամանակներից գոյութիւն ունէին տառեր, բայց մի և նոյն ժամանակ հաստատապէս պնդում է որ Մեսրոպից առաջ հայերէն գրականութիւն չէ եղել։ Եթէ այսպէս է, պէտք է, ուրեմն, ընդունել և այն, որ այդ տառերը անպէտք ընկած էին, նրանք չէին գործ ածվում նոյն իսկ արքունի և դիւնական գրագրութիւնների մէջ, որովհետեւ յայտնի է և այն, որ գրագրութիւնները լինում էին յունական, պարսկական և ասորական լեզուներով։

Մենք չենք մտնի այդ հարցերի մանրամասնութեան մէջ։ Պատմական հանելուկներ կան, որոնց լուծելու համար դրական փաստեր են հարկաւոր։ Երբ չը կան այդ փաստերը, ամեն մի հարց լուծելու ձգտումը կը մնայ հաւանականութիւնների շրջանում։ Եւ բացի դրանից Դանիէլեան տառերի հարցը, որքան էլ մասնագիտական հետաքրքրութիւն ներկայացնէ, մեզ համար երկրորդական նշանակութիւն ունի, քանի որ, ինչպէս կը տեսնենք յետոյ, Մեսրոպի ամենամեծ գործը տառեր հնարելը, այսինքն հնչիւններ պատկե-

բացնող նշանների գծագրութիւնը չէ:

Սահակի և Մեսրոպի խնդիրքով թագաւորը մարդ է ուղարկում Դանիէլի մօտ և բերել է տալիս նրա տառերը: Մեծ ուրախութեամբ է ընդունվում ասորի եպիսկոպոսի այդ պարգևը: Իսկոյն երեխաներ են հաւաքում և Մեսրոպը դառնում է վարդապետ, որ, ինչպէս գիտէք, վարժապետ բառի նըշանակութիւնն ունի, բայց եկեղեցական պաշտօն էլ է:

Բացված է առաջին հայ դպրոցը, առաջին հայ ուսուցիչը սկսում է երեխաներին մայրենի լեզու սովորեցնել: Սակայն փորձը ցոյց է տալիս Մեսրոպին որ Դանիէլի ուղարկած տառերը շատ անկատար ու պակասաւոր են և նրանցով չէ կարելի լեզու աւանդել: Երկու տարի յամառում է առաջին հայ ուսուցիչը, բայց ոչինչ չէ դուրս գալիս: Դարձեալ մտատանջութիւններ, դարձեալ որոնումներ: Ինքը, Մեսրոպը, ոչինչ չէ կարողանում անել այդ դժուարութեան դէմ. անզօր է համդիսանում և Սահակ կաթողիկոսը, և առհասարակ ոչ ոք հայոց մայրաքաղաքում չէ կարողանում օգնել: Բայց Մեսրոպը կանգ չէ առնում այդ անյաղթելի արգելքի առաջ: Մի անգամ սկսած գործը նա ձեռքից չը տուեց. եթէ աջողութիւն չը կայ տանը, պէտք է նրան որոնել դրսում, օտար,

աւելի կարող և հմուտ մարդկանց մօտ:

Վերցնելով իր հետ մի քանի աշակերտներ, Մեսրոպը ճանապարհվում է արտասահման: Վռամշապուհը և Սահակը ճանապարհ են գնում նրան բարեմաղթութիւններով, «սուրբ համբոյրներով», ինչպէս ասում է Կորիւնը: Եւ իրաւ, դրա պէս մի սուրբ առաքելութիւն առաջին անգամն էր դուրս գալիս հայոց աշխարհից: Խաւար ու դժբախտ մի երկիր մարդիկ էր ուղարկում լոյս որոնելու:

Այդ լոյսը Մեսրոպը յոյս ունէր գտնել ասորոց երկրում: Նա գնում է Եղեսիա, Ամիդ քաղաքները, տեմնվում է այնտեղի նըշանաւոր հոգեորականների հետ, գեղեցիկ ընդունելութիւն է գտնում, բայց տիսրութեամբ տեսնում է որ ոչ ոք չը պիտի կարողանայ օգնական և ղեկավար դառնալ: Ճարահատված՝ իր աշակերտներին բաժանում է երկու մասի. մի մասը թողնում է Եղեսիայում՝ ասորերէն լեզուն սովորելու, իսկ միւս մասը տանում է Սամոսատ քաղաքը՝ յունական դպրոցներ մտցնելու համար:

Իսկ ինքը մնում է օտար երկնքի տակ, խորասուզված իր մտքերի մէջ: Սակաւախօս Կորիւնը մի քանի նախադասութիւններ է գնում, որոնք ցոյց են տալիս թէ որ աստիճան լարված դրութեան էր հասել այդ միջոցին նրա ուսուցիչը: Ամբողջապէս յափշ-

տակված իր գաղափարով, այդ մարդը, ճըգ-նաւորին յատուկ խորին ջերմեռանդութեամբ, արտասունքներով, հեծեծանքներով էր պաղատում երկնքի օգնութիւնը։ Նա յիշում էր մարդարէի խօսքերը. «Երբ հեծեծես, այն ժամանակ կապրես», մի գեղեցիկ ասացուածք, որ ցոյց է տալիս թէ դաժան աշխատանքն է կեանք ստեղծում։ Այդ ճգնութիւնները, այդ անդագար հոգածութիւնը մի նոր երկունք են առաջ բերում։ Միտքը գործում է տենդային արագութեամբ, դաղափարները տեսիլների ձև են ստանում և հոգու լարված կարողութիւնը, վերջապէս, ամփոփում է տարիների մտածմունքները, ձուլում է նըրանց տեսանելի, զգալի կերպարանքների մէջ։ Երկունքը վերջացաւ, այս անգամ հայկական տառերի ձևերը արդէն տպաւորված էին մեծ մարդու սրտում։

Ստեղծագործութեան այդքան բուռն, մրրկալից թափ շատ քիչ է իջնում մարդու վրա, դարեր, տասնեակ դարեր մի անգամ։ Շատ բնական է որ Մեսրոպը կրօնական յափշտակութեան գագաթնակէտին հասած լինէր այդ մեծ, ահաւոր ժամերին։ Նա կատարում էր մի հրաշալի խորհուրդ, որ նըրան և նըրա ժամանակակիցներին ներկայանում էր իբրև զուտ հոգմոր մեծագործութիւն։ Տառերը հարկաւոր էին յատկապէս քրիստո-

նէութեանկ տարածման համար. ունենալ հայերէն գիր՝ նշանակում էր հայոց ամրող աշխարհը ճշմարիտ աստուածպաշտութեան դարձնել։ Այդ մեծագործութիւնը նոյնքան յափշտակիչ էր, որքան այն վեհ զգացմունքը, որ տանում է նահատակին դէպի կախաղան և խարոյկ՝ զոհվելու Աստուծու փառքի, եկեղեցու յաղթանակի համար։

Դեռ համարեա իր կենդանութեան ժամանակ Մեսրոպը սուրբերի կարգն անցաւ ինչպէս մի մարդ, որ արժանացել էր Աստուծու այցելութեան։ Նրա մասին խօսող մեր բոլոր մատենագիրները, սկսած Կորիւնից, ներկայացնում են տառերի գիւտը իրեւ մի երկնային հրաշք. յայտնի է յետոյ կազմված այն աւանդութիւնը, որ ասում է: թէ մի աներեսյթ ձեռք Մեսրոպի աչքի առջեւ գծագրեց քարի վրա հայերէն ձայնաւոր տառեռերի ձեռքը։

Մեզ չը պիտի զարմացնէ այսպիսի վերաբերմունքը դէպի տառերի գիւտը։ Մտեղծագործութիւնը պարունակում է իր մէջ մի վեհ, տարերային, գերմարդկային երեսյթ։ Ամեն ժամանակ նա պաշտելի է եղել։ Իսկ հին աշխարհը ամեն մի արտասովոր, չափազանց խոշոր ու ապշեցնող գործ համարում էր երկնքի կատարած հրաշք։ Մամնաւորապէս գիրը միշտ մարդկութեան հիացմունքն

Է զրգուել. այսօր էլ ռամիկ ամբոխը սրբութիւն է համարում ամեն մի գրութիւն։ Նոյն իսկ հնութեան այնպիսի մեծ խելքը, ինչպիսին Պլատոնն էր, մարդու ամենահրաշալի գործերից մէկը տառերի գիւտն էր համարում և ասում էր որ դա այնպիսի մի մեծագործութիւն է, որ տառեր գտնողին պէտք է աստուած համարել կամ աստուծունման մարդ։

Այս բոլորը, կրկնում ենք, միանգամայն հասկանալի է։ Բայց ի՞նչ կարող ենք ասել մենք։ այսօրվայ մարդիկս, Մեսրոպի գործի մասին։ Հրաշքները վաղուց են վոնդված մեր աշխարհից։ այսօր ամեն ինչ պէտք է բացատրել բանականութեան տեսակէտից, պէտք է նայել ամեն մի մեծագործութեան վրա ինչպէս մարդկային աշխատանքի վրա, որ ամեն ժամանակ և ամեն տեղ կատարվել է բնական հանգամանքների, սովորական միջավայրի մէջ։ Իսկապէս ի՞նչ է Մեսրոպի արածը, ի՞նչ տուեց նա մեզ։

Տառերի գիւտը, իսկ որ, մարդկային հանճարի ամենահրաշալի նուաճումներից մէկն է, որ ահագին զարկ տուեց քաղաքակրթութեան և առաջադիմութեան։ Առանց այդ գիւտի նոյն իսկ անկարելի է երևակայել քաղաքակրթութիւն։ Բայց տառերի գիւտին մարդկութիւնը միանգամից, յանկարծակի չը հասաւ։ Մինչև այդ նա երկար, շատ երկար

փորձեր էր արել իր միտքը դրոշմելու, կերպարանաւորելու մի միջոց գտնելու վրա։ Տառերը այդ դարաւոր որոնումների վերջին, ամենաաջող փորձն էին։ Տառերից առաջ, հազարաւոր տարիների ընթացքում, մարդկութիւնը գրելու զանազան ձևեր ունէր. յայտնի են եգիպտական հերիօգլիֆները, նշանագրերը, Ասորեստանի և Բաբիլոնի սեպագրութիւնները։ Դրանք դեռ շատ կատարելագործված միջոցներ էին, եթէ համեմատենք այն խեղճ ու կոպիտ փորձերի հետ, որ գործադրում էր աւելի հին, նախապատմական մարդկութիւնը։ Աստիճանաբար առաջ գալով մի անկատար ձևից դէպի միւս, աւելի կատարեալ ձևը, դարերի ընթացքում փոփոխութիւններ և բարենորոգումներ կատարելով, մարդկութիւնը հասաւ տառերին, որոնցից աւելի կատարեալ միջոց նա մինչեւ այսօր դեռ չէ գտել։ Բայց տառերն էլ մի նոր, անկախ, բոլորովին ինքնուրոյն գիւտ չէին. երկար ժամանակի ընթացքում նրանք կազմվեցին հին նշանագրերից։ Ամբողջ ժամանակ ձևերի փոփոխութիւններ էին տեղի ունենում, մինչեւ որ փորձով հասան ամենակատարեալ ձևին, այն է՝ իւրաքանչիւր տառով մի լեզուի մէջ գոյութիւն ունեցող ձայները նշանագրելուն։

Ո՞վ էր, որ առաջին անգամ այդպիս

արաւ։ Ո՞վ էր տառերի առաջին հնարողը։

Իսկապէս միայն մէկն էր, որ տառեր հնարող եղաւ ամբողջ աշխարհի համար։ Եւ որովհետեւ, ինչպէս տեսանք, այդ գործը կատարվեց երկար ժամանակի ընթացքում, ուստի խօսք չէ կարող լինել մի անհատի մասին։ Այրուբենական սիստեմը գտնողը միանհատ չէր, մեր Մեսրոպի նման, այլ ամբողջ ազգը, սերունդներ միմեանց ետևից ժամանակակից գիտութիւնը տրամադիր է հաւանական համարելու որ այդ մեծ գիտը պատկանում է հրէաներին։ Հրէական ազգից այրուբենը անցաւ Փիւնիկիա և այստեղից արդէն սկսեց տարածվել դէպի արևմուտք և արևելք։ Արևմուտքում ամենից առաջ այրուբենը մուտք գործեց Յունաստան, որտեղից անցաւ Իտալիա և ծնունդ տուեց հոօմէական կամ լատինական այրուբենին։ Այժմեան եւրոպական այրուբենները լատինականից են առաջ եկել, իսկ սլաւօնական ազգերի գրերը վերցրված են յունական գրերից։ Նոյնպէս յաղթական և արագաշարժ էր առաջին այրուբենի արշաւանքը դէպի արևելք։ Այստեղ նրան իւրացրին սեմական ցեղին պատկանող գանազան ազգեր, ինչպէս նաև իրանական ցեղերը. այրուբենը նոյն իսկ էլ առաջ գնաց և մտաւ մօնգոլական ցեղի մէջ։

Զը պէտք է կարծել թէ այդքան երկար

ու հեռու թափառութերի մէջ հրէա-փիւնի-կեան նախատիպ այրուբենը անփոփոխ մնաց։ Մեր հերոսի նման դիւրաթեք, հեշտ փոփոխ-վող բան շատ քիչ կը գտնվի։ Ամեն տեղ նա յարմարվում էր այս կամ այն ազգի բնաւո-րութեան, լեզուին, հնչիւններին և դրա հա-մեմատ կերպարանափոխվում էր արմատա-պէս, բոլորովին ուրիշ գծագրութիւն էր ըն-դունում։ Նայում էք բազմաթիւ այրուբեն-ներին, տեսնում էք որ դրանք առանձին-առանձին բաներ են։ Բայց այդպէս երևում է. գիտութիւնը տարրալուծում է այդ բոլոր գծերը, բերում է համեմատութիւններ և ցոյց է տալիս որ ծագումը մէկ է, որ բոլոր այ-րուբենները մի աղբիւրից դուրս եկած եղ-քայրներ են։ Մէկը միւսից փոխ է առել, կոկել է ինչպէս ինքն է կամեցել, աւելացրել, պակասեցրել է, մի խօսքով ազգայնացրել է։

Այս այսպէս լինելուց յետոյ, ոչ մի հիմք և արգարութիւն չը կայ սպասելու որ հայե-րը ընդհանուր համաշխարհային օրէնքից մի առանձին, չը տեսնված բացառութիւն կազ-մէին։ Մեսրոպը պարզապէս վերցրել է իր ժա-մանակ գոյութիւն ունեցած այրուբեններից մէկը կամ մի քանիսը և նրանց օգնութեամբ տառեր է կազմել հայոց լեզուի համար։

Առաջին հարցը, որ ծագում է այս հան-գամանքից, այն է՝ թէ ի՞նչ այրուբեն ունէր

Մեսրոպը իր աչքի առաջ։ Այս մասին զանագան կարծիքներ են յայտնված, բայց մենք կը վերցնենք երկուաը, որոնք գիտնական հիմքերի վրա են դրված։ Մի քանիմերն ասում են թէ հայոց (նոյնպէս և վրաց) այրութենի համար նախատիպ եղել է յունականը, բայց կան և այնպիսիները, որոնք պնդում են թէ պարսից կամ, աւելի ճիշտ ասած, զէնդական և փէհլէվի գրերից են ծնվել մեր (և վրաց) տառերը։ Երկու կողմերն էլ բերում են իրանց ապացոյցները, համեմատելով մեր տառերի ձևերը յունական և իրանական տառերի հետ, ցոյց տալով թէ ինչ տառից ինչ կերպարանաւորութիւն է առաջացել և գարձել մեսրոպեան տառ։

Թողնելով որ գիտնական հարցը վճռվի ապագայ քննութիւններով, մենք մեր կողմից կարելի ենք համարում աւելացնել, որ նայած երկու կողմերի բերած փաստերին, հաւանականութիւնը աւելի առաջինի կողմն է։ Ահա ինչ ապացոյցներ կան։ Նախ՝ մեր այրութենի մէջ տառերը դասաւորված են ճիշտ այնպէս, ինչպէս յունական այրութենի մէջ, մինչդեռ զէնդական այրութենը բոլորովին ուրիշ դասաւորութիւն ունի։ Երկրորդ՝ Մեսրոպը ընդունեց ձախ ձեռքից դէպի աջը գրելու սովորութիւնը, որ եւրօպական ազգերի մէջ ընդունվածն է. այս ուղղութեամբ գրված մեր տա-

տերը ունեն նմանութիւն յունական տառերի հետ։ Իսկ զէնդերէնը կարդացվում և գրվում է աջից դէպի ձախ, և մեր տառերը զէնդ-ֆէնլէվեան տիպին մօտենում են միայն այն ժամանակ, երբ նրանց էլ գրում ենք աջից դէպի ձախ, այժմեան ուղղութիւնը շուռ ենք տալիս դէպի յետ \*): Եթէ ճիշտ համարենք զէնդական թէօրիան, այն ժամանակ պէտք է ասենք և այն, որ ինքը, Մեսրոպը, չէր կարող կատարել այդ յեղաշրջումը միանգամից, պէտք է ենթադրենք, որ ազգի մէջ վաղուց մշակված էր աջից դէպի ձախ ուղղութիւն ունեցող տառերի ձևը և Մեսրոպը միայն փոփոխեց նրան, դարձնելով ձախից դէպի աջ։ Իսկ եթէ ընդունենք վաղուց հայացոած զէն-դական տառեր, այն ժամանակ պիտի ընդունենք և հայկական գրութեան գոյութիւնը մինչև Մեսրոպ, մի բան, որ չէ ընդունում մեր բանասիրութեան լրջամիտ մասը։

Սակայն այս բոլորը գեռ չէ ցոյց տալիս թէ Մեսրոպի գործը հեշտերից էր։ Առաջին հայեացքից կարելի է կարծել թէ Մես-րոպը մի պարզ ընդօրինակող էր, հետևաբար և անհասկանալի է թէ ինչու պիտի նա այնքան չարչարվէր, դէս ու դէն ընկնէր։ Մես-

\*) Համեմատութեան համար վերցնվում են ոչ թէ մեր այժմեան տառերը, այլ Մեսրոպի գրերը, ո-քո՞նք կոչվում են երկարագիր։

բոպի գործի ամբողջ վեհռւթիւնը չէ պակասում այն հանգամանքից, որ մեր այբուբենի տառերը նմանութիւն ունեն օտար ազգերի տառերի հետ, մի բան, որ համաշխարհային երևոյթ է։ Զարչարվելու, երկար մըտածելու, իսկական հանճարեղ ստեղծագործութեան երկունքով տանջվելու անհրաժեշտութիւն կար Մեսրոպի համար, եթէ նրա առջև դրված լինէին նոյն իսկ աշխարհի բոլոր այբուբենները։ Միթէ տառերի գիւտի մէջ գլխաւորը պայմանական նշաններ գծագրելն է։—Իհարկէ, ոչ։

Հայոց աշխարհում կար մի կենդանի լեզու, բաժանված բամաթիւ բարբառների։ Իւրաքանչիւր հայաբնակ գաւառ, ինչպէս յայտնի է, ունի իր առանձին բառակազմական և հնչիւնական ձևերը։ Պէտք էր գտնել հայոց լեզուի էական, ամեն տեղի համար ընդհանուր յատկութիւնները. պէտք էր տարրալուծել այդ լեզուն, գտնել նրա բոլոր ձայները, հնչիւնները, յարմարեցնել իւրաքանչիւր տառանշան մի յայտնի հնչիւնի, բայց այնպէս որ լեզուն չը զրկվի իր զարգերից, որոնք նրբութիւնների, նիւանսների մէջ են։ Պէտք էր այնպէս անել, որ լեզուն ամբողջովին հանդէս գար գրերի մէջ, առանց պակասութիւնների, առանց խեղաթիւրումների։ Ահա իսկապէս վիթխարի աշխատանքը, ահա

մտատանջութիւնների մի կոյտ, որի մէջ հանճարը միայն կարող է գլուխ չը կորցնել։ Տառերի արտաքին ձեզ երկրորդական հարց է. գլխաւորը ներքինն է, հոգին է։ Լեզուն տարրալուծելով, Մեսրոպը գտաւ բազմաթիւ տեղական տարրեր, այսինքն այնպիսի հընչիւններ, որոնք հայերէն լեզուին էին յատուկ։ Ահա այդ հնչիւնների համար նա արդէն իրանից հնարեց տառեր և այսպիսով լրացրեց ու ճոխացրեց իր այբուբենը \*):

Գործի արտաքին, տեխնիկական կողմը, այսինքն բարեձեռւթեան և գեղեցկութեան հարցը Մեսրոպը իր վրա չը վերցրեց։ Սամոսատում նա գտնում է Հռովանոս անունով մի ճարտար յոյն գծագրող և նրա հետ միասին վերջնական ձե է տալիս իր տառերին։ Առաջին անգամ նա, ի հարկէ, ինքը փորձեց իր գիւտը։ Բաց արաւ Աստուածաշունչը, վերցրեց Սողոմոնի Առակների առաջին գլխի առաջին տողը և թարգմանելով գրեց. «Ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զբանս հանճարոյ»։ Սրանք են հայերէն այն խօսքերը, որոնք առաջին անգամ թղթի վրա գրոշմվելու բախտն ունեցան։

\*) Մեսրոպի հնարած են համարվում հետևեալ 14 տառերը. ը, ժ, լ, խ, ծ, հ, ձ, ճ, յ, չ, վ, բ, ց։

Այսուհետև Մեսրոպը ցոյց տուեց իր գիւտը այն հոգեորականներին, որոնց օգնութեանն էր դիմել և ամեն տեղ ուրախութիւն և հիացում գտաւ:

Մեր տառերի գիւտը տեղի ունեցաւ 404 թւականին, այսօրվանից ճիշտ 1500 տարի առաջ:

---

Հանդէս Վաղարշապատում:—Ընդհանուրին էր պատկանում նոր զիւտը:—Գոյութեան կրիւը Մեսրոպի տառերի համար:—Դպրոցական մեծ շարժում:—Երկրի բոլոր տարրերը առաջ են քաշվում:—Լուսաւորութեան գործիք:—Անգիր ժողովրդի գրութիւնը:—Մեսրոպը իբրև գպրոցներ կառավարող:—Հոգսեր յունական Հայաստանի համար:—Մեսրոպ կ. Գօլսում:

Մեծ իրարանցման մէջ է հայոց մայրաքաղաք Վաղարշապատը: Կատարվում են ինչ որ ոչ-առօրեայ, տօնական պատրաստութիւններ: Քաղաքը գղրդալով դուրս է թափվում իր դռներից: Արևելքը գիտէ առանձին աղմկալի հանդիսաւորութիւն տալ ուխտագնացութիւններին. բայց այս հանդէսը սովորական ուխտագնացութիւն չէ: Երկրի ամբողջ փայլը նրա հետ է: Այդտեղ են քաղաքում գտնվող նախարարները, որոնք մի ամբողջ գունդ են կազմում. այդտեղ է և Սահակ կաթողիկոսը եկեղեցական դասի հետ:

Վերջապէս ինքը, թագաւորն էլ, դուրս է ե-  
կել պալատից և գնում է ժողովրդի հետ:

Մեծ բազմութիւնը շարժվում է Արա-  
րատեան դաշտի վրա. Նրա մէջ է այն ամե-  
նը, ինչ երկրի պատիւը, իշխանութիւնը, հա-  
րստութիւնն է մարմնացնում: Նա դիմում է  
դէպի Ռահ գետը՝ դիմաւորելու Ասորիքի  
ճանապարհորդին, որ եկել, կանգ էր առել  
գետի ափին: Երկիրը գնում էր սլաշտօնա-  
պէս ընդունելու, վաւերացնելու նրա գիւտը:  
Ուրախութեան աղաղակները, որոնք թըն-  
դում էին օդի մէջ, վկայում էին որ այդ  
ընդունելութիւնը, վաւերացումը սրտագին  
է, որ ամենքը հասկանում են թէ ինչ է ճա-  
նապարհորդ վարդապետի բերածը:

Մեծամեծները—թագաւորը, կաթողի-  
կոսը, նախարարները ողջագուրվեցին Մես-  
րոպի հետ: Եւ ամբողջ բազմութիւնը, աւե-  
լի էլ հանդիսաւորութիւն հաղորդելով իր  
գնացքին, սկսեց վերադառնալ դէպի Վա-  
ղարշապատ: Ճանապարհին եկեղեցական դա-  
սը երգում էր, ցնծութեան աղաղակները  
անընդհատ բարձրանում էին ամբոխի մի-  
ջից: Հայոց մայրաքաղաքը հրճուանքով ըն-  
դունեց իր մէջ այդպիսի հանդէսով և օրհ-  
նութիւններով բերված գանձը, տօնեց այդ  
վերադարձը: Ժողովրդական բուռն համա-  
կրանքները միանգամայն համապատասխա-

նում էին այն գործի ոգուն, որ կատարել  
էր Մեսրոպը։ Մի բոլորովին ժողովրդական  
գործ, որ կատարվել էր ամենքի համար—  
թէ թագաւորի, թէ նախարարի, թէ վերջին  
նախրարածի համար։ Ամենքը պիտի վայե-  
լէին մեծ բարիքը։

Կորիւնը իր ուսուցչի վերադարձը նը-  
մանեցնում է Մովսէսի իջման Սինայ սա-  
րից, երբ հրէաների հայրենասէր մարգարէն  
տանում էր Եհովայի տասը պատգամները։  
Այդ նմանութիւնը բերված է այն մտքով,  
որ ցոյց տրվի թէ Մեսրոպն էլ Մովսէսի  
նման հաղորդակցութիւն ունեցաւ աստուա-  
ծութեան հետ։ Ուրիշ տեսակ նմանութիւն  
չ կայ։ Ամենից առաջ յիշենք այն, որ Մով-  
սէսի ճանապարհը Սինայից մինչև հրէական  
վրանները նման չէր այն ոգեորված ընդու-  
նելութեան, որ ցոյց տուեց հայոց աշխարհը  
իր տառերին։ Այստեղ ժողովրդի ուրացու-  
թիւնն ու յանցանքներն էին Մովսէսի առաջ,  
այստեղ մի յաղթական գնացք էր, որ մինչև  
երկինք էր բարձրացնում Մեսրոպի յաղ-  
թութիւնը։ Մեր ամբողջ պատմութեան ըն-  
թացքում սա առաջին մեծ դէպքն է, երբ  
հայ ժողովուրդը մի ճշմարիտ, նշանաւոր  
յաղթութիւն տարաւ։ Նոյն իսկ եթէ Տիգ-  
րանները աւելի սովորական երևոյթներ լի-  
նէին մեր պատմութեան մէջ, դարձեալ նը-

նրանց յաղթութիւնները չէին կարող համեմատվել այս համեստ վարդապետի դործի հետ։ Զէնքերն ու անթիւ գնդերը չեն կազմում մի երկրի բախտը, այլ ժողովրդի միտքը լուսաւորող հիմնարկութիւնները։ Առանց լուսաւորութեան չէ կարող լինել ուժեղ, ինքնուրոյն, կենաունակ ազգ։ Տիգրանների յաղթութիւններից մեզ ոչինչ ժառանգութիւն չը մնաց, մինչդեռ ամբողջ 15 դար է, ինչ հայը ունի հաստատ ու անկողոպտելի մնացած մի ժառանգութիւն, և դա Մեսրոպի այդ աննման յաղթութիւնից է մնացել։

Սակայն այրուքեն կատարելագործելը, հնարելը դեռ ամեն ինչ չէ։ Ընդհանուր պատմութիւնը մեզ աւանդում է, որ շատ այրուքեններ, երկար ապրելուց յետոյ, անհետացան, շատերը նոյն իսկ երկար կեանք էլ չունեցան։ Ազգերը կային, մնում էին, բայց նրանց գրերը կորչում էին։ Պարսկաստանը կորցրեց նախ փէհլէվերէն այրուքենը, ապա ընդունեց զէնդերէնը, բայց նրան պահել չը կարողացաւ և հրաժարվելով իր բուն ազգային ստացուածքներից, գործածութեան մէջ մտցրեց արաբական տառերը։ Նոյն իսկ Ասորիքում, ուր Մեսրոպը օգնութիւն էր ուրոնում, մի քանի անգամ փոխվել են այրուքենները. ընկել, ոչնչացել են հները, կեանք են ստացել նորերը։ Այսպիսի օրինակներ

շատ կան. Էլ չենք խօսում այն ազդերի մասին, որոնք անհետացել են աշխարհից իրանց գրերի և լեզուի հետ:

Ի՞նչ է ցոյց տալիս այս տեսարանը:— Միշտ մի և նոյնը, յաւիտենականը, անփոփոխսելին: Այրուբենն էլ, ինչպէս մարդը, ինչպէս մարդկային ամեն մի գործ, ենթարկված է գոյութեան կուի անողոք օրէնքին: Ինչպէս գիտէք, այդ օրէնքը ասում է որ կուի մէջ գոյութիւն պահպանում են նրանք, որոնք աւելի կատարեալ և լաւ պատրաստված են: Մեսրոպի գիւտը 15 դարերի ընթացքում գտնվում էր գոյութեան ամենակատաղի կուի դաշտում. և այսօր էլ նա կայ, ապրում է: Այս գեղեցիկ երևոյթը ամենից առաջ, իհարկէ, Մեսրոպի հանճարին է պատիւ բերում, որ տուեց հնար եղածին չափ ամենակատարեալը, այնպիսի մի գործիք, որից աւելի լաւը հային հարկաւոր չեղաւ այգքան երկար ժամանակ: Հայոց լեզուն պակասութիւն չէ զգացել, չէ ճնշվել Մեսրոպի անան տառերի շրջանում: Եւ այսօր էլ, բարդ պահանջների և մրցութիւնների մեր ժամանակում, տեսնում ենք թէ որքան լիակատար ու անպակաս է 1500 տարի առաջ եղած գիւտը:

Սակայն տառերը ինքն ըստ ինքեան, որքան էլ հարուստ ու կատարեալ գործիք

լինեն, որքան էլ հանճարի կնիք կրեն իրանց վրա, դեռ բաւական չեն մի ժողովրդի մտաւոր առաջադիմութիւնը ապահովելու համար։ Կարելի է տառեր գտնել, բայց չը գործադրել նրանց կամ գործադրել միմիայն մի քանի գէպքերում։ Այսպէս եղած ժամանակ հետևանքը նոյնը կը լինէր, ինչ տառեր չունեցած ժամանակը։ Տառերը գրականութեան համար էին, իսկ գրականութիւն չը կար Հայաստանում։ Տառերը ուսուցանելու համար էին, բայց նրանց միջոցով ի՞նչ կարելի էր սովորեցնել, երբ չը կար ոչինչ գրաւոր վաստակ։

Ահա թէ ինչ գործեր էին դեռ մնում։ Պահանջվում էր աւելի մեծ գործ, տառերը ցոյց էին տալիս անհրաժեշտութիւն աւելի շատ եռանդ, աւելի յամառ, երկարատև աշխատութիւն գործ դնելու։ Եւ այս մեծագործութեան համար էլ պատրաստ հող կար Հայաստանում։ Մեսրոպի հետ միանում է Սահակը։ Երկուսը մի հոգի, մի միտք դառած, անբաժանելի զուգակիցներ են հանդիսանում մտաւոր գործունէութեան մէջ. այստեղից այլ ևս չէ կարելի այդ երկու անունները միմեանց կողքից հեռացնել։ Առաջին, նախապատրաստական շրջանն անցել էր—դա տառերի գիւտն էր։ Այժմ սկսվում էր երկրորդ, աւելի լայնարձակ շրջանը։

Երկրի զանազան կողմերում բացվում են դպրոցներ և միաժամանակ պատրաստվում են գրքեր։ Հասկանալի է, որ հայերը նախ պէտք է ամեն ինչ փոխ առնէին ուրիշներից։ Սկսվում է վերին աստիճանի եռանդութ թարգմանչական գործունէութիւն։ Դա թարգմանիշների մի ամբողջ դարագլուխ է և մեր առաջին գրական գործիշները երախտապարտ սերունդների կողմից ստացել են «թարգմանիչ» պատուանունը։

Ամենից առաջ հարկաւոր էին, ի հարկէ, եկեղեցական գրքեր։ Եւ տառերի գիտից յետոյ անմիջապէս սկսվում է Աստուածաշունչի թարգմանութիւնը։ Այս հսկայական գործը երկար տարիների աշխատանք էր պահանջում և նրան նուիրվեց գլխաւորապէս Սահակը, մինչդեռ Մեսրոպը աւելի շատ ճանապարհորդում էր զանազան տեղեր, կատարելով բոլոր նոր բացված դպրոցների վերաբերմամբ վերահսկողի պաշտօն։ Եթէ այդ էլ չը լինէր, եթէ Մեսրոպը Սահակի հետ միշտ աշխատէր, դարձեալ երկուսի ոյժերը, լեզուագիտութիւնը բաւական չէին լինի զգացվող մեծ կարիքը լրացնելու համար։ Գրական գործեր շատ էին հարկաւոր, և ահա ս. Սահակն ու ս. Մեսրոպը յղանում են մի գեղեցիկ միտք—պատրաստել զարգացած մարդիկ, աշխատակիցներ։ Նրանց դըպ-

բոցների առաջին գործն այդ է լինում. նը-  
րանք ընտրում են ընդունակ, աշխոյժ պա-  
տանիներ, գաստիարակում են մայրենի լե-  
զուի գիտութեան մէջ և ապա ուղարկում են  
արտասահման:

Բայց Սահակ-Մեսրոպեան դպրոցները  
միայն հոգևորականներ և հոգեոր գրքեր  
թարգմանողներ պատրաստելու նեղ ու սահ-  
մանափակ նպատակին չէին ծառայում: Ճիշտ  
է, ամենից առաջ և ամենից շատ եկեղեցու  
հոգսերն էին նկատի առնվում և Մեսրոպը  
իր աշակերտներին սովորեցնում էր և ճգնա-  
ւորական խիստ կեանքի զրկանքներին, որ-  
պէս զի նրանք տոկուն ու չարքաշ գործիչ-  
ներ դառնան,—բայց և այդպէս, պարզ կղե-  
րանոցներ չէին այդ դպրոցները. նրանց մէջ  
պատրաստվում էին և աշխարհական մար-  
դիկ: Բոլոր դասակարգերը, սկսած արքու-  
նիքից մինչև գիւղացի երկրագործը, աշա-  
կերտներ էին ուղարկում այդ դպրոցները:  
Նոյն իսկ հայ կինը, հեթանոսական հասկա-  
ցողութիւնների ժամանակ տնային մի ստըր-  
կուհի, մօտենում էր գրքին, ժամանակի լու-  
սաւորութիւնից բաժին էր ստանում: Մայ-  
րենի լեզուն այդ անխօս արարածներից  
պատրաստում էր հասարակական ոյժ, որ  
շուտով հրապարակ եկաւ իբրև մի նոր, հրա-  
շալի երևոյթ: Ս. Սահակը իր ձեռքով դպրոց

մացրեց իր երեք թոռներին—Վարդան Մամիկոնեանին և նրա երկու եղբայրներին. ուրիշ նախարարական տոհմերն էլ աշակերտներ էին տալիս. դրանցից մէկն էր մեր ծանօթ Վահան Ամատունին։ Բայց զարմանալին այս չէ։ Խուզ, կորած գիւղերից մարդիկ են դուրս գալիս, որոնք հոչակում են թէ իրանց և թէ իրանց գիւղի անունները. Յովսէփ Հողոցիմք գիւղից, Ղեռնդ երէց Իջաւանք գիւղից, Աբրահամ սարկաւագ Արած գիւղից և այլն։ Զարմանալին ահա այս է. բուն ժողովրդական տարրը, որ մինչև այդ հարկատու էր միայն և այս կամ այն իշխանի հպատակ, գործիչներ է հանում իր միջից և ազդում է երկրի ընդհանուր ճակատադրի վրա։

Այս համատարած եռանդուն կրթական գործունէութիւնը հրճուանք է պատճառում Կորիւնին, որ ասում է. «Այդ ժամանակ հայոց երանելի և ցանկալի աշխարհը անպայման սքանչելի դարձաւ»։ Սքանչացնում էր այն, որ հայ երկիրը, որ մինչև անգամ լսած էլ չէր այն կողմերի անունը, ուր քարոզվել էր քրիստոնէութիւնը, այժմ տեղեկացաւ այն ամենին, ինչ կատարվել էր այնտեղ։ Իբրև կրօնական մարդ, որ իր ժամանակը միայն աչքի առաջ ունէր, Կորիւնը կարծում էր թէ միայն այդ օգուտն ունեցաւ հայ ժողովուրդը։ Բայց տառերի գիւտը միայն Հրէաստա-

Նը չէր մօտեցնում հայ ազգի մտքին և սըրտին, այլ աւելի լայն և անսահման մի շըրջան—ամբողջ մտածող մարդկութիւնը։ Այնուհետեւ հայերի սեփականութիւն էր դառնում համաշխարհային մտքի գանձարանը։

Կար աւելին. հայ աղզն էլ կոչվում էր մտնել այդ գանձարանի մէջ, մասնակցել նըրան իր ինքնուրոյն ընդունակութիւններով։ Մի անյայտ միջնադարեան հայ հեղինակ, Մեսրոպի ժամանակը նկարագրելիս, ասում է. «Լուծվեց բերանի կապը, փարատվեց խաւարը, ամպի սիւնը լուսաւորում է, հոգեործիծը կաթ է տալիս»։ Եւ իրաւ. Մեսրոպը իր գիւտով նախ և առաջ բաց էր անում դարերով կապկապված լեզուն, դուրս էր կանչում ժողովրդի մէջ թագնված ստեղծագործական ոյժերը և տալիս էր նրանց գործադրութեան լայն ասպարէզ։

Մի անգիր ժողովրդի համար ոչ ժամանակ կարող է գոյութիւն ունենալ, ոչ մարդկային ցեղի դարաւոր փորձը, ոչ սերունդների անընդհատ աշխատանքը։ Միշտ երեխայ է այդպիսի ժողովուրդը. մեծանում է մի որոշ շրջանում, փորձով և աւանդութիւններով համանում է մի յայտնի աստիճանի ու կանգ առնում։ Նրա մտքին մի յայտնի չափով մատչելի է միայն այն, ինչ երեսում է բնութեան մէջ և ինչ համանում է նրա ա-

կանջին աւանդութեան կերպարանքով, ինչ  
սերունդները կարողանում են իրար տալ բե-  
րանացի: Եւ այդ պատճառով անգիր ժողո-  
վը ըստ աշխարհայեացքները շատ փոքր ու  
սեղմված են, պարփակված տեղական նեղվիկ  
հասկացողութիւնների շրջանում: Այդպիսի  
ժողովուրդները չեն կարող առաջ քայլել,  
նրանք անչափահաս են մնում յաւիտեան,  
կաշկանդված ու դժբախտ, որովհետև սովո-  
րել չեն կարողանում, իսկ սովորելով միայն  
կարելի է այսօր երէկվանից քիչ առաջ գնալ:  
Սովորել և ստեղծագործել—այս է մարդ-  
կային հասարակութեան բախտի օրէնքը:  
Նոյն այս օրէնքը հասկացված անհրաժեշտու-  
թիւն էր դառնում հայոց աշխարհում:

Բարերարվում էին երկրի ոչ միայն  
կենտրոնական տեղերը, այլ և հեռաւոր, ան-  
ծանօթ ծայրերը: Մեսրոպը յիշեց իր Գող-  
թանը, որ այնքան ցաւ ու տառապանք էր  
պատճառել նրան և մղել էր գէպի մտաւոր  
հերոսութիւն: Նա նորից գնաց Գողթան,  
բայց այս անգամ կուր ու հրաման չէր տա-  
նում իր հետ, այլ գիրք ու դպրոց: Այժմ  
գործը ապահովված էր, տարիների կրթու-  
թեամբ ինքը, այդ յամառ հեթանոսասէր  
գաւառը, կը պատրաստէր իր համար քրիս-  
տոնեայ հովիւներ և ժողովուրդ: Գողթանից  
Մեսրոպը մտաւ լեռների վայրենութեան աշ-

խարհը, Սիւնիք և Արցախ, ուր անմատչելի խոռոչներում ծածկված մնացել էին տեսակ-տեսակ հին աղանդներ և պաշտամունքներ։ Դպրոցներ բացվեցին նոյն իսկ հեռաւոր Գարդմանի ձորերում, Արցախի հիւսիսային սահմանագլխի վրա։

Աջողութիւններից խրախուսված Մես-րոպի մէջ այժմ վառվում է միսիօնարական ոգևորութիւնը. իւրաքանչիւր մութ ու դըժ-բախտ անկիւն գրաւում է նրան և նա շտա-պում է, որքան հնարաւոր է մի անհատի համար, ազատել մարդկութիւնը անգիր բար-բարոսութեան ճանկերից։ Հայաստանի սահ-մաններին կպած էին այդպիսի երկու ընդար-ձակ երկիրներ—Վրաստանն ու Աղուանից աշխարհը։ Մեսրոպը, ինչպէս հաւատացնում են մեր պատմագիրները, անցնում է այդ եր-կիրները և այնտեղ էլ բարոզում է լուսաւո-րութիւն, հաստատում է դպրութիւն, հնա-րելով գրեր և վրացիների ու աղուանցիների համար \*): Այսպիսով Հայաստանը հանդիսա-

\*) Աղուանից այբուբենը մեզ չէ հասել, կորել է այդ խորհրդաւոր ազգի հետ իսկ վրաց տառերի վերաբերմամբ բանասիրութիւնը վիճելի է համարում թէ նրանք Մեսրոպի ձեռքով են գտնված։ Բայց այս գէպքում գեռ պէտք է ապացուցանել թէ Կորիւնը ժամանակակից և ականատես վկայ չէ, կամ թէ նրա գրուածքի այն մասը, որ խօսում է վրաց նտառերի գիւտի մասին, յետոյ է աւելացրված։ Քանի որ չը

Նում է քրիստոնէական լուսաւորութեան միջնորդ և հաղորդիչ իր գրացիների վերաբերմամբ, մի գեր, որ, տարաբախտաբար, երկար չը կարողացաւ առաջ տանել:

Հեռաւոր, նոյն իսկ օտար կողմերի համար այսքան հոգ տանողները, բնականաբար, չէին կարող մոռանալ հայութեան այն խոշոր հատուածը, որ գտնվում էր յունաց տիրապետութեան տակ: Սահակն ու Մեսրոպը այդ բաժնում էլ շտապեցին գործ սկըսել, բայց առաջին անգամից արգելքների հանդիպեցին բիւզանդական կառավարութեան կողմից: Կարիք չը կայ երկար բացատրելու այս տարօրինակ հանգամանքը: Հայաստանի բաժանումը, ինչպէս տեսանք,

---

կան այդ ապացոյցները, մենք ոչինչ հիմք չունենք չը հաւատալու կորիւնին: Մանաւանդ որ նրա պատմածի մէջ անհաւանական կամ անկարելի բան չը կայ: Պրօֆէսօր Մառ շատ գեղեցիկ կերպով ապացուցել է որ վրացիները, մինչև եկեղեցիների բաժանումը, հայոց գրականութեան ազդեցութեան տակ էին գտնվում և հայերէն թարգմանութիւններից էին օգտվում ասորական բնագիրները վրացերէնի վերածելու ժամանակ: Անկարելին միայն այն է, որ Մեսրոպը մի կարճ միջոցում այնքան սովորած լինի վրացերէնը, որ նրա համար այբուբեն գտած լինի: Աւելի ճիշտ կը լինի ասել, որ նա վրացիների հետ միասին գործեց և իբրև արդէն հմուտ մարդ՝ իր խորհուրդներով ու ցուցմունքներով ղեկավարեց նրանց, վերջնական ձև տալով տառերին:

արդէն մի մեծ փաստ էր որ բիւզանդական կառավարութիւնը ղեկավարվում էր եսամոլ քաղաքականութեամբ, իր սեփական շահերն էր որոնում ու գնահատում: Նրա շահը միայն երկիրներ իւրացնելը չէր, այլ և այն, որ հպատակ ազգերի մէջ արմատախիլ անվեն ցեղական - աւանդական առանձնայատկութիւնները: Հայերը ինքնարերար ձգտում ունէին դէպի Բիւզանդիան, որքան աւելի հաստատամիտ քրիստոնեաններ էին դառնում: Այդ բնական համակրանքը երբէք չէր կարող պակասել մի ազգի մէջ, որ ենթարկված էր օտար ու անհաշտ կրօնով ղեկավարվող մի ասիական բռնապետութեան: Բայց — զարմանալի՛ բախտ — Բիւզանդիան, հայերի յոյմն ու համակրանքը, որի համար նրանք այնքան հալածանքներ ու դառնութիւններ էին կրում Պարսկաստանի կողմից, նայում էր այդ քրիստոնեայ երկրին իր եսամոլ ձգտումների տեսակէտով. Նրան համակրանք ու հաւատարմութիւն չէին հարկաւոր, այլ կատարեալ յունացում: Այս էր բիւզանդականութեան ոգին դարերի ընթացքում:

Իրանց բաժինը յունացնել կամեցող բիւզանդացինները, բնականարար, չէին կարող թոյլ տալ որ հայոց նորածին գրականութիւնը տարածվի այդ բաժնում և մայրենի լեզուի ոյժով մաքառէ յունականութեան

Ճ

թեան դէմ: Ա. Մահակը ստիպված եղաւ, բանակցութիւն սկսել Բիւզանդիայի հետ և ուղարկեց այնտեղ մի պատզամաւորութիւն, որի գլուխը ս. Մեսրոպն էր:

Երեկի Մեսրոպը լաւ կարողացաւ համոզիչ փաստերով ցոյց տալ բիւզանդական արքունիքին թէ ինչ հետևանքներ կարող է առաջ բերել քրիստոնեայ պետութեան վարմունքը քրիստոնէական այնքան կարևոր գործի մէջ, որ սկսվել էր Հայաստանում և թէ ինչ տեսակ օրինակ կը գառնան բիւզանդական արգելքները Պարսկաստանի համար: Թէոդոս կայսրը համոզվեց, թոյլ տուեց որ հայ դպրոցներ բացվեն և յունական Հայաստանում: Մեսրոպը վերադարձաւ կայսերական պարգևներով մեծարված: Նրան ճանապարհին սպասում էր Մահակը: Եւ նրանք, ի հարկէ, շտապեցին իսկոյն օգուտ քաղել կայսրի թոյլաւութիւնից:

Եւ այնուհետև ամրող Հայաստանի մէջ այլ ևս չը մնաց մի տեղ, ուր ներս մտնելու համարձակութիւնը չունենային մեսրոպեան տառերը:

## Ե.

Գրականութեան պահանջը:—Ո՞ւմ աշակերտել.  
Ասորիք և Արևմտեան աշխարհ:—Առաջին հայ ուսա-  
նողներ և արտասահմանեան կրթութիւն:—Անդրանիկ  
և կրտսեր աշակերտներ:—Ո՞ւր և ի՞նչ էին նրանք  
սովորում:—Վերադարձ և գրական աշխատութիւններ:  
—Սահակի և Մեսրոպի մշակած լեզուն:—Խնքնուրոյն  
գրականութիւն:—Դա զուտ կրօնական է:—Եկեղեցու  
նշանակութիւնն ու ազգեցութիւնը:

---

Բայց այս բոլոր հոգսերն ու անշէջ ե-  
ռանդը դեռ բաւական չէին, որպէս զի Սա-  
հակն ու Մեսրոպը հանգիստ նստէին իրանց  
տեղը: Երեացին տառեր, դպրոցներ, նոյն իսկ  
գրքեր: Ի՞նչ էր մնում: Եղածը նիւթեր էին,  
մինչդեռ պէտք էր կառուցանել մի ամուր ու  
հոյակապ շինութիւն: Մնում էր, ուրեմն, ուղ-  
ղութիւն տալ կրթական գործին, հոգի դնել  
նրա մէջ: Այս մեծ ու ծանր պարտաւորու-  
թիւնն էլ Սահակն ու Մեսրոպը կատարեցին  
մի հիանալի հեռատեսութեամբ:

Հայաստանը իր սեփական միջոցներով  
Ս. ՄԵՍՐՈՊ

չէր կարող բաւարարութիւն տալ դարի լուսաւորութեան պահանջներին։ Դեռ նոր իր խաւար ու տգէտ անցեալից դուրս եկող մի երկիր կարող էր երկար ջանքերով այնպիսի դպրոցներ ունենալ, որոնց ոյժը հասարակ գրագիտութիւն սովորեցնելուց դէնը չէր անցնում։ Գրագիտութեան երկու բարձր զեկավարները կարող էին, ի հարկէ, ընդունել որ հայերի համար բաւական է և այն գիտութիւնը, որ իրանք ունեն։ Բայց հէնց գըլխաւորն այն էր, որ նրանք իշանց իմացածը բաւական չը համարեցին։ Պէտք էր աշակերտել ուրիշ ազգերին։ Հինգերորդ գարում Հայաստանին մօտ էին երկու ազգեր, որոնք կարող էին ուսուցիչ հանդիսանալ—ասորիները և յոյները։ Դրանցից ո՞րը պէտք էր ընտրել։

Ասորիքը (Սիրիա) ունեցաւ իր սեփական, ինքնուրոյն գրականութիւնը, որ զուտ կրօնական էր։ Բայց այդ գրականութեան մէջ շատ քիչ հեղինակներ կան, որոնք աչքի են ընկնում իբրև տաղանդ։ Ասորիները ամենամեծ մասամբ մնացին միջակութիւններ, որոնք աւելի ուրիշներից էին սովորում, քան իրանք էին ստեղծագործում։ Նրանք մեծ մասամբ թարգմանութիւններ էին անում ունարէնից, որոնք ապագայում մեծ ծառայութիւն պիտի մատուցանէին գիտութեան։ Ի՞նչ կարող էր տալ Ասորիքը հայերին, եթք

ինքն էլ մուրացկան էր։ Ժամանակի լուսաւորութեան հայրենիք մնում էր դարձեալ Յունաստանը, թէև այդտեղ գիտութիւնն ու գրականութիւնը անկման մէջ էին՝ համեմատած Պլատօնների և Էսքիլէսների դարի հետ։

Որքան էլ աննպաստ լինէին քաղաքական հանգամանքները, որքան էլ յունական կառավարութիւնը սառն ու անտարդեր տրամադրութիւն ունէր դէպի հայերի ազգային ամենակարենը շահերը, յունասիրութիւնը, այնուամենայնիւ, մի անհրաժեշտութիւն էր, որ ընդունվեց մեր առաջին գործիչների կողմից իբրև կեանքի և մահվան հարց։ Այն հանգամանքը, որ ս. Մեսրոպը իր գործի համար օգնութիւն որոնում էր Ասորիքում, մի կողմ թողնելով Յունաստանը, անշուշտ ունէր իր մէջ, բացի ուրիշ պատճառներից, նաև քաղաքական նկատումներ։ Միշտ հայ գործիչների գլխին դամոկլեան սրի պէս կախված էր այն իրողութիւնը, որ Պարսկաստանի համար վտանգաւոր չէր միայն ասորական քրիստոնէութիւնը։ Հայերն էլ ստիպված ասորիներին էին դիմում։ Առաջին թարգմանութիւնները, օրինակ Աստուածաշունչը, եկեղեցական գրքերը, ասորերէնից կատարվեցին։ Բայց տարիների փորձը ցոյց տուեց որ այդ աղքատիկ աղբիւրից միայն աղքատ ու անկատար բան կարելի է վերցնել։ Սահակն

ու Մեսրոպը շատ լաւ զգում էին թէ ուր է փրկութիւնը:

Ահա մի ուրիշ մեծ դործ, որ պատիւ է բերում նրանց խելքին: Փրկութիւնը Յունաստանն էր. բայց յոյն ուսուցիչներ չէին կարող մտնել պարսկական Հայաստանը. և եթէ մտնէին էլ, կարժղ կը լինէին լաւ կըրթված մարդիկ պատրաստել: Կըթութիւնը յարմար միջավայր էլ է պահանջում, իսկ Հայաստանը երբէք այդպիսի տեղ չէր եղել: Եւ երկու մեծ զուգակիցները վճռում են մի համարձակ քայլ անել, որից մեր աշխարհը անհուն բարիքներ պիտի ստանար: Մոռանալով պարսկական կասկածները, նրանք իրանց աշակերտներից ամենաընդունակներին ուղարկում են Յունաստան՝ կրթվելու և կատարելագործվելու:

Այդ երիտասարդները առաջին հայ ուսանողներն էին, առաջին թարմ ոյժերը, որոնց մի յետադէմ ասիական երկիր ուղարկում էր հետու տեղեր, որպէս զի բան սովորեն և գան իրան էլ սովորեցնեն: Եթէ ինկատի ունենանք, որ այդ բոլոր աշակերտները ժողովրդի որդիներ էին, կը տեսնենք որ ժողովուրդը, ուրեմն, հասկացել էր կամ սկսել էր հասկանալ լուսաւորութեան նշանակութիւնը: Նոր, լուսաւոր դարագլիսի ամենից շատ յուղող տեսարանը այդ երիտա-

սարդ, կրակոտ ոյժերի ուղևորութիւնն էր, որ հիացմունք է ազդել ամեն ժամանակ, ինչպէս ազդում է և այժմ, 15 դարերի հեռաւորութիւնից։ Միջնադարեան այն անյայտ հեղինակը, որից վերևում վկայութիւն բերինք, կատարեալ բանաստեղծական հրճուանքի է համառում, երբ գալիս է այդ ուղևորութեան։ Ահա ինչպէս է նա ներկայացնում երիտասարդների կրթական ուխտագնացութիւնը։

«Եւ այսպէս մերոնք գումարվում էին, կազմվում, պատրաստվում էին, ճանապարհ ընկնում. երկար ճանապարհ էին կտրում, ծովերով էին գնում, թեթև թեերով էին թըռչում, փայտաշէն ձիաների (նաւ) վրա էին բարձրանում, լայն տարածվող սանձերն էին բռնում, օդի մէջ լայնացող խարազաններ էին շրջեցնում, երերուն ու անհաստատ դաշտերով (ծով) էին արշաւում, մահը կեանքից բարձր էին դասում, աներևոյթ նպատակին ուշք ու միտք էին տուել»։

Տարաբախտաբար, մթութիւնը, մեր պատմական կեանքի այս ծանր ճակատագիրը, հայ ուսանողների ճանապարհորդութիւնն էլ իր վարագոյրի տակ է պահում։ Յայտնի են մի քանիսի անունները, մինչդեռ աւանդութիւնը տասնեակներով է համրումնրանց։ Ինչ կարելի է համարել ընդունել մեր բանասիրութիւնը, այն է՝ որ Սահակ-Մեսրոպեան

դպրոցները երկու կարգ կրթված մարդիկ են պատրաստել. առաջին կարգը անուանվում է առաջին կամ աւագ աշակերտներ, իսկ երկրորդը—կրտսեր աշակերտներ։ Պէտք է, ուրեմն, ենթադրել որ Սահակն ու Մեսրոպը առնուազն երկու անգամ երիտասարդներ ուղարկեցին արտասահման։ Առաջին ուղերութիւնը տեղի է ունեցել 430 թւականին։

Հայ երիտասարդները ուղղակի Յունաստան չը դիմեցին. Նրանց պատուիրված էր նախ այցելել ասորական դպրոցները։ Թէև այդ դպրոցներից մէկը մանաւանդ, Եղեսիայինը, շատ հոչակված էր այդ ժամանակներում, բայց և այդպէս, պէտք է ընդունել որ Սահակն ու Մեսրոպը այստեղ էր ստիպված էին հարկ տալ քաղաքական դրութեան, որի մասին վերև խօսեցինք։ Մեր ուսանողները երկար չը մնացին Ասիայում։ Նրանց գրաւում էր յունական արևմուտքը, ուր հին և նոր աշխարհների լուսաւորութեան օջախներն էին գտնվում։ Դեռ մնում էին Աթէնքի հոչակաւոր դպրոցները, ուր ապրում էր հին հեթանոսական գիտութիւնը և ուր մտնելուց չէին քաշվում և եկեղեցու հայրերը, որպէս զի սովորեն գիտութիւն և կուեն հեթանոսութեան դէմ՝ նրանից խլած զէնքերով։ Կար և Ալէքսանդրիան, ուր հին

փիլիսոփայութիւնը իր դէմ յարուցել էր ե-  
կեղեցական հալածանք և վերջին շունչի վրա  
էր։ Վերջապէս կար հպարտ Բիւզանդիան,  
որ մահ էր յայտարարել հին կրօններին և  
աշխատում էր ոչ միայն յաղթանակ ստեղ-  
ծել քրիստոնէութեան համար, այլ և դարձ-  
նել նրան բոլոր գլուխութիւնների տէր։

Այդ տեղերն այցելեցին հայ ուսանող-  
ները։ Ժամանակը, ճիշտ է, փառաւորներից  
չէր։ հայաստանցիները պիտի տեսնէին ի-  
րանց երազած Արևմուտքում և եկեղեցական  
ֆանատիկութեան բռնկում, որ արտա-  
յայտվում էր հեթանոսութեան դէմ յարու-  
ցած կոպիտ հալածանքների, նոյնպէս և հո-  
գեոր հայրերի միմեանց դէմ լարած արիւ-  
նահեղ դաւերի ու բռնութիւնների մէջ։ Զը  
պէտք է թագցնել, արևմտեան աշխարհի այդ  
տրամադրութիւնը յայտնի չափով ազգեց և  
մերոնց վրա, յայտնի չափով մտաւ և նրանց  
մէջ։ Բայց և այդպէս, տխուր ժամանակի մի  
քանի դրական կողմերն էլ ահազին նորու-  
թիւններ էին արևելցիների համար։ Դեռ կար  
մտաւոր մեծ պաշար։ և մերոնք կարող էին  
իրանց աշխատասիրութեան համար լայն ու  
ընդարձակ դաշտ գտնել։

Ի՞նչ էին նրանք սովորում։ Վերոյիշեալ  
անսանուն հեղինակը իր երևակայութեան մէջ  
այսպէս է պատկերացնում հայ ուսանողների

կեանքը։ Նրանք աշխատանքների և ջանքերի մէջ պատրաստում էին իրանց անձը, ժրութիւն էին ցոյց տալիս տքնելով, հարցասէր և ուշադիր էին, սովորում էին, կրթում էին իրանց։ Մի քանիսները տառերի գծագրութիւններն էին ուսումնասիրում, ուրիշները ուրիշ ճիւղեր ընտրեցին, այն է՝ բնաբանութիւն, երկրաչափութիւն, համարողական արհեստ (թուաբանութիւն), երաժշտութիւն, աստղաբաշխութիւն, քերականութիւն, բանաստեղծութիւն. բացի այդ բոլորից կար գործնական և տեսական փիլիսոփայութիւնը իր տասներկու բաժիններով։

Շատ կարելի է որ այս պատկերը միանգամայն ճիշտ չէ. բայց եթէ տարրալուծենք հինգերորդ դարի մեր լուսաւորութիւնը, կը գտնենք որ Արևմուտք գնացած հայ ուսանողները ծանօթ էին այդ բոլորի հետ։ Նրանք մեծ պաշարով վերադարձան հայրենիք և եռանդուն ուսուցիչներ հանդիսացան դըպրոցների և գրականութեան մէջ։ Հասկանալի է թէ միանգամից որքան պիտի բարձրանային լուսաւորութեան այդ երկու հզօր գործօնները։ Սահակ-Մեսրոպեան գործը գնալով չէր թուլանում, այլ աւելի և աւելի զարգանում էր, թափ ստանում։ Աշակերտները իրանց ուսուցիչներից աւելի առաջ գնացին իրանց բազմակողմանի պատրաստութեամբ,

որի ամենամեծ վկայութիւնը տեսնում ենք  
նրանց գրականութեան մէջ:

Գեղեցիկ մի երևոյթ է ներկայացնում  
այդ գրականութիւնը: Սկսվեց նա համարեա  
հրաշքով: Առաջին քայլերում համարեա ամ-  
բողջովին թարգմանական էր, բայց այդ հան-  
գամանքը նշանակութիւն չունի, եթէ ուզե-  
նանք հասկանալ թէ դժուար գործ էր դա:  
Հեշտութիւն չէր կարող լինել նախ և առաջ  
այն պարզ պատճառով, որ հայերի մէջ գոյու-  
թիւն չունէր գրական լեզու, և Սահակն ու  
Մեսրոպը նոր պիտի մշակէին մի այդպիսի  
լեզու: Գիրքը բոլոր ազգերի մէջ ունի իր  
յատուկ լեզուն, որ տարբերվում է գործա-  
ծականից իր կանոնաւորութեամբ, իր ներ-  
դաշնակ, հարուստ ձևերով: Հայերէն գիրք  
Սահակից և Մեսրոպից առաջ, ինչպէս ըն-  
դունում է բանասիրութիւնը, չը կար: Ո՞ր-  
տեղից վերցրվեց գրական այն լեզուն, որ  
սկսեցին գործ ածել Սահակն ու Մեսրոպը և  
նրանց աշակերտները:

Ենթադրութիւն կայ թէ մեր գրաբարը  
տառերի գիւտից առաջ գործածական լեզու  
էր հայոց արքունիքում և առհասարակ Արա-  
րատեան նահանգի բարձր դասակարգերի,  
աղնուականութեան մէջ: Որքան էլ տրամա-  
դիր լինենք հաւատալու այդ ենթադրութեան,  
չենք կարող, այնուամենայնիւ, ընդունել որ

խօսակցական գործածութեան մէջ գրաբարը  
այնքան կանոնաւորված ու մշակված էր, որ  
Սահակին ու Մեսրոպին մնում էր վերցնել  
նրան և ուղղակի թղթի վրա անցկացնել:  
Մշակումը, յղկումը դարձեալ անհրաժեշտ էր:  
Ահա այստեղ է երկու գործակիցների մի ու-  
րիշ մեծ ծառայութիւնն էլ:

Բնական պիտի լինէր սպասել որ գեռ  
նոր-նոր գրական դարձած լեզուն սկզբում  
պիտի ունենար շատ թերութիւններ, անկա-  
նոնութիւններ, աղքատութիւն: Բայց բոլո-  
րովին հակառակն ենք տեսնում: Սահակ-  
Մեսրոպեան գրաբարը, նա, որ առաջին ան-  
գամ մտաւ գրքի մէջ, իր նմանը չէ ունեցել  
երբէք: Ապացոյց՝ Աստուածաշունչի թարգ-  
մանութիւնը, որի վրա հիացել են նոյն իսկ  
եւրօպացի գիտնականները, անուանելով նը-  
րան թարգմանութիւնների թագուհի: Բնա-  
կան, պարզ, քաղցր ու ինքնատիպ մի լեզու  
է: Անկարելի է ենթադրել որ Սահակն ու  
Մեսրոպը այդ գեղեցկութիւնը, այդ կատա-  
րելութիւնը ձեռք բերած լինեն առանց նոր  
ու նոր տքնութիւնների և երկարատե աշ-  
խատութեան: Եւ զարմանալին այն է, որ լե-  
զուի նոյն գեղեցկութիւնը իւրացրին Սա-  
հակ-Մեսրոպեան դպրոցի առաջին աշակերտ-  
ներից մի քանիսը միայն. այնպէս որ մեր  
գրականութիւնը սկսվեց մի լեզուով, որի

Նմանը մինչև այժմ չէ եղել և որին, այդ իսկ պատճառով, յատկացրել են «ոսկի» անունը, մինչդեռ այդ լեզուն երկրորդ սերունդի, կըրտսեր աշակերտների ժամանակ, արդէն ոսկի լինելուց մի քանի աստիճան ցածացել էր:

Այսպէս մեծ ու հոյակապ էր Սահակ-Մեսրոպեան դաստիարակութեան շէնքը՝ Հայոց լեզուն երկու գործակիցների աշխատութիւնների և խոշոր տաղանդի շնորհիւ ստանում է հրապոյր, թովիչ յատկութիւններ։ Ուրիշ կերպ նա չէր էլ կարող իր իրաւոնքները նուիրագործել, դառնալ մի ազգային սրբութիւն։ Աստիճանաբար զարգացման, քայլ առ քայլ առաջադիմութեան օրէնքը չենք տեսնում մեր գրականութեան պատմութեան սկզբում, այլ բոլորովին հակառակ մի ընթացք։ — սկզբում զարգացման մի բարձը աստիճան, որին հետևում է քայլ առ քայլ անկում։ Բացատրել այդ երևոյթը հազիւ թէ դժուար լինի, եթէ չը մոռանանք այն օրէնքը, որ հաստատում է թէ կեանքն ու գրականութիւնը սերտ կապված են իրար հետ։ Հայ կեանքի քաղաքական պայմանները այնպէս դասաւորվեցին, արեմտեան աշխարհը այնքան հեռացաւ հին ժամանակների լուսաւորութիւնից, որ մեր Սահակ-Մեսրոպեան դարը միշտ մնաց բարձրութեան վրա, միշտ ոսկեդարի պատկերը պահպանեց։ Բայց միշտ

Ա նոյն ժամանակ մենք այն էլ պիտի ունենանք աչքի առաջ, որ այդ դարը տաղանդների դար էր և երբէք հայ կեանքը, մինչեւ տասնութերորդ դարը, այնքան առատ չէր տաղանդներով, ինչպէս Սահակի և Մեսրոպի ժամանակ:

Ինչու էր այսպէս: Կեանքն էլ բնութեան պէս գաղտնիքներ ունի. անշուշտ ամեն մի ծննդարերութիւն պահանջում է յարմար հող և պէտք է ենթադրել որ Սահակ-Մեսրոպեան գործունէութիւնն էր առատ ծննդարերութեան առաջին պատճառը: Այդ տաղանդները ստեղծում էին նոր և նոր երևոյթներ: Թարգմանութիւններով սկսելը թարգմանութիւնների մէջ անշարժանալ չէր նշանակում: Նպաստաւոր միջավայրը պիտի յարուցանէր և ինքնուրոյն մտքեր, եթէ կային այդպիսիները կեանքի մէջ: Եւ յայտնի դարձաւ որ նրանք կան: Եղիշէն ապացոյց է թէ զգացմունքը ինչ սիրուն էջեր կարող է հրաշակերտել նոր գրական լեզուով, իսկ Եզնիկ Կողբացին մի հոյակապ յիշատակարան է թէ սառն գիտնական լրջութիւնը, բարձր ու նուրբ մտածողութիւնը նոյնպէս գեղեցիկ գործիք ունեն հայ լեզուի մէջ, և չէին կարող կաշկանդված մնալ հայ մարդու մէջ, չէին կարող խորթ մնալ հայոց գրականութեան:

Բայց Սահակ-Մեսրոպեան գրականութիւնը, իբրև ժամանակի լուսաւորութեան արդիւնք, ունի և մի շատ բնորոշ յատկութիւն։ Դա զուտ կըօնական մի գրականութիւն է։ Ճանաւորական այն դարում Մեսրոպը, Սահակը և նրանց հետեւյով՝ նրանց աշակերտները համոզված էին որ բոլոր ջանքերի նպատակը պիտի լինի մարդկանց հոգիների փրկութիւնը։ պէտք է որ մարդը եկեղեցուց գուրս էլ ունենայ մտաւոր պէտքեր, — այս հարցը գոյութիւն չը պիտի ունենար, քանի որ ամեն ինչ ամփոփվում էր եկեղեցու մէջ։ Այս պատճառով էլ մեր գրականութիւնը իր առաջին քայլերից ստացաւ մի սաստիկ միակողմանի, նեղ ուղղութիւն։ Եկեղեցին խլացրեց բոլոր միւս կուլտուրական-մտաւոր շահերը։ Եւ այս դրութիւնը իր բնական հիմքերն ունէր։

Մեր տեսութեան մէջ, կարծում ենք, պարզ արտայայտվեց այն դարաւոր իրողութիւնը, որ միայն եկեղեցին էր ձգտում գէպի մտաւորը, գէպի եւրօպականը։ Եթէ նա տիրացաւ գրականութեան, պատճառն այն էր, որ որոնողը, աշխատողը նա էր։ Կենսունակութեան անսպառ աղբիւր էր այդ լուսաւորութիւնը, և եթէ նա վիճակվեց միայն եկեղեցուն, պատճառն այն էր, որ կենսունակ, առաջադիմութիւն սիրող մի միակ

հիմնարկութիւն կար հայոց աշխարհում, և  
դա եկեղեցին էր։ Նա մաքառեց երկար, իր  
աշխոյժով ու մեծ եռանդով անվնաս մնաց  
քաղաքական փոթորիկների մէջ, ուրեմն նա  
էլ պէտք է մնար յաղթանակի տէր, նրան  
պիտի պատկանէր նուաճած մեծ շրջանը  
մարդկանց մագերի մէջ։ Եկեղեցին իրան  
պահպանել էր ուզում. ամեն տեսակ զոհեր  
տուալով իր այդ նպատակին, նա վերջապէս,  
գտաւ իրական միջոցը—Մեսրոպի տառերը։  
Եւ այդ միջոցը նա սկսեց գործադրել լոկ  
իր օգտին։ Հայկական իրականութիւնը, լուռ  
ու ուժասպառ, հնազանդվեց այդ զրութեան։  
Ընդունվեց և սրբագործվեց մի տեսակ օ-  
բէնք՝ մտաւորը, գիրն ու լուսաւորութիւնը  
հոգևորականութեան, իսկ աշխարհային կեան-  
քը—մնացած տարրերին։

Այս խիստ սահմանագծումը տեսեց եր-  
կար գարեր։ Կեանքը և գրականութիւնը  
գնալով աւելի և աւելի հեռացան իրարից,  
կեանքը ընկաւ մթութեան ու անյայտու-  
թեան մէջ, իսկ գրականութիւնը վերացա-  
կաւ, անմարմին դարձաւ, մի նեղ շրջանի  
մարդկանց միայն մատչելի էր, սառն, հիւ-  
թերից ու կենսական ջերմութիւնից զրկված։  
Ճակատագիրը այնպէս էր տնօրինել որ հայ  
ժողովուրդը միշտ շրջապատված լինի այն-  
պիսի մեծ ազգերով, որոնց պետական կազ-

մակերպութիւնը հիմնված էր կրօնի վրա:  
Պարսիկը, բիւզանդացին, ապա մօնգոլը,  
թիւրքը հայի մէջ նախ և առաջ տեսնում  
էին մի յայտնի կրօն, մի գաւանութիւն:  
Հպատակութեան հարցից դուրս էր այս կր-  
րօնական հանգամանքը: Հպատակ լինելը բա-  
ւական չէր: Այս պատճառով էլ հայի համար  
առանձին կարևորութիւն ստացաւ նրա ազ-  
գային եկեղեցին: Ամեն կողմից զօրաւոր  
ձեռքեր քշում էին նրան դէպի եկեղեցին:  
Մէջ տեղ միայն սա էր երևում, սա էր ա-  
հագին զոհեր, արեան գետեր պահանջում իր  
գոյութիւնը պահպանելու համար: Եւ հայը  
իր հոգու և մտքի ամբողջ կորովով փա-  
թաթվում էր իր այդ ազգային հիմնարկու-  
թեան:

Այսպիսով նա նեղ ու սահմանափակ էր  
դառնում իրրե կրօնական մի ժողովուրդ:  
Բայց անուրանալի է որ այդտեղ, եկեղեցու  
շուրջը, նա դարերով դարսում էր իր մտա-  
ւոր կարողութիւնները: Որքան էլ դրանք  
սահմանափակ լինեն, ինչպէս իր լեռներին  
սեղմված, իր երկնքի տակ համախմբված և  
ծանր լուծերի տակ ճնշված մի փոքրիկ ժո-  
ղովրդի միտքն է կարող լինել, այնուամե-  
նայնիւ, բացի եկեղեցուց չը կայ մի այլ  
միջավայր, ուր տեսնէինք թէ ինչպէս էր հայը  
իրրե մտածող, բանաստեղծ, հոետոր, մար-

տնչող, պատմագիր, պայքար մղող, մի գաղափար պաշտպանող։ Միայն եկեղեցին էր ասպարէզը. ամեն մի անհատ, որ իր մէջ մտաւոր գործունէութեան կոչում էր զգում, պիտի այնտեղ գնար, պիտի նրան ծառայէր։ Բացառութիւնների մասին մենք, իհարկէ, չենք խօսում։ Նոյն իսկ կաւելացնենք, որ կրօնական ուղղութեան բացարձակ տիրապետութիւնը ընդհանուր երեսոյթ էր միջնադարեան բոլոր քրիստոնեայ ազգերի մէջ։

Եւ այսպէս ահա, Սահակն ու Մեսրոպը դարաւոր իրականութեան սկիզբն էին դնում։ Նրանց գործը մօտ տասներեք դար անփոփոխ պահպանեց իր կերպարանքը։ մենք կատարելապէս կրօնական ազգ գարձանք, իսկ իբրև աշխարհի քաղաքացիներ՝ կարող էինք այնքան ստանալ մեր լուսաւորութիւնից ու գրականութիւնից, որքան թոյլ էր տալիս եկեղեցու դրութիւնը...

## 9.

**Սահակ-Մեսրոպեան** գործունէութիւնը հելլէ-նականութեան յաղթանակն էր: — Ասիականութեան վերաբերմունքը. Պարսկաստանի առաջին փորձը հայոց թագաւորութիւնը վերջացնելու մասին: — Յաղ-կերտի օրդին Հայաստանում: — Վուամ թագաւորը և փոփոխութիւն պարսկական քաղաքականութեան մէջ: — Միհրներսէի: — Նրա ծրագիրը Հայաստանի մասին: — Պարսկական կուակցութիւն և Արտաշիր թագաւորը: — Մ. Սահակի ապարդիւն ջանքերը: — Ամբաստանութիւններ և գատաստանական կատակերգութիւն պար-սից արքունիքում: — Թագաւորութիւնը վերջացած, և Սահակը կաթողիկոսութիւնից զրկված: — Աղէտի դէմ դուրս է հրաւիրվում կրթական և գրական շարժումը: — Սահակի և Մեսրոպի ջանքերը: — Երկու աննման դոր-ծակիցներ: — Մ. Սահակի մահը: — Մ. Մեսրոպը վախ-ճանգում է վեց ամսից յետոյ:

Մ. Մեսրոպի կեանքը ամբողջապէս չէ ներ-կայացրված: — Նա էլ մարդ էր: — Երկու փաստեր: — Բանութիւնը իրբե քրիստոնէական կրօնի պաշտպան: — Ժամանակի ոգին:

**Բայց իր վերջնական հետևանքներով ի՞նչ էր ներկայացնում Սահակ-Մեսրոպեան շրջանը:**

**Դա նոյն հելլէնականութեան յաղթա-**  
Ա. ՄԵՍՐՈՊ

կան արշաւանքն էր, նոյն եւրօպական ոգու տիրապետութիւնը Հայաստանում։ Ահաւոր, ցնցող պայքարը վերջնական լուծում ստացաւ. Արևմուտքը նուաճեց հայութիւնը, իրանականութեան այդ փոքրիկ կտորը, ձեռքը դնելով նրա մտքի վրա։ Իսկ ի՞նչ էր ասում ինքը, իրանականութիւնը, նա, որ յաղթվողն էր Հայաստանի հողի վրա։

Մենք տեսանք որ մի այդպիսի յեղափոխութեան համար հարկաւոր էր որ Պարսկաստանի ճակատագիրը գտնվէր Յազկերտ Մեղաւորի նման մի թագաւորի ձեռքում։ Քրիստոնէութիւնը համեմատական ազատութիւն էր վայելում—ահա ինչից օգտվեց Արևմուտքը՝ մեր երկիրը խուժելու համար։ Այդ ազատութիւնը այն աստիճանին էր հասնում, որ 410 թւականին բուն Պարսկաստանում ապրող քրիստոնեաները թոյլտւութիւն ստացան ժողով կազմելու պարափակ մայրաքաղաքում և իրանց համար եկեղեցական կազմակերպութիւն ստեղծեցին։ Բայց ուշադրութիւն դարձնենք մի հանգամանքի վրա։ Յազկերտ Մեղաւորը այն պայմանով թոյլ տուեց ժողովը, որ Պարսկաստանում հիմնվող առանձին եկեղեցին ոչինչ կախում չունենայ կ. Պօլսի պատրիարքից։ Նշանակում էր, որ Սասանեանը, որքան էլ Մեղաւոր լինէր, չէր մոռանում աւանդական քաղաքականութիւնը։

Բացի դրանից, Յազկերտը հարկաւոր դէպ-  
քերում զգալ էր տալիս քրիստոնեաներին,  
որ ինքը, այնուամենայնիւ, Պարսկաստանի  
Շահ է և մազդեզական կրօնն է պաշտում:  
Հարկաւոր դէպքերում նա գիտէր և քրիս-  
տոնեաներին հալածել: Այնպէս որ, երբ աս-  
վում է թէ Յազկերտը համբերող էր քրիս-  
տոնեաների վերաբերմամբ, այդ րանը պէտք  
է հասկանալ համեմատական մտքով:

Բայց Յազկերտն էլ իր թագաւորու-  
թեան վերջերում նկատեց թէ ինչ է կատար-  
վում Հայաստանի մէջ: Եթէ նա այդքան ուշ  
էր նկատել, պատճառը, մեր կարծիքով,  
Վուամշապուհ թագաւորի քաղաքական իմաս-  
տութիւնն էր: Նրա մեռնելուց յետոյ այլ ևս  
չը կարողացան թագցնել Հայաստանը պարս-  
կական սուր աչքից. և շուտով Յազկերտը,  
երբ մեռաւ և Վուամշապուհի եղբայր Խոսրո-  
վը, մի փորձ փորձեց, որ նրա յաջորդի հա-  
մար արդէն ղեկավարող սկզբունք դարձաւ:  
Այդ փորձն էր խլել հայոց գահը Արշակու-  
նիների ձեռքից: Այդպէս էլ արաւ նա, Խոս-  
րովից յետոյ թագաւոր նշանակելով իր որդի  
Շապուհին: Ղազար Փարապեցու հաղորդած  
տեղեկութիւններից կարելի է եզրակացնել  
որ Յազկերտը սկսել էր զգալ թէ պարսկա-  
կան շահերի համար որքան վտանգաւոր էր  
այն շարժումը, որ նկատվում էր Հայաստա-

նում: Ամեն տարակուսանքներին վերջ դնելու համար նա ուղարկեց իր որդուն, որպէս զի վերացած լինի հայոց թագաւորութիւնը և երկիրը բոլորովին հպատակվի Պարսկաստանին: Փարպեցին ասում է որ Յազկերտը մտածում էր թէ Շապուհը կը մօտենայ հայ իշխաններին, պարսկական կարգեր կը մտցընէ երկրի մէջ, գուցէ և կը կարողանայ եթէ ոչ վերացնել, գոնէ թուլացնել քրիստոնէութիւնը այնքան, որ հայերը չը միանան յոյների հետ և ապստամբութիւն չը յարուցանեն: Յոյս կար որ հին ժամանակների պէս հայերը և պարսիկները ամուսնութիւններով կը խառնվեն իրար հետ:

Շապուհը չորս տարի թագաւորեց Հայաստանում: Մեր պատմագիրներն ասում են թէ դա մի թոյլ մարդ էր, չը կարողացաւ ոչինչ անել և նոյն իսկ ծաղրի էր ենթարկվում հայ նախարարների կողմից: Բայց ինչ էլ լինի, անկասկած է որ նրա ժամանակ գըլուխ բարձրացրած պիտի լինի պարսկական կուսակցութիւնը: Յազկերտը չէր սխալված իր մի ենթադրութեան մէջ. նրա որդին պիտի գրաւէր հայ իշխանների մեծ մասը իր խնջոյքներով, որսորդական հանդէսներով և խաղերով: Ազնուականութիւնը միշտ այդպէս է եղել, իսկ մասնաւորապէս հայ նախարարները փառամոլութեան քստմնելի օ-

ըինակներ շատ են տուել։ Նրանց համար անշուշտ մեծ պատիւ պիտի լինէր Սասանեան արիւնը կրող թագաւորի ուշադրութեան արժանանալը, մանաւանդ որ այդ Սասանեանը մի օր էլ, իր հօրից յետոյ, պիտի իրանի գահը բարձրանար։

Մենք պատճառ չունենք չը հաւատալու որ հայ նախարարների մէջ այնպիսիներն էլ կային, որոնք ծաղրում էին Յազկերտի որդուն, ատում էին նրան։ Խորենացու բերած մի քանի սիրուն, պատկերաւոր աւանդութիւններից կարելի է հետևեցնել, որ այդպիսիները քրիստոնէութեան կողմնակիցներից էին, գուցէ և Սահակ-Մեսրոպեան կըրթարաններում եղածներից։ Այդպիսիների թիւն էլ քիչ չէր։

Երբ Յազկերտը կորաւ դէպի արևելք գործած իր մի արշաւանքի միջոցին, պարսից հողմորականութիւնը շտապեց յայտարարել թէ նա աստուածներից ստացել է արժանի պատիժ իր մեղքերի համար։ Իսկ ագնուականութիւնը, որի ձեռքի գործն էր, անշուշտ, այդ անյայտացումը, չը կամեցաւ որ իր ատած մարդու սերունդը շարունակէ թագաւորութիւնը։ Շապուհը թողեց Հայաստանը և շտապեց իր հօր թագը ժառանգելու, բայց տեղ հասնելուն պէս սպանվեց։ Սակայն Յազկերտի միւս որդին, Վուամը, կարողա-

ցաւ զէնքի ոյժով տիրանալ հայրական ժառանգութեան։ Ահա այդ միջոցին նախարարական այն կուսակցութիւնը, որ հաւատարիմ էր քրիստոնէութեան, խնդրեց Վուամից որ հայոց թագը նորից շնորհվի Արշակունիներին։ Նա համաձայնվեց. այնպիսի ժամանակ և այնպիսի հանգամանքների մէջ էր գահ բարձրանում, որ չէր կարող չը հասկանալ թէ աւելորդ է առ այժմ բարդութիւններ և անբաւականութիւն յարուցանելը պետութեան մէջ։ Հայաստանում թագաւորեց պատանի Արտաշիրը, Վուամշապուհի որդին։

Վուամը (իսկապէս՝ Բահրամ, որ ստացել էր «Գօր», այսինքն «վայրի էշ» մականունը իրրե ուժեղ և որսասէր մարդ) չը կարողացաւ շարունակել իր հօր քաղաքականութիւնը։ Նա հպատակվեց հոգևորականներին և մեծամեծներին, իսկ դա նշանակում էր պատերազմ յոյների դէմ և քրիստոնեաների հալածանք։ Բայց Բահրամը աջողութիւն չունեցաւ պատերազմի մէջ և ստիպված եղաւ խաղաղութեան գաշինք կապել յոյների հետ և պարտաւորութիւն յանձն առաւ չը հալածել քրիստոնեաներին։ Սակայն այդ խոստումից հայերը մեծ զահ չունեցան։ Պարսից արքունիքը հայերը մեծ զահ չունեցան։ Բայց դրա փոխարէն վճռեց Շնչել նրանց թագաւորութիւնը և դրա համար նախ և առ

ուած դիմեց Հայաստանի պարսկական կուսակցութեան։ Քաղաքական ծրագիրը շատ ճարտար ու խորամանկ հիւսուածք ունէր։ Բիւզանդական կառավարութիւնը առանց այլեայլութեան վերջ դրեց հայկական ինքնավարութեան, իսկ պարսից արքունիքը աւելի քաղաքադիտական նուրբ ձևեր ընտրեց նոյն նպատակի համար։ Պատրաստութիւններ տեսնվեցան, գործը այնպէս սարքվեց, որ գուրս էր գալիս թէ հայերը իրանք չեն ուզում թագաւորութիւն ունենալ։

Այդ ծրագիրը պատիւ էր բերում պետական այն նշանաւոր մարդու խելքին, որի ձեռքումն էր այդ ժամանակ գտնվում Պարսկաստանի կառավարութիւնը և որ ժողովրդի աշքում թագաւորի հեղինակութիւն և փառք էր վայելում։ Դա Միհրներսէն էր, որի անունը կապված է հինգերորդ դարի հայոց ապստամբութեան հետ և որ այնքան լաւ յայտնի է Եղիշէի և Փարպեցու պատմութիւնները կարգացողին։ Միհրներսէնը հազարապետ էր, թագաւորի երկրորդը. Վռամը երբ արշաւանքներ սկսեց դէպի արևելեան հեռու կողմեր, իր գահի պահպանութիւնը նրան յանձնեց։ Միհրներսէնի հաւատարմութիւնը և քաղաքական մեծ իմաստութիւնը գեռ Յազկերտ առաջինին էին յայտնի, որի ժամանակ էլ նա սկսեց իր պետական ծա-

ուայութիւնը։ Իսկ թէ ինչ մեծ հոչակ էր վայելում պարսից մեծ վէզիրը քաղաքական աշխարհում, այդ երևում է այն շքեղ ընդունելութիւնից, որ գտաւ նա Բիւզանդիայում, երբ Վռամ թագաւորի յանձնարարութեամբ գնաց բանակցելու յունական արքունիքի հետ։ Եղիշէն ասում է որ պարսից թագաւորներն անգամ հպատակվում էին Միհրներսէնի կամքին և ցուցմունքներին։ Դա, ուրեմն, պարսիկ ազնուականութեան ամենառուժեղ, խելօք ու հեղինակաւոր արտայայտութիւնն էր։ Եւ ահա այդպիսի մի ճարտար մարդու ձեռքին էր Հայաստանի հարցը։ Նրա համար ոչինչ բան էր խաղալիք գարձնել հայ անմիաբան, փառամոլ նախարարներին։

Հարցը կապվեց Արտաշիր թագաւորի անձնաւորութեան հետ։ Նորից Լուսաւորչի տոհմի առաջ երեսն եկան բողոքաւորներ։ Պարսկական կուսակցութիւնը գտնում էր որ երիտասարդ թագաւորը անբարոյական կեանք է վարում։ Դարձեալ տգէտ ինքնահաւանութիւնը, ինչպէս Ներսէս Մեծի ժամանակ, կարծում էր թէ երբ մի թագաւոր վատ է, պէտք է ոչնչացնել թագաւորական գահը։ Նախարարների ամենագլխաւոր մեղադրանքն այն էր թէ Արտաշիրը իգամոլ է։ Բայց եթէ իգամոլութեան համար պէտք էր

մէկին պատժել, ամենից առաջ դա պիտի լինէր ինքը, Բահրամ-Գօրը, որ յայտնի էր իրրե չափազանց իգամոլ մարդ:

Անարժան, ստոր կատակերգութիւնը ծածկվում էր այդպիսի մի թափանցիկ պատրուակով: Պարսից արքունիքի փշրանքներին աչք դրած նախարարները կամենում էին որ այդ ինտրիգի մէջ դեր կատարէ և հայոց կաթողիկոսը: Օրինականութիւնը պէտք է պահպանված լինէր անթերի: Քրիստոնէութիւնը խիստ բարոյականութիւն էր պահանջում. և ահա եկեղեցական բարձր իշխանութիւնը պիտի մեղադրողի դեր յանձն առնէր, իր ձեռքով վաւերացնէր թագաւորի գահընկէցութիւնը: Հետևանքն այն կը լինէր, որ հայոց աշխարհը առանց ցնցումների կը հաշտվէր իրողութեան հետ և Միհրներսէնը ցոյց կը տար որ պետական մարդիկ միայն զէնքով ու բռնութեամբ չեն գործում, այլ շատ անզամ մեծ հարցերը վճռում են խելքով և ճարպիկութեամբ: Կաթողիկոսին դրաւելու համար՝ ստոր դաւադրութիւնը հագնում է կեղծաւորութեան դիմակ. պարսկասէր իշխանները իդէալական քրիստոնեաներ են ձեանում, խիստ նախանձաւոր կրօնի մաքրութեան համար: Նրանք յայտնում են Սահակին թէ իրանք զուրկ են մնում հազորդութիւնից, քանի որ անբարոյական թա-

գաւորի ձեռքի տակ են գտնվում, քանի որ  
իրանք են պատասխանատու նրա չար մեղ-  
քերի համար:

Ս. Սահակը աւելի ծանր դրութեան  
մէջ էր, քան նրա հոչակաւոր հայրը: Ներ-  
սէսը համեմատաբար անկախ և ազատ երկ-  
րի մէջ էր ապրում, մինչդեռ նրա որդին յու-  
նական բաժանումով դարձել էր պարսից տէ-  
րութեան հպատակ: Չը նայած այս բանին,  
ս. Սահակը բացէրաց հրաժարվեց գաւա-  
դրութիւնից: Նա ամեննին չէր հերքում որ  
Արտաշիրը արատաւոր մարդ է, նա ինքն էլ  
գիտէր որ բարոյական շատ պակասութիւն-  
ներ ունի վերջին Արշակունին: Բայց հարց  
էր՝ Իվ պիտի դատէ նրան: Նախարարները  
ցոյց էին տալիս Վուամին, և Սահակը արդէն  
հասկացել էր որ դա արդարութեան դատ  
չէր, այլ պատրուակ միայն՝ քաղաքական նը-  
պատակ իրագործելու համար:

Իզուր անցան նրա խրատները, իզուր  
նա համոզում էր թէ պարսից դատաստանին  
չը պէտք է դիմել: Նախարարները, ինչպէս  
յատուկ է դաւագիրներին, սպառնացին ս.  
Սահակին թէ նրան էլ պիտի խառնեն մե-  
ղադրանքների մէջ և գնացին պարսից դու-  
ռը: Եթէ հարկաւոր էր վկայ և եկեղեցու  
կողմից, այդ վկան էլ գտնվեց—Սուրմակ ա-  
նունով մի վատ հոգևորական, որ գնաց մատ-

նութիւններ անելու, դնելով պայման որ փոխարինութիւնը պիտի լինի իր կաթողիկոսանալը:

Վռամը, կամ աւելի ճիշտ ասած, Միհրներսէհը, ձեռքին գեղեցիկ առիթ ունէր: Դատաւորի պաշտօն ստանձնելով, նա Հայտատանից կանչեց Արտաշիր թագաւորին և Սահակ կաթողիկոսին: Բացվեց կատակերգութեան վերջին տեսարանը, որ ողբերգութեան փոխվեց: Հայոց թագաւորը իրան պաշտպանում էր արիութեամբ, նա իրան մեղաւոր չէր համարում և բացարձակ յայտնում էր թէ ինքը քաղաքական ինտրիգի զոհ է: Սահակը պարսից մայրաքաղաքում իմացաւ որ կարելի է միայն վատ վկայութիւն տալ Արտաշիրի մասին, ուրիշ տեսակ վկայութիւնը պետական անհաւատարմութիւն պիտի համարվի: Եւ նա վճռեց ոչինչ չը խօսել, անշուշտ չը կամենալով վտանգի ենթարկել եկեղեցին և մանաւանդ կուսաւորչի աթոռը:

Բայց սա միակ մեղքն էր, որ գործեց ա. Սահակը արդարութեան դէմ: Ամեն ինչ պարզվեց, երբ նրա մօտ եկաւ Վռամի պալատական բարձր պաշտօնեաներից մէկը, հետը ունենալով Միհրներսէհի հրահանգները: Պաշտօնեան Շահի կողմից մեծամեծ պարզմներ, փառք և իշխանութիւն խոստա-

ցաւ հայոց կաթողիկոսին, եթէ նա միանար դաւադիր նախարարների հետ. իսկ եթէ չը միանար, պիտի կորցնէր նոյն իսկ կաթողիկոսական իշխանութիւնը։ Ահա որքան անաշառ էր Բահրամ-Գօրը։

Սահակը, առանց տատանվելու, ընդունեց երկրորդ վիճակը. նրա պէս մարդը չէր կարող, իհարկէ, որ և է համակրութիւն ունենալ դէպի դաւադիրների և մատնիչների ստոր գործը։ Եւ կատարվեց այն, ինչ պատրաստվում էր պարսից արքունիքի խորհրդաւոր յարկի տակ։ Իբր թէ հիմնվելով հայ նախարարների ցանկութեան վրա, որոնք բացարձակ յայտնեցին թէ իրանք թագաւոր չեն ուզում, այլ խնդրում են մի պարսիկ իշխանաւոր ուղարկել Հայաստանը կառավարելու համար, Վուամը ոչնչացած յայտարարեց հայ Արշակունիների թաղաւորութիւնը։ Հաւատարիմ մնալով իր սպառնալիքին, նա միաժամանակ Մահակին էլ կաթողիկոսական իշխանութիւնից զրկեց։ Եղաւ դատաստան այն զերջինի համար, ինչ էր նրա մեղքը, — մթնք չը գիտենք։ Բացի յունասիրութիւնից՝ այդ հեզ և առաքինի հոգևորականը, որքան թոյլ են տալիս դատել նրա կենսագրական հանգամանքները, ոչինչ մնաս չէր հասցրել պարսից կառավարութեան, Բայց չըմոռանանք որ դաւադրութիւնը պարտաւոր էր տեղ

պատրաստել դաւաճանի համար։ Սուրմակը կաթողիկոսութիւն ստացաւ։ Մրանով արդէն շատ բան կարելի է բացատրել։

Այս բոլորը տեղի ունեցաւ 429 թւականին \*): Պարսկական դատաստանը փակեց իր դոները և իրականութեան մէջ մնացին. մի թագազուրկ թագաւոր, մի անաթոռ կաթողիկոս, մի պարսիկ մարզպան և նրա հետ՝ ընծաներով ու փառքով բեռնաւորված նախարարները, մի հատ էլ Սուրմակ։ Բուն շարժառիթը, որ մի այդպիսի յեղափոխութիւն պատճուեց, այդ ընծաները, այդ պատիւներն էին. Արտաշիրի կնամոլութիւնը մի թշուառ պատրուակ էր։ Դժուար է երեակայել աւելի անպատիւ, աւելի ստոր անկում մի պետական կազմակերպութեան համար։

Եւ այս անկումը, բարոյական այս մնանկութիւնը տեղի էր ունենում մի ժամանակ, երբ հայոց աշխարհում նոր հաստատվել էր ժողովրդական լուսաւորութիւնը։ Ուղիղ քառորդ դար էր, ինչ այդ երկիրը ստացել էր զիր ու դպրոց։ Մտաւոր առաջադիմութիւնը մի հսկայական ոյժ է ամեն մի ժողովրդի համար։ Նա բերում է գիտակցութիւն, հասա-

\*) Մեր ազգային աղբիւրները շատ խառն ու անհաստատ ժամանակագրութիւն են տալիս։ Մենք հետեւցինք գերմանացի գիտնական նէօլդէկէի ժամանակագրութեան։

բակական գաղափարների բարդաւաճում, պատրաստում է պարտաճանաչ քաղաքացիներ։ Իսկ մեզանում մտաւոր վերածնութեան հետ կապված է քաղաքական անկումը։ Քառորդ դարը, ճիշտ է, շատ աննշան ժամանակ է մի ժողովուրդ հիմնովին կրթելու համար, բայց մենք սխալված կը լինենք, եթէ միայն այդքանն ասենք այդ ժամանակամիջոցի մասին։ Քսան և հինգ տարին բաւական էր, որ ժողովրդի մէջ այնքան գիտակցութիւն զարգանար, որ այնպիսի մի ծանր դրաման, ինչպէս էր Արշակունիների ոչնչացումը, գունէ ցնցում ու ցաւակցութիւն պատճառէր ժողովրդին։ Ըստ երևոյթին, այդպիսի բան տեղի չունեցաւ, քաղաքական մահացումը անտարբերութեան հանդիպեց։

Այս իրողութիւնը ցնցում պիտի պատճառէր Սահակին և Մեսրոպին։ Հարուածը բաց արաւ նրանց առջև փորված խորխորատը, և նրանք անշուշտ այժմ աւելի պարզ ըմբռնեցին իրանց դպրոցների անկատարութիւնը։ Տարրական կրթութիւնը, որ տալիս էին այդ դպրոցները, դեռ բաւական չէին. գրագիտութիւնը դեռ լուսաւորութիւն չէ։ Եւ ահա այդ ցնցող աղէտից յետոյ է, որ երկու ընկերները ուղարկում են իրանց աշակերտներին արտասահման։ Պէտք էր բարձրացնել լուսաւորութեան մակերեսոյթը։ Մենք

տեսանք որ այսպէս պահանջում էին զուտ  
կրօնական շահերը: Բայց այս քաղաքական  
հանգամանքն էլ նոյն անհրաժեշտութիւնը  
պիտի ցոյց տար: Մահակի համար արդէն  
պարզված էր թէ ինչ է պատրաստում Միհր-  
ներսէնը: Առաջին քայլը թագաւորական  
դահն էր, երկրորդը պիտի լինէր եկեղեցին:  
Եթէ եկեղեցին առաջինը չը դառաւ, պատ-  
ճառն այն էր, որ նրա հետ կուելը աւելի  
դժուար էր: Հայաստանի ֆէօդալական կազ-  
մակերպութիւնը պետութեան թուլութիւնն  
էր, որ հեշտութեամբ դէպի խորտակում տա-  
րաւ, մինչդեռ եկեղեցին կազմում էր ուժեղ  
միապետութիւն: Երբէք հնարաւոր չեղաւ,  
որ բազմաթիւ կալուածատիրական ինքնա-  
գլխութիւնները համախմբվեն ընդհանուր  
պետական հասկացողութեան շուրջը. բայց  
եկեղեցին, ընդհակառակն, կենտրօնացման  
սիստեմ էր և իր այդ կազմակերպութիւնը  
աւելի ուժեղացնելու, միաձոյլ դարձնելու  
համար ունէր այնպիսի հզօր գործիք, ինչպի-  
սին է լուսաւորութիւնը:

Մահակն ու Մեսրոպը զգացին որ հար-  
կաւոր է պատրաստել ոյժեր Միհրներսէնի  
ծրագրած երկրորդ հարուածի դէմ: Եւ նը-  
րանք, ինչպէս տեսանք, զարմանալի հեռա-  
տեսութեամբ առաջ տարան իրանց պատ-  
րաստութիւնները: Ժամանակի բարձր ուս-

ման տէր մարգիկ էին հարկաւոր. — ահա  
գաղտնիքը: Թագաւորութեան անկումից յե-  
տոյ նրանց եռանդը բազմապատկվում է:

Թէս կաթողիկոսական իշխանութիւնից  
հեռացել էր Սահակը, բայց դա չէր նշանա-  
կում թէ նա միանգամայն հեռացրվել էր բո-  
լոր ասպարէջներից: Խորենացին աւանդում  
է որ նրա ձեռքին մնացել էին հովուապետի  
բարձր իրաւունքները և միայն եկեղեցական  
վարչութիւնն էր առնված նրանից: Ինչ էլ  
լինէր սակայն, փաստ է որ ոչ ոք չարգելեց  
նրան շարունակել գրական և դաստիարակ-  
չական գործունէութիւնը: Առաջին կամ ա-  
ւագ աշակերտները արևմուտքից վերադար-  
ձան, ինչպէս ենթադրում են, 434—435 թւա-  
կաններին: Գրաւոր աշխատութիւնները նոր,  
կրկնապատկված եռանդով առաջ գնացին.  
հմուտ աշխատակիցներ կային, Աստուածա-  
շունչի թարգմանութիւնը նորից կատարվեց  
Յունաստանից բերած ընտիր օրինակների  
վրա: Թարգմանվեցին և ուրիշ շատ գրուածք-  
ներ: Այդ ժամանակ էլ պիտի Արևմուտք ճա-  
նապարհված լինեն երկրորդ կամ կրտսեր  
աշակերտները:

Կրթական թափը գնալով սաստկանում  
էր: Կարծես զգում էին որ ժամանակ քիչ է  
մնացել: Ս. Սահակը, իբրև Լուսաւորչի տոհ-  
մի ներկայացուցիչ և հոգևոր իշխանութեան

գլուխ, շատ անգամ էր ստիպված լինում ընդհատել իր գրական գործունէութիւնը. քաղաքական և վարչական հոգսերը չէին թոյլ տալիս որ նա լինի բացառապէս այդ գործին նուիրված մի աշխատաւոր: Միայն դըժքախտ Արտաշիրի պատմութիւնը հրքան հոգսեր ու կակիծներ պատճառեց նրան, որքան ժամանակ խլեց նրանից: Ս. Մեսրոպը, ինչպէս երևում է, այդպիսի հոգսեր չունէր կամ շատ քիչ ունէր: Գոնէ նրան մենք չենք տեսնում այն դէպքերի մէջ, որոնք տակն ու վրա էին անում հայոց աշխարհ: Երեխ նա երբէք չը թողեց իր ուսուցչական պաշտօնը և ամեն տեսակ հանգամանքների մէջ անփոփոխ նոյնն էր մնում—«ուսուցանող հայոց աշխարհին», ինչպէս անուանում են նրան մեր մատենագիրները: Առաւելապէս այդ էր նրա գործը. գրական-թարգմանչական գործունէութեան մէջ ս. Մահակը նրանից աւելի շատ բան արաւ:

Պէտք է աւելացնել որ այդպիսի դործիչն էլ չափազանց հարկաւոր էր ժողովը դին: Մեսրոպը ճգնաւոր-ուսուցիչ էր սկըզբից, և այդպէս էլ մնաց: Կորիւնն ասում է թէ նա անչափ բազմացրեց վանական հոգեորականութիւնը և արեղաներով լցրեց սար ու ձոր: Գրագիտութիւն տարածելու միջոցը միայն ժողովրդական դպրոցը չէր.

Ս. ՄեսրոՊ

15

այստեղ էլ, այս ճգնաւորական համայնքի մէջ, նոյն գիրն ու դպրութիւնն էին գործում և եկեղեցու համար բանակ էին պատրաստում: Ինքը, Մեսրոպը, շարունակ շրջում էր այս ու այն կողմ, այցելում էր իր անապատականներին, ապրում էր նրանց հետ: Բայց անապատի և ամայութեան մարդ նա երբէք չէր եղել. կանոնաւոր տեղեկութիւններ էր ստանում իր դպրոցների մասին և շտապում էր համնել այնտեղ, ուր հարկաւոր էր լինում նրա ներկայութիւնը:

Կաթողիկոսութիւնից հեռացած Սահակը, ի հարկէ, աւելի շատ յարմարութիւններ ու ժամանակ ունէր իր մտերիմ ընկերակցի հետ գործելու համար: Երկու գաղափարակիցներ, երկու խոշոր խելքեր, նրանք լծակիցներ էին մի մշտատե, սուրբ աշխատութեան մէջ: Ոչինչ բան չը կարողացաւ խախտել նրանց ջերմ սրտակցութիւնը, քանի որ կենդանի էին երկուար: Շատ քիչ կարելի է գտնել այդպիսի իդէալական եղբայրութիւն երկու մարդու մէջ: Միշտ միասին, միշտ անուններով և գործով միացած:

Եւ ահա 436 թւականի սեպտեմբերի 7-ին, Բագրեանդի Բլուր գիւղում վախճանվեց ս. Սահակը, մենակ թողնելով հայոց ծերունի ուսուցչին: Հասկանալի է մենակ մնացածի դրութիւնը. նա անդադար ողբում էր

ամբողջ հայ աղքի այդ մեծ կորուստը, դառն  
կսկիծով էր անց կացնում իր տիսուր, միայ-  
նակ օրերը։ Նրան յանձնվեց կաթողիկոսա-  
կան տեղապահի պաշտօնը, և նա աշխատում  
էր որ ու գիշեր, որ մեծ նեցուկից զրկված  
եկեղեցին չը մոռանայ այն ճանապարհը,  
որ գծված էր այնքան երկարատև ու մեծ  
ջանքերով, այնքան զոհերով։ Բայց մենակու-  
թիւնը յազթեց նրան. Մահակի մահից հազիւ-  
հինգ ամիս անցած՝ նա էլ շտապեց գնալ իր  
ընկերի մօտ։

Մահվան անկողնում պառկած ուսու-  
ցիչը չը մոռացաւ որ այս աշխարհի վրա թող-  
նում է մի նոր, դեռ խնամքի և հոգացողու-  
թեան կարօտ գործ։ Քանի շունչը բերանումն  
էր, իր աշակերտներին ու մերձաւորներին  
խրատում էր աշխատել, անդադար աշխատել։

Հոգմորական աշակերտների հետ՝ մեռ-  
նողին շրջապատել էին և Վահան Ամատու-  
նին ու Հմայեակ Մամիկոնեանը...

---

Մեծագործութիւնները երախտագիտու-  
թիւն են պահանջում։ Մեծագործ անձնաւո-  
րութիւնները կամ սուրբեր են, կամ հերոս-  
ներ ապագայ սերունդների համար և նրանց  
պակասութիւնները չնշվում, մոռացվում են  
առաջին իսկ երախտագէտ սերունդի մտքից։

Կորիւնը ամեն տեղ ներկայացնում է իր ուսուցչին իբրև մի հրեշտակ, որի վրա ոչ մի բիծ չէ թողել մարդկային պակասութիւններից և ոչ մէկը։ Սակայն պատմութեան պարտաւորութիւնն է ցոյց տալ որ հրեշտակները չեն կարգադրում մարդկութեան գործերը, այլ մեր աշխարհի ծնունդ, մեր աշխարհի կարգերին ու բարքերին ենթարկված մահկանացուները, մարդիկ, որոնք աստուածային կայծեր կրելով իրանց մէջ, կրում են և մեր բնութեան յատուկ կրքերն ու սխալները։ Նախապաշարված, հրաշճներով անված կրօնական հայեցողութիւնը սովոր է ամեն մի փայլուն, արտակարգ երևոյթ վերագրել երկնքին, նախասահմանութեան և յայտնութեան սկզբունքներին հետևելով ասել՝ թէ երկինքը կամեցաւ, և այդպէս եղաւ, իսկ եթէ չը կամենար՝ չէր լինի։ Մինչդեռ գիտութիւնը, ընդհակառակն, ամեն մի մեծագործութեան հեղինակի մէջ աշխատում է տեսնել մարդ, ժամանակի, միջավայրի, հանգամանքների արդիւնք, արտայայտութիւն ներկայացնող մարդ։

«Ես մարդ եմ, և ինձ խորթ չէ ոչինչ մարդկային բան»։ Այսպէս աւելի լաւ է, աւելի բնական։ Այսպիսի լոյսի մէջ երևացող հերոսը կարող է ոգեսրել, դէպի մեծագործութիւն տանել մարդկանց, քանի որ նա

Երկնքում բնակվող անմարմին հրեշտակ չէ, որի զուգակիցը չը կայ իրականութեան մէջ, այլ մարդ է, որին կարող է նմանվել ամեն մարդ:

Մեր Մեսրոպի մասին, տարաբախտաբար, չը կան այնքան մանրամասնութիւններ, որոնք թոյլ տային մեզ մտնել նրա կեանքի բոլոր խորշերի մէջ: Սակայն նրա հիացած աշակերտը իր ներբողի մէջ թողել է երկու փաստ, որոնց վրա պէտք է ուշադրութիւն դարձնել:

Դրանցից մէկը մենք արդէն յիշել ենք — հալածանքը հեթանոսութեան դէմ, Գողթան գաւառում: Կորիւնը, ինչպէս տեսանք, մութ այլաբանութիւններով է յիշատակում այդ եղելութիւնը: Բայց երկրորդ փաստը արդէն միանգամայն պարզ է: Մեսրոպին, իբրև քրիստոնեայ միսիօնարի, յանձնված էր քննել և վերացնել «բարբարիանոս» կոչված աղանդը: Զը կարողանալով խօսքի, համոզմունքի զօրութեամբ հասնել նպատակին, նա դիմեց բռնութիւնների: «Թշուառացնող գաւաղանը գործի դրեց», ասում է կորիւնը. «ամենածանր պատուհասներ բերեց նրանց գլխին բանտերի, տանջանքների և գելարանների մէջ. իսկ երբ այդ էլ չօգնեց, ջարդելով, խանձելով, մրոտելով և տեսակ տեսակ խայտառակելով, դուրս վռնդեցին աշխարհից»:

Կարծէք ասորական սեպաձև արձանա-  
գրութիւն էք կարդում և խսկոյն ասում էք  
որ այս անգթութիւնները, որքան էլ բարե-  
պաշտական մտքով գործադրված լինեն, չեն  
կարող արդարանալ քրիստոնէութեան վեհ  
գաղափարի առաջ: Միիթարականը այս տը-  
խուր պատմութեան մէջ այն է, որ անգթու-  
թիւնը Մեսրոպի անձնական յատկութիւննե-  
րից չէր, այլ բղխում էր ժամանակի հասկա-  
ցողութիւններից, որոնք ընդհանուր էին  
ամեն տեղ:

Մեզ հասել է և մի ուրիշ փաստ, ուր  
Մեսրոպի հետ նոյն սկզբունքը պաշտպանող  
է արդէն և Սահակը: Պրօկլ եպիսկոպոսը,  
իմանալով որ նեստօրական մի քանի վար-  
դապետներ Հայաստան են գնացել, թուղթ է  
գրում Սահակին և Մեսրոպին, խնդրելով  
նրանց զգուշանալ այդ հերետիկոսների վար-  
դապետութիւնից: Իրանց պատասխանի մէջ  
Սահակն ու Մեսրոպը յայտնում են Պրօկլին  
որ ուղիղ հաւատից խոտորվածներին նրանք  
չեն խնայում, ոչ միայն հալածում են, այլ և  
մեծամեծ պատիժների ու պատուհասների  
են ենթարկում: Նոյն միջոցը, և աւելի մեծ  
չափերով, նրանք առաջարկում են Պրօկլ ե-  
պիսկոպոսին, որ աւելի մեծ իշխանութիւն  
ունի, ուրեմն և պարտաւոր է անողղափառ  
քրիստոնեաններին մէջ տեղից վերացնել: Նը-

րանք նոյն իսկ պնդում են որ յունաց թագաւորը անպատճառ պատիժներ ու պատուհաս հանէ այդպիսիների դէմ:

Ուսուցիչների հայեացքը ժառանգեցին և աշակերտները: Եթէ չը լինէր այդպիսի հայեացք, հինգերորդ դարի կրօնական ապրուտամբութիւնը չէր գործադրի այնպիսի անողորմ սարսափահար միջոցներ:

Եւ արդեօք միայն հայոց աշխարհնմւմ որոնենք այսպիսի հայեացք: Ամբողջ Արևմուտքը լիքն է նոյնը հաստատող փաստերով: Յիշենք Եփեսոսի եկեղեցական ժողովը, ուր հաւաքված եկեղեցական նշանաւոր հայրերը պիտի վճռէին երկնքի հարցերը, բայց զզուելի բռնութիւններ, բարբարոսական արարքներ էին գործադրում իրանց հակառակորդների դէմ:

Հայեացքը ընդհանուր էր:  
Ամենքը, այս, մարդիկ էին:

---



**ԶՈՐՈՅԱՆ ՄԱՍ**

---

**ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ**



## Ա.

**Սահակ-Մեսրոպեան** գործունէութեան շաբու-  
նակութիւնը:—Յազկերտ երկրորդ և **Միհրներսէհի**  
կառավարութիւնը:—Քրիստոնէութիւնը ջնջելու ծրա-  
գիր:—Հայերի պետական հաւատարմութիւնը:

---

**Ա. Սահակի և ս. Մեսրոպի մահը հինգ-**  
երորդ դարի շարժման վերջաբանը չէր: Դա  
վերջ էր նիւթական գոյութեան, մսի և ոս-  
կորների համար միայն, մինչդեռ այդ երկու  
անունները ամբողջովին գաղափար են, որ  
մոռացութեան դերեզման չէ ճանաչում, որ  
արհամարհում է ժամանակի ու տարածու-  
թեան ամեն ինչ կլանող, անյայտացնող ոյժը:  
Այդ գաղափարի համար ոչինչ ընդհատում  
չէին այն երկու գերեզմանները, որոնցից  
մէկը փորվեց Աշտիշատում, միւսը Օշակա-  
նում:

**Մենք դաղափարի ծնունդը, սկզբնա-**  
կան շրջանը տեսանք, բայց պիտի տեսնենք  
և նրա գարդացումը, յաղթանակը: Հասարա-

կական գործը գնահատել կարելի է նրա հետևանքներով. այլապէս՝ պատկերը դժգոյն ու միակողմանի կը լինի: Եւ Սահակ-Մեսրոպեան գործունէութեան հետևանքները ուրոնելու համար հարկ չը կայ շատ հեռու գնալ: Մեր պատմութիւնը այստեղ նմանը չունեցող մի հրաշալի տեսարան է տալիս: Քառասուն—քառասունուհինգ տարի էր, ինչ Հայաստանում տառեր ու գրքեր կային: Այս կարճ միջոցում երկրի եթէ ոչ ամբողջութիւնը, գոնէ նրա մեծ, նշանաւոր մասը արդէն բոլորովին այլ մտաւոր երևոյթ է ներկայացնում: Այնքան նա պատրաստված է, այնքան բարձր գիտակցութեան է հասել, որ նահատակվում է գաղափարի վրա: Դեռ մամուռ չէր բուսել Սահակի և Մեսրոպի գերեզմանների վրա, երբ նրանց դպրոցները ահաւոր պատերազմ յայտարարեցին հինաւուրց իրանականութեան դէմ: Ահա կեանքի մէջ մտած այդ նոր ոյժն է, որի հետ պէտք է ծանօթանալ՝ տառերի գիւտի և գրական շարժման ամբողջ նշանակութիւնը հասկանալու համար:

---

Աշտիշատի և Օշականի հողերը գերեզմաններ բացին երկու մեծ գործիչների համար մի այնպիսի ժամանակ, որ խորհրդա-

ւոր էր՝ մանաւանդ հայոց պատմութեան տես-  
սակէտից։ Երկրորդ տարին էր, ինչ Սասա-  
նեանների գահն էր բարձրացել Բահրամ-  
Գօրի որդին, Յազկերտ երկրորդը։

Պարսից հոգևորականութիւնը և աղ-  
նուականները չէին կարող դժգոհ լինել այս  
թագաւորից։ Յազկերտը գնաց իր հօր ճա-  
նապարհով, և արքունիքը հրամայողի, կար-  
գադրողի դերում մնաց։ Յազկերտը, բացի  
կրօնական հնամոլ ֆանատիկութեան գոր-  
ծիք դառնալուց, անձնական վատ հակումներ  
էլ ունէր։ Դա մէկն էր արևելեան արիւն-  
ըուուշտ բռնակալներից։ Պատմվում է որ նա  
ամուսնացաւ իր հարազատ աղջկայ հետ-  
այսպիսի խառնակութիւններ հաճութեամբ  
էր թոյլադրում մազդեզական կրօնը, բայց  
Յազկերտը յետոյ սպանեց իր այդ դուստր-  
կնոջը—ահա ինչը չը կար մազդեզականու-  
թեան և մարդկային խղճի մէջ։

Բահրամ-Գօրի վերջին տարիներում  
Միհրներսէհը հրաժարական էր տուել և քաշ-  
վել իր մեծ կալուածը, ուր ուզում էր խա-  
ղաղ կերպով ապրել մինչև կեանքի վերջը։  
Բայց Յազկերտը, թագաւոր դառնալուն պէս,  
իսկոյն կանչեց նրան իր մօտ. և նա նորից  
իր ձեռքն առաւ կառավարութեան ղեկը։  
Եթէ Բահրամը պետական գործերից աւելի  
սիրում էր որսորդութիւնն ու հարեմական

զուարճութիւնները, նրա որդին ուղղահաւատ Սասանեան համդիսացաւ և վերանորոգեց Շապուհ երկրորդի օրերը։ Պատերազմ յոյների դէմ—նրա առաջին գործերից մէկը եղաւ. նա արշաւեց դէպի բիւզանդական սահմանները, սակայն իսկական պատերազմ չը սկսվեց և ընդհարումը վերջացաւ հաշտութեամբ։ Պարսկաստանը վտանգի էր ենթարկված արևելեան կողմից. հեփթաղները անհանգիստ, կուարար թշնամիներ էին, և Յազկերտը նրանց դէմ գնաց, հանգիստ թողնելով յոյներին։ Բայց հեփթաղները արգելք չը դարձան որ Միհրներսէհը առաջ տանէ իր քազաքականութիւնը քրիստոնեաների վերաբերմամբ։ Պարսկաստանը ունէր շատ քրիստոնեայ հպատակներ։ Ծրագրված էր ամենքին ձուլել պարսիկների հետ, վերացնելով ամենազօրեղ խոչընդոտը—քրիստոնէութիւնը։

Հայերը պարսկական պետութեան վերաբերմամբ որ և է անհաւատարմութիւն չէին ցոյց տուել։ Եւ ինչ խօսք կարող էր լինել անհաւատարմութեան մասին, երբ երկիրը ինքն էր իր հարազատ թագաւորին հեռացրել և իր վիճակը յանձնել պարսիկներին։ Հայաստանի հարկը կանոնաւոր կերպով գնում էր Պարսկաստան. ամեն հարկաւոր դէպրում հայ հեծելազօրքը, նախարար-

Ների առաջնորդութեամբ, շտապում էր պարսկից բանակի հետ միանալու և Պարսկաստանի թշնամիների դէմ կուելու։ Հայոց այդ զօրքը մեծ պատիւ էր ձեռք բերել պարսիկների մէջ իր քաջութիւններով։ ամեն անգամ, երբ նա գնում էր Պարսկաստան, թագաւորը՝ իր մօտիկ պաշտօնեաներից մէկին ուղարկում էր նրան դիմաւորելու և արքայական ողջոյնները հաղորդելու։ իսկ երբ տեղ էր հասնում, թագաւորը ինքը զօրահանդէս էր անում։ Հայ իշխաններից շատերը առանձին պատիւներ էին ստանում պատերազմի մէջ իրանց ցոյց տուած քաջութեան համար։ Վարդան Մամիկոնեանի զինուորական ծառայութիւնների մէջ յիշված է նրա քաջութիւնը Մերվի մօտ տեղի ունեցած պատերազմում։ Ահա մինչև ուր էին գնում հայ զօրքերը Պարսկաստանի համար իրանց արիւնը թափելու։

Մի այսպիսի հպատակութիւնը, ըստ երևոյթին, պիտի գոհացնէր պարսիկերին ամեն կողմով։ Բայց հարցեր ստեղծելը ոչինչ դժուարութիւն չունէր Միհրներսէհի պէս մի քաղաքագէտի համար։ Բոնանալ հպատակների ներքին համոզմունքների վրա, կատարելապէս պարսկացնել նրանց—այս էր Միհրներսէհի ձգտումը։ Յազկերտը միանգամայն ենթարկվեց նրան։ Գործում էր հին կասկա-

ծը, որ այնքան աղէտներ էր պատճառել հայերին—կրօնակցութիւնը յոյների հետ իբրև քաղաքական վտանգ։ Հայերին առաջարկվում էր ընդունել պարսկական մազդեզականութիւնը, դա միակ միջոցն էր պարսից կառավարութեան վստահութիւնը գրաւելու համար։ Հպատակական ուրիշ պարտաւորութիւնները ոչինչ են յայտարարվում—հարկեր տալը, պարսից բանակին ծառայելը. և այլն։

Այս առաջարկութիւնը յայտարարվեց իբրև թագաւորի կամք։ Եւ Միհրներսէնի կառավարութիւնը պատրաստութիւններ էր տեսնում այդ կամքը անպատճառ իրագործելու համար։

Բ.

Միհներսէնի . առաջարկութիւնը: — Սահակ-  
Մեսրոպեան դպրոցները Արտաշատի ժողովում:—  
Մերժողական պատասխան:—Հայերը ինքնաբերաբար  
հրաժարվում են ասիականութիւնից:—Ինքնազոհու-  
թեան պատրաստականութիւն:—Երկիրը մեծ արկածի  
մէջ:—Դրութեան գնահատութիւնը:

---

Ակզրում բոնութիւն չը գործադրվեց:  
Միհներսէնը շատ ճարտար մի հիւսուածք  
էր ստեղծել՝ հարցը խաղաղ կերպով, լոկ  
քաղաքական ճարպիկութեամբ վճռելու հա-  
մար: Նա պաշտօնապէս յայտարարեց պար-  
սից կառավարութեան կամքը հայերին մի  
թղթի մէջ, ուր նախ քննադատում էր քրիս-  
տոնէութիւնը, ապացուցանում էր թէ նրա-  
նից որքան բարձր է մազդեզականութիւնը,  
ապա ասում էր որ հաւատարիմ հպատակ  
հայերը պարտաւոր են ընդունել այն կրօնը,  
որ ունի նրանց տէրը, այսինքն պարսից  
թագաւորը, որովհետև նոյն այդ թագաւորը  
իր Աստուծու առաջ պատասխանատու է և

Ա. ՄԵՄՐՈՒԹ

16

իր այլակրօն հպատակների հոգու համար։ Ակնարկելով թէ յոյները իրանց անչափ տգիտութեան և յիմարութեան պատճառով են քրիստոնէութիւն դաւանամ, մեծ վէզիրը առանց քաշվելու ասում էր որ մի այդպիսի ազգի հետ հաւատակից լինելը պարսից արքունիքում քաղաքական անհաւատարմութեան նշան պիտի ընդունվի...

Դա գեռ վերջնագիր չէր։ Միհրներսէնը հրաւիրում էր հայերին պատասխան տալ իր թղթին. իսկ Յազկերտը ասել էր որ քննվեն կրօնները, որը լաւ է, այն ընդունեն Պարակաստանում։ Ուրեմն, առ այժմ բացվում էր կրօնական վիճաբանութիւն հպատակների և տէրերի մէջ։

Հայերը ընդունեցին հրաւէրը և չուշացրին իրանցից պահանջվող պատասխանը։ Արտաշատ քաղաքում գումարվեց մեծ ժողով, որին, բացի հոգեորականներից, մասնակցում էին բազմաթիւ աշխարհականներ, գրանց թւում և նշանաւոր նախարարներ։ Երկիրը առաջին անգամ հանդէս բերեց իր մտաւոր ոյժերը, որոնք պիտի պաշտպանէին նրան, որոշէին նրա անելիքը։ Յայտնի դարձաւ այդտեղ թէ ինչ են սովորել հայերը իրանց աշակերտութեան տարիներում, երբ գրքեր էին կարդում և թարգմանում, ճանապարհորդներ էին ուղարկում Արևմուտք։ Ար-

տաշատի մէջ նիստ կազմողները Սահակ-  
Մեսրոպեան դպրոցներն էին։ Նախագահը  
Յովսէփ եպիսկոպոսն էր, առաջին աշակերտ-  
ներից մէկը, որ Մեսրոպից յետոյ կառավա-  
րում էր եկեղեցին։ Նրա անունից էլ գրվեց  
պատասխանը պարսից հրաւէրի դէմ։

Այդ հրաւէրը իր էութեամբ նին եղե-  
լութիւնների մի կրկնութիւնն էր. — մի մե-  
նամարտութիւն, որ ասիականութեան սկըզ-  
բունքը այնքան յաճախ յայտարարում էր  
Արևմուտքին։ Հին էր ինքը, գործը. զարմա-  
նալին, թարմը այն նորութիւնն էր, որ այժմ  
Արևմուտքի ներկայացուցքիչ էր դարձել մի  
ազգ, որ մի շարք դարեր իրանականութեան  
դրօշակի տակ էր գտնվում։ Փոխվել էր ընդ-  
հարման դաշտը միայն, նա այժմ Հայաստանի  
հողի վրա էր։

Մենք ներկայ ենք պատմական մի մեծ  
դէպքի։ Իրանականութեան հրաւէրը ոչ տա-  
տանում է առաջացնում հայերի մէջ, ոչ մա-  
նաւանդ երկիւլ։ Արտաշատի ժողովը կտրուկ  
ու համարձակ կերպով մերժեց Իրանի առա-  
ջարկութիւնը։

Դա դեռ ապստամբութիւն չէր։ Հայերը  
հանդիսաւոր կերպով, վերջին անգամ և ընդ  
միշտ, կտրվում էին իրանց անցեալից և սե-  
փականացնում էին այն ճակատագիրը, որ  
Սահակ-Մեսրոպեան գործունէութեան բնա-

կան հետեանքն էր։ Բայց նրանք, իբրև քրիստոնեաներ, յայտնում էին պարսից կառավարութեան որ պատրաստ են հաւատարիմ հպատակութեան բոլոր պարտականութիւնները կատարել, քանի որ իրանց կրօնը պատուիրում է հնազանդվել մարմնաւոր իշխանութեան։ Սակայն այդ հնազանդութիւնը չը պիտի խանգարէ և չէ կարող խանգարել որ հաւատարիմ հպատակների միտքն ու խիղճը ազատ լինի։

Քաղաքական անկախութիւն այլ ևս չէին կարող պաշտպանել հայերը. դրա համար նրանք զառամած մի ազգ էին, ոչ ոյժ ունէին, ոչ եռանդ։ Բայց այդ զառամութեան մէջ մտել էր մի նոր սկզբունք, որ յանդգնութեան հասնող համարձակութիւն էր հաղորդել նոյն այդ ազգին։ Եւ դա մտքի ու խղճի ազատութիւնն էր, եւրոպականութեան այդ ամենազլիսաւոր հիմքը։

Գաղտնիք չէր որ արևելեան բռնապետութիւնների մէջ չէ եղել և չը պիտի լինի մտքի և խղճի ազատութիւն, ուստի և Արտաշատի ժողովի պատասխանը պիտի դառնար մի յանդուգն և աններելի ըմբռստութեան ապացոյց։ Հայ եպիսկոպոսները այդ շատ լաւ էին հասկանում. նրանք ստացել էին վիճաբանութեան հրաւիրող մի թուղթ, որ գրված էր պաշտօնական քաղաքավարու-

թեամբ, իսկ իրանց պատասխանի տակ աւելացնում էին. «Բո սուրը, և մեր պարանոցը... Մեր ամբողջ մարմինը քո ձեռքին է, շուտով արա ինչ ուզում ես»: Նրանք, այս, գիտէին որ ինքնապաշտպանութիւն, կարծիքների ազատ փոխանակութիւն չէ թոյլատրվում Պարսկաստանի մէջ: Ի՞նչպէս էր որ ստորագրեցին մի այսպիսի թուղթ:

Երկիրը նետվում էր սոսկալի արկածի մէջ: Բայց այն դրութիւնը, որի մէջ գտնվում էր հայ ազգը, միանգամայն հասկանալի է դարձնում այդ ինքնավատահութիւնը: Որ գրականութեան, լուսաւորութեան բարիքներին նոր հաղորդված մի ժողովուրդ խիզախ ինքնամոռացութեան մէջ է ընկնում,— այդ բնական է: Քաղաքական անկումից յետոյ երկրի ինքնապաշտպանութեան բոլոր ոյժերը կենտրօնանում են եկեղեցու շուրջը, որ ահազին զոհեր է պահանջում իր գոյութիւնը պահպանելու համար: Դա միակողմանիութիւն էր, չափազանցութիւն էր, և մենք երբէք չը պիտի մոռանանք որ հայերը իրանց քաղաքական իշխանութեան պաշտպանութիւնը ոչ իրանց մտաւոր վերածնութեան պտուղներով, ոչ որ և է զոհողութեամբ չապահովեցին, չը հասկացան որ առանց քաղաքական ինքնուրոյն գոյութեան չէ կարող լինել լիակատար կեանք, որ կրօնական ան-

կախութիւնը կեանքի միայն մի կողմն է։ Այսպէս է ճշմարտութիւնը մի ազգի լայն, իրական շահերի տեսակէտից։ Բայց պատմութիւնը տալիս է այն, ինչ եղել է։ Մենք կարող ենք և պարտաւոր ենք քննադատել նրան, որոշել դէպքերի և գործողութիւնների իսկական արժէքը, բայց այս հանգամանքը չէ արգելում որ մենք մտնենք այն ճակատագրական դրութեան մէջ, որ այս կամ այն պատճառով հաստատվեց մեր երկրում։ Այդ դրութիւնը միայն հոգեոր շահերին առաջնակարգ կարեորութիւն տուեց. մենք մոռացանք աշխարհային շատ բաներ և կրօնական ազգ դարձանք։ Իրոզութիւնները հէնց այդ կերպարանքի մէջ էլ պիտի վերցնենք մենք։

Արտաշատի ժողովի վճիռը, ինչպէս ասացինք, բնական էր։ Նայելով երկու կողմերին, այդ պահանջողներին էլ, մերժողներին էլ, մենք համոզվում ենք որ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Միտքը ընդհարվում էր մտքի հետ։ Ո՞րը պիտի նուաճէր։ Որպէս զի հասկանանք այս, իմանանք թէ գերազանցութիւնը որ ախոյեանին էր պատկանում, մենք պիտի տեսնենք թէ ինչ մտաւոր պաշարով էին հանդէս գալիս երկու կողմերը։

Գ.

Մազդեզականութիւնը իբրև պարսիկների միակ  
մտաւոր հարստութիւն։—Այդ կրօնի նախնական ձեր։  
—Բնապաշտութիւն։—Զրադաշտի վերանորոգութիւնը։—Աստուածութիւն, պաշտամունքներ։—Բարոյական և առաջադիմական սկզբունքներ։—Բայց որքան  
էր կրօնը բարձրացնում մարդուն։—Պատիժներ։—  
Կրօնական անհամբերողութիւն։—Սկզբնական մաք-  
րութիւնից շեղվելը։—Հին աստուածներ, նորամուտ  
պաշտամունքներ։—Սասանեանների վերանորոգած  
մազդեզականութիւնը։—Հոգեորականների լուծը։—  
Կրօնը ծէսի փոխված։—Մանիի փորձը, քարացման  
յաղթանակը։

---

Միակ մտաւոր հարստութիւնը, որով  
շրջապատված էր Սասանեան հպարտ դահը,  
որ նրա ոյժն էր ու պաշտպանը, մազդեզա-  
կան կրօնն էր։ Այն, ինչ այդ ժամանակ պաշ-  
տում էին պարսիկները, մի շատ պատկա-  
ռելի հնութիւն էր ներկայացնում։

Նախապատմական դարերի մթութեան  
մէջ է կորած այն ժամանակը, երբ արիա-  
կան մեծ և ընդունակ ցեղը իր միջից հա-  
տուածներ հանեց, որոնք երկու ճիւղաւորու-

թիւն կազմելով, գնացին դէպի Ասիայի հարաւային ծայրերը։ Դրանցից մէկը հաստատվեց Հնդկաստանում և իր կուլտուրական հակումները ձևակերպեց կրօնական մի ամբողջ սիստեմի մէջ, իսկ միւսը անցաւ դէպի Իրան և այդտեղ հանդէս եկաւ իր ժողովրդական կրօնով։

Երկու ճիւղերը մօտիկ ազգակցական կապեր ունէին իրար հետ, ուստի և նրանց կրօնները, սկզբում մանաւանդ, մի ընդհանուր ծագում ունէին։ Բայց ժամանակի ընթացքում ազգակից ճիւղերի կեանքը առաջ բերեց պաշմաններ, որոնք տարբերութիւններ դրին նրանց աշխարհայեցողութիւնների մէջ։ Իրանի արիացին խաշնարած և երկրագործ ժողովուրդ էր, որի հարստութիւնը հօտերն ու առատ հունձն էին։ Բնութիւնը Իրանում, աշխարհազրական պայմանները բաւական դժուարացնում են մի այդպիսի ժողովրդի մրցութիւնը շրջապատող արգելքների, թշնամինների դէմ։ Հասկանալի է թէ այգպիսի պայմանների մէջ դրված խաշնարած-երկրագործը ինչ իդէալներ կարող է ունենալ, ինչը սիրոյ և ատելութեան առարկայ կը դարձնէ իր համար։

Բնութեան միամիտ զաւակ, ամբողջովին բնութեան ահաւոր իշխանութեան տակ դրված, Իրանի արիացին այդ բնութեան

Երկրագագում է դառնում: Բայց ոչ ամբողջ քնութեան: Տնտեսական շահը, օգուտի սկզբ-բունքը նրան առաջնորդում են պաշտամուն-քի առարկաներ որոնելու մէջ: Նրա առաջին օգնականը, նրա տնտեսութեան նեցուկը եզն է և նա սրբացնում է այդ օգտակար անա-սունը. եզը ամենից առաջ է ստեղծվել, մար-դը նրա փորոտիքից է դուրս եկել. եզի մէզը լուանում է ամեն կեղտ ու մեղք, ուստի մար-դը լուացվում է նրանով՝ մաքրվելու համար: Շունը տնտեսութեան պահապանն է, հաւա-տարիմ, սակաւապէտ, ազնիւ. և նա դառ-նում է մարդու հիացմունքի առարկայ, մի սուրբ արարած: Շան ծննդաբերութեան ժա-մանակ մարդը նոյնն է անում, ինչ իր կնոջ ծննդաբերութեան ժամանակ, շան դիակի հետ նա այնպէս է վարվում, ինչպէս մար-դու դիակի հետ: Մեռնող մարդու առաջ կանգնեցնում են շուն, որպէս զի մեռնողի վերջին հայեացքը այդ սուրբ կենդանու վրա հանգչի: Աքաղաղը կանչում է գիշերը, իմաց է տալիս որ լոյսը մօտեցել է: Դա մի ան-գնահատելի ծառայութիւն է, որի համար էլ աքաղաղը սուրբ կենդանիների մէջ է:

Կան, ի հարկէ, և մխասակար կենդանի-ներ. մկները, միջատները փչացնում են մար-դու ձեռքի աշխատանքը, օձերը, գիշատող գաղանները մխասում են, և նրանք չար ու

անսուրբ են, նրանց պէտք է ատել և սպանել։ Այսպէս որոշվում են երկու սկզբունք բնութեան մէջ—բարի և չար։ Միայն բարին է մարդու երկրպագութեան արժանի։ Բարի է արշալոյսը, որ հալածում է գիշերային խաւարը, բարի է արեգակը, որ ցուրտ ձմեռվան վերջ է դնում և հալեցնում է լեռների ձիւնը. բարի է կրակը, որ երկնային լոյսի և ջերմութեան մարմնացումն է աշխարհիս վրա։ Պաշտվում է ամեն ինչ, որ օգնում ու հովանաւորում է բնութեան զաւակին. մայրհողը, որ նրա կերակրողն է, մաքուր ջրերը, որոնք կեանք են կենդանիների և բոյսերի համար։ Խաւարը, ցուրտը, մահը չար սկզբունքի գործերն են։

Այսպէս դարերի ընթացքում զարգանում է բնութեան պաշտամունքը։ Ժողովրդական կրօնը ամեն տեղ ի նկատի ունի նիւթականը։ Թէկ նա երկրպագում է և անտեսանելի աստուածների, բայց սրանք նոյն նիւթական աշխարհի, նոյն բնութեան երեսյթների աստուածացումն էին։ Ճիշտ է, այդ կոպիտ տարրապաշտութեան մէջ ժողովուրդը մտցրել էր արիական ցեղին յատուկ բարոյական սկզբունքներ, որոնք գլխաւորապէս աշխարհաշինութիւն, առատութիւն և բարութիւն էին բարողում, բայց և այդպէս, դամի կրօն էր, որ վայրենի ցեղերի ֆէտիշա-

կանութիւնից մի երկու քայլ հազիւ էր առաջ գնացել:

Ինքը, ժողովուրդը, չէր կարո՞ղ բարեփոխել իր կրօնը, աւելի բարձր ոգի հաղորդել նրան։ Հարկաւոր էր մի վերանորոգիչ, մի մեծ մարդարէ։ Եւ այդպիսի վերանորոգիչ հանդիսացաւ Զրադաշտ անունով մի քուրմ, որ սիստեմի վերածեց ժողովրդական հաւատալիքները և մարդկային հասկացողութիւններ հաղորդեց աստուածաշաշտութեան։ Շատ հակասական են կարծիքները այն ժամանակի մասին, երբ գործում, քարոզում էր Զրադաշտը։ Հաւանական են համարում որ նա ապրած լինի Քրիստոսից մօտաւորապէս 1400 տարի առաջ։ Դա մի մեծ կրօնական վերանորոգիչ էր, որի կազմակերպած կրօնը իր բարոյական բարձր հասկացողութիւններով հին մարդկութեան ամենախոշոր մտաւոր նուաճումներից մէկն էր. ոչ ոք, բացի հրէական ազգից, չէր կարողացել այդպիսի կատարեալ կրօնական սիստեմ ստեղծել։

Զրադաշտը տուեց իր ժողովրդին բազմաթիւ գրքեր, որոնց մէջ բացի աստուածաբանութիւնից կային մարդկային հանրակեցութեան մէջ հարկաւոր բոլոր գիտելիքները, օրէնքները։ Նա էր, որ որոշեց, թէև դեռ աղօտ կերպով, բարի և չար սկզբունքների տիրապետութիւնը բնութեան մէջ, նկարա-

գրեց բարի աստուծու յատկութիւնները, պատմեց թէ ինչպէս է ստեղծվել աշխարհը: Բարի աստուծուն նա տուեց Ահուրամազդա անունը, որից կրօնը ստացաւ մազդեզականութիւն անունը. բայց շատ անգամ այդ կրօնը, մեծ մարգարէի անունով, զրադաշտականութիւն էլ է կոչվում:

Այլ ևս նիւթապաշտութիւնը չէր կրօնի ոգին: Զրադաշտը մարդու հոգին անմահ յայտարարեց, մեռելների յարութիւն և վերջին դատաստան քարոզեց: Հրէաները Պարսկաստանից վերցրին այս կրօնական հայեացքները և տարածեցին Պալեստինում: Մարդուց պահանջվում էր մաքրութիւն. դա նոյն երկրագործ և խաշնարած մարգն էր: Զրադաշտը, իրեւ ժողովրդի զաւակ, սրբացրեց երկրագործի աշխատանքը, նրա հին հասկացողութիւնները օգտակար կենդանիների մասին: «Ով մշակում է հողը, նա սրբութիւն է ցանում», ասում էր սրբազան դիրքը. Խակծուլութիւնը, աղքատ տնտեսութիւնը, քիչ անասուններ, քիչ որդիներ ունենալը մեղքեր էին: Բնութեան մէջ բարի և չար սկըզբունքների անընդհատ մրցութիւն է տեղի ունենում. մարդը չը պիտի անտարբեր հանդիսատես լինի այդ մրցութեան, այլ պարտաւոր է մասնակցել կուին, բարի սկզբունքի աշխատակիցը դառնալ և նրա հետ միա-

սին կռւել չարի գէմ. նա պատրաստ պիտի լինի նոյն իսկ իր անձը զոհելու բարի աստուծուն։ Զրադաշտականութիւնը, ուրեմն, անշարժութեան կրօն չէր. նա մղում էր մարդուն դէպի առաջադիմութիւն, դէպի անդադար աշխատութիւն։ Զրադաշտը սահմանեց և պատիժներ, ապաշխարանքի ձեեր մեղաւոր մարդկանց համար. այդտեղ էլ մենք տեսնում ենք նոյն շինարարութեան, նոյն կուլտուրական աշխատասիրութեան ոգին։

Չը նայած իր դաւանած բարոյական սկզբունքներին, զրադաշտականութիւնը համաշխարհային կրօն չը դարձաւ և չէր էլ կարող դառնալ, քանի որ Ահուրամազդա աստուծուն Զրադաշտը չէր կարողացել հաղորդել որոշ դէմք, հարկաւոր չափով վեհութիւն և կարողութիւն։ Զրադաշտը, իբրև կրօնական վերանորոգիչ, արմատական փոփոխութիւնների մարդ չէր. հինը, ժողովրդականը, նա չը վերացրեց. նա միայն ստեղծեց միաստուածեան սիստեմ, իսկ նրանից յետոյ ժողովրդական բազմաստուածութիւնը նորից դլուխ բարձրացրեց։ Նա չը կարողացաւ մեղմացնել և ժողովրդի դժնդակ հասկացողութիւնները, որոնք մանաւանդ աչքի են զարնվում պատժական օրէնքների մէջ։ Մարդու վրա բարձված էին անթիւ պարտաւորութիւններ. մարդը պիտի աշխատէր բարի, ա-

ուաքինի լինել, բայց այդ մարդը բարձրացր՝  
ված չէր, նրան չէր ներշնչվում ազատու-  
թեան, անկախութեան, անհատական զար-  
գացման զգացմունքը։ Արևելքը հաստատուն  
մնաց և այդ բարձր, իդէալական կրօնի մէջ։

Ահա, օրինակ, ինչ պատիժներ էր սահ-  
մանել զրադաշտականութիւնը յանցանքների  
համար։ Յանցաւորներին պատժում էին՝ փայ-  
տերով ծեծելով նրանց գարշապարները։ Եթէ  
մարդը մարդու կեանքի դէմ փորձ էր անում,  
վէրք էր հասցնում նրան կամ ուղղակի սպա-  
նում էր, նա ստանում էր իր գարշապարնե-  
րի վրա, նայած յանցանքի աստիճանին,  
հինգից մինչև երկու հարիւր հարուած։ Բայց  
երբ նոյն մարդը վատ էր կերակրում իր  
գամփոխն, նա նոյն պատիժն էր ստանում։  
Օգտակար, սուրբ կենդանիներին սպանելը  
աւելի խիստ էր պատժվում, քան մարդա-  
սպանութիւնը. շան ձագի սպանութիւնը  
հինգ հարիւր հարուած է բերում, գամփոխ  
սպանութիւնը՝ ութ հարիւր, ողնու սպանու-  
թիւնը՝ հազար։ Հարուածների թիւը համնում  
է նոյն խիստականութեան վերում, սպանութիւնը  
ջրաշունն է։ Մարդու արժանաւորութիւնը  
այդքան ստոր էր դնահատվում։ Դա մի տե-  
սակ կենդանապաշտութիւն էր։

Զրադաշտականութեան յատուկ էր և  
խիստ շօվինիզմը։ Նա զանազանում էր եր-

կու տեսակ մարդիկ—ուղղահաւատներ, ու-  
րոնք Ահուրամազդայի երկրպագուներն էին  
և ոչ-ուղղահաւատներ, որոնք անուանվում  
էին դմերի երկրպագուներ։ Ուղղահաւատը  
բարձր էր ոչ-ուղղահաւատից։ Երբ մէկը  
ուզում էր իր վիրաբուժական հմտութիւնը  
ցոյց տալ, նրան պէտք էր տալ երեք այլա-  
կրօն մարդ. եթէ դրանք մեռան բժշկի դա-  
նակի տակ, նշանակում է որ նա անընդու-  
նակ է բժշկութիւններ անելու։ Պատիժ չը  
կայ։ Իսկ եթէ նոյն բժիշկը բժշկում է ուղ-  
ղահաւատին և նրան իր դանակով վէրք է  
պատճառում, այդ դէպքում նա արդէն պա-  
տիժ է ստանում իբրև դիտաւորեալ վիրա-  
ւորման համար։ Այս սկզբունքը արդէն են-  
թագրում է անհամբերողութիւն դէպի միւս  
կրօնները։ Եւ նա այդպէս թոյլ չը մնաց մազ-  
դեզականութեան մէջ։ Ապազյում, երբ հո-  
գնորականութիւնը դարձաւ մի այնպիսի ոյժ,  
որի լուծի տակ ձնշված էր լինում նոյն իսկ  
արքունիքը, անհամբերողութիւնը աւելի ևս  
զարգացաւ, մոգերը նոյն իսկ կեղծեցին սըր-  
բազան գրքերը և այնպիսի կերպարանք  
տուին այդ տեղին, որ գուրս էր գալիս թէ  
պէտք է հալածել ոչ-մազդեզականներին,  
բռնութեամբ հարկազրել որ ամենքը պարս-  
կական ուղղահաւատութիւնն ընդունեն։ Շա-  
պուհ երկրորդը իր այն հրովարտակի մէջ,

ուր հալածանքների էր յարուցանում քրիստոնեաների դէմ, այսպէս էր ասում. «Այժմ, երբ մենք ճանաչեցինք համաշխարհային օրէնքը այստեղ, երկրի վրա, նրանք (հոգևորականները) չը պիտի թոյլ տան որ անհաւատութիւն մնայ որ և է մարդու մէջ, և ես կաշխատեմ որ այդպէս լինի»:

Զրադաշտականութիւնը չը մնաց իր սկզբնական մաքրութեան մէջ։ Սա յատուկ է մարդկային բոլոր կրօններին։ Մենք պէտք է յիշենք որ մազգեզականութեան բուն հայրենիքը Բակտրիան էր, Արևելեան Իրանում։ Այդտեղ նա կազմակերպվեց իրրև կրօն, այդտեղ էր գործում Զրադաշտը։ Ուղղափառութեան աւանդապահ երկիրը, սակայն, չը բաւականացաւ իր մեծ մարդարէի վարդապետութիւններով։ Նրա մահից յետոյ նրա կրօնի մէջ խուժեցին ժողովրդական հին աստուածները և այդպիսով Ահուրամազդայի խսկական պաշտամունքը աղճատվեց։ Բայց և այդպէս, Բակտրիան շարունակում էր պահել ուղղափառութեան համբաւը և արհամարհանքով էր վերաբերվում Արևմտեան Իրանին, ուր պարսկակական պետութեան նուժածութերը բազմաթիւ ազգեր հպատակեցրին մի գայիխոնի։ Հպատակ ազգերը իրանց հաւատալիքները հաղորդեցին մազգեզականութեան, որ այդպիսով խորթ տարրեր ընդու-

Նեց իր մէջ, նոյն իսկ օտար աստուածներ  
էլ: Այդ անկումը նկատվում է դեռ Աքեմե-  
նեանների ժամանակից:

Հետզհետէ մթնեց պարզ ու մաքուր  
վարդապետութիւնը, կրօնը կերպարանա-  
փոխվեց, նեղ սահմաններում շրջափակվեց և  
դարձաւ դասակարգային սեփականութիւն,  
մոգերի, հոգևորականութեան կրօն: Բոլորո-  
վին պարզ ու որոշ կերպով ձեւացաւ բարի  
ու չար սկզբունքների տարրերութիւնը. Ա-  
հուրամազդայի դիմաց դրվեց հակառակ աս-  
տուածութիւնը, չարութեան հեղինակ Ահրի-  
մանը: Ինքը, Զրադաշտը, աստուածների  
կարգը դասվեց, իսկ նրա վարդապետութիւ-  
նը դարձաւ Ժողովրդի բազմութեան անհաս-  
կանալի, որովհետեւ այն լեզուն, որով գրված  
էին սրբազան գրքերը (նրանք կոչվում են  
«Աւեստա»), հնացել և անհասկանալի էր  
դարձել:

Սասաննեանները վերանորոգեցին մազ-  
գեզականութիւնը, բայց այդ վերանորոգվա-  
ծը մի քարացած, ձևական կրօն էր: Հոգևո-  
րականութիւնը անչափ բազմացաւ, որովհե-  
տեւ նա էր, որ կարողանում էր կատարել  
տալ կրօնի բազմաթիւ, բարդ պահանջները:  
Զրադաշտը սահմանել էր զանազան ծէսեր և  
լուացումներ՝ մեղքերից ազատվելու համար.  
այժմ մոռացվել էր կրօնի էութիւնը և բազ-

մապատկվել էին ծէսերը, որոնք փոխարինեցին կենդանի հաւատը: Մոգը հարկաւոր էր պարսիկին իւրաքանչիւր քայլում. նա պիտի բացատրէր կրօնը, ծէսեր կատարէր, նա էր ժողովրդի բժիշկը, թէև մեծ մասամբ դեղերով չէր բժշկութիւն անում, այլ աղօթքներով և կախարդութիւններով: Պարսիկը ճնշված էր ծէսերի, արարողութիւնների լուծի տակ. մարդու ամբողջ կեանքը հազիւ բաւական լինէր կատարելու այն ամենը, ինչ սահմանել էր ծիսականութիւնը՝ մարդկանց արդարութեան ճանապարհի վրա պահելու համար: Միտքը, հոգին կորել էր, մնացել էր մեքենականութիւնը, ծէսը: Հին նախապաշտմունքները նուիրադործել էր կրօնը, բընութեան երեսոյթների, աշխարհի ստեղծագործութեան մասին մնում էին այն հասկացողութիւնները, որոնք մարդկային մտքի երեխայութեան հասակում էին կազմվել: Նոր միտք, թարմ գաղափար չէր մտնում այդ կախարդական շրջանի մէջ, որի պահապանն էր Սասանեանների Փանատիկոսութիւնը:

Վերջապէս փաստ է, որ մազգեզականութիւնը, չը նայած իր մեղմ, բարոյական սկզբունքներին, չը կարողացաւ ազդել Պարսկաստանի քաղաքական կազմակերպութեան վրա, որ, ինչպէս տեսանք իր տեղում, ասիական սանձարձակ բռնապետութիւն էր,

Ասորեստանի ժառանգը, մարդկային ստըր-  
կութեան վրա հիմնված։ Զրադաշտը ամեն  
ինչ արաւ՝ պարսիկին գործով և աշխատան-  
քով առաքինի մարդ դարձնելու համար. բայց  
նա այդ մարդուն չը տուեց հոգեպէս և մտա-  
ւորապէս զարգանալու, անընդհատ առաջա-  
դիմելու, հասարակական նոր կարգեր ստեղ-  
ծելու հնարաւորութիւն։ Զրադաշտականու-  
թիւնը ոչինչ չաւելացրեց մարդու քաղաքա-  
կան և անհատական զարգացման վրա։ Պարս-  
կաստանը ոչնչով չէր տարբերվում ասիա-  
կան երկիրներից, թէն ունէր ինքն ըստ ին-  
քեան մի գեղեցիկ կրօն։

Եղաւ մի ժամանակ, երբ թւում էր թէ  
հին, ծերացած մազդեզականութիւնը պիտի  
նոր, կենսունակ հիւթեր ստանայ։ Մանի ա-  
նունով մի պարսիկ փորձեց միացնել զրա-  
դաշտականութեան գլխաւոր հիմքերը—չարի  
և բարիի սկզբունքները—քրիստոնէական  
դաղափարների հետ։ Բայց նա ինքը սպան-  
վեց, իսկ նրա վարդապետութիւնը Պարս-  
կաստանի սահմաններից դուրս վոնդվեց։  
Մանին ապրում էր Շապուհ առաջինի ժա-  
մանակ, երրորդ դարում։

Դ.

Կարհղ էին հայերը ընդունել մազդեզականութիւնը: — Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» իրեւ ժամանակի լուսաւորութեան յուշարձան: — Քրիստոնէութեան սկիզբը: — Հին աշխարհը կրօն է որոնում: — Փիլիսոփայական սիստեմներ: — Քրիստոնէութիւնը յարմարվում է հին գիտութեան: — Ալէքսանդրիայի գպրոցը: — Եկեղեցու ընդունածը. աւանդութիւն և հեղինակութիւն: — Քրիստոնէութիւնը իրրե նոր ազգերի ուսուցիչ: — «Եղծ Աղանդոց»-ի հանգամանքները: — Քրիստոնեայ գրող և գիտութիւն: — Եզնիկի քննադատական կարողութիւնը: — Մազդեզականութեան հերքումը: — Գիտնական փորձ: — Եզնիկը միակ երեսյթը չէ հինգերորդ դարում: — Ընդհարումը պարսիկների հետ անխուսափելի էր:

---

Այժմ անցնենք միւս կողմին:

Անկասկածելի պէտք է համարել որ հայերը իւրացըել, ազգայնացըել էին մազդեզականութեան շատ պաշտամունքներ: Իրեւ նոյն արիական ցեղին պատկանող մի ազգ, հայերը, ի հարկէ, պարսիկների հետ շատ ընդհանուր բաներ ունէին լեզուի, կուլտուրական ձգտումների, աշխարհայեցողու-

Թիւնների մէջ։ Քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ էլ հայերը պահպանեցին ազգային հին ծէսերից մի քանիսը, հին կրօնական անունները։ Ընդունել Յազկերտի կառավարութեան առաջարկութիւնը կը լինէր հայերի համար մի թոփչք դէպի հարազատ անցեալը, վերադարձ դէպի ծանօթ շրջանը։

Բայց ազգերը առաջադիմում են, մարդկային միտքը բարձրանում է յեղափոխութեան աստիճաններով։ Բոլորովին նմանութիւն չէր մնացել Շապուհ երկրորդի և Յազկերտ երկրորդի ժամանակների մէջ։ Ներսէս Մեծի մահը բաւական էր, որ հայերը ընկնեն հեթանոսութեան գիրկը, իսկ այժմ հայը հեռացել էր այն մտաւոր հասակից, որի մէջ մազդեզականութիւնը կարող էր բաւականացնել։ Մենք ունենք այս բարեշրջման մի գեղեցիկ ապացոյցը։

Հինգերորդ դարի գրական աշխատութիւնների մէջ բոլորովին առանձնակի տեղ է բռնում մի գործ, որի նշանակութիւնը մեզ համար ահագին է։ Դա Սահակ-Մեսրոպեան առաջին աշակերտներից մէկի, Եղնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» աշխատութիւնն է։ Այս վերին աստիճանի հետաքրքրական, իր տեսակի մէջ միակ և աննման գրաւոր յիշատակարանը ամենալաւ առաջնորդն է որ մենք պարզենք այն հարցը թէ ինչ էին սովորում

և ինչ էին սովորեցնում հինգերորդ դարում։  
Միայն այն հանգամանքը, որ Եղնիկի գիտա-  
կան-քննադատական գիրքը գրված է Հայ-  
աստանի մէջ, հայերէն կոկ, կանոնաւոր, օ-  
րինակելի լեզուով, մի փայլուն ապացոյց է  
որ հինգերորդ դարում մտաւոր լարված,  
տենդային եռանդով առաջացող շարժումը  
բաւական հող էր պատրաստել որ այդ տե-  
սակ գրքերը հասկանալի և գրաւիչ լինեն  
շատերի համար։ Իսկ Եղնիկի գիրքը ժամա-  
նակի բարձր լուսաւորութեան արտայայ-  
տութիւնն էր։

Քրիստոնէութիւնը երևան եկաւ մի  
այնպիսի ժամանակ, երբ արևմտեան լու-  
սաւոր աշխարհում գոյութիւն ունէր կրօնա-  
կան նշանաւոր շարժում։ Հին գիտութիւնը  
վաղուց թողել էր զուտ գիտական նպատա-  
կը, որ բնութեան և կեանքի օրէնքների մշա-  
կումն էր։ Փիլիսոփայական զանազան դըպ-  
րոցներ այժմ աշխատում էին կրօն գտնել  
մարդկութեան համար։ Յունա-հումէական  
հեթանոսութիւնը պառաւել էր, աստուած-  
ները կորցրել էին իրանց փայլը, կրթված  
մարդկանց նուրբ, պահանջկոտ միտքը որո-  
նում էր ուրիշ զաղափարներ, նոր պաշտա-  
մունք։ Եւ փիլիսոփայական բազմաթիւ սիս-  
տեմները գալիս էին բաւարարութիւն տա-  
լու ժամանակի հասունացած պահանջին։

Այդ որոնումների մէջ յայտնագործվեց քրիստոնէութիւնը, մի թարմ վարդապետութիւն, որ արագ կազմակերպվում էր, ցոյց տալով եռանդ, տոկունութիւն։ Նա օգտվեց մտքերի դրութիւնից և սկսեց նուաճել լուսաւորված աշխարհ։ Մի այդպիսի դժուար ու մեծ գործը նա չէր կարող գլուխ բերել, մնալով լոկ կրօնական ուսմունք։ Չորս կողմից նա պաշարված էր զարգացած մտքերով, որոնք քննել, մտածել գիտէին, վերացական հարցեր ունէին իրանց առաջ և նըրանց լուծմանն էին սպասում։ Այդ լուսաւոր միջավայրի արհամարհանքից և հալածանքներից ազատվելու համար, քրիստոնէութիւնը մօտեցաւ յունական գիտութեան և սկսեց նրանից փոխ առած սկզբունքների վրա գիտական հիմքեր մշակել իր համար։

Մարդկային մտքի պատմութեան մէջ հանդէս էր զալիս մի նոր երևոյթ—քրիստոնէական գիտութիւնը, աստուածաբանութիւնը։ Դա հելլէնականութիւնը չէր, որ այնքան ճոխացրել էր դիտութիւնը և արուեստները։ Հելլէնականութիւնը, ընդհակառակն, վերացաւ. նա տեղ չունէր այնտեղ, ուր աստուածաբանութիւն էր սկսվում։ Բայց նրա հին փորձերը, նրա հարուստ գանձերը պատկանում էին ամենքին։ Յունաստանից դուրս մի նոր մտաւոր կենտրոն առաջացաւ, որ

նոր ռազմաթեան ներկայացուցիչ դարձաւ-  
թա Եղիպատիք Աղեքաննդրիս քաղաքն էր,  
ուր, ինչպէս առևարական մի խոշոր ու բա-  
նուկ միջազգայրած, մշտական շփման մէջ  
էին արևմտեան և արևելեան աղջերը: Աղեք-  
աննդրիս իր մէջ ամբարել էր հելլէնական  
զիրառոթեան և արուեստի անհանդ հարստու-  
թինները: Եւ ահա այդաեղ էլ սկզբեց կրօն-  
ների մրցութիւն: Մի կողմից հեթանոսական  
հայեացքներին հաւատարիմ մացած զիս-  
նականները աշխատում էին վերանորոգել  
հին կրօնը, միւս կողմից քրիստոնեայ գոր-  
ծիշները ջանքեր էին գործ զնում հաստա-  
տուն հող նուաճնելու լուսաւորված մարդկու-  
թեան մէջ: Աջողութիւնը այն կրօնին պիտի  
պատկանէր, որ կարող կը լինէր բաւարա-  
րութիւնն տալ մարդու ոչ միայն զգացմուն-  
քին, այլ և խելքին, բանականութեան: Քը-  
րիստոնէութիւնը լաւ էր հասկացել այդ դը-  
րութիւնը և նրա աջողութիւնը ապահովվեց  
շնորհիւ այն հանգամանքի, որ նա ընդունեց  
իր մէջ հին աշխարհը, ձուլեց իր մէջ:

Իայց թնչ չափով: Ստեղծելով գիտա-  
կան սիստեմ, պէտք էր չը մոռանալ, որ նա  
պիտի համապատասխանէ կրօնի սկզբունքնե-  
րին: Քրիստոնէութիւնը ամեն ինչ չընդու-  
նեց իր մէջ, այլ միայն այն, ինչ հարկաւոր  
էր, առանց հակասութեան մէջ ընկնելու ին-

Քըն իր դէմ: Եւ որպէս զի իբրև ընտրող և  
մերժող՝ նա ունենայ մի հաստատ յենակէտ,  
պէտք եղաւ ստեղծել անսխալական աղքիւր-  
ներ քրիստոնէութեան համար: Եկեղեցին ու-  
նէր իր աւանդութիւնները, իր գրքերը:  
Դրանք էլ հրատարակվեցին անվիճելի հե-  
ղինակութիւններ: Հին և նոր կտակարան-  
ները աստուածային ներշնչման, յայտնու-  
թեան պտուղներն են. ուրեմն նրանց մէջ էլ  
պէտք է պարունակված լինի բարձրագոյն  
ճշմարտութիւնը: Ինչ որ հակասում է այդ  
ճշմարտութեան, նա պիտի մերժվի: Եւ քը-  
րիստոնեայ գործիչները այդպէս էլ անում  
էին, մի կողմից բանակոիւ մղելով հեթանո-  
սութեան դէմ, միւս կողմից քրիստոնէու-  
թեան ջատագով գրուածքներ հեղինակելով:

Եւ այսպէս, քրիստոնէութիւնը ընդու-  
նեց յունական լուսաւորութեան մի մասը  
միայն: Նա տիրապետող հանդիսացաւ արև-  
մտեան աշխարհում, հեթանոսութիւնը տեղի  
տուեց ու սկսեց հետզհետէ հալվել, ոչնչա-  
նալ: Այնուհետև քրիստոնէութիւնը երկար  
ժամանակ մնաց գիտութեան միակ ներկայ-  
ացուցիչը: Կարելի համարելով պահպանել  
հին լուսաւորութիւնից միայն այն, ինչ նա  
միանգամից վերցրել էր, եկեղեցին երկար  
դարեր մարդկութիւնից թագցրած պահեց  
այն բոլոր գանձերը, որոնց հետ ինքը հաշտ-

վել չէր կարող։ Դա զրկանք էր մարդկութեան համար։

Բայց և այդպէս, ուրանալ չէ կարելի, որ քրիստոնէութիւնը ահագին ծառայութիւններ մատուցեց արևմտեան աշխարհին։ Նոր, գեռ չը զարգացած ազգեր հանդէս եւկան յունահոօմէական աշխարհի շուրջը, որոնք պիտի հաղորդակից լինէին այդ հին քաղաքակրթութեան։ Ահա դրանք հին գիտութիւնը կարող էին իւրացնել քրիստոնէութեան միջոցով միայն։ Յունական փիլիսոփայութեան բարդ ու նուրբ սիստեմները չէին կարող ճիշտ մատչելի լինել այդ ազգերին. քրիստոնէութեան վեհ պարզութիւնն էր, որ նուածեց նրանց միտքը, ուրեմն և հպատակեցրեց գիտութեան։ Քրիստոնէութիւնն էր միայն, որ հին և նոր աշխարհների մէջ կապ դարձաւ. նա էր միայն, որ պահեց իր մէջ եւրօպական լուսաւորութեան սաղմերը, մինչև որ մարդկութիւնը հասաւ մի ժամանակի \*), երբ քրիստոնէութեան պահպանած փշրանքները այլ ևս չը բաւականացրին նրան և հին հելլէնական գիտու-

\*). Այդ ժամանակը յայտնի է Վերածնութեան Դար անունով, երբ հեթանոսական հին գիտութիւնը ամբողջովին լոյս հանվեց մոռացութիւնից և մարդկային միտքը սկսեց զարգանալ անկախ եկեղեցուց։

թիւնը ամբողջովին ունենալու անհրաժեշտութիւնն զգացվեց:

Այդ տեսակ նոր ազգերից մէկն էր և հայ ժողովուրդը: Իսկ քրիստոնէական այդ առաջին դարերի լուսաւորութեան արդիւնք է մեր Եղնիկը:

«Եղծ Աղանգոց»-ը, ինչպէս հաստատեցին նորագոյն հետազօտութիւնները, մի բոլորովին անկախ-ինքնուրոյն աշխատութիւն չէ: Գտել են նրա մէջ մի շարք երեսներ, որոնք կամ հետևողութիւններ են կամ նոյն իսկ բառացի թարգմանութիւններ արևմտեան հեղինակներից: Բայց այս հանգամանքը շատ մեծ կարեորութիւն չունի: Եղնիկը չէր ստեղծել քրիստոնէական գիտութիւնը, որպէս զի բոլորովին անկախ և ինքնուրոյն հեղինակ լինէր: Նա սովորել էր Արևմուտքում և իր սովորածը հայացը էր, իսկ այնպիսի լուրջ գիտական հարցերի մէջ, որ նա է շօշափում, չէր կարելի առանց աղբիւրների գործ տեսնել:

Եղնիկը քրիստոնէութիւնը ջատագովոդ և հեթանոսութեան դէմ բանակոիւ մղող մի հեղինակ է, որի համար աշխարհիս վրա անսխալ ու անվիճելի են միայն Աստուածաշունչն ու Աւետարանը: Ինչ չէ համապատասխանում այդ գրքերին, համարվում է հերքելի, անվաւեր: Քրիստոնեայ հեղինակ-

Ներից շատերն են դուրս եկել յունաց հեթանոսական փիլիսոփայութիւնը հերքելու։ Դրանցից մէկն է և Եզնիկը։ Գիտութիւնը գտել էր որ լուսինը սեփական լոյս չունի և արեգակն է, որ լոյս է տալիս նրան։ Եզնիկը չէ ընդունում այդ ճշմարտութիւնը, որովհետև հրէական աւանդութիւնները ասում են թէ Աստուած լուսինը ստեղծեց գիշերները լոյս տալու համար։ Եկեղեցու հեղինակութիւնը նրան կաշկանդում է շատ տեղ։ Այսպէս, նա ասում է որ դեերի դոյութիւնը հերքվում է գիտութեան կողմից և սիրով բերում է այդ հերքումը հաստատող ապացոյցները։ Ընթերցողը սպասում է որ ահա նա կասէ թէ ճիշտ է գիտութեան խօսքը։ Բայց գիտնական քրիստոնեան այդպիսի քայլ անելու ազատութիւնից զրկված է։ Ճէ որ դեերը պարզ յիշվում են Աւետարանի մէջ, նոյն իսկ խոզի կերպարանք էլ են ընդունում։ Եւ նա դժուարութիւնը շտկում է, ասելով որ թէե գիտնականները ապացուցանում են թէ չը կան դեեր, բայց պէտք է հաւատալ որ նրանք կան։ Երազների վերաբերմամբ Եզնիկը սկսում է մի դատողութիւն, որ կարող է ունենալ ճշմարիտ լուսաւրված մարդը։ Հիմնվելով գիտութեան խօսքի վրա, նա սկսում է բացատրել թէ երազը ինչ բնական պատճառների հետևանք

է, թէ ցերեկվայ մտքերն ու խոհերը ինչ առաջնակարգ նշանակութիւն ունեն երազներ առաջացնելու մէջ. բայց յանկարծ նայիշում է որ հրէական նահապետները երազում էին տեսնում Աստուծու տնօրինութիւնները և հարկադրված է ասել թէ երազները ուղարկվում են մարդուն նախազգուշացնելու, գալիք բաները հասկացնելու համար։

Մաքուր, անխառն հելլէնականութիւնը չէր դա, որ տալիս էր Եզնիկը, այլ հելլէնական գիտութեան բեկորները, որոնք պիտի ծառայէին եկեղեցուն, հաստատէին նրա հեղինակութիւնը։ Սակայն մեր աշխարհի համար, որ նոր էր հաղորդակից դառնում արևմտեան մտքին, այդ բեկորներն էլ անգնահատելի գանձեր էին։ Միշտ այսպէս եկեղեցու հեղինակութիւնը չէր հակասում գիտութեան. շատ են և այն դէպքերը, երբ երկուսը համերաշխութեամբ են գնում և ահա այդտեղ լուսաւորութիւնը պիտի հրաշքներ գործէր ասիացի ժողովրդի մտքում։

Մեզ համար առանձին մեծ կարևորութիւն ունեցողը «Եղծ Աղանդոց»-ի այն գլուխըն է, որի մէջ Եզնիկը հերքում է մազդեզականութիւնը։ Թւում է որ հեղինակը այստեղ թէ ամենից շատ ինքնուրոյնութիւն ունի, թէ սեփական դիտողութիւններով ու գննողու-

Թիւններով է զեկավարվում։ Եւ այս պատճառով այդ գործը շատ նշանաւոր է իբրև մի ինքնուրոյն պտուղ, որ լուսաւորված հայը իր կողմից մտցնում էր մարդկային մտաւոր գանձարանի մէջ։ Հերքումը գրվել է, ի հարկէ, այն ժամանակ, երբ Յազկերտը, ուժեղի իրաւունքի վրա հիմնված, ուզում էր հայերի վզին փաթաթել իր կրօնը։ Մի եռուն, յուզմունքներով լի ժամանակ էր դա. վառված էին կրքերը, յարձակվելու, հարուածներ հասցնելու տենչանքը ընդհանուր էր հայ հոգեորականութեան, իբրև կուող կողմի մէջ։ Դրա նմուշն է Եղիշէն։ Խսկ Եզնիկը ազատ է րօպէի ազդեցութիւնից։ Նրան հետաքրքրողը լոկ գիտական ճշմարտութիւնն է. նա սառն վերլուծող է, որ հաւատարիմ մնալով իր ընտրած մեթօդին, գիտնականի բարեխղճութեամբ նախ մանրամասն կերպով, առանց յուզվելու և հաւասարակշռութիւնը կորցնելու, բերում է մազդեզականութեան դաւանանքները, և ապա մեծ հմտութեամբ մի առ մի հերքում է նրանց։ Երևում է թէ որքան լայն ու բազմակողմանի էր Սահակի և Մեսրոպի աշակերտների ստացած կրթութիւնը. մեր տաղանդաւոր հեղինակը տեղեկութիւն ունի ոչ միայն քրիստոնէական գրքերից, այլ և պատմութիւնից, բնական գիտութիւններից, մա-

Նաւանդ բժշկականութիւնից։ Բայց ամենից շատ նրա խելքը զինված է բանականութեան, առողջ դատողութեան, լօգիկայի հարուստ փորձերով։

Մազգեզականութեան ամենատկար կողմը բարի և չար աստուածութիւնների ծագման, փոխադարձ մրցութիւնների պատմութիւնն էր, որ մի և նոյն ժամանակ և կրօնի հիմքն էր դարձել։ Եզնիկը երկար ու բարակ վերլուծում է այդ բոլորը, և քննադատող խելքի ճոխութիւնը այստեղ միանգամայն զարմանալի է։ Քար քարի վրա չէ մնում պարսից մոգերի կրօնական կերտուածքի մէջ։ մանդ ու նուրբ քննութիւններով Եզնիկը մերկացնում է մազգեզականութեան անհեթեթութիւնները, երեխայական հաւատալիքները, պատճառաբանութեան տկարութիւնները։ Հին, զառամեալ վարդապետութիւնը նոր ու թարմ խելքի առաջ ցոյց է տալիս մի կոյտ կարկատաններ, որոնք պիտի ծածկէին մտքի անկատարութիւնը, բայց աւելի էին մերկացնում նրան։

Դժուար է այժմ, հազար հինգ հարիւր տարուց յետոյ, երեակայել անգամ թէ ինչ ահագին տպաւորութիւն պիտի գործած լինի Եզնիկը հայ ընթերցողի վրա։ Թէ ինչ էր ձեռք բերում հայութիւնը Սահակ-Մեսրոպեան դպրոցների միջոցով, կարելի է դատել

հէնց նրանով, որ Եզնիկի հերքումների մի մասը այժմ էլ կարելի է տալ ժողովրդին իրրե դեղ նախապաշարմունքների դէմ: Սաստիկ նախապաշարված էր պարսիկ ամբոխը, որովհետև մոգութիւնը նախապաշարմունքների մէջ կաշկանդված մի ժողովրդի մէջ կարող էր տիրող ու հրամայող լինել: Հայժողովուրդն էլ բազմաթիւ նախապաշարմունքների էր ենթարկված հեթանոսութեանժամանակից: Եզնիկը իր «Եղծ»-ով ոչ միայն օտար կրօններ էր հերքում, այլ և տալիս էր իր ժողովրդին այնպիսի բացատրութիւններ, որոնք պիտի ազատէին նրան նախապաշարմունքների ծանրութիւնից:

Այսպէս, նա ծաղրում, ոչնչացնում է ճակատագրի հասկացողութիւնը, ապացուցանում է որ մարդը աշխարհի վրա ունենում է մի յայտնի վիճակ, բայց դա ծնվելուց առաջ չէ սահմանվում նրա համար: Աստղագէտները ամեն տեղ հաւատ են տարածել թէ մարդը այն բնութիւնն է ստանում, ինչ ներկայացնում է նրա ծնված րոպէին աստեղատան մէջ տիրող այս կամ այն համաստեղութիւնը: Եզնիկը այդ էլ հերքում է գեղեցիկ պատճառաբանութիւններով: Նա ծաղրում է այն նախապաշարմունքները, որոնք կապված են յօրանջելու, փոշտալու հետ և բացատրում է այդ երեսյթները այնպէս,

ինչպէս հասկանում էր ժամանակի բժշկական գիտութիւնը։ Միտք ապացուցանելու համար նա մի տեղ նոյն իսկ Փիզիկական փորձ է անում։

Ահա թէ ուր էր մտաւոր գերազանցութիւնը։

Եւ այս երևոյթը միակը չէ հինգերորդ դարում։ Եղիշէն բերում է այն պատասխանը, որ ուղարկվեց Արտաշատի ժողովից։ Թէ այստեղ և թէ այն պատասխանների մէջ, որ տալիս էին բռնութիւնների ենթարկված հայ հոգևորականները պարսից ատեաններում, մենք տեսնում ենք նոյն դպրոցը, նոյն ուղղութիւնը։ Հպատակները, որքան էլ թոյլ ու անօգնական լինէին, արհամարհում էին տիրողների սրբազն պաշտամունքները, որովհետեւ նրանցից բարձր էին մտաւոր զարգացումով և կարողանում էին հասկանալ նրանց հոգեկան աղքատութիւնը։ Բաւական է որ մենք վերցնենք հինգերորդ դարի գրական զարգերից մէկը, օրինակ Եղիշէի պատմագրութիւնը կամ, աւելի ճիշտ ասած, դիւցազներգութիւնը և դնենք նրան պարսկական գրականութեան միակ մեզ յայտնի զարդերը կազմող կրօնական գրքերից մէկի, օրինակ, «Վէնդիդատի» մօտ (որ միւս գրքերի համեմատութեամբ աւելի ուշ ժամանակների գործ է), և համեմատութիւնը ցոյց կը տայ

թէ մտաւոր գերազանցութիւնը ում կողմն էր:

Մի երկիր, որ իր դատը պաշտպանելու համար Եզնիկի պէս մի գիտնական խելք էր առաջ բերում, իսկ իր նահատակութիւնները գեղանկարելու համար՝ Եղիշէի պէս մի բանաստեղծ-փիլիսոփայ, այդպիսի մի երկիր չէր կարող ընկճվել բռնի ոյժի հետ միացած հին, երեխայական մտքի տակ: Ընդհարումը անխուսափելի էր:

Ա.

Հարկադրանքի միջոցներ:—Միհրներսէնը գործում է պարսկական կուսակցութեան միջոցով:—Ուրացում, քրիստոնէութիւնը պաշտօնապէս չնշված:—Սահակ-Մեսրոպեան դպրոցները զրքի մարդիկ չեին միայն պատրաստում:—Քործի մարդիկ. Ղենդ երէց:—Դիմադրութիւն:—Աստուածակետական կառավարութիւն:—Ապստամբական կազմակերպութիւնը:—Որդին հօր դէմ, եղբայրը եղբօր դէմ:—Ժամանակի հագեբանութիւնը:—Ուրացող նախարարների վերադարձը:—Ահաբեկում:—Ներքին պատերազմը:—Վասակի դերը:—Դա պարսկասէր կուսակցութեան բնորոշ ներկայացուցիչն էր:—Վասակին արդարացնող հանգամանքներ:—Հանգամանքներ, որոնց չէ կարելի ոչ մի կերպ արդարացնել:—Վասակի գործերը և ապստամբական անգթութիւններ:—Ժամանակաւոր թուլութիւն պարսից քաղաքականութեան մէջ:—Յոյսեր Արեմուտքի օգնութեան վրա:—Իրականութիւնը այդ յոյսերի դէմ:—Միհրներսէնի և Վասակի ջանքերը և ուխտապահների կորուսաները:—Վարդան:—Նահատակութեան փափագ:—Պատերազմը անխուսափելի է:—Նրա քաղաքական նշանակութիւնը:—Նրա բարոյական-կուլտուրական նշանակութիւնը:

Այն էլ հրաշքի պէս մի բան էր, որ ասիական բռնակալութիւնը դեռ խօսքի իրաւունք էր յատկացնում իր զոհերին: Նա

համաձայնվել էր քննել, ապացոյցներ ու հեր-  
քումներ լսել և ընդունել այն, ինչ լաւն է:  
Բայց միամտութիւն կը լինէր կարծել թէ  
այդպէս էլ կը լինի, և այդ միամտութիւնը  
չունէին հայերը: Նրանք գիտէին թէ ինչ է  
սպասում իրանց: Քննութեան, ապացոյցների  
դէմ այլ ևս պատասխան չեղաւ. հրաշքը  
սպառված էր և տեղի ունեցաւ սովորական,  
հին երևոյթը.—պարսից կառավարութիւնը  
դիմեց բռնութեան:

Գործունէութեան այն ծրագիրը, որին  
հետևեց Միհրներսէնը, ցոյց էր տալիս որ  
պարսից արքունիքը դեկավարվում էր հին  
քաղաքական փորձով: Թէև հայոց եկեղեցին  
ունէր իր առանձին իշխանապետութիւնը և  
կրօնական հարցերի մէջ հայ նախարարները  
ոչինչ ձեռնհասութիւն չունէին, բայց Միհր-  
ներսէնը միայն նրանց դիմեց, որովհետեւ  
գիտէր որ ինչպէս հեշտ եղաւ նախարարնե-  
րի միջոցով թագաւորական գահը ոչնչացել,  
այնպէս էլ հեշտ կարելի է և միւս հիմնարկու-  
թիւնը, եկեղեցին, մէջ տեղից վերացնել.  
**Հարկաւոր** էր միայն ազդել նախարարների  
փառասիրութեան վրա պարզմներով և փա-  
ղաքանքով, և այնուհետեւ պարսկասէր կու-  
սակցութիւնը, որ երբէք չէր պակասել Հայ-  
աստանում, ինքը կաջողեցնէր ամեն ինչ:  
Նշանաւոր իշխանական տոհմերի ներկայա-

ցուցիչները կանչվեցին Պարսկաստան։ Այդ-  
տեղ Յազկերտը դրեց նրանց առաջ—կամ  
կրօնափոխութիւն կամ մահ։

Նախարարները երկու կարծիքի բա-  
ժանվեցին, որովհետև նրանց մէջ կային և  
Սահակ-Մեսրոպեան սաներ։ Դրանցից անու-  
նով յայտնի են մեզ միայն երկուաը—Վար-  
դան Մամիկոնեան և Վահան Ամատունի։  
Սրանք, քրիստոնէական կրթութիւն ստա-  
ցածները, չէին կարող ընդունել կրօնափո-  
խութիւնը։ Բայց, ինչպէս երեսում է, անտար-  
բերները մեծամասնութիւն էին կազմում և  
նրանք անցկացրին այն միտքը թէ պէտք է  
ընդունել թագաւորի առաջարկութիւնը և  
դրանով ազատել երկիրը աղէտներից։ Յազ-  
կերտը ուղղակի դրել էր հաւատարմութեան  
հարց։ Հընդունել պարսկց կրօնը պիտի նշա-  
նակէր չը կատարել թագաւորի հրամանը,  
մեղանչել հպատակութեան պարտքի դէմ։  
Յայտնի էր թէ ինչ պէտք է լինի այդ դէպ-  
քում։ Ամբողջ հայ ազգը չէր կանգնած պարս-  
կական դիւնառում, այլ միայն մի քանի ան-  
հատներ, որոնք անձնապէս պիտի պատաս-  
խանատու լինէին։ Բնական էր որ այդ ան-  
հատները հոգու արիութիւն և անվախու-  
թիւն ցոյց չը տային այդպիսի նեզ դրու-  
թեան մէջ։ Սարսափահար եղած Սասանեան  
աշխարհակալ գահի առաջ, նրանք պիտի աշ-

խատէին ապրեցնել իրանց, ազատել իրանց  
օձիքը:

Կրօնափոխութիւնը անհատների այդ  
խմբի մէջ տեղի ունեցաւ, բայց անհատներն  
էլ բաւական էին որ Յազկերտը հասած լի-  
նէր իր նպատակին: Հիմնվելով այդ մասնա-  
ւոր երևոյթի վրա, նախարարների մի խում-  
բը ընդունելով իբրև ամբողջ ազգ, Յազկեր-  
տը պաշտօնապէս ջնջված յայտարարեց քրիս-  
տոնէութիւնը Հայաստանում: Վարդան Մա-  
միկոնեանը ստիպված եղաւ տեղի տալ, որ-  
պէս զի բարդութիւններ չը յարուցվեն այն-  
պիսի մի անյարմար տեղ, ինչպիսին էր  
պարսից արքունիքը: Տեսնելով որ այլ ևս  
ոչինչ չէ կարելի փրկել, նա վճռեց լռել առ-  
ժամանակ, մինչև որ տուն կը հասնէ. այդ-  
տեղ կարելի էր հրաժարվել մոգութիւնից և  
հեռանալ պարսկական Հայաստանից, բնակ-  
վել մի այնպիսի տեղ, ուր քրիստոնեայ լի-  
նելը յանցանք չէր համարվի \*):

\*) Եղիշէն և Ղազար Փարպեցին ասում են թէ  
բոլոր նախարարները առ երես ընդունեցին մազդե-  
զականութիւնը: Բայց սա, ինչպէս երեսում է, յետոյ  
հնարված մի արդարացում է: Եթէ ուրացութիւնը  
երեսանց լինէր, Հայաստանը այնպիսի խիստ ապս-  
տամբութիւն չէր հանի նախարարների գէմ, թոյլ  
տալով նոյն իսկ որ որդին կարող է հօրը սպանել և  
հայրը որդուն: Այս ընդհանուր սուզը, որ բարձրա-  
ցու հայոց երկրում, մի պարզ ապացոյց է որ ուրա-

Ասիականութեան այս համարձակ արշաւանքի դէմ հայոց աշխարհը գուրս հանեց մի խիստ գիմաղրութիւն։ Սահակ-Մեսրոպեան դպրոցները այստեղ էլ ցոյց տուին իրանց ոյժը։ Նրանք միայն գրքի մարդիկ չէին պատրաստել, այլ և գործի մարդիկ։ Գրական գեղեցիկ վաստակներով անուն հանած աշակերտների շարքում բարձր հռչակ են ստանում և այնպիսիները, որոնց տաղանդը գրքեր գրելու մէջ չէր երևում, այլ կենդանի խօսքի, ժողովուրդ առաջնորդելու մէջ։

Այդ տեսակ գործիչների գլուխն է Ղևոնդ երէցը, Մեսրոպի առաջին աշակերտներից մէկը։ Վանանդի մի գիւղից գուրս եկած այդ հոգեորականը, չը նայած իր համեստ պաշտօնին \*), այնպիսի համարձակ, ցութիւնը ճիշտ որ տեղի էր ունեցել, առանց յետին մտքերի։ Ուրացող նախարարները, յամենայն դէպս, կարող էին վազորօք իմաց տալ որ երեսանց է իրանց արածը և չը պէտք է յուզվել ու յուսահատվել։ Բայց դրա հակառակ, նոյն իսկ Հայաստան հասնելուց յետոյ էլ ոչ ոք չը գիտէր որ հայ իշխանները կեղծել են։ Վարդանի ուղեղորութիւնը դէպի Յունաստան նոյնն է ապացուցանում։ Պարզապէս երեսում է պարսկասէր կուսակցութեան յաղթանակը։ Ուրացողներից մի քանիսը յետոյ էլի միացան Վասակի հետ և պարսկաց կողմն անցան։

\*). Հ. Ալիշանը հաստատում է որ «Երէց» անունը գիւղական քահանաներին էր տրվում։

յանդուզն գործունէութիւն սկսեց, որ իրապէս դարձաւ նոր շարժման հոգին, երկրի ճակատագիրը տնօրինող։ Աւոնդը մէկն էր առաջին հայ ուսանողներից, որոնք արտասահմանում էին վերջացրել իրանց կրթութիւնը։ Վերադառնալով հայրենիք, նա օգնում էր իր ուսուցիչներին թարգմանութիւնների ժամանակ։ Յետոյ նա գիւղական քահանայի պաշտօնով էր բաւականանում, երբ Յազկերտի քաղաքականութիւնը նրան ասպարէզ նետեց՝ քրիստոնէութիւնը պաշտպանելու համար։

Այդ ժամանակ նա արդէն ծեր ու հիւանդու մի մարդ էր։ Բայց ներքին կրակը չէին հանգցրել ոչ ծերութիւնը, ոչ մարմնական տկարութիւնը։ Ամբողջովին եռանդ կտրած, նա սկսում է մի վերին աստիճանի անվախ պրօպագանդա։ Գաղափարի համար մեռնելը մի ծեր և հիւանդ քրիստոնեայի համար առանձին դժուարութիւն չէր ներկայացնում. բնական էր որ նա ոչինչ ուրախութիւն, ոչինչ գրաւչութիւն չը գտնէր կեանքի մէջ։ Եւ մենք տեսնում ենք որ նա իր ճառերի մէջ հիւանդութիւնից տառապող մարդու արհամարհանքով է վերաբերվում աշխարհին, ամեն տեղ չարչարանք ու տանջանքներ է տեսնում և համոզում է որ չարժէ այդպիսի մի դժբախտ կեանքի համար

մոռանալ դաղափարը։ Այդ տրամադրութիւնը, ինքնազոհութեան այդ պատրաստականութիւնը նա կարողանում է հաղորդել ամբողջ շարժման, ամբողջ այն կազմութեան, որ նրա պէս թոյլ ու հիւանդոտ չէր մարմնով, չէր զզված աշխարհից։ Ահա ինչն է զարմանալի. — հոգու այն անսահման մեծ կարողութիւնը, որով գիւղական երէցը նուաճեց հայ ժողովրդի մի մեծ մասը։

Այդքան զարմանալի ժամանակում բնական էր որ երևոյթները, կեանքի ընթացքն էլ զարմանալի տեսարաններ ներկայացնէին։ Հայ հոգեսորականները, անշուշտ լաւ իմանալով որ նախարարների վրա յոյս գնել չէ կարելի, նախազգուշութեան ընդարձակ միջոցներ են ձեռք առնում։ Եղիշէն շարունակ յիշում է եպիսկոպոսների ժողովը, որ կարգադրում է ամեն բան։ Երկրի մէջ այլ ևս քաղաքական իշխանութիւն չը կայ, կառավարութիւնը իրապէս անցել է հոգեսորականութեան ձեռքը։ Նա զօրքի հրամանատար է, պատրաստ ունի քահանաների, վանականների մի մեծ բազմութիւն, որ գործում էր ժողովրդի մէջ։

Մենք ենթադրում ենք որ Արտաշատի ժողովը, իր պատասխանը ուղարկելուց յետոյ, չը լուծվեց, այլ հարկաւոր համարեց սպասել դէպքերի պարզվելուն, գուցէ մի

այլ տեղ ընտրելով բնակութեան համար։  
Պարսկաստան գնացած նախարարները տարել էին իրանց հետ մի զօրագունդ, որի մէջ գտնվում էին և քահանաներ։ Վերջիններս մարդ ուղարկեցին Հայաստան՝ իմաց տալու նախարարների ուրացութիւնը։ Գուժկանը, տեղ հասնելով, ուղղակի դիմեց եպիսկոպոսների ժողովին։ Օձիք պատռելով, կուրծք ծեծելով, նա պատմեց որ մեծ բազմութիւն է գալիս Պարսկաստանից։ Միայն մոդերի թիւը համնում է 700-ի. Նրանց օգնական մի պարսիկ զօրագունդ էլ կայ։ Միհրներսէի հրահանգները այսպէս էին. հաստատել հայոց հողի վրա մազգեզական պաշտամունքը, մոգական դպրոցներ բաց անել, ուր պիտի սովորէին նոյն իսկ նախարարների կանայքն ու որդիները։ Ուրեմն, քրիստոնէութեան հետ մահվան էր դատապարտվում և Սահակ-Մեսրոպեան դարի ամբողջ գործունէութիւնը։ Սա բնական էր. մոգութիւնը ամենից առաջ պիտի ջնջէր հայոց գրականութիւնը, որովհետեւ առանց նրան չէր կարելի ջնջել քրիստոնէութիւնը։

Այս հարուածը աւելի սաստիկ պիտի յուզէր Սահակի և Մեսրոպի աշակերտներին։ Նրանք իրանց տեսնում են խորխորատի ծայրին կանգնած և ինքնամոռացութեան են համնում իրանց եռանդի մէջ։ Իսկոյն յուղում

են ժողովուրդը, ոտքի են կանգնեցնում նըրան։ Ծանր է դիմադրողների դրութիւնը. պարսիկները մենակ չեն գալիս, նրանց հետ են և բազմաթիւ հայեր, որոնք հակառակ կողմ պիտի կազմեն ընդհարման դաշտում և պիտի թուլացնեն հայ կռւողներին, քանի որ կապված են սրանց հետ բարեկամութեան, ազգեցութեան, իրաւունքի կապերով։ Ճգնաժամ է, և նա պահանջում է արտասովոր կարգեր, ծայրայեղ խատութիւններ։ Ընդունվում է այսպիսի սկզբունք. «Հարազատ եղբօր ձեռքը պիտի բարձրանայ իր մերձաւորի վրա, եթէ սա անցել է Աստուծու պատուիրանից. հայրը չը պիտի խնայէ որդուն, և որդին չը պիտի քաշվէ հօրից։ Կինը կռւում է իր ամուսնու դէմ և ծառան դիմադրում է իր տիրոջը։ Աստուածային օրէնքը միայն թող թագաւորէ ամենքի վրա, և նոյն օրէնքից յանցաւորները ստանան իրանց պատիժը»։

Հաստատվում էր աստուածպետութիւն, կրօնական դիկտատուրա։ Շատ յաճախ չէ պատահում որ գաղափարական կոիւը այսպիսի զրահներ հագնէ։ Դա յուսահատական պայքարի ծայրն էր, կոիւ եղունգներով, ատամներով։ Ազգերը բարձրագոյն ոգևորութեան, ինքնամոռացութեան մէջ են այս դրութեան համնում, այսպէս զոհում վերացական գաղափարին ամեն ինչ—թէ սէր,

թէ գութ, թէ բարեկամական զգացմունք: Քրիստոնէութիւնը այս անգամ չէր ուզում անմռունչ նահատակի խոնարհութեամբ ընկնել պարսիկների ոտների տակ: Այս անգամ նա պատրաստված էր ահեղ կուի և ուզում էր ընկնել իբրև մարտնչող, ուզում էր ցոյց տալ թշնամուն որ կեանքից բարձր խորհուրդ կայ, որի համար մեռնելը աւելի լաւ է, քան ապրելը:

Եղիշէն շատ գեղեցիկ կերպով բացատրել է այն հոգեբանութիւնը, որ այսպիսի զարհուրեցնող դիմադրութեան է մղում մարդկանց: Նա ասում է.

«Որոնց ողիները թուլացած են երկնաւոր առաքինութիւնից, նրանց մարմնի քնութիւնը մեծ երկիւղի տակ է ընկնում. ամեն քամուց շարժվում է, ամեն խօսքից վրդովվում է և ամեն մի առարկայից դողում է: Այդպիսի մարդու կեանքը երազի նման է գնում և մահվան ժամանակ անդառնալի կորստի է մատնվում: Ինչպէս որ հներից մէկն էլ ասել է թէ չիմացված մահը՝ մահ է, իմացված մահը՝ անմահութիւն: Ովչէ ճանաչում մահը, նա վախում է մահից, իսկ ով ճանաչում է, չէ վախում: Եւ այս բոլոր չարիքները մտնում են մարդու միտքը անուսումնութիւնից: Կոյրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգէտը զրկված

է կատարեալ կեանքից։ Լաւ է կոյր լինել  
աչքով, քան մտքով։ Խսչպէս հոգին մեծ է  
մարմնից, այնպէս էլ մտքի տեսողութիւնը  
մեծ է մարմնի տեսողութիւնից։

Ամբողջ հայութիւնը չէր մտել ապըս-  
տամբական կաղմակերպութեան մէջ։ Տգի-  
տութիւնը դեռ շատ տեղեր ունէր իր իշխա-  
նութեան տակ և այդ տեղերում, ի հարկէ,  
անգաղափարականութիւնն էր տիրողը,  
կեանքի անասնական հասկացողութիւնն էր  
մնում, շրջապատված վախերով և թուլու-  
թեամբ։ Նոյն անգաղափարականութիւնը,  
նոյն մահվան վախը առաջ էր բերել այն իրո-  
ղութիւնը, որ այժմ մի խումբ ուրացած նա-  
խարարներ, հարիւրաւոր մոգերի հետ, գալիս  
էին իրանց հայրենիքում արմատախիլ անե-  
լու այն ամենը, ինչ ձեռք էր բերվել այն-  
քան աշխատանքներով և զոհերով։ Եւ ահա  
տգիտութեան, վախի դէմ զինվում է գաղա-  
փարը իր համարձակութեան ամբողջ թա-  
փով, իր բոլոր ոյժերով։ Կեանքի հզօր, նուի-  
րական կապերը չը կանգնեցրին նրան։ Երբ  
ամեն ինչ միաբանվեց նրան տապալելու հա-  
մար, նա ոտնակոխ արաւ կեանքի բոլոր կա-  
պերը։ Այնուհետեւ նա կարող էր լինել կամ  
յաղթութիւն կամ մարտիրոսութիւն, որ նոյն-  
պէս յաղթութիւն է։

Ուրացող նախարարները, համնելով

Հայաստան, տեսան երկրի այդ գարմանալի կերպարանափոխութիւնը։ Մեր երկու պատմագիրները մեծ վշտով են նկարագրում թէ ինչ յուսահատ սուգ էր տիրել ամեն տեղ։ Հրապարակական ողբեր էին կատարվում, եկեղեցու պաշտօնեաները լացով ու ազաշանքներով դիմում էին նախարարներին, իսկ Փարպեցին աւելացնում է որ նախարարների երեխաները փախչում էին իրանց հայրերի գրկից։ Ամեն ինչ դէմ էր ուրացողներին։ Հայ կինը նոյնպէս հրապարակ էր եկել իր արտասունքներով, իր բողոքներով։ Մտաւոր շարժումը հայ կնոջն էլ էր հասել և հասարակական նոր երևոյթների մէջ գուցէ ամենից սրտառուչն ու հրաշալին կին-հերոսուհիներն էին, որոնց անմահացրել է Եղիշէն իր գեղեցիկ նկարագրութիւններով։

Խաղաղասիրական միջոցները անօգուտ անցան։ Յազկերտի ահը նախարարներին աւելի էր մատչելի, քան հոգևոր շահերի հասկացողութիւնը։ Մազդեզականութիւնը սկսեց իր գործը, ատրուշաններ շինելով։ Եւ այդ ժամանակ Վարդանը, հայոց զօրքերի հրամանատարը և քրիստոնէական կուսակցութեան ամենանշանաւոր ներկայացուցիչը, հաւաքում է իր ընտանիքը և ուղևորվում է դէպի յունաց բաժինը, որպէս զի ապրէ իր ըստ քրիստոնեայ։

Այլ ևս սպասելու բան չէր մնում: Պայթում է ապստամբութիւնը: Առաջին կայծը դնում է Ղեռնդ երէցը: Խնքնագլուխ, առանց մեծաւորների թոյլատրութեան սպասելու, նա յարձակվում է, ջարդում ու փախցնում այն մոգերին, որոնք սկսել էին մի հայ եկեղեցի քանդել: Կայծը անմիջապէս հրդեհ է դառնում: Ապստամբական կազմակերպութիւնը զուր չէր նշանաբան ընտրել «եղբայրը եղբօր, որդին հօր դէմ». գործը սկսվում է նախ և առաջ երկրի ներսում: Կարգադրողը շարունակ եպիսկոպոսների ժողովն է. նա է, որ բաժանում է բանակը երեք մասի, նա է, որ ցոյց է տալիս թէ իւրաքանչիւր մաս որ տեղերի վրա պիտի յարձակվի և այդպիսով, յենված ոյժի և բռնութեան վրա, չեզոքացնում, անմնաս է դարձնում անմիաբան տարրերը: Հարկաւոր է կարճ ժամանակ գործ դնել, բայց շատ քայլեր անել: Կալանաւորվում են այն նախարարները, որոնք չէին ուղում միանալ քրիստոնէական կուսակցութեան հետ. դրանց թւումն էր և Վասակը, որ հայոց մարդպանն էր, քաղաքական իշխանութեան բարձր ներկայացուցիչը երկրում: Բռնութիւնը ահաբեկում է տարածում: Եղիշէն ու Ղազարը հիացմունքով պատմում են թէ ինչպէս նախարարներից մէկը, որ չէր ուզում միանալ ապստամբութեան,

քարկոծվեց եկեղեցականների հրամանով և  
ինչպէս այդ սպանութիւնը սարսափ տարա-  
ծեց ամենքի վրա:

Ապստամբութեան գործը այսքան շատ  
ապացոյցներ ունէր որ կաջողվի: Ուստի մը-  
նում էր որ պարսկական կուսակցութիւնը  
առժամանակ համակրանք և միաբանութիւն  
կեղծէ: Ժողովը պատգամաւորութիւն է ու-  
ղարկում Վարդանի ետևից, խնդրելով նրան  
վերադառնալ: Եւ Վարդանին ուղղած նա-  
մակը ստորագրում է և Վասակը: Վարդանը  
վերադառնում է: Ապստամբութիւնը նրա  
անձի մէջ մի նոր մեծ ոյժ է դանում: Ներ-  
քին պատերազմը կատաղի չափերի է հաս-  
նում: Հայոց գօրքերը պատերազմական գոր-  
ծողութիւններ են սկսում երկրի այն տեղե-  
րի դէմ, ուր պարսիկներ կամ պարսկական  
կուսակցութիւն կային: Հրամայված էր ոչինչ  
ը խնայել: Տեղի ունեցան անգութ կոտո-  
րածներ, ատրուշանները քանդվեցին, նրանց  
զարդերը կողոպտվեցին և յանձնվեցին եկե-  
ղեցիներին: Երեխաններն անգամ, ինչպէս  
վկայում է Եղիշէն, զէնք էին վերցնում:

Ամեն ինչ ցոյց էր տալիս որ զինված  
եկեղեցին, սկսելով ծայրայեղութիւնից, այդ-  
պէս անխնայ կերպով պիտի առաջ տանէր  
ահարեկումը, անտես անելով որ և է զիջում,  
որ և է խաղաղասէր միջոց: Եւ ահա երկրի

մէջ առաջ է գալիս և հակադիր շարժում, որ  
շատ բնական է իւրաքանչիւր չափազանցու-  
թեան, միակողմանիութեան մէջ։ Այդ հակա-  
դիր ոյժի ներկայացուցիչն է դառնում հայ-  
ոց մարզպանը, Վասակ Սիւնին։

Տարաբախտաբար, հինգերորդ դարի  
պատմութեան երկու հեղինակ ունենք, եր-  
կուսն էլ Սահակ-Մեսրոպեան դպրոցներին  
պատկանող, երկուսն էլ կուսակցական ոգով  
տոգորված։ Նրանք, ի հարկէ, մեծ ատելու-  
թեամբ պիտի վերաբերվէին դիմադրողնե-  
րին և սև գոյներ չեն խնայել Սիւնեաց իշ-  
խանի անունն ու յիշատակը արատաւորելու  
համար։ Տասնեակ դարեր հայ ազգը, հաւա-  
տալով Եղիշէի և Ղազարի վկայութիւննե-  
րին, անիծում էր Վասակին, համարելով  
նրան մի այնպիսի ստոր դաւաճան, որի նը-  
մանը չէ եղել դաւաճանութիւններով ու վա-  
տութիւններով լի մեր պատմութեան մէջ։  
Բայց վերջին ժամանակներս պատմական  
քննադատութիւնը աշխատում է ոչ միայն  
արդարացնել Վասակին, այլ և ներկայացնել  
նրան մի հմուտ քաղաքագէտ և իր աշխար-  
հի բարիքը ամենից լաւ ըմբռնած մարդ \*):

\*) Այդ կողմից շատ են մանաւանդ հանդու-  
ցեալ Գարադաշեանի ջանքերը. նա իր «Բննական  
Պատմութեան» չորրորդ հատորի մեծ մասը նուիրել  
է Վասակին և ուղղակի հռչակում է նրան թէ հայ-  
Ս. ՄՆՄՐՊԳ

Դատելով այնպէս, ինչպէս ցոյց են  
տալիս դէպքերն ու գրաւոր աղբիւրները,  
Վասակը պարզապէս պարսկական կուսակ-  
ցութեան բնորոշ ներկայացուցիչն էր, որ  
անցեալում ունէր իր նման շատերին։ Դա  
մի պարսկական պաշտօնեայ էր, մանկու-  
թիւնից մեծացած պարսիկ շրջաններում։  
Այդ հանգամանքը ինքն ըստ ինքեան բաւա-  
կան էր, որ նա քրիստոնէութեան վերաբեր-  
մամբ լինէր մի անտարբեր մարդ։ Միւնեաց  
անմատչելի լեռնաստանում, ինչպէս տե-  
սանք, քրիստոնէութիւնը մեծ դժուարու-  
թիւններով էր արմատ բռնում։ Մեսրոպին  
հարկաւոր էր տեղական իշխանների աջակ-  
ցութիւնը՝ նոր կրօնի պաշտամունքը լեռն-  
ցիների մէջ պարտաւորական դարձնելու հա-  
մար։ Այդ իշխաններից մէկն էր և Վասակը,  
որ Մեսրոպի եռանդուն աշխատակիցը հան-  
դիսացաւ դպրոցներ բաց անելու գործի մէջ,  
այնպէս որ Կորիւնը խօսում է նրա մասին  
մեծ գովասանքով, անուանելով նրան քաջ,  
«խորհրդական, հանճարեղ, յառաջիմաց»։  
Սակայն այս հանգամանքը անպատճառ չէ  
ասում թէ Վասակը քրիստոնէութեան ջերմ  
կուսակիցներից էր։ Մեսրոպի պէս մի մար-  
դու ազդեցութեան նա հեշտ կարող էր ենթ-  
րենասէր, թէ խոհեմ ու հեռատես, նոյն իսկ ամբողջ  
գլխով բարձր Վարդանից և միւսներից։

արկվել, լինել բարեկամ, սիրալիր մի իշխան։ Բայց քրիստոնէութեան այդ հովանաւորի և կիսահեթանոս սիւնեցու մէջ ահագին տարածութիւններ չը կային։ Տեղը եւկած ժամանակ Վասակը հեշտութեամբ թողեց քրիստոնէութիւնը և անձնատուր եղաւ հին հայկական հեթանոսութեան։ Նրա ապարանքում սկսեցին հնչել հեթանոսական երգերը, կատարվում էին խնջոյքներ պարերով և երաժշտութեամբ։

Այս հանգամանքների հետ չը պէտք է մոռանալ և այն պայմանները, որոնց մէջ անցաւ Վասակի կեանքը։

Դեռ պատանի հասակում նա պատանդ էր Պարսկաստանում։ Անիրաւ զրկանքի զոհ էր դարձել նա. Սիւնիքը, նրա հայրական ժառանգութիւնը, խլել էր նրա ազգականներից մէկը. և Վասակը ստիպված էր համբերութեամբ զինվել, չը մոռանալով, սակայն, լեռնցու հպարտութիւնը։ Երբ նրան յայտնեցին թէ կարելի է պարսից թագաւորին խնդրել հայրական ժառանգութեան մասին, նա մերժեց խնդրելու միտքը, ասելով որ պարսից թագաւորը չը պիտի իրան տայ Սիւնիքը, քանի որ դա իր ժառանգական սեփականութիւնն է։ Այդ զրկանքները երկար տևեցին և անշուշտ ազդեցութիւն արին Վասակի, բնաւորութեան վրա։ Բայց նա

իր խելքով և ընդունակութիւններով այնքան գրաւեց պարսից արքունիքի ուշադրութիւնը, որ ստացաւ Վրաստանի մարզպանի խոշոր պաշտօնը:

Ճարպիկ ու նուրբ քաղաքագէտ էր Վասակը, — այս յատկութիւնը չեն ուրանում նոյն իսկ նրա թշնամիները: Անբնական բան չէ որ այսպիսի հպարտ և ընդունակ մարդու մէջ, այն բարձր պաշտօնին հասնելուց յետոյ, փառասիրական տենչեր էլ հաստատվէին: Նա ծրագրեց մի դաշնակցութիւն հոների հետ՝ պարսից լուծը թօթափելու և անկախ թագաւորութիւն հաստատելու համար: Դաշնակցութեան մէջ մտաւ և Բաղաց թագաւորը, որ սակայն մատնվեց պարսից կառավարութեան ձեռքը և սպանվեց: Այդ մատնութեան պատճառով էլ ծրագիրը աջողութիւն չունեցաւ, բայց Վասակը կարողացաւ խնամքով թագցնել ծայրերը և ոչ թէ որ և է պատիժ կրեց իր մտածած դաւադրութեան համար, այլ և այնքան բարեմիտ երևաց պարսիկների աչքում, որ ստացաւ մարզպանի պաշտօն Հայաստանում:

Այս պաշտօնի մէջ Սիւնեաց իշխանը, ի հարկէ, աւելի հաւանական պիտի համարէր որ իր գլուխը կարժանանայ թաղի: Ոչինչ չէր պակասում նրան, բացի այդ բանից. ոչ հարստութիւն, ոչ պատիւ: Իր վա-

զեմի տենչանքը նա այլ ևս չէր կապում  
Պարսկաստանի դէմ ապստամբութիւն յարու-  
ցանելու մտքի հետ: Կար աւելի հեշտ միջոց  
—պարսկասիրութիւնը: Նրա կրթութիւնն  
ստացած մի ուրիշ մարդ էլ չէր զոհի իր  
նպատակը քրիստոնէութեան շահերին: Կա-  
րելի էր լինել հեթանոս հայ, պարսիկների  
ձեռքի տակ, թագ ստանալ, փառք վայելել  
և խաղաղութիւն հանտատել երկրի մէջ:  
Մտածութեան այս եղանակը խորթ չը պի-  
տի լինէր այն ժամանակվայ անտարբերնե-  
րի համար: Սասանեան քաղաքականութիւնը  
այնքան ամուր ու ահաւոր էր, որ շատ շա-  
տերի համար նա պիտի լինէր մի անխոր-  
տակելի պատնէշ, որի առջև կարելի է միայն  
գլուխ իջեցնել: Եւ երբ Յաղկերտը յայտնեց  
հայ նախարարներին թէ ոչինչ է նրանց հա-  
ւատարմութիւնը, ոչինչ են նրանց տուած  
հարկերը և մատուցած ծառայութիւնները,  
թէ իր սէրն ու վստահութիւնը նրանք կը  
գրաւեն միայն կրօնափոխութեամբ, Վասա-  
կը, ի հարկէ, մի առանձին մեծ կորուստ չը  
համարեց քրիստոնէութիւնից հրաժարվելը:  
Չը մոռանանք որ Միհրներսէկը Պարսկաս-  
տանի կառավարիչն էր, որ խաղաղ նուա-  
ճումներ անելու մէջ նա մեծ վարպետ էր.  
անշուշտ Վասակին և միւս նախարարներին  
գրաւելու համար նա, բացի պարզեներից,

խոստումների, բարեհաճ տրամադրութեան  
ուրիշ նշաններ էլ ցոյց տուեց:

Վերադառնալով Հայաստան, Վասակը  
պիտի աւելի ևս հակվէր դէպի պարսկակա-  
նութիւնը: Նա տեսնում է այդտեղ որ կա-  
ռավարութիւնը անցել է հոգեորականներին,  
ինքը, իբրև մարդպան, կատարելապէս ար-  
համարհված է. բանը հասնում է նոյն իսկ  
այն տեղին, որ նրան էլ ձերբակալում են:  
Այսպիսով նախ և առաջ դրված էր նրա անձ-  
նական պատուի հարցը: Յետոյ աւելացաւ և  
այն, որ Սիւնեաց հպարտ իշխանը, իբրև  
սառն դատողութեան տէր, իբրև չը յափշշ-  
տակվածներից մէկը, հասկացաւ որ հոգեո-  
րականութեան բռնած ընթացքին հետեւլով  
ոչինչ չէ կարելի անել: Հայկական ապստամ-  
բութիւնը չէր կարող յաղթել պարսիկներին  
և պայմաններ թելադրել նրանց: Նա շատ  
լաւ գիտէր թէ ում կողմն էր ոյժը, և եթէ  
այդպէս համարձակ ասպարէղ էր նետվում,  
այդ այն մտքով էր, որ եթէ յաղթել չէ կա-  
րելի, նահատակվել միշտ կարելի է: Իսկ Վա-  
սակի գործնական խելքը չէր կարող հաշտ-  
վել այդ գաղափարի հետ:

Բացի այս բոլորից, կար և մի շատ  
կարեւոր հանգամանք: Յազկերտը բոլորովին  
չէր հաւատացել նախարարների ուրացու-  
թեան, և նրանց խոստումը ապահովելու հա-

մար իր մօտ պատանդ էր թողել Վասակի  
երկու որդիներին։ Նախարարներից ոչ մէկը  
այդպիսի փորձանքի չէր ենթարկված, ոչ ոք  
նրանցից հարկադրված չէր միշտ աչքի ա-  
ռաջ ունենալ որ իր գործողութեան եղանա-  
կից է կախված իր որդիների կեանքը պար-  
սից արքունիքում։ Անձնական հաշիւները ա-  
մեն տեղ են վճիռներ և աղէտներ արագա-  
ցնում։ Նրանք պակաս չէին և հինգերորդ  
դարի շարժման մէջ։ Ղազար Փարպեցին  
պատմում է մի շատ բնորոշ դէպք, որ ահա-  
գին նշանակութիւն ունի Վասակի վարմուն-  
քը հասկանալու համար։ Ուխտապահ նախա-  
րարներից մէկը, մեր ծանօթ Վահան Ամա-  
տունին, հին թշնամութիւն ունէր Վասակի  
հետ և թէ անձամբ, թէ ուրիշների միջոցով  
շարունակ գրդում էր Վարդանին որ ապս-  
տամբութիւնը շուտ հռչակվի։ Օշականի տէ-  
րը հաւատացնում էր թէ ինքը գաղափարի  
համար, հոգու փրկութեան համար է այդպէս  
ուզում։ Բայց պատմիչը մերկացնում է նրա  
իսկական նպատակը։ Դրանք բառեր էին մի-  
այն, Ամատունին Վասակին էր ուզում ֆա-  
սել։ Նա մտածում էր այսպէս. Վասակը կամ  
կը հեռանայ հայոց միաբանութիւնից և իբրև  
թշնամի՝ կը սպանվի ուխտապահ նախարար-  
ների ձեռքով, կամ թէ կը միանայ ապստամ-  
բութեան և այդ բէտքում նրա որդիները

Պարսկաստանում կը սպանվեն կամ բանտի ու տքսորի կը մատնվեն:

Ահա որքան փափուկ ու վտանգաւոր էր հայոց մարզպանի դրութիւնը: Խոստովանենք, որ ոչ ոքից այնքան մեծ զոհ չէր պահանջվում, ինչպէս Վասակից: Մէկը պէտք է չափազանց գրաւված լինէր գաղափարով, անձնազոհութեան գերմարդկային ընդունակութեամբ պիտի օժաված լինէր, որպէս զի կարողանար արհամարեն բոլոր իրողութիւնները, բոլոր վտանգները: Վասակը այդպիսի մարդ չէր: «Երկնաւոր առաքինութիւնից թուլացած մի հոգի» էր դա, որ աւելի լաւ հասկանում էր երկրային գործերը: Եւ եթէ նա տեսնում էր որ Հայաստանը, որքան էլ ոգեսրված գաղափարով, պարսից ոյժի զոհը պիտի դառնայ իրեւ մի թոյլ մարմին, այդ միայն պատիւ կարող էր բերել նրա լուրջ ու նուրբ դատողութեան: Յունաստանի սահմաններից մինչև Հնդկաստանի սահմանները տարածված Պարսկաստանը չէր, որ ընկճվէր մի փոքրիկ ժողովրդի ձեռքին: Եւ այս բոլորը բաւական է, որ իրաւունք տար Վասակին չը միանալու եկեղեցական կուսակցութեան: Մէկից աւելի շատ պատճառներ ունէր նա հակառակ դիրք գրաւելու համար:

Բայց չէ կարելի ասել թէ այդ մարդը մինչև վերջը մնաց զգոյշ, իր երկրի, իր հա-

բազատ ազգի անկեղծ բարեկամ։ Մի ծայրայեղութեան առաջն առնելու համար նա ընկաւ միւս ծայրայեղութեան մէջ և այնպիսի աղէտների պատճառ դարձաւ, որոնք չեն մոռացվի պատմութեան մէջ։ Քաղաքական համոզմունքով պարսկասէր լինելը դեռ մեղք չէր. մեղք չէր լինի, եթէ Վասակը նոյն իսկ սրտանց հակառակորդ լինէր քրիստոնէութեան։ Ազնիւ, շիտակ հակառակորդը ամեն դէպքում իրաւունք ունի պահանջելու, որ դէպի իրան վերաբերվեն յարգանքով։ Սակայն Վասակը չը կարողացաւ այդպիսի հակառակորդ հանդիսանալ։ Նա ունէր բազագագէտի հոտառութիւն, բայց չունէր առաքինութիւն։ Պարսկասիրութիւնը անզուսպ պարսկամոլութիւն դարձաւ նրա մէջ. հակառակորդների ոչնչացումը տօնելու համար մոռացաւ. ամենից առաջ և ամենից շատ մի հայի և ազնիւ մարդու պարտաւորութիւնները։

Սկզբում նա կեղծեց հաւատարմութիւն և գաղափարակցութիւն, որովհետև պէտք էր ժամանակ վաստակել, մինչև որ յանկարծակիի եկած Պարսկաստանը կը կարողանար ցոյց տալ իրան։ Եւ երբ պարսկական բանակները շարժումներ սկսեցին, երբ նրանցից մէկը մտաւ Աղուանից երկիրը, ուր նոյնպէս մոգեր էին գնացել քրիստոնէութիւնը Հնջելու և նոյնպէս դիմադրութեան էին հան-

դիպել, իսկ միւսը, Միհրներսէնի առաջնորդութեամբ, երեաց Հայաստանի սահմանագլխի վրա,—Վասակը այլ ևս աւելորդ համարեց դիմակը և սկսեց այնպիսի գործեր, որոնց համար արդէն չէ կարելի ոչ մի արդարացում գտնել, որքան էլ պարզենք նրա նպատակն ու ձգտութները ամենանպաստաւոր կերպով:

Ամենից առաջ յիշենք նրա յարուցած ներքին, ընտանեկան պատերազմը մի այնպիսի ժամանակ, երբ երկրին սպառնում էր մի մեծ արշաւանք: Ապստամբութիւնը տիրացել էր արքունական տեղերին, այսինքն Արարատեան երկրին: Ահաւոր պայքարի մէջ անկասկած մեծ նշանակութիւն ունէր թէ ում է պատկանում երկրի սիրտը: Վասակը, զգալով այդ կարևորութիւնը, օգուտ քաղեց հայոց զօրքերի բացակայութիւնից և գէնքի ոյժով յետ խլեց այդ տեղերը: Հարուածի դէմ իսկոյն դուրս հանվեց հարուած: Ապստամբութեան տագնապը այնքան մեծ էր, որ նա ստիպված եղաւ շտապով յետ դարձնել այն բանակը, որ Վարդանի առաջնորդութեամբ ուղարկված էր Աղուանից երկիրը՝ պարսից զօրքի դէմ կուելու համար: Վարդանը վերադարձաւ և սարսափելի չափերով գործադրեց «ակն ընդ ական» սկզբունքը: Արարատեան երկիրը նորից խլելուց յետոյ,

նա արշաւեց Վասակի վրա, որ ամրացել էր Սիւնեաց երկրում։ Եւ ի՞նչ տեսարաններ։ «Շատ հարուածներ թափեցին ուրացեալների գլխին, — ասում է Եղիշէն, — մինչև որ սուրբ եպիսկոպոսների ժողովը և քահանաների ամբողջ ուխտը արտասունք էին թափում այն սաստիկ զայրացած մարդկանց վրա, որոնք բորիկ տղամարդկանց և փափկասուն կանանց ըշում էին հետիոտն, այնպէս որ շատ մանուկներ ճանապարհների անցքերում քարերին էին զարկվում»։ Դըժքախտ երկիր։ Դեռ ահարկու փորձանքը չէր հասել նրա դռներին, բայց նա արդէն ծուատվում էր ներքին կրքերից, մոլեգնութեան հասած եղբայրասպանութիւնից։ Քրիստոնէութեան դատը պաշտպանող կուսակցութիւնը միջոցների խորութիւն չէր ճանաչում։ Հաշտութիւն երկու կողմերի մէջ այլ ևս չէր կարող լինել։

Բայց այնքան կատաղութեան հասած ապստամբութիւնը դրսից նայողին ուրիշ մտքեր պէտք է թելադրէր։ Այդ անօրինակ եռանդը յայտնի չափով երկիւղ ազդեց պարսից արքունիքին։ Ժամանակն էլ նպաստում էր այդ երկիւղին։ Յաղկերտը անաջողութեան էր հանդիպել հեփթաղների պատերազմում։ Այդ նեղ միջոցին Միհրներսէնը զգուշութիւն է ձեռք առնում։ Հայերի յա-

մառութիւնը արդեօք չէր ցոյց տալիս թէ  
Պարսկաստանը նրանց ետևում պիտի տեսնէ  
զինված Արևմուտքը:

Եւ իրաւ, դա մի լուրջ հարց էր: Հայերը իրանց բոլորովին անօգնական չէին համարում: Կար քրիստոնեայ Եւրօպան, որ,  
ինչպէս կարծում էին Հայաստանում, չէր թոյլ տայ որ մի փոքրիկ քրիստոնեայ ժողովուրդ տրորվի ասիական վիթխարիի ոտների տակ: Հինգերորդ դարը պատմութեան առաջին շրջանն է, երբ Ասիայի մէջ տառապող փոքրիկ անպաշտպան ազգութիւնը լարում է իր բոլոր ջանքերը ազատութիւն գտնելու համար, յոյսը դրած Եւրօպայի վրա: Նոր երեսյթ է դա, և այդպէս էլ պիտի լինէր, քանի որ քրիստոնէութիւնը անջատել էր այդ ազգութիւնը ընդհանուր միջավայրից, թշնամացրել նրա հետ:

Քրիստոնեայ Եւրօպան հայերի համար այդ ժամանակ Բիւզանդիան էր: Այդտեղ էին հայերը լուսաւորվել, այդտեղ էին սովորել ատել ասիականութիւնը, բռնութիւնը և սիրել ազատութիւնը. այդտեղ էլ նրանք զինակցութիւն էին որոնում իրանց իւրացրած քաղաքակրթական իդէալները ասիականութիւնից պաշտպանելու համար: Դեռ ապստամբութեան սկզբում հայերը պատգամաւորութիւն էին ուղարկել բիւզանդական

արքունիքը՝ օգնութիւն խնդրելու։ Եւ այդ  
օգնութեան վրա յոյս դրած՝ նրանք կը կնա-  
պատկում էին իրանց եռանդը։

Անկարելի է, որ Միհրներսէհը իմա-  
ցած չը լինէր այդ պատգամաւորութեան  
մասին, քանի որ ունէր Վասակի պէս մի  
գործակալ, որ սկզբում, ինչպէս տեսանք,  
կեղծել էր հաւատարմութիւն, հետևաբար և  
լաւ տեղեակ էր ապստամբութեան բոլոր  
գաղտնիքներին։ Պարսից մեծ վէղիրը հար-  
կաւոր համարեց մի առժամանակ թուլացնել  
իր քաղաքականութեան խստութիւնը։ Մին-  
չև իսկ հրատարակվեց Յագկերտի մի հրա-  
մանը, որով նորից թոյլատրվում էր քրիս-  
տոնէութիւնը։ Այդպիսի մի թուղթ հարկա-  
ւոր էր մանաւանդ ապստամբութիւնը ջա-  
տելու համար։ Վասակը գեղեցիկ առիթ ու-  
նէր հայ ժողովրդի մէջ պրօպագանդա անե-  
լու որ այլ ևս ոչինչ երկիւղ չը կայ պար-  
սիկների կողմից։ Բայց քրիստոնէական կու-  
սակցութիւնը հիմքեր չունէր հաւատալու թէ  
դա մի քաղաքական խաղ չէ։ Ուստի չը զի-  
ջեց, զէնքը վայր չը դրեց։ Թէ որքան լաւ  
էր նա հասկանում իրերի դրութիւնը, ցոյց  
է տալիս այն, որ պարսկական հաշտութիւ-  
նը անկեղծ չէր։ Միհրներսէհին ժամանակ  
էր հարկաւոր մի հարց պարզելու։ Այդ հար-  
ցը վերաբերվում էր Բիւզանդիային։ Եւ նա

ուղղակի գիմեց բիւզանդական կառավարութեան, հարցրեց՝ արդեօք ունի՞ նա թշնամական տրամադրութիւն դէպի Պարսկաստանը:

Մարկիանոս կայսրը, որ պիտի պատասխանէր այդ հարցին, հետևում էր այն սկզբունքին թէ մի թագաւոր չը պիտի պատերազմներ յարուցանէ, երբ նրա պետութեան պատիւն ու շահերը վտանգված չեն: Պարսկա-հայկական պայքարը քաղաքական նշանակութիւն չունէր Բիւզանդիայի համար, որ վաղուց վճռել էր հայոց հարցը, բարեկամական համաձայնութիւն կայացնելով Պարսկաստանի հետ՝ Հայաստանի բաժանման մասին: Մենք տեսանք որ քրիստոնէութիւնը միայն ոչ-քրիստոնեայ իշխողներին էր վախեցնում, իրապէս նա նշանակութիւն կարող էր ունենալ մի քրիստոնեայ պետութեան համար այնքան ժամանակ, որքան նրա քաղաքական շահերը պատրուակ էին պահանջում:

Բացի գրանից, Բիւզանդիան այդ ժամանակներում սաստիկ վտանգված էր իր եւրոպական սահմանների կողմից: Ահարկու Ատիլան արդէն շատ անգամ էր ցոյց տուել արևմտեան քաղաքակիրթ աշխարհին իր նուաճողական կարողութիւնը: Բիւզանդիան հարկ էր տալիս նրան և միշտ սպասում էր

որ նուաճողի մի բօպէական քմահաճոյքն անգամ կարող է հեղեղել երկիրը կոտորողների և քանդողների բազմութեամբ. ուստի նա իր զօրքերը կենտրօնացրել էր եւրօպական ցամաքում, և ասիական սահմանները հազիւ էին պաշտպանված:

Սակայն այս հանգամանքը, որքան էլ խոշոր լինի իրեւ պատճառ, այնուամենայնիւ շատ էլ մեծ նշանակութիւն չը պիտի ունենայ պարսկա-հայկական ընդհարումի վերաբերմամբ Բիւզանդիայի բռնած դիրքը գնահատելու համար: Եսամոլութիւնը բիւզանդականութեան հոգին էր: Եթէ Ատիլա էլ չը լինէր, Մարկիանոս կայսրը հայ պատգամաւորներին միայն պաշտօնական համակրանք և բարեհաճութիւն կարող էր յայտնել: Քաղաքականութիւնը սրտի և զգացմունքի գործ չէ, իրական հաշիւների պաշտօնէութիւն է: Այդ հաշիւները, բիւզանդական ըմբռնողութեամբ, այնպէս էին, որ փոխանակ քրիստոնէութիւնը պաշտպանելով, հայ աշխարհի ամենանշանաւոր մասը յանձնեց Պարսկաստանին իրեւ կատարեալ սեփականութիւն և շտապեց օրինակ տալ իր հարեանին թէ ինչպէս պէտք է ջնջել հայերի քաղաքական ինքնուրոյնութիւնը:

Իսկ հինգերորդ դարի կուտղները այնքան միամիտ գտնվեցան, որ հակառակն էին կարծում: Նրանք համոզված էին որ իրանց քաջ դիմադրութիւնները, յամառ մրցութիւնը պիտի մղեն յոյներին դէպի իրական օգնութիւն, դէպի խրախոյս գործով: Այդ մըտքով էլ նրանք իրանց ապստամբական աջողութիւնների մասին շտապում էին լուր ուղարկել կ. Պօլսի եկեղեցականներին, որպէս զի նրանք էլ ողեռվեն քրիստոնէութեան յաղթանակներով:

Միհրներսէհը այդքան միամիտ չէր: Ստանալով հաւաստիացում թէ յոյները տեղից չեն շարժվի, նա սկսեց վճռական ձեռնարկութեան պատրաստութիւնները. քաղաքական խորամանկութիւնը երբէք չէր թողնում այդ պետական մարդուն: Մեծ ճարպիկութեամբ նա սկսեց շահագործել Վասակի բնաւորութեան բացասական կողմերը: Դրա համար բաւական էր որ նա իր ժպիտը ցոյց տայ հայ իշխանին: Վասակը տեսակցութեան գնաց մեծ վէզգիրի մօտ և իր բոլոր ընդունակութիւնները ցոյց տալու համար մանրամասն ծրագիր առաջարկեց թէ ինչ ու ինչ պէտք է անել որ հայերի միաբանութիւնը ճեղքվի, ապստամբութիւնը ուժասպառ դառնայ: Երկու քաղաքագէտները միացրին իրանց ճարպիկութիւնը և ստեղծեցին մի

Խեղղող գրութիւն։ Եղիշէն մեծ կակիծով է պատմում Վասակի արարքները։ Սարսափելի է, երբ տան մէջ հանդէս է գալիս ընտանի թշնամին, և Վասակը ճիշտ այդպիսի թշնամի էր։ Հայերը չէին կարող գաղտնիքներ պահել. նրանց պատրաստութիւնները, նըրանց ոյժը, ամբողջ կազմակերպութիւնը, պատերազմական բոլոր կարգերը, — ամեն ինչ մանրամասն կերպով յայտնվում էր պարսիկներին Վասակի ձեռքով։ Միայն լրտեսելը, գաղտնիքներ իմանալը չէր Վասակի մարդկանց (որոնց մէջ կային և քահանաներ) գործը. նրանք տարածում էին լուրեր թէ զուր և անմիտ է ապստամբութիւնը, թէ իրանի տէրը կրօնական ազատութիւն է տուել իր հպատակներին։

Ապստամբական շարժումը ծանր կորուստներ կրեց։ Դրութիւնը յուսահատական էր ոդառնում. դրսից ոչ մի օգնութիւն, ներսում՝ երկպառակութիւն, լրտեսութիւն, հետզհետէ աճող թուլութիւն։ Ըստ երևոյթին, գաղափարական միացումը վերջնականապէս խորտակվում էր, և ընդհանուր լքումը պիտի թողնէր երկիրը ճակատագրի կամքին։ Եւ եթէ մեր պատմութիւնը զարմանքով, հիացած հաւաստիացնում է, որ այդպիսի երևոյթ տեղի չունեցաւ, պատճառն այն է, որ Սահակ-Մեսրոպեան դպրոցները այդ ծանր հանգա-

Անընեղի մէջ էր պահածուան ժայռերի պէտ  
էին կանգնած ։ «Մարդիկ, արոնք կինզած էին  
միստուծու ալրով, աւուում է Եղիշէն» ։ Երբէք  
ժախէստ ու թուլատիրու չը գտնվեցան և առ  
սենեին երկիւղ չը կընկցին ոչ մահից, ոչ  
արացուածքի յափշտակութիւնից, ոչ պիրես  
լինեսի կոտորածից; ոչ ընթանիքի գերուա  
թիւնից, հայրենի երկրից դուքս քշվելուց և  
օտարութեան մէջ ատրկութեան մատնվելուց։  
Այդ տեսակի մարդկանց հոգին Վարդան  
Մամիկոնեանն էր։ Վաստիկը այս ձկանմական  
դրամայի մէջ մի քարդ տիպ է, որի մէջ մըրք  
ցուք նն դրական և բացատական յատկուա  
թիւնները։ Նրան ճանաչելու համար պէտք է  
նրան շատ և զաւ տառմնասիրել։ հակառաւ-  
թիւնները, ծայրայեղութիւնները, կիրքը,  
փառամոլութիւնը, գործնական խելքը ամեն  
մի քայլում կանգնեցնում են։ մտածել նն  
տալիս Վարդանը — ընդհակառակն։ Մի պարզ  
բնառորութիւն։ Ս. Սահակի թուրք հայ դըմզ-  
րոցի առաջին պառզներից մէկը, պիտի աւ-  
րիւնի դատով ամրապնդէք այն մեծ գործը,  
որ նրա պատճն էր կինդանացրել տասնեակ  
տարիների ։ աշխատանքով։ Գրիգոր Լուսաւ-  
չորչի տահմը շարունակում էր գործել՝ նրա  
մէջ նոյն անվախ, համարձակ հոգին, որ ա-  
ռանց աջ ու ձախն նայելու, ուռանց հաշիւներ  
ելու, գնում էր պարզանքների ու վտանգ

Ներք դէմ իրրև գօքավար՝ Վարդանը թաջէր:  
Եւ այժմ պատրաստվում էր իր նախնիքների  
գործին տալ վերջնական մկրտութիւն — մար-  
տիրառութիւնը:

Անթիւ խմբեր գիմում էին դէպի այգ  
մարտիրոսութեան գաղտք գեպի. Աւարայր Դա  
զինուորական բանակ չեր, դա ժողու-  
գուրդ էր, որին առաջնորդում էր գաղափարի  
մարմնացումը — խաչ միացած սրի հետ. Դը-  
ժուար էր որոշել թէ ուր է վերջանում մէկի  
իշխանութիւնը, ուր է մկավում միախնց  
Վարդանը ճառ է ասում ժողովրդական բա-  
նակի առաջ, այգ ճառի մէջ նա թէ զինուոր  
է և թէ եկեղեցու քարօղիչ Խոսկմ է և ե-  
կեղեցու մարդը, Աւոնդ երէցը. Նրան պատ-  
շաճում էր քարոզել խաղաղութիւն, հեղու-  
թիւն, բայց նրա խօսքը սրի գործն է նուի-  
րականացնում, նրա միջոցով եկեղեցին մը-  
ղում է մարդկանց դէպի. Կոտարած, սրբա-  
ցնելով այգ անհրաժեշտութիւնը հրէական  
պահմութիւնից վերցրած բարձր հայրենա-  
սիրութեան և անձնազոհութեան ոգևորիչ ո-  
րինակներով։ Երկու ճառախօնները պատ-  
են մեծամոռութիւնից, անձնապաստանութիւ-  
նից։ Նրանք չեն թագցնում դրութիւնը, չեն  
մոռանում թէ ինչ ոյժի հետ պիտի ընդհար-  
վեն, չեն կարծում թէ անպատճառ յաղթու-  
թիւն է կանգնած ամենքի առաջ։ Ո՛չ, կուել

քաջութեամբ և նահատակվել առանց ափսոսանքի, առանց վարանումների:

Սկզբից այդպէս էր գրված նպատակը. — նահատակութիւն: Այդպէս էլ պէտք է նայել այդ մեծ մենամարտութեան: Իբրև քաղաքական ձեռնարկութիւն, նա մի խակ, լաւ չը մտածված արկածախնդրութեան է նմանվում. սառն հաշիւը, որ պարտաւորական է մանաւանդ այն դէպքում, երբ մի ամբողջ ժողովրդի վիճակն է տնօրինվում, երբէք չէ կարող խելացիութիւն համարել մի թզուկի մենամարտութիւնը մի հսկայի հետ, երբ չորս կողմում չը կան թզուկին նպաստող հանգամանքներ: Այսպէս սառն դատողների համար վասակը հանդիսանում է և՛ շատ խելօք, և՛ զուր տեղը զրպարտված:

Բայց երեսյթը միայն քաղաքական կողմ չունի, և սառն դատողութիւնը, լօգիկան անզօր են այն դէպքում, երբ հասարակութեան տրամադրութիւնը անչափ բարձրացած է, երբ նա առաջ է նետվում մի իգէալ իրագործելու, մի սուրբ ստացուածք ձեռք բերելու: Հայ ժողովուրդը կամ նրա մի նշանաւոր մասը ուզում էր պաշտպանել իր նուիրական ժառանդութիւնը: Այստեղ էլ նոյն հոգեկան դրութիւնն է, որ տեսնում ենք անհատի կեանքի մէջ, օրինակ, երբ մի հատ մարդ զէնքը ձեռքին դուրս է վազում

վր տան, իր ընտանիքի վրա յարձակվող մի  
ամբողջ հրոսակախմբի դէմ:

Պատերազմը իրանք, հայերն էին ու-  
զում: Քաղաքական տեսակէտից նա միայն  
դժբախտութիւն էր փոքրիկ երկրի համար:—  
Ոչ Պարսկաստանը ընկճվել կարող էր, ոչ  
Միհրներսէնի քաղաքականութիւնը պիտի  
չնշվէր: Դրութիւնը այս կողմից անփոփոխ  
մնաց, մինչդեռ հայերը թուլացան և անհա-  
շիւ վսասներ կրեցին: Բայց պատերազմ պի-  
տի լինէր: Նա հարկաւոր էր ոչ թէ քաղա-  
քական ոյժի և փառքի համար,—ոչ: Նա հար-  
կաւոր էր որպէս զի ստեղծվի մի բարձր հե-  
ղինակութիւն, որ այնուհետև պիտի հաստա-  
տուն, դարաւոր առաջնորդ դառնար ժողո-  
վըրդի մտաւոր ինքնուրոյնութեան, հոգեկան  
անկախութեան համար...

Հ.

Պատերազմող կողմերը Աւարայրի դաշտում:—  
Հայերի թուլութիւնը:—451 թ. յունիսի 2-ի օրվայ  
խորհուրդը:—Երկիրը պատերազմից յետոյ:—Աքսոր-  
ներ, նահատակութիւններ:—Պարսկական կուսակցու-  
թեան կատարեալ յաղթանակը:—Մռայլ տարբիներ:—  
Վատութիւնը և դաւաճանութիւնը խրախուսված:—  
Կերոզի վկայութիւնը իրրե՛ բարոյական անկման ա-  
պացոյց:—Կայծեր տերեակների տակ:—Հայ կանանց  
կատարած դերը:—Սահակ-Մեսրոպեան դպրոցները  
չեն մեռել:—Լեռներում և անտառներում:—Պարս-  
կաստանում:—Զուկի տիկին:—Նորից ապստամբական  
շարժում:—Վահան Մամիկոնեան:—Նրա կազմակեր-  
պած պատերազմական գործողութիւնները:—Երա ա-  
ջողութիւնը:—Այդ աջողութեան պատճառները:—  
Պարսկաստանը նեղ գրութեան մէջ:—Վաղարշ թա-  
գաւորը փոխում է պարսկական քաղաքականութիւնը:  
—Նուարսակի դաշնագրութիւնը:—Երեք պայմաններ:  
Հինգերորդ դարի շարժման ընդհանուր պատ-  
կերը:—Յունականութեան նշանակութիւնը այդ շարժ-  
ման մէջ:—Յետագայ դէպքերը:—Անշատում յունակա-  
նութիւնից, կղզիացում:—Հինգերորդ դարի հեղինա-  
կութիւնը յետագայ դարերի համար:—Ղեկավարող է  
նա, ներքին ոյժ է:—Մեսրոպեան գիւտը իրրե հայ-  
ութեան միակ պաշտպան:—Նոր ժամանակների լու-  
սաւորութիւնը և Մեսրոպի գործը:

---

Հայերը չը յաղթեցին Աւարայրի պա-  
տերազմում, նրանք չէին էլ կարող յաղթել:

Տղմուտ գետի մի ափում կանգնած էր Առ բևմտեան Ասիայի վիթխարի պետութիւնքը ։ Արհամարհանքով, թեթև պատրաստութեամբ չէր եկել նաւ Իրանի ամրող ուազմական հմտութիւնն էր երեսում գաշտի վրա։ Դա այն կազմութիւնն էր, որ կարողանում էր բաղխվել հոօմէական լեգէօնների հետ և տարիներով արշաւանք գործել անապատների և լեռների ազատ որդիների դէմ։ Հընդկական փղերը, Սասանեանների գվարդիան անյազթելի։ Մատեան գունդը, պարսկական բանակի հպարտութիւնն էին կազմում։ Իսկ ինչ էր երեսում գետի միւս ափին։ Վարդանը կարողացել էր հաւաքել 66 հազար մարդ։ Մեծամանութիւնը կոիւ էր եկել առանց պատրաստութեան, չունենալով զէնք ու զրահ անզամ։ Նրան գեղ պէտք էր կրթել ու վարժեցնել։ Վարդանը, որքան ներում էր ժամանակը, պատրաստեց այդ ամբոխը։

Բայց երկիրը աւելի մեծ պատերազմական ոյժ ունէր և Վարդանի բանակը աւելի ստուարաթիւ պիտի լինէր։ և եթէ հետաքրքրվենք իմանալու թէ ուր էին միւս պատերազմողները, պիտի անցնենք պարսից կողմը։ Այդտեղ էին Վասակը և նրա համամիտ նախարարները իրանց գնդերով։ Եւ այսպէս, պատրաստվող կոիւը պիտի լինէր

գլխաւորապէս եղբայրասպանութիւն, մի և  
նոյն ազգի երկու մասերի փոխադարձ ոչն-  
չացում։ Պարսիկները իրանց հաւատարիմ  
հայերին պիտի առաջ քաշէին, իսկ սրանք,  
հաւատարմութիւնը լաւ ապացուցանելու հա-  
մար, պիտի կռւէին իրանց եղբայրների դէմ  
առանձին յամառութեամբ։

Դժբախտութիւնը միայն այսքանը չէր։  
Աւելի ծանր էր այն դժբախտութիւնը, որ  
հայոց բանակում ամենքը չէին գաղափարով  
միացած, մի մարմին ու մի հոգի դարձած։  
Երերվող բնաւորութիւններ կային, շատ շա-  
տերի համար պարզ չէր արիւնհեղութեան  
անհրաժեշտութիւնը։ Վասակը գիտէր այդ. և  
պարսից բանակից էլ շարունակում էր թու-  
լացնել դիմադրութիւնը, երկար բանակցու-  
թիւններ էր վարում որ ուխտապահ նախա-  
րարները ցած գնեն զէնքը։ Խղճալի է այդ-  
պիսի մի բանակը, որի մէջ միութիւն չը  
կայ, որ տարուբերվում է վճռական, ահաւոր  
րոպէին...

Բայց և այդպէս, 451 թւականի յունի-  
սի 2-ի օրը մէկն է այն հազուագիւտ պատ-  
մական օրերից, որոնք յաւիտեան դրոշմվում  
են մի ժողովրդի սրտում և դառնում են ա-  
մենաբարձր, ամենանուիրական մի պաշտա-  
մունք։ Ազգերը ունեն իրանց սեփական տօ-  
ները, որոնց հետ կապված են սըանչելի, յոււ-

զիչ յիշատակներ։ Եւ մեր ամբողջ անցեալում չը կայ մի ուրիշ օր, որ այդ օրվայ հմայքն ունենայ։ Նա ապրում է իբրև ազգային սրբութիւն։ և գուցէ կանյայտանայ նոյն այդ ազգի հետ միայն։

Առաւոտից սկսվեց պատերազմը։ Տեսարանը շատ էլ միսիթարական չէր։ Առաջին բաղխումներից յետոյ հայոց բանակը թուլացաւ, շփոթվեց. նրա մի մասը չը կարողացաւ կանգնել և փախուստ տուեց դաշտից։

Բայց այդ թոյլերն ու վախկումները չէին օրվայ վիճակը տնօրինողները։ Կռւողներ էլ կային դաշտում, քաջ, յամառ կռւողներ, որոնք ամեն ինչ մոռացած՝ առաջ մըղվեցին որ ցոյց տան պարսիկներին մի ժողովրդի ինքնաճանաչութեան ամբողջ բուռն թափը։ Ահա դրանք էին մեծ օրվայ խորհուրդը կատարում։

Կոտորածը մեծ էր, երկու կողմից ընկան հազարաւոր մարտնչողներ։ Ծանր, ճընշող էին հայերի կորուստները։ Վարդանը չուզեց պահպանել իրան. վաղուց նա ձգտում էր դէպի մարտիրոսութիւն, իսկ կազմալուծված բանակը պիտի նրան աւելի ևս համոզէր, որ այլ ևս չարժէ ապրել։ Եւ նա սահգտաւ իր զինուորների շարքում, պատերազմի փոթորիկի մէջ։ Նրա հետ ընկան և միա-

բանված նախարարութեան ժաղիկները։ Դիտ  
ակների մի ահաւոր կոյտ։ Նրանց արիւնով  
գրվեց պատմութեան էջերում մեծ եղելու-  
թիւնը։ Արեելեան հարցի բազմադարեան  
արիւնոտ շղթայի մի օղակն էր գտրընվում  
Տղմուտ գետի ափին։ Հայի արիւնը վազում  
էր իրանականութեան յանգուգն արշաւանքի  
առաջն առնելու համար։ Այդ արիւնը վերջ-  
նականապէս ճեղքում, պատառում էր ժա-  
մանակի դարաւոր շրջանները. անցեալը գլո-  
նում էր անվերադառնալի կերպով, հաս-  
տառվում էր նոր ներկան։ Հայութիւնը  
ստանձնում էր որոշ հաստատուն վիճակ, մի  
ծանր, մարտիրոսական գեր. նա դաւնում  
էր քրիստոնէութեան առաջաւոր պահակը  
Ասիայի այս խուլ անկիւնում, որ արիւնա-  
ծարաւ ցեղերի և վայրենի պաշտամունքների  
մի խառնարան էր դարերի սկզբից։

Բայց այդ մկրտութիւնը, այդ նոր կո-  
չումը չափազանց թանգ նստեց հայերին։  
Երկիրը բեմ էր հանել իր բոլոր ընտիր ոյ-  
ժերը։ Դրանցից դիակների կոյտեր կազմվե-  
ցին, բայց այդ կոյտերը դեռ մնասների վերջ-  
շէին նշանակում։ Կորուստը այն 1036 հոգի-  
ները չէին, որոնք սպանվեցին պատերամմի  
դաշտում։ Երկարատև տանջանքները, որոնք  
հոգեկան աւելի մեծ կարողութիւն էին պա-  
հանջում, սկսվեցին պատերազմից յետոյ:

Դիմադրութեան ոյժը սպառվել էր, իսկ պարագիները Աւարայրից Պարսկաստան չը վերադարձան, այլ զօրքի մի մասը մտցրին Հայաստան։ Ազստամբութիւնը ամրացաւ լեռներում և մի տուժամանակ՝ կարողանում էր փոքրիկ խմբերով յարձակումներ գործել պարսիկների վրա։ Քայլ այդ գիմագրութիւնն էլ սպառվեց. Վարդանի եղբայր Հմայշեակը սպանվեց այդ փոքրիկ յարձակումներից մէկի ժամանակ։

Այսուհետեւ պարսիկները սկսեցին ահարեկել ազգաբնակութիւնը, դատել ու պատժելու վասակը պարսից զօրապետի խորհրդականն ու ղեկավարն էր։ Նրա ցուցմունքներով ազստամբութեան գլխաւորները կալանաւորվեցին և քշվեցին. Պարսկաստան իրեւ պետական յանցաւորներ, իսկ երկրորդական գործիչներին սպանեցին տեղն ու տեղը. Պարսկաստան քշվածները երկու կարգի էին հոգեորականներ և աշխարհականներ։ Առաջիններին պարսից կառավարութիւնը չը խնայեց. Նևոնդ երեցը, Յովկէփ կաթողիկոսը և այլ աչքի ընկնող հոգեորականներ մասն վեցին. Երկար տանջանքների, սպան և դահիճների ծեռքը։ Մինքներանից աւելացնում էր նահատակների թիւը, չիժանարով որ դրանով քրիստոնէութեան համար ոյժի նորագրիւրներ։ Է բայց անում իսկ նախարարը

Ներին, որոնց թիւը համսում էր 35—37-ի, պահեցին գերութեան մէջ:

Այս բոլոր հարուածները թափվում էին Սահակ-Մեսրոպեան դպրոցների վրա: Աւեր-վել էր երկիրը, բայց նրանց կրած աւեր-մունքը աւելի մեծ էր: Մնացել էին թոյլ ու փոքր բեկորներ միայն, որոնք քրիստոնէութեան հաւատարիմ մնացած տարրերի հետ հալածական էին դարձել և ապաստան գտան լեռների ու անտառների մէջ: Ի՞նչ էր թողել Աւարայրը: Երկիրը կորցրել էր իր տնտեսական բարօրութիւնը, նրա քաղաքական ոյժը ոչնչացել էր: Եկաւ դժբախտ տարիների մի երկար շարք, երբ ամեն ինչ ձեռքից գնացած էր երևում, երբ թւում էր թէ ապստամբական շարժումը ոչինչ չէ թողել երկրին, բացի տանջանքներից և դժբախտութիւնից:

Գեղեցիկ, կենսատու վերածնութեան յաջորդեց մոայլ անտէրութիւնը. ասիականութիւնը շտապեց չորացնել լուսաւորութեան, առաջադիմութեան ծաղիկները.—այս է եղել նրա կոչումը միշտ:

Պարսկական կուսակցութեան կատարեալ յաղթանակն էր: Վասակը չը վայելեց իր ջանքերի պտուղը. նրան էլ կանչեցին Պարսկաստան, ուր Ղեղոնդը և նախարարները ծանր մեղադրութիւններ բարդեցին նրա

վրա, բոլոր չարիքների պատճառ ցոյց տուին  
նրան և իբրև ապացոյց՝ բերին այն, որ Վա-  
սակը ապստամբութեան սկզբում քրիստո-  
նեայ կուսակցութեան կողմնակիցն էր։  
Միհրներսէհի համար դա մի լաւ առիթ էր  
հեռացնելու Հայաստանի կառավարչին, որ,  
այնուամենայնիւ, մի հայ էր։ Բայց Վասակի  
կողմնակիցների դրութիւնը այդպէս չէր։  
Նրանք գլուխ բարձրացրին Հայաստանում,  
նրանցն էր աջողութիւնը, նրանք էին տի-  
րում ու վայելում։

Մուայլ ըէակցիայի ամենավտանգաւոր  
երեսյթը այն քաղաքականութիւնն էր, որ  
մտցրեց պարսից կառավարութիւնը Հայաս-  
տանի մէջ։ Քրիստոնէութիւնը ջնջող կար-  
գադրութիւնը չը վերացվեց, բայց պարսիկ-  
ները աւելորդ համարեցին այլ ևս բռնու-  
թիւնների դիմելը։ Կարելի էր այնուհետե  
խաղաղ միջոցներով տարածել մազդեզակա-  
նութիւնը։ Իսկ խաղաղ միջոցների գլխաւո-  
րը այն խրախոյսն էր, որին արժանանում  
էր ամեն մի հաւատուրացութիւն։ Կաշառք-  
ները, աշխարհային բարիքները պիտի կա-  
տարէին այն, ինչ պարսիկները ուզում էին  
իրականացնել զէնքով և հրամանով։ Ով ու-  
րացող էր հանդիսանում, ով օգնում էր պար-  
սից մոգերին, ով մատնում էր իր դժբախտ  
հայրենակիցներին, նա արժանանում էր

Փիտոքի և հարժառակթեանն, պահառամ, էր հոգաւ նաև ողութիւնն, շրջում էր բարձրագույս, իբր յեւ իրաւաւեց, ու առաջազնական զիւռ ու այլ Այս ամսակ մթնոլորտաւմ, կարող են զարդարաւ միայն սպոր, հակումները, կեյդ ծաւորութիւնը, պահութիւնը, պրավաճառ ու դութիւնը, զարձանն, կեանքի խմառութիւնը, աջողութեանը, գրաւականը, Անբարոյականութիւնը և կախութեանը, անբարձ լայն չափերով, դարձած ամի անգելի չափիք, որից իրկիրը առ և ելի շատ էր տանջվում, քան նոյն իսկ պատ պերապականն, աւերմունքներից, Եւ պարագները, իրանուք պահանձան, մերժութեանը, անպիտան, մարդու բայց, այդպիսի չեր խօսում նրան, հայր, Յագ կերտը, Վարդը, ասում էր, «Իմ պետութեան մէջ անպիտան, մարդը, և յետին գունդը ասորին է, բայց ասորուց առ և ելի հայն է, յետին, և անպիտան, մարդը բայց այդպիսի չեր խօսում նրան, հայր, Յագ կերտը, Վարդանի, հայ նախարարների և առ հասարակ հայ գործի մասին, իրանի մէջ հայր կական, հեծելագործը շատ բարձր համբաւ ուներ գեռ հին ժամանակից, Երբ խրախուսչ վում են միայն սպոր, հակումները, երբ ան արդարութիւնը գաւնում է, գեկավաբազ սկզբունք, մարդկանց մէջ կորչում է առարինութիւնը... սա, բնական է, և գարմանափ չէ որ հայ ժողովուրդը, մի կարճ միջոցում այդքան ընկեր էր...

Եւս լքման, կաղմակուծովթեան, արև  
շրջանը երկար շարամակվեց Մեռաւ Յազ-  
կերածը, թագաւորեց նրա որդի Պերոզը, որը  
սպայն, իր օնքը հիգութեան էր նկտեածէ  
Մինքներսէնը հեռացաւ ասպարէզից և Պե-  
րոզը միայն այն արաւ, որ բաւարկան համար-  
քեց հայ նախարարների գերութիւնը, արև  
ձակեց նրանց Աօտ 15 տարի գերութիւն և  
կարգանքներ կրելուց յետոյ վերագարծան  
նրանք իրանց հայրենիքը բայց այդ վերա-  
գարծը փոփոխութիւն չը մոցրեց դրութեան  
մէջ, իշխանները գտնան զառնթեան մասնված  
մի երկիր ուր թոյլատրված էր միայն պարա-  
կամոլութիւնը և պակվում էր միայն սուս-  
րութիւնը նրանք ստիպված պիտի լինէին  
քաշվել իրանց կալուածները, ապրել իրանց  
կարօտած ընտանիքների ծոցում».

Բայց ամեն ինչ կորած չէր Կայծեր  
էին մնացել աւերակների տակ: Մինչգետ  
Հայաստանի քաղաքներում և գիւղերում  
պաշտպում էր կոպիտ ճիւթականութիւնը և  
ամեն ինչ ծախու, էր մի կոորդ փառքի, մի  
կոորդ հարստութեան համար, գաղղափառա-  
կանութիւնը, հոգևոր բարձր շաների պաշ-  
տամունքը մոռացութեան ապաստաններ էր  
որոնում լունային կիրճերում, անտառների  
մթութեան մէջ, տանջվառ էր լուս, նաև  
առակվողի համբերութեամբ: Քրիստոնէու-

թիւնը թագնված կրօն էր: Նրա հետ սարերնու  
ու անտառները քաշվեց այն ամենը, ինչ  
մնացել էր լուսաւորութեան և գրագիտու-  
թեան փայլուն ժամանակից: Այդ թանգագինու-  
թեկորները սուրբ աւանդի պէս էին պահ-  
վում վայրենի և անլոյս տեղերում, զրկանք-  
ների, կենդանի նահատակութեան այն աշ-  
խարհում: Եւ աւանդապահները մեծ մասամբ  
հայ կանայք էին: Ո՞ւմ չեն յայտնի Եղիշէի  
այն գեղեցիկ, բանաստեղծական էջերը, ուր  
հայ կինը հանդէս է գալիս իրրե կոչման,  
անձնազոհութեան սքանչելի օրինակ: Երկի-  
րը դատարկվել էր, բոլոր լաւագոյն ոյժերը  
հեռացրված էին այնտեղից: Եւ այդ ժամա-  
նակ ազնուական հայ կինը դուրս է գալիս  
իր ապարանքներից, որպէս զի բռնէ իր տանջ-  
ված, տարագիր ամուսնու տեղը: Կուել, յաղ-  
թել նա չէր կարող, բայց դրա փոխարէն  
զինվեց անսահման անձնազոհութեամբ և գը-  
նաց լեռներում, բնութեան անմատչելի վայ-  
րերում պահելու այն, ինչ չէր կարելի պա-  
հել տանը այդ ապականված ժամանակնե-  
րում: Այդ կամաւոր զրկանքների մէջ հայ  
փափկասուն տիկիններին ոգևորողը, միխ-  
թարութիւն տուողը Սահակ-Մեսրոպեան  
գանձն էր: Նրանք մըմնջում էին աղօթքներ,  
նրանք կարդում էին հոգևոր գրքեր:

Իսկ նրանց գերի ամուսինները և սի-

րելիները Պարսկաստանի խորքերում նոյնպէս ուրիշ միսիթարութիւն չունէին, բացի գրքերից։ Նախարարների հետ գերի էին գընացել և շատ ազնուական երիտասարդներ։ որոնք վարակվել էին ընդհանուր ոգևորութեամբ, բայց դեռ չէին ճաշակել այն սբրութիւնը, որի համար կուում էին։ Եւ ահա հեռու հայրենիքից, գերութեան և տառապանքների մէջ, կարելի է նշմարել մի այսպիսի տեսարան։ Հասակաւոր նախարարները երիտասարդների ուսուցիչ են դառնում, սովորեցնում են մայրենի դպրութիւնը։

Հայաստանի սահմաններից դուրս էր դարձեալ, որ Մամիկոնեան տան մի այրին, Զուիկ տիկինը, Վարդանի եղբայր Հմայեակի ամուսինը, իր երեխաներին դաստիարակեց, գիր սովորեցրեց։ Զուիկ տիկինն էլ Սահակ-Մեսրոպեան դպրոցների մի պտուղն էր։ Եւ նրա դաստիարակութիւնը պատրաստեց մի այլ մարտնչող հայրենի ազատութեան և մտաւոր անկախութեան համար։ Դա նրա որդի Վահանն էր։

Ահա ուր էին թագնված կայծերը։ Հայը սկսել էր պաշտել իր մայրենի գրականութիւնը, որ և թոյլ չը տուեց նրան կորչել ժամանակի վատութեան մէջ։ Նա սկսեց նուրից պատրաստվել իր դատը պաշտպանելու համար։ Եւ Աւարայրի ճակատամարտից հա-



մանր, յամառ ժողովրդական պատերազմ, որ  
երկար տևեց, յաղթական էր և չէր նեղուս  
ժողովուրդը, չէր լարում նրա ամբողջ ոյժե-  
րը։ Մի թոյլ ու խեղճ երկիր այդպէս միայն  
կարող էր կռւել. Վարդանի սխալներից մէկն  
այն էր, որ նա չը հասկացաւ այս իրողու-  
թիւնը և միանգամից սպառեց երկրի ոյժերը։

Մօտ չորս տարի հայերը այս եղանա-  
կով կռւեցին պարսիկների դէմ։ Եւ Վահանը  
իր հօրեղորից անհամեմատ բախտաւոր էր,  
նա հասաւ իր նպատակին։ Բայց միամտու-  
թիւն կը լինէր կարծել թէ միայն այդ մա-  
նըր յաղթութիւններն էին աջողութիւն պատ-  
րաստում։

Պարսկաստանը նոր չը պիտի սովորէր  
երկարատե, յամառ պատերազմներ մղելը,  
իսկ նրա ոյժերը բաւական էին որ հայերը  
վերջ ի վերջոյ յոգնէին և անձնատուր լինէին։  
Վահանին միայն քաջութիւնն ու աջողակ  
գործողութիւնները չէին հովանաւորում։ Ա-  
ւելի զօրեղ հովանաւոր հանդիսացան քաղա-  
քական հանգամանքները։ Երբ գլուխ քարձ-  
րացրեց Վահանի ապսամամբութիւնը, Պարս-  
կաստանը ոչ մի զիջումի մասին չէր էլ մտա-  
ծում. նա իսկոյն զինուրական ոյժ հանեց  
ապստամբութիւնը ճնշելու համար, և եղաւ  
մի ժամանակ, երբ նա համարեաւ հասել էր  
իր նպատակին։ Բայց անակնկալ կերպով նրա

գլուխը խառնվեց և բախտը առ ժամանակ  
երես դարձրեց նրանից:

Պերողի թագաւորութեան վերջը շատ  
գժիքախտ էր: Նա պատերազմի բռնվեց հեփ-  
թազների հետ (484) և մի մեծ ճակատա-  
մարտի մէջ սպանվեց: Հեփթազները ոզողե-  
ցին Պարսկաստանը, քարուքանդ արին նը-  
րան: Դահը առժամանակ թափուր մնաց,  
պարսիկները պիտի մոռանային ամեն ինչ և  
իրանց ներքին գործերը կարգաւորելու մա-  
սին էին մտածում: Վերջապէս Պերողին յա-  
ջորդեց Վաղարշը, որ ամենից առաջ ցոյց  
տուեց թէ վերանում է վաթսուն տարվայ  
պարսկական այն քաղաքականութիւնը, որի  
ամենամոլեռանդ ներկայացուցիչն էր Յաղ-  
կերտ երկրորդը: Վաղարշը մոգերի և աղ-  
նուականների տիրապետութեան դէմ գնաց.  
այդ կողմից նա Յաղկերտ առաջինի ժա-  
ռանգն էր: Եւ բացվեց հին, ծանօթ տեսա-  
րանը—սաստիկ մրցութիւն պարսից արքու-  
նիքում: Մոգերն ու մեծամեծները իրանց  
ազդեցութիւնը ձեռքից չը տալու համար  
կորիւ սկսեցին թագաւորի դէմ: Նշանակում  
էր որ քրիստոնեաները կարող են հանգիստ  
ապրել:

Ահա թէ ինչն էր Վահան Մամիկոնեա-  
նի աջողութեան գլխաւոր պատճառը: Վա-  
ղարշը յօժարութիւն չունեցաւ հայերի դէմ

Կրօնական պատերազմ շարունակելու. Նա աւելի մեծ հոգսեր ունէր: Հեփթաղների արշաւանքը դատարկել էր պարսից գանձարանը, իսկ առանց դրամի թագաւորը չէր կարող իր կողմը գրաւել զօրքը և առհասարակ կաղմել կուսակցութիւն՝ մոգերի և իշխանների ջանքերը ոչնչացնելու համար:

Այս շատ կարեոր հանգամանքը, սակայն, աւելորդ չէ դարձնում Վահանի ապստամբական գործողութիւնները: Եթէ չը լինէին նրանք, եթէ զէնքով և արիւնով մի երկարատև բողոք չը պահպանվէր պարսկական բէժիմի դէմ, Վաղարշը ոչ մի առիթ չէր ունենայ Հայաստանի վերաբերմամբ կարգադրութիւններ փոփոխելու: Իր երկրի հոգեորականութեան դէմ մղած կռիւը դեռ չէր նշանակում թէ նա Սասանեան տոհմից չէ, ոչ էլ ջերմեռանդ մազդեզական: Քաջ, յանդուգն դիմադրութիւնը, որ չէր թուլանում Հայաստանի մէջ, հասկացրեց նրան որ այդպիսի մի դժուար ժամանակամիջոցում աւելի լաւ է խաղաղութիւն հաստատել: Եւ նա հայերին նոյն իսկ պատերազմող կողմ ճանաչեց և հաշտութեան բանակցութիւն սկսեց:

Հայաստանի սահմանագլխի վրա, Հերգաւառի նուարսակ գիւղում, պարսից և հաւոց լիազօրները մշակեցին հաշտութեան

պայմանները։ Հայերը չէին էլ մտածում պարսկական հպատակութիւնից ազատվելու մասին։ Նրանք միայն պահանջեցին իրաւունքներ, արդարութիւն։ Այդ պահանջը ձևակերպված էր երեք կէտերի մէջ։

Առաջինը և ամենակարևորը, իհարկէ, կրօնական ազատութիւնն էր։ Քրիստոնէութիւնը պաշտօնապէս ճանաչված և քաղաքական իրաւունքներ ունեցող կրօն է յայտարարվում։ պարսիկները հայերին չը պիտի գրաւեն դէպի մոգութիւն, և հաւատափոխութիւնը չը պիտի վարձատրվի իշխանութեան և հարստութեան հրապոյցրներով։ Հայաստանի մէջ մտցրած մաղղեզականութիւնը վերացվում է։ Քահանաները և աշխարհականները իրաւունք ունեն բացարձակ կերպով քրիստոնէութիւնը պաշտելու ուր և կամենան։

Պակաս կարենոր չեն և միւս երկու կէտերը։ Հայերը առաջարկում էին որ վատ ու անպիտան մարդկանց պարսից կառավարութիւնը առաջ չը քաշէ, երկրի իսկական տրամադրութիւնը և բուն հանգամանքները իմանալու համար նրանց չը դիմէ ու նրանց չը լսէ և հաւատայ։ Թագաւորը անմիջապէս, առանց միջնորդների է գործ ունենում հայ ժողովրդի հետ։ Նա անձամբ քննում է իմանում է ամենինչ և ապա գատաստան է անում։

Այս արմակցութիւնների մեջ հրեական է մի առնապատճ ժողովրդի ձեռք բերած փոքրձայն առաջնորդը Այստիղ մենք տեսնում ենք թէ ինչ ցաւերից եր տանջվառմ իայ ժողով վարպը ինչ անարգառութիւնների զէմ եր բոգարում վարսագի ենթարկելով իր ամբողջ բարեկեցութիւնը Կեանըն անդամ:

Եւ արիւնութ ջանքերը վերջապէս բերին իրանց պարզները երեք պայմանների եւ ընդունվեցին Վահանը Հայաստանի մարզշպան նշանակվեց Ահա այստեղ միայն ջնջվեց ծագկերտ երկրորդի այն հրամանը որով քրիստոնէութիւնը ոչչացրված էր Հպահատանում մահանի մարզպանութիւնը խաղաղութիւն և քարեկարգութիւն քերից Կրօնը ստացաւ իր արժանաւոր գիրքը նու ալլ եղ գործիք չէր քանիում փառասէր պատճարդշկանց ձեռքին որոնք ծախու եին հանում նբան պարսից հրապարակներում պատիւ հարստութիւն ստանալու համար Մի հաշշիւ որի պատճառով Հայաստանը լցվել եր ուրացողներով և դպրաճաններով:

Այսպէս վերջացաւ հինգերուր գարե շարժումը Ութսուն տարվայ մի արջան է գար որի պատճառով գրված է հայոց տառերի գիւտը (404) իսկ վեցչն է Նորապակի գարշ

նադրութիւնը (485): Քառասուն տարի հայ ժողովուրդը սովորում էր Սահակ-Մեսրոպեան գրականութիւնը, իսկ երեսուն և հինգ տարի (449-ից) պաշտպանում էր իր ստացածը սրով, նահատակութիւններով, տանջանքների գնով։ Հազիւ թէ հին ժամանակներում ասիական երկիրներից մէկի ժողովուրդը այսքան ճիգ թափած, այսքան յուզումներ կրած լինի իր բարոյական և մտաւոր երջանկութեան համար։ Հազիւ թէ մի ուրիշ երկրում ասիականութեան և եւրօպականութեան պայքարը այսքան մեծացրած լինի պատմական արիւնոտ դրամայի չափերը...

Հինգերորդ դարից դէնը մենք չենք անցնի։ Նուարսակի հաշտութիւնը Սահակ-Մեսրոպեան գործի քաղաքական յաղթանակն էր։ Բայց մի քանի խօսքով կը գծագրենք նրա ապագայ ճակատագիրը։

Կոիւների, տանջանքների, քաղաքական թշուառութիւնների ամբողջ պատճառն այն էր, որ յունական սկզբունքներն էին թագաւորում այդ գործի մէջ։ Բայց շուտով, դեռ հինգերորդ դարի վերջանալու վրա, կտրվեց կապը արևմտեան լուսաւորութեան հետ.— հայոց եկեղեցին բաժանվեց յունականից, չը համաձայնվելով դաւանական այն սկզբունքների հետ, որ մշակել և ընդունել էր Քաղկեդօնի ժողովը։ Այդ բաժանման մէջ գուցէ

և քաղաքական անհրաժեշտութիւն կաք. գուցէ Պարսկաստանի կասկածներից ազատվելու միջոցներից մէկն էր դա: Կատաղի թշնամութիւն ծագեց երկու եկեղեցիների մէջ: Պարսիկները և նրանց յաջորդած մահմեղական իշխողները կարող էին հանգիստ մնալ դոնէ այն կողմից, որ հայ-յունական միութիւն չէր կայանայ, քանի որ յոյները մազդեզականներից և մահմեղականներից պակաս խստութեամբ չէին հալածում հայերին, համարելով նրանց հերձուածողներ:

Եւ չը մնաց քրիստոնեայ մի երկիր (եթէ չը հաշւենք Աղուանից աշխարհը), որի հետ հայերը դաւանակից և բարեկամ լինէին: Կրօնական առանձնութիւնը ազգի համար բերեց կատարեալ կղզիացում, որ աղէտալի էր քաղաքական տեսակէտից: Բայց այդ անջատումը չէր նշանակում թէ հայերը կտրվեցին Արևմուտքից, նորից ընկան ասիականութեան գիրկը: Առանձնացումը չընդհատեց աշխատանքը: Հայոց եկեղեցին աւելի ևս ազգայնացաւ, աւելի նեղ, սահմանափակ շրջանակի մէջ ամփոփվեց. նա չը մօտեցաւ ոչ նեստօքականներին, ոչ յակորիտներին, ոչ քաղկեդօնականներին, այլ դարձաւ հայ ազգի ինքնուրոյն աշխատութեան, մտաւոր կարողութեան մի շինուածք, որ իր կղզիացած գրութեան մէջ, իր տանը բաւական հիւթեր

գրուա իր գոյութիւնը ջարունակելու համար Եւ այդ հիւթեալը հինգիրորդ գաճում Ծնդունակ ընդհանուր քրիստոնէականեակելութեալ կան ակզրունքներն էինք առ առ իւղի վեհական

Ներկված այնքան նպաստելի էրի ։ այս  
ըրմանով, անսովոր գիացը սպասած այնքան ըն-  
դունակ, ատարանորաւոր գործիչներից, հինգը  
երրորդ դաշը յետագայ ժամանակին երի համար  
ոչ միայն գրանցան ունկեղաք էք այլ և մի-  
այնպիսի նույիքական հեղինակութիւն, որի  
դէմ ոչինչ չէք կարող գուշտ գալ ։ Հայերին  
հինգերորդ դարի վերջաւմ առաջնորդեցին ըն-  
դունել Քաղկեդօնի ժողովը։ Ան էր Այգակի-  
սի մի հարց կարող էին մնանել մեծ շարժման  
մարդիկ ։ Նրանք չը կարողացան վճիռ կայտ-  
ցնել, որովհետեւ Քաղկեդօնի ժողովը տեսլի  
ունեցաւ այն իսկ տարին, երբ Առաջարարէ  
պատերազմն էր պատրաստավում։ Այնուհետեւ  
յայտնի դարձաւ որ հայերը միայն այն կառ-  
ըող էին պահպանել, ինչ մնացել էք Սահմա-  
ներից, Մեսրոպներից, Հեռնդներից։

Եւ դաւանական տեսակէտով ոչինչ մնատ  
չը կար դրանից։ Այժմեան ժամանակի քրիս-  
տոնեայ անթիւ եկեղեցիները այն են ցոյշ պառ-  
լիս, որ իւրաքանչիւր ժողովուրդ իր տեսակ-  
է ըմբռնում կրօնը։ Այսպէս է եղել դարերի  
սկզբից։ Երկնքի համար նշանակութիւն ու-  
նեցողը ըրիստոնէութիւնն է և ոչ թէ մարդ-

կանց ստեղծած ծէսերն ու ձերը։ Հայոց ե-  
կեղեցին ապրում էր իր համար, դաստիա-  
րակվում էր հինգերորդ գարի գրականու-  
թեան վրա, որ ամբողջ ժամանակ բարձր հե-  
ղինակութիւն մնաց, մի և նոյն ժամանակ  
մտաւոր փոխառութիւններ էր անում Արե-  
մուտքից, որքան այդ թոյլ էին տալիս քա-  
ղաքական դժբախտ հանգամանքները։

Իսկ այդ հանգամանքները երկար ու  
երկար կախված էին հայոց աշխարհի վրա։  
Արիւն-աւերանքի դարեր եկան ու գնացին,  
գահեր հիմնվեցին, գահեր խորտակվեցին,  
ազգաբնակութիւնը սպառվելու չափ ջնջվեց,  
ստրկութեան ամենաղաժան լուծեր կրեց իր  
վզին։ Բայց խաւարի ու անէծքների մէջ չէին  
մարում կենգանութեան կրակները։ Դրանք  
ամեն ժամանակ, ամեն տեղ մի և նոյն կեր-  
պարանքն ունէին—Մեսրոպեան գիրը։ Մեր  
հազարամեայ անցեալի այն երկար ճանա-  
պարհին, որի վրա փոված են մեր անհուն  
տառապանքները, ոչ բանակներ ունէինք մեր  
պահպանութեան համար, ոչ ոյժ, ոչ հնա-  
րաւորութիւն, ոչ էլ դրսի օգնութիւն, այլ մի  
հատիկ բան միայն—Մեսրոպեան գիրը։

Կամենո՞ւմ էք տեսնել նրա հրաշագոր-  
ծութիւնը, դիտեցէք մեր պատմութեան ա-  
մենամռայլ, զարհուրեցնող շրջանները, երբ  
բռնաւորի սուրը գերեզմանոց էր գարձնում

մեր երկիրը։ Դուք կը տեսնէք խաւար և մեռելութիւն, գրականութիւնը դադարում է, երկիրը վայրենանում է, անապատի փոխվում։ Բայց մէկ էլ նշանաբարում էք, որ մի փոքրիկ լոյս վառվեց։—հեռաւոր մի խորշում բացվել է դպրոց և մարդիկ գիշեր-ցերեկ գիրք են կարգում։ Փոխվում է տեսարանը։ Կամաց-կամաց երևան են գալիս մարդիկ, աշխարհը ձգուում է դէպի բարեկարգութիւն և արիւնոտ պատմութեան էջերում լոյս են տալիս ժպիտ ու յոյս պատճառող երևոյթներ։

Անցան բռնութեան երկաթէ գարերը, նոր ժամանակներ լուսացան, երր ազգերը պիտի մկրտվէին եւրօպական լուսաւորութեան մէջ։ Գրականութիւնը բաժանվեց եկեղեցուց, աշխարհիկ կերպարանք ստացաւ։ Հայերի առաջ էլ դրված էր լինել—չը լինելու անողորմ հարցը։ Այդ խորհրդաւոր ժամանակում դարձեալ Մեսրոպն էր, որ եկաւ մեզ առաջնորդելու դէպի այդ նոր պահանջը։ Եւ մենք էլ մտանք կրթվող, առաջադիմող ազգերի շրջանը։

Հազար հինգ հարիւր տարի է ահա, ինչ մեզ հետ է Մեսրոպը։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Հանգարտ ու հեղիկ սահում է ամառային օրը Օշականում։ Կանաչներ, ստուերներ, յուլիսեան ջերմ լոյսեր։

Ս. Մեսրոպի փոքրիկ ծառերը կամ օրորում են իրանց ճիւղերը, վրադ թափելով երերուն, թոթող շուաքներ ու մնդմ շշուկների քրթմնջիւն, կամ անշարժանում են որ արևը լաւ տաքացնէ նրանց։ Ամեն ժամանակ նրանց բուների մօտ ստուեր կայ, իսկ այդ ստուերի մէջ խտացած են գարերը։ Նըրանք խօսում են, նրանք պատմում են։ Այստեղ ամեն ինչ պատմութիւն է, այստեղ բացված են գերեզմանները։

Ու միմեանց ետևից ուղևորին հրաժեշտ են տալիս Օշականի համեստ, բայց անմոռանալի գեղեցկութիւնները։

Ահա ծածկվեց Վահան Ամատունին։ Աւարայրի կուղներից էր, կենգանի մնաց, գերի գնաց նախարարների հետ Պարսկաս-

տան, վերագարձաւ, իր ուսուցչի մօտ հող  
մտաւ: Ամատունեաց այս գաւառը Վարդանի  
ժամանակ չը մոռացաւ որ Մեսրոպ ունի իր  
հողում: Նա զինված էր ամբողջովին, Ղեռ-  
դի և Յովսէփի հետ էր: Կուի գաշտ գնա-  
ցին, գերութեան տանջանքները ճաշակեցին  
և Ամատունի տոհմի կրտսեր իշխանները:

Արգէն ձորն ենք իջել, Քասախը իր  
վճիտ, աղմկարար ալիքներով բարի ճանա-  
պարհ է մաղթում գնացողին: Եւ յետոյ—եր-  
կնքի մէջ խրված պապղուն գագաթները—  
Արագած ու Մասիս:

Դարձեալ Արարատեան կրակված դաշ-  
տը, գարձեալ տօթ ու տանջանք: Բայց Օ-  
շականի յիշատակները նստած են քո մէջ,  
բոնել են սրտիդ բոլոր խորշերը: Նրանք  
քաղցր, անմեռ զգացմունքների աղբիւր դար-  
ձան, և այլ ևս ոչինչ չէ կտրող չորացնել  
կամ սառցնել այդ աղբիւրը—ոչ այս խեղ-  
դող տօթը, ոչ Մասիսի սառցարանները:

Մեսրոպ ամեն տեղ: Միշտ Մեսրոպը...

the American Society for Microbiology, 1938, p. 12.

**ФРУНЗЕНСКИЙ**

15. Հ. Գ. Մէն. Մագումն հայ տառից (մատենախօս.)  
Հանդէս Ամսօրեայ, 1896.
16. Նքրայր Ն. Բիւզանդացի. Կորիւն վարդապետ և  
նորին թարգմանութիւնք. Թիֆլիս, 1900.
17. Պրօֆէսօր Հ. Գելցէր. Համառօտ Պատմութիւն-  
Հայոց. թարգմ. Հ. Գ. Պալէմքեարեան. Վիեն-  
նա, 1897.
18. Հ. Արսէն Այտընեան. Քննական Քերականու-  
թիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լե-  
զուր. Վիեննա, 1866.
19. Масперо. Древняя История Востока. М. 1894.
20. И. Г. Дройзенъ. История Эллинизма. 3 т. М. 1890.
21. Т. Момсенъ. Римская История 4. т. М. 1887.
22. В. Коршъ. Всеобщая История Литературы. т. I, Спб.  
1880.
23. Г. Кольбъ. История Человѣческой Культуры. т. 4,  
Кievъ, 1897.
24. А. Мензисъ. История Религій. Спб. 1897.
25. Беттани и Дугласъ. Великія Религіі Востока. М. 1899.
26. Проф. А. Крымскій. Арзакиды, Сасаниды и завоевание  
Ирана арабами. Лепциг. М.
27. Г. Халатянцъ. Армянские Аршакиды въ «Истории Ар-  
мении» Моисея Хоренского. М. 1903.
28. Архиманд. Месропъ Терь-Мовсесянъ. Исторія п'єревода  
Библії на армянскій языкъ. Спб., 1902.
29. Н. Марръ. Тексты и разысканія по армяно-грузинской  
филологии. V. Критика и мелкая статьи. Спб., 1903.
30. В. Райтъ. Краткий очеркъ Исторіи Сирійской Лите-  
ратуры. Спб. 1902.
31. Я. Шницеръ. Иллюстрированная Всеобщая Исторія  
Письменъ. Спб. 1903.
32. З. Рагозина. Исторія Мидіи, второго Вавилонского цар-  
ства и возникновенія Персидской державы. Спб.,  
1903.
33. В. Виндельбандъ. Исторія Философіи. Спб., 1898.
34. Гиббонъ. Исторія упадка и разрушенія Римской Им-  
періи. т. III, М. 1876.
35. Бокъ. Исторія Цивилизації въ Англіи. Спб., 1895.

**ԿԱՐԵՒՈՐ ՍԽԱԼՆԵՐԸ.**

<i>Եթ.</i>	<i>Տող</i>	<i>Սխալ</i>	<i>Ռւզիդ</i>
8	3 ն.	1902	1903
25	8 զ.	հարկադրութիւնը	հակադրութիւնը
36	11 զ.	որ և	որ և է
76	9 ն.	վարդապետունը	վարդապետութիւնը
91	8 >	անյատութիւն	անյայտութիւն
116	3 >	մօտ	մօտ.
151	4 >	ե	ե
170	1 >	այդպէս	այդպէս
194	3 >	ունարէնից	յունարէնից
306	1 >	ելու	անելու
309	1 զ.	զը	իր









